

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ  
«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Ե Ր Ե Վ Ա Ն**  
  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵԼՆԻ ՍԵՐՎԻՍ**  
**2 0 1 5**

ՀՏԴ 342.9  
ԳՄԴ 67.401  
Հ 416

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆԵՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱՎԱՆ  
Հ 416 ՎԱՐՈՒՅԹԻ ՍԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. - Եր.: Տիգրան Մեծ, 2015. - 364 էջ:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը (GIZ) զարգացող երկրների հետ իրականացվող համագործակցության համար ամբողջ աշխարհում ծառայություններ մատուցող ձեռնարկություն է: Որպես Գերմանիայի Դաշնային Հանրապետության մասնավոր տնտեսական կազմակերպություն՝ GIZ-ն իր գործունեությամբ հետապնդում է զարգացող երկրների աջակցությանն ուղղված Հարավի և Արևելքի երկրներում մարդկանց կենսապայմանները տևականորեն բարելավելու և կյանքի բնական հիմքերը պահպանելու քաղաքական նպատակ:

Միջազգային համագործակցության գերմանական ընկերությունը Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության հանձնարարությամբ դատախարակական բարեփոխումներին նպաստող մի քանի ծրագրեր է իրականացնում Հարավային Կովկասի երկրներում: Այդ ծրագրերի շրջանակում այս երկրներ են գործուղվում միջազգային երկարաժամկետ և կարճաժամկետ փորձագետներ, որոնք ի թիվս այլ միջոցառումների խորհրդատվություն և որակավորման բարձրացման միջոցառումներ են իրականացնում: Բացի այդ՝ Ընկերությունը օժանդակում է նոր օրենքների կիրառման վերաբերյալ տեղացի փորձագետների աշխատանքների հրատարակմանը:

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH ist ein weltweittütiges Dienstleistungsunternehmen für Entwicklungszusammenarbeit. Sie arbeitet als privatwirtschaftlich organisiertes Unternehmen der Bundesrepublik Deutschland für das entwicklungspolitische Ziel, die Lebensbedingungen der Menschen in den Ländern des Südens und Ostens nachhaltig zu verbessern und die natürlichen Lebensgrundlagen zu erhalten.

Die Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH führt im Auftrag des deutschen Bundesministeriums für wirtschaftliche Zusammenarbeit und Entwicklung (BMZ) in den Ländern des südlichen Kaukasus mehrere Projekte zur Unterstützung der Rechts- und Justizreformen durch. Im Rahmen dieser Projekte werden internationale Langund Kurzezeitexperten eingesetzt, die unter anderem beratende Tätigkeiten ausüben und Fortbildungsveranstaltungen durchführen. Weiter werden Publikationen von lokalen Experten zur Anwendung der neuen Gesetze unterstützt.

ՀՏԴ 342.9  
ԳՄԴ 67.401

© Deutsche Gesellschaft für Technische Zusammenarbeit (GTZ) GmbH, 2007  
ISBN

Hrsg.:

gtz

Projekt:

Beratung bei der Festigung des Rechtswesens in Armenien

Moskovyan 21/13

0009 Jerewan, Armenien

T +374 10 540981

F +374 10 562233

E lusi@netsys.am

www.gtz.de

ISBN 978-99941-0-662-2

**ՀԱՐՑԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ**  
**«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ**  
**ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ»**  
**ՀՀ ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**  
*(Երրորդ լրամշակված հրատարակություն)*

## **Յեղինակային կոլեկտիվ**

Հրայր Թովմասյան, իրավաբանական գիտությունների թեկնածու,  
(բաժին III, V, VII)

Գրիգոր Մուրադյան, իրավագիտության մագիստրոս, (Heidelberg,  
(բաժին I, VI)

Հովհաննես Թորոսյան, արդարադատության երրորդ դասի պետա-  
կան խորհրդական, (բաժին II)

Վահագն Գրիգորյան (բաժին IV)

Վարդան Պողոսյան, քաղաքագիտության մագիստրոս, (Bonn),  
(հարցեր 22, 76)

Հրայր Թովմասյան ©

Գրիգոր Մուրադյան ©

Հովհաննես Թորոսյան ©

Վահագն Գրիգորյան ©

Վարդան Պողոսյան ©

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նորանկախ Հայաստանի պատմության ընթացքում ընդունվել են հարյուրավոր օրենքներ (դրանց նախաձեռնողների ու հեղինակների շարքն էլ պակաս ներկայացուցչական չէ), որոնք կարգավորել են հասարակական հարափոփոխ հարաբերությունների գրեթե բոլոր ոլորտները՝ ծխախոտից մինչև ընտրություններ, գովազդից մինչև անասնաբուծություն: Ընդունված օրենքների մի խմբի մասին մոռացել են իրենց իսկ հեղինակները, մյուսների կիրառման մասին մատների վրա հաշված պաշտոնյաներ են հիշում, երրորդներն էլ, կարելի է ասել, մեռելածին են, իսկ չորրորդները՝ ավելորդ ամբոխահաճության կամ օրենսդրական նորաձևությունից հետ չմնալու արդյունք:

Սակայն ընդունված օրենքների շարքում կան այնպիսիք, որոնք գործնական հարթության մեջ նախանշում ու որոշարկում են անցումը անցյալի ու ներկայի միջև, անցումը մտածողության նոր որակի, մարդ-պետություն հարաբերությունների նոր տիպի:

Իրավամբ այդ օրենքների շարքը պետք է դասել ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը, ՀՀ Ընտրական օրենսգիրքը, իր ժամանակին ՀՀ Նախագահի մասին օրենքը և այլն: Առաջ անցնելով՝ ասենք, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը<sup>1</sup>, հիրավի, կոչված է տեղ գրավելու հենց այդ օրենքների շարքում և ապահովելու անցումը մեզանում իշխող խորհրդային պատկերացումներից դեպի մարդակենտրոն՝ քաղաքացիական հասարակություն: Սա պայմանավորված է օրենքով կարգավորվող հասարակական հարաբերությունների կարևորությամբ, իրականացված կարգավորումներով ու լուծումներով:

Իրավունքի ու պետականության ոլորտում գիտության ու պրակտիկայի զարգացման ընթացքից Հայաստանի կտրվածությունը մեզ հնարավորություն չի տվել լիովին հասկանալ ու գնահատել պետության՝ մարդու արժանապատիվ ու բարեկեցիկ կյանքի ու անվտանգության ապահովման նպատակով ստեղծված կառույցի դերն ու նշանակությունը: Խորհրդային Միության կազմում գտնվելու ժամանակաշրջանում Հայաստանում այս ոլորտի զարգացում-

---

<sup>1</sup> Այսուհետ՝ Օրենք

ները ոչ միայն ներդաշնակ չէին գիտականորեն հիմնավորված և կյանքում քննություն բռնած տեսություններին ու լուծումներին, այլև միանգամայն հակառակ ուղղությամբ էին զարգանում: Ժխտելով պետականագիտության ոլորտում ձեռքբերումները և նպատակ ունենալով ստեղծել նոր տիպի՝ խորհրդային պետություն, վերջինիս հիմնադիրները, ըստ էության, խեղաթյուրեցին պետության էությունը: Չգիտակցվեց այն գաղափարը, որ պետության հիմնադրումն ինքնանպատակ չէ, որ մարդիկ պայքարում են իրենց պետականության համար, ձևավորում պետական մարմիններ և պաշտոնատար անձանց օժտում իշխանական լիազորություններով, որպեսզի նրանց միջոցով կամ օգնությամբ ապահովեն արժանապատիվ, բարեկեցիկ և անվտանգ կյանք: Հետևաբար՝ ցանկացած ժամանակաշրջանում իշխանակիր դարձած մարդկանց գործունեությունը պետք է գնահատվի՝ հիմք ընդունելով այն չափանիշը, թե որքանով են վերջիններս հասարակության համար ապահովել բարեկեցիկ, արժանապատիվ ու անվտանգ կյանք:

Տևական ժամանակ ապրելով մի տարածքում, ուր գերական ու իրավաստեղծը ինքն իշխանավորն էր, ուր բնական իրավունքների տեսությունը համարվում էր բուրժուական շքեղություն, իսկ իրավական պետությունն ու իրավական օրենքի գաղափարները՝ հնարոպի, երևակայական տեսություններ, ուր իշխանություն ստանալու և այն կորցնելու հարցում վճռորոշը ոչ թե ժողովրդի քվեն էր, այլ պալատական խարդավանքները, կարճ ժամանակում այդ ամբողջից ձերբազատվելը բավականին բարդ է:

Թեպետ մեկ տասնամյակից ավելի է, ինչ հորհրդային Միությունը դարձել է պատմություն, սակայն տակավին կենսունակ է այն իրողությունը, երբ իշխանավորից է կախված քաղաքացու այս կամ այն իրավունքի իրականացումն ու դրա իրական լինելը: Այսօր էլ շատ դեպքերում կարևոր չէ, թե ինչ իրավունքներ ունես դու, այլ կարևոր է, թե այդ իրավունքների իրականացման համար դու որ իշխանավորին կարող ես «դիմել» կամ որքան ես պատրաստ վճարել: Այդ երևույթները ոչ միայն դարձել են մեր անբաժան ուղեկիցները, այլև նոր ժամանակներում նորովի դրսևորումներ են ստանում ու արմատավորվում:

Նախընթաց տարիներին ևս Հայաստանում ըստ արժանվույն չգիտակցվեց այն պարզ ճշմարտությունը, որ պաշտոնատար անձինք չեն կարող լինել իշխանության աղբյուր, որ նրանք ընդամենը

ժողովրդին պատկանող և ժողովրդից անօտարելի իշխանության ժամանակավոր կրողներն են և ոչ ավելին: Հետևաբար՝ նրանց լիազորությունները ոչ բնածին են և ոչ էլ անօտարելի: Դրանք վերը նշված նպատակով այդ անձանց տրված են ժողովրդավարական երկրում իշխանության միակ լիիրավ տիրոջ՝ տվյալ երկրի քաղաքացիների կողմից և կարող են ցանկացած պահի փոփոխվել կամ վերացվել, եթե դրանք պատշաճ ձևով ու չափով չեն ծառայում մարդու բնական ու անօտարելի իրավունքների և ազատությունների կենսագործմանը:

Ժողովուրդը պետությանը, նրա մարմիններին, պաշտոնատար անձանց տրամադրում է սոսկ այնպիսի և այնքան լիազորություններ, որոնք անհրաժեշտ են մարդու իրավունքների ու ազատությունների կենսագործման համար: Պետությունը, ամբողջությամբ վերցված պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք գործում են իշխանության միակ տիրոջից՝ ժողովրդից՝ ստացած մանդատի շրջանակներում, որը մարդուն պատկանող բնական և անօտարելի իրավունքների ու ազատությունների կենսագործմանը նպաստելու, այն ապահովելու արտոնագիր է և ոչ ավելին:

Չգրված օրենք էր, որ մարդ-պետություն հարաբերություններում ճիշտը միշտ երկրորդն էր: Սակայն սա դեռ ոչինչ, բյուրոկրատիայի գերզարգացման պայմաններում, երբ երկրում ամեն ինչ ծառայում էր իշխանավորի կամքին, մարդ-պետություն հարաբերություններում երբեմն զավեշտի հասնող իրավիճակներ էին ստեղծվում, և պատահական չէր այդ ժամանակներում ծնված՝ «ապացուցի՛ր, որ ուղտ չես» հայտնի ռուսական թևավոր խոսքը:

Իր տարրական իրավունքների իրացմանը հասնելու համար քաղաքացին երբեմն տարիներ էր կորցնում. դա դեռ լավագույն դեպքում. առավելապես տարիների պայքարից հետո մարդը ստիպված էր հաշտվել այն մտքի հետ, որ պետության դեմ պայքարելն անիմաստ է:

Հայաստանում վարչական մարմինների գործունեությունը կանոնակարգող օրենսդրական ու ենթօրենսդրական տասնյակ ակտերը շատ դեպքերում հակասում են միմյանց և վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության պատշաճ երաշխիք չեն:

Ձարգացած իրավական ու ժողովրդավարական երկրների փոր-

ծի ուսումնասիրությունը վկայում է, որ ստեղծված իրավիճակից ելքն անհնար է առանց վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները կարգավորող մեկ միասնական, համակարգված իրավական ակտ ունենալու:

Երբ խոսում են իրավաբանների հետ, անհրաժեշտ չէ երկար-բարակ խոսել իրավունքի կողմի ֆիկացիայի նպատակահարմարության մասին: Պետական ու հասարակական կյանքի քիչ թե շատ խոշոր ոլորտներում գործող իրավական նորմերի, իրավական դրույթների, սկզբունքների համակարգված ընդգրկումն ու կարգավորումը մեկ միասնական օրենքի միջոցով ուղեկցում է իրավունքի ամբողջ պատմությունը: 18-րդ դարի վերջից սկսած այդ գործընթացն իր առաջին գագաթնակետին հասավ, երբ ստեղծվեցին մասնավոր իրավունքի խոշոր կողմի ֆիկացիաները: Այդ ժամանակից ի վեր օրենսդրի կողմից իրավունքի կողմի ֆիկացիան հատկապես բնորոշ է եվրոպական մայրցամաքային իրավակարգերին:

Վարչական իրավունքը համեմատաբար ուշ անցավ այս զարգացման ուղին: Նախքան եվրոպայում վարչական իրավունքի կողմի ֆիկացիային ուղղված քայլեր կձեռնարկվեին, այնտեղ արդեն տասնամյակներ շարունակ գոյություն ունեին վարչական դատարաններ: Մինչ այդ վարչական իրավունքի դրույթները ցրված էին բազմաթիվ օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում (կարգադրություններ, ցուցումներ) և այլն: Ուստի վարչական իրավունքը շատ մասնատված էր և դրա հետևանքով՝ ոչ հստակ: Այնուամենայնիվ, արդեն վաղ շրջանում՝ 19-րդ դարի կեսերից, գոյություն ունեին վարչական իրավունքի դասագրքեր, որոնք բավականին մեծ հաջողությամբ հակազդում էին այդ անհստակության բացասական հետևանքներին:

Ընդհանուր վարչական իրավունքի կողմի ֆիկացիան վարչական մարմիններին, դատարաններին և ոչ վերջին հերթին քաղաքացիներին տալիս է այն բոլոր առավելությունները, որոնք հատուկ են իրավունքի կողմի ֆիկացիային՝ իրավական ոլորտի թափանցիկություն, դրանում գործող սկզբունքների դյուրըմբռնողություն, գործող իրավական նորմերի միջև գոյություն ունեցող տրամաբանական կապի արագ ըմբռնում, ռացիոնալ մոտեցում: Վարչական իրավունքի համար այս առավելություններն առավել կարևոր են, որովհետև վարչական իրավունքը ցրված է բազմաթիվ օրենքներում:



նրան վերաբերող դրույթներ կան ոստիկանության, շինարարության, փողոցային երթևեկության, դպրոցական ու բուհական կրթության և մշակույթի, տնտեսության մեջ վարչարարության, զանգվածային լրատվության միջոցների, շրջակա միջավայրի պաշտպանության, սոցիալական ոլորտի, ֆինանսական ոլորտի վերաբերյալ օրենսդրություններում: Մենք այստեղ նշեցինք պետական խնդիրների կատարման և պետական վարչարարության միայն կարևորագույն ոլորտները:

Բացի վարչական իրավունքի կողիֆիկացիայի այս պրագմատիկ պատճառներից կա նաև մեկ այլ օբյեկտիվ պատճառ. դա այն սկզբունքային տարբերությունն է, որ կա մի կողմից պետություն-քաղաքացի հարաբերության և մյուս կողմից քաղաքացի-քաղաքացի հարաբերության միջև:

Ի տարբերություն քաղաքացի-քաղաքացի հարաբերության, պետություն-քաղաքացի հարաբերությունը չի բնութագրվում սուբյեկտների հավասարությամբ, մասնավոր ինքնավարությամբ (ավտոնոմիայով) և պայմանագրեր կնքելու ազատությամբ, այն որոշվում և կարգավորվում է օրենքներով՝ որոշակի սահմանադրության հիման վրա: Պետությունը, նրա մարմինները, վարչական մարմինները և պաշտոնատար անձինք «ազատություն» չունեն պետություն-քաղաքացի հարաբերության մեջ, այլ նրանց վրա սկզբից ի վեր ամբողջությամբ իշխում է օրենքը, որովհետև նրանք կաշկանդված են սահմանադրությամբ և օրենքով: Պետություն-քաղաքացի հարաբերությունը կարգավորված է սահմանադրական իրավունքի և վարչական իրավունքի ոլորտներին վերաբերող օրենքներով: Վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց խնդիրն է, ելնելով հանրության շահերից, այդ թվում նաև մարդու ազատությունն ապահովելու համար կատարել օրենքները իրավական պետության սկզբունքների համաձայն: Վարչական մարմինները իրենց վերապահված լիազորությունները՝ ուղղված մասնավոր անձանց, իրականացնում են միակողմանի կարգադրությունների, «հրամանների» (արգելքների և պահանջների) միջոցով, դրանցով սահմանելով, թե ինչ պետք է նրանք անեն կամ չանեն: Դրանից բխող իրավահարաբերությունը պետության՝ ի դեմս վարչական մարմնի և քաղաքացու միջև բնութագրվում է վարչական ակտի իրավական ձևով:

Այլ երևույթի հետ գործ ունենք քաղաքացի-քաղաքացի հարա-

բերության դեպքում: Բանն այն է, որ որպես կանոն, մասնավոր անձին արգելվում է որևէ այլ անձի միակողմանի, այսինքն՝ նրա կամքին հակառակ, հրամաններ տալ: Ուստի մասնավոր անձանց (քաղաքացիների, ձեռնարկությունների և այլն) միջև իրավահարաբերությունների առաջացման և ձևավորման համար բնորոշ է պայմանագրի իրավական ձևը: Պայմանագրերով մասնավոր սուբյեկտներն իրականացնում են իրենց շահերը, և նրանք այդ շահերը պաշտպանում են պայմանագրին համապատասխան, անհրաժեշտության դեպքում դիմելով հատուկ դրա համար ստեղծված քաղաքացիական կամ տնտեսական դատարաններին: Հետևաբար քաղաքացի-քաղաքացի հարաբերությունը բնորոշվում է պայմանագրի կողմերի սկզբունքային հավասարությամբ, թեև իրավական առօրյայում de facto շատ հաճախ, մասնավորապես տնտեսության և աշխատանքի ոլորտներում, մասնավոր անձանց միջև լինում են ուժային տարբերություններ, այսինքն՝ մեկը սովորաբար լինում է մյուսից թույլ (որոշակի իրավական դրույթներով պետությունը փորձում է նվազեցնել կամ նույնիսկ ընդհանրապես վերացնել այդպիսի ուժային տարբերություններից բխող հնարավոր հատկապես մեծ վտանգներն ու բացասական հետևանքները):

Ամբողջովին այլ է իրավիճակը պետություն-քաղաքացի հարաբերության դեպքում, քանի որ այստեղ վտանգ կա, որ պետությունը վարչարարական պրակտիկայում կօգտագործի իր առավելությունը մասնավոր անձանց (քաղաքացիների, ձեռնարկությունների և այլն) նկատմամբ և մասնավոր անձանց շահերը պետություն-քաղաքացի հարաբերության մեջ բավարար չափով չեն իրականացվի: Եթե մեզ, ինչպես արդեն ասվեց, մասնավոր իրավունքից (մասնավորապես աշխատանքային և մասնավոր տնտեսական իրավունքից) հայտնի են պայմանագրի կողմերի միջև ուժային փաստացի տարբերությունները, ապա դա առավել ևս վերաբերում է պետություն-քաղաքացի հարաբերությանը, քանի որ պետությունը, շնորհիվ իր կողմից իրականացվող հանրային իշխանության, սկզբունքորեն գերազանցող կողմ է: Եթե քաղաքացին վարչական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ընկալվում է որպես «հպատակ» որոշակի հիերարխիայում և ըստ այդմ էլ համապատասխան վերաբերմունք է ստանում, ապա դա ամբողջովին հակասում է մարդու հիմնական իրավունքներին, քանի որ վերջիններս պարտավորեցնում են պետությանը (վարչական մարմիններին, պաշտո-

նատար անձանց) հարգել դրանք, լցվել դրանց ոգով և երաշխավորել, որ քաղաքացին կարողանա ծավալել իր ազատությունը պետությունում: Պետությունը դառնում է իրավական պետություն և որակում է որպես սահմանադրական պետություն միայն այն դեպքում, եթե դա անում է:

Վարչական վարույթի իրավունքի և նրա կողիֆիկացիայի իմաստն ու նպատակը կայանում է հենց պետության (վարչական մարմինների) և քաղաքացու միջև սկզբունքային և հետևաբար անխուսափելի ուժային տարբերության վերացման կամ առնվազն մեղմացման մեջ: Դրա համար հարկավոր է, որ վարչական մարմինների և քաղաքացիների միջև հարաբերություններում իրագործվեն վարչական մարմինների գործելակերպի վերաբերյալ իրավական պետության հիմնարար սկզբունքները: Դրան են, մասնավորապես, ծառայում վարույթի այն սկզբունքները, որոնք համակարգային ձևով թվարկված են Օրենքի երկրորդ գլխում:

Վարչական մարմնի և մարդու միջև հարաբերությունների կարգավորումն օրենքներով մինչև վարչական ակտի ձևով վարչական մարմնի որոշման կայացումը, ինչպես նաև դրանից հետո, երբ որոշումը կայացված է, ուժեղացնում է քաղաքացու իրավական դիրքը վարչական մարմնի կամ պաշտոնատար անձի հանդեպ մի քանի տեսանկյունից: Նախ, քաղաքացին գիտի, թե ինչ քայլերով և ինչպես պետք է վարչական մարմինը քննի իր գործը: Երկրորդ, նա օրենքից իմանում է, որ ինքն էլ (և ոչ միայն վարչական մարմինը) իբրև քաղաքացի իրավունքներ ունի վարչական վարույթում, և թե ինչ կոնկրետ իրավունքների մասին է խոսքը: Երրորդ, քաղաքացին օրենքից իմանում է, որ վարչական մարմինը ևս, կոնկրետ գործերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս, կաշկանդված է իրավական պետության սահմանադրական սկզբունքներով: Չորրորդ, նա կարող է օրենքից հասկանալ, թե վարչական մարմինը վարույթում իր` որպես քաղաքացու, հանդեպ ինչ պարտականություններ պետք է կատարի: Եվ հինգերորդ, նա օրենքից իմանում է, թե ինչ գործիքներով (օրինակ բողոք) կարող է դուրս գալ վարչական մարմնի որոշման դեմ, եթե համաձայն չէ դրա բովանդակության հետ:

Իհարկե, վարչական մարմնի հետ իրավահարաբերության կողմ հանդիսացող մասնավոր անձից է ամբողջությամբ կախված, թե որքանով է օգտագործում օրենքով տրված հնարավորությունները` համապատասխան գործով վարչական մարմնի հետ շփվելիս:

Իհարկե, Հայաստանի Հանրապետության բազմաթիվ քաղաքացիներ, գուցե նույնիսկ նրանց մեծամասնությունը, ավելի շուտ հակված կլինի ոչ շատ վճռականորեն պաշտպանելու իրենց իրավունքները վարչական մարմինների նկատմամբ և հաստատ չի ցանկանա դրա համար դիմել ամենածայրահեղ միջոցներին: Ի վերջո մասնավոր անձանց պահվածքը վարչական մարմինների հանդեպ շատ մեծ չափով որոշվում է երկրում իրավական մշակույթի և վարչարարության մշակույթի ոլորտի ընդհանուր զարգացմամբ, իսկ այս տեսանկյունից փոփոխությունները, ինչպես ցույց են տալիս համեմատական իրավագիտական ուսումնասիրությունները, ընթանում են շատ դանդաղ: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում այսօր գործող վարչական վարույթի մասին օրենսդրությունը, շնորհիվ իր իրավական պետության սկզբունքներին համապատասխանող ուժեղ հիմքի միանգամայն ի վիճակի է խթանելու պետությունում և հասարակությունում իրավական և վարչարարության մշակույթի համապատասխան փոփոխությունները ու ընթացք տալու դրանց:

Վարչական վարույթի իրավունքը, ինչպես ցույց են տալիս վարչարարության՝ օրենքի երկրորդ գլխում ամրագրված սկզբունքները, հատկապես մոտ է կանգնած իրավական պետության սկզբունքներին, ինչպես դրանք շարադրված են (նաև) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ, առաջին հերթին նրա 1-ին՝ «Սահմանադրական կարգի հիմունքներ» և 2-րդ՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլուխներում:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագրի փորձագետները Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության առաջարկությամբ 2001 թվականին ձեռնամուխ եղան «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի նախագծի մշակման աշխատանքներին: Այդ նպատակով ստեղծվեց աշխատանքային խումբ, որի մեջ ընդգրկված էին Գրիգոր Մուրադյանը, Հովհաննես Թորոսյանը, Արտաշես Ավոյանը, Արմեն Առաքելյանը, Վահագն Գրիգորյանը և Վարդան Պողոսյանը, ինչպես նաև այս ոլորտում տեսական ու գործնական մեծ փորձ ունեցող գերմանացի փորձագետներ՝ հանրային իրավունքի պրոֆեսոր Օտտո Լուխթերհանդտը, Հեսեն երկ-

րամասի Արդարադատության նախարարության վարչության պետ, դոկտոր Վերներ Շուլցեն, Գերմանիայի Դաշնային Վարչական դատարանի դատավոր պրոֆեսոր Ռյուդիգեր Ռուբելը:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել 2004 թվականի մարտի 16-ին և հրապարակվել 2004 թվականի մարտի 31-ին<sup>2</sup>:

Օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, այդ ակտերը, ինչպես և վարչական մարմինների գործողություններն ու անգործությունը բողոքարկելու ձևերը, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

Օրենքը, հետապնդում է հետևյալ հիմնական նպատակները.

1. մեկ միասնական ակտի միջոցով կանոնակարգել վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները.

2. ապահովել վարչարարության հրապարակայնությունը.

3. կանխել վարչական մարմինների կամայականությունները.

4. կանխարգելել կոռուպցիան.

5. ապահովել վարչական մարմինների արդյունավետ աշխատանքը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օրենքը պարունակում է Հայաստանի Հանրապետությունում քիչ ուսումնասիրված և պրակտիկայում գրեթե չկիրառված դրույթներ, որ նոր կարգավորումներ են տրված ինչպես վարչարարության, այնպես էլ վարչական վարույթի բնագավառներում, գործնականում հնարավոր հակասական իրավակիրառական գործելակերպից խուսափելու և Օրենքի կիրառումն ավելի դյուրացնելու նպատակով աշխատանքային խմբի կողմից կազմվել է սույն հանրամատչելի ձեռնարկը, որն ընդգրկում է Օրենքի կիրառման ընթացքում առաջանալիք հիմնական հար-

---

<sup>2</sup> Տես՝ ՀՀ պաշտոնական տեղեկագիր 2004 (18 (317), 31.03.04:

ցերն ու դրանց պատասխանները, ինչը կոչված է աջակցելու առաջին հերթին իրավակիրառողներին, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ այն հաշվով, որպեսզի նրանք հնարավորինս ճիշտ կողմնորոշվեն Օրենքի բարդ հորձանուտում և ապահովեն դրա միատեսակ կիրառումը:

Գրքի առաջին հրատարակությունը տեղի է ունեցել 2005 թվականին ընդամենը 1000 օրինակով, իսկ երկրորդը՝ 2007 թվականին 20.000 օրինակով: Նախընթաց տարիները վկայեցին, որ այն մեծ պահանջարկ ունի պետական ծառայողների, դատավորների, ինչպես նաև շարքային քաղաքացիների կողմից:

Հաշվի առնելով երկրորդ հրատարակությունից հետո օրենսդրության մեջ կատարված փոփոխությունները՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության «Հարավային Կովկասում իրավական և դատական բարեփոխումների համար խորհրդատվություն» ծրագիրն ընթերցողին է ներկայացնում գրքի երրորդ հրատարակությունը:

Գրքում օգտագործվել են ՀՀ Ընդհանուր վարչական իրավունքի ոլորտում Հայաստանի Հանրապետության ապագա վարչական դատավորների վերապատրաստման համար՝ պրոֆեսոր Օտտո Լուխթերհանդտի, դոկտոր Վերներ Շուլցեի, պրոֆեսոր Ռյուդիգեր Ռուբելի, Հեսենի Գերագույն վարչական դատարանի նախագահ, դոկտոր Վոլֆգանգ Ռայմերսի կողմից պատրաստված որոշ նյութեր ևս:

Օրենքի նախագծի նախապատրաստման  
աշխատանքային խմբի ղեկավար,  
իրավաբանական գիտությունների թեկնածու

**Հրայր Թովմասյան**

## ԲԱԺԻՆ I. ՎԱՐՉԱՐՎՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

### Հարց 1. Ի՞նչ հարաբերություններ է կարգավորում Օրենքը:

#### Պատասխան.

Ցանկացած պետության իրավակարգում վարչական իրավունքի դերը յուրահատուկ է: Իրավակարգը կարելի է բնորոշել որպես բոլոր իրավական կանոնների համակցություն, որոնց անձը ենթարկվում է մյուս անձանց կամ պետության ու համայնքի հետ հարաբերություններում:

Չնայած իր միասնականությանը, իրավակարգը ստորաբաժանվում է տարբեր բնագավառների: Իրավակարգի ամենակարևոր ստորաբաժանումը դրա բաժանումն է հանրային և մասնավոր իրավունքի:

Մասնավոր իրավունքը կարգավորում է անձանց հարաբերությունները միմյանց հետ, իսկ հանրային իրավունքը՝ նրանց հարաբերությունները պետության հետ՝ որպես հանրային իշխանության կրողի: Հանրային իրավունքի ամենակարևոր ճյուղը սահմանադրական իրավունքն է, որը սահմանում է պետական ու տեղական ինքնակառավարման բոլոր մարմինների (հանրային իշխանության մարմինների) և ֆիզիկական ու իրավաբանական անձանց փոխհարաբերությունների հիմնաքարային սկզբունքներն ու կանոնները: Այդ սկզբունքներն ու կանոնները պարտադիր են ոչ միայն հանրային իրավունքի մյուս ճյուղերի, այլև մասնավոր իրավունքի բոլոր ճյուղերի համար: Սակայն այդ սկզբունքներն ու կանոնները այնքան ընդհանուր են, որ կարիք ունեն որոշակիացման՝ դրանց գործնական կիրառելիությունն ապահովելու համար: Հանրային իրավունքում այդպիսի որոշակիացումն ապահովում է հատկապես վարչական իրավունքը, որի հիմնական նպատակը գործադիր իշխանության մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերությունների իրավական կանոնակարգումն է: Բոլորին հայտնի է, թե որքան հաճախ են հենց այդ փոխհարաբերություններն ազդում ֆիզիկական ու իրավաբանական անձանց կենսական շահերին, և որ հանրային իշխանությունների ու ֆիզիկական ու իրավաբանական անձանց շփումների հիմնական «ուղեծիրը» իրականում կազմում են հենց այդ հարաբերությունները:

1995 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությունը (այժմ այն գործում է 2005 թվականի նոյեմբերի 27-ի խմբագրությամբ), որպես ՀՀ սահմանադրական իրավունքի հիմնաքարային սկզբունքներից մեկն ամրագրեց իրավական պետության դրույթը: Այն ամրագրվեց ՀՀ սահմանադրական կարգի հիմունքներում և դրանով իսկ Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական բնութագրիչներից մեկն է (ՀՀ Սահմանադրություն, 1-ին հոդվ.): ՀՀ իրավակարգի այս կարևորագույն բարեփոխումը (նոր Սահմանադրություն ընդունելու փաստը), սակայն, էականորեն չանդարդարձավ հատկապես այնպիսի բնագավառի վրա, ինչպիսին են ՀՀ քաղաքացիների, ընդհանրապես ֆիզիկական անձանց և վարչական մարմինների շփումները: Եվ դա այն դեպքում, երբ ՀՀ Սահմանադրությունը գործում է անմիջականորեն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 6, մաս 1-ին): Ֆիզիկական, ինչպես նաև իրավաբանական անձանց հաճախ առավել կենսական շահերը շոշափող որոշումները վարչական մարմինների կողմից ընդունվում էին և ընդունվում են բազում օրենքների և իրավական այլ ակտերի հիման վրա, որոնց մի մասը դեռևս մինչսահմանադրական ակտեր են, և որոնցում տարբեր դրույթներ տարբեր կերպ փորձում էին կոնկրետացնել նախորդ և նոր ձևավորվող իրավակարգերի հիմնադրույթները: Հարկ է նշել, որ այդ բոլոր ակտերի մեխանիկական միասնությունը չէր կարող ապահովել ՀՀ Սահմանադրության պահանջներին հարիր ավելի կոնկրետ իրավադրույթների այնպիսի մակարդակ և համակարգ, որոնք էականորեն կազդեին ֆիզիկական ու իրավաբանական անձանց և վարչական մարմինների փոխհարաբերությունների որակին: Դրա վկայությունն են ինչպես մեծ չափերի հասնող կոռուպցիան, այնպես էլ խորհրդային «լավագույն» բյուրոկրատական ավանդույթները շարունակելու, իսկ երբեմն էլ կրկնապատկելու վարչական մարմինների հակվածությունը: Այդ ամենն ակնհայտ դարձրեց ՀՀ-ում նոր սահմանադրական կարգին հարիր հանրային իշխանության մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև ծագող հարաբերությունները նորովի կարգավորելու անհրաժեշտությունը: «Մեկ բնագավառ՝ մեկ օրենք» կամ նույնիսկ «մեկ հարց՝ մեկ օրենք» սկզբունքը, ինչպես և սոսկ իրավիճակային լուծումների հասնելու օրենսդրի ձգտումը չէին կարող ապահովել գործնական ոլորտներում սահմանադրական պատվիրանների միասնական իրագործումը: Գիշտ հակառակը՝ դրանք հաճախ աղավաղում կամ նենգափո-



խում էին այդ պատվիրանների էությունը:

Հարցի լուծում կարող էին լինել միայն վարչական բոլոր մարմինների գործունեության համար միասնական սկզբունքների ու կանոնների մշակումը և դրանց օրենսդրական ամրագրումը: Միայն այդ ճանապարհով էր հնարավոր ՀՀ-ում ձևավորել ընդհանուր վարչական իրավունքի հիմունքներ, որոնք, անկախ այս կամ այն բնագավառներից, կկանոնակարգեին ցանկացած վարչական մարմնի ցանկացած գործունեության ընդհանուր կողմերը:

Այս մտահաղացումն արտացոլվեց «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում, որի առաջին հոդվածը սահմանում է օրենքի կարգավորման առարկան:

Օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, այդ ակտերն ու վարչական մարմինների գործողություններն ու անգործությունը բողոքարկելու կարգը, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները (հոդված 1):

Այսպիսով՝ օրենքով կարգավորվող հարաբերությունների սուբյեկտները մի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձինք են, մյուս կողմից՝ վարչական մարմինները<sup>3</sup>: Դա նշանակում է, որ ոչ միայն ՀՀ քաղաքացիները, այլև ՀՀ-ում գտնվող կամ բնակվող այլ պետությունների քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք նույնպես այդ հարաբերությունների մասնակից են: Դրանց մասնակից են նաև ՀՀ-ում գործող իրավաբանական անձինք:

Ի կոնկրետացումն ՀՀ Սահմանադրության դրույթների, Օրենքը վարչական բոլոր մարմինների համար սահմանում է հիմնարար սկզբունքներ, որոնք կազմում են Օրենքի առանցքը:

Օրենքը դրույթներ է սահմանում նաև վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական մարմինների՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հասցեագրված անհատական իրավական ակտերի (վարչական ակտերի) ընդունման, ուժի մեջ մտնելու,

<sup>3</sup> Վարչական մարմինների բնորոշումը կտրվի հետագայում:

այդ ակտերի բողոքարկման, դրանց հարկադիր կատարման, վարչական վարույթի ընթացքում առաջացող ծախսերի վերաբերյալ:

Այսինքն բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, քաղաքացին դիմում է վարչական մարմին՝ իրեն որևէ իրավունք տրամադրելու համար, մասնավորապես, ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու թույլտվություն ստանալու հարցով, կամ բոլոր այն դեպքերում, երբ, օրինակ, վարչական մարմինն իր նախաձեռնությանը պետք է տուգանի քաղաքացուն, ասենք՝ ճանապարհային երթևեկության կանոնները խախտելու համար, ապա հարուցվում է վարչական վարույթ, որի արդյունքում ընդունվում է տվյալ քաղաքացուն հասցեագրված վարչական ակտ: Այդ վարույթի ընթացքում, բացի նյութական իրավունքներից, Օրենքը քաղաքացուն տրամադրում է նաև ընթացակարգային (պրոցեսուալ) մի շարք իրավունքներ (օրինակ՝ վարչական գործի նյութերին ծանոթանալու իրավունք, լսված լինելու իրավունք), որոնք նրան հնարավորություն են ընձեռում առավելագույնս պաշտպանվելու վարչական մարմնի կամայականություններից և ակտիվորեն մասնակցելու վարչական ակտի ընդունման ամբողջ գործընթացին: Մյուս կողմից՝ Օրենքի պահանջները կատարելուց հետո վարչական մարմինը կարող է ակնկալել և պահանջել քաղաքացուց, որպեսզի նա կատարի ուժի մեջ մտած վարչական ակտը, որքան էլ այն ոչ բարենպաստ լինի քաղաքացու համար (օրինակ՝ ապօրինի կառուցված ավտոտնակը քանդելու մասին վարչական ակտը):

Սակայն հազվադեպ չեն դեպքերը, երբ վարչական մարմնի գործունեությունը չի ավարտվում վարչական ակտ ընդունելով, այլ դրսևորվում է այս կամ այն գործողությունը կատարելու կամ, ընդհակառակը, քաղաքացու կողմից հայցվող գործողությունը կատարելուց ձեռնպահ մնալու տեսքով (օրինակ՝ առանց կենսաթոշակ նշանակելու մասին քաղաքացու դիմումը մերժելու այն պարզապես անպատասխան է թողնում): Օրենքը կարգավորում է նաև այս դեպքերը, սակայն վերապահումով, որ վարչական մարմնի այդպիսի գործողությունները կամ անգործությունը պետք է տվյալ անձի համար փաստական հետևանքներ առաջացնեն:

Հայտնի է, որ վարչական մարմիններն ինչպես իրենց կողմից ընդունված նորմատիվ, այնպես էլ վարչական ակտերով կամ պարզապես գործողություններով կամ անգործությամբ հաճախ խախտում են ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքները:

Օրենքը նման բոլոր դեպքերի համար սահմանում է պատասխանատվության աննախադեպ մանրամասնված և տարբերակված մեխանիզմներ՝ ուղղակիորեն բացառելով անպատասխանատվության կամ շրջանակային երաշխիքների հնարավորությունները:

## **Չարց 2. Ի՞նչ նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը ընդհանուր վարչական իրավունքի հարցում:**

### **Պատասխան.**

Հանրապետության Սահմանադրության վճռորոշ նշանակությունը վարչական իրավունքի ինստիտուտների և վարույթի համար դրսևորվում է նախևառաջ հետևյալ հիմնարար դրույթներում.

1. Հայաստանի Հանրապետության ձգտումը՝ լինել «ժողովրդավարական» և «իրավական» պետություն (ՀՀ Սահմանադրություն, հոդված 1):

2. Մարդու արժանապատվության, ինչպես նաև հիմնական իրավունքների և հիմնական ազատությունների հռչակումը որպես պետականության «բարձրագույն արժեք», այսպիսով նաև պետության և մասնավորապես բոլոր վարչական մարմինների ու պաշտոնատար անձանց գործունեության համար (հոդված 3, մաս 1-ին):

3. Մարդու և քաղաքացու իրավունքները երաշխավորելու պետության պարտավորությունը (հոդված 3, մասեր 2-րդ և 3-րդ):

4. Այն սկզբունքը, ըստ որի վարչական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու չեն գործելու առանց դրա համար Սահմանադրությամբ և Ազգային ժողովի կողմից ընդունված օրենքներով լիազորված լինելու (հոդված 5, մաս 2-րդ):

5. Գործադիր իշխանության, վարչական մարմինների և պաշտոնատար անձանց անմիջական կաշկանդվածությունը Սահմանադրության նորմերով (հոդված 6, մաս 1-ին հոդված 3, մաս 3-րդի հետ միասին):

6. Մարդկանց հավասարությունն օրենքի առջև և մարդկանց հանդեպ ամենատարբեր հիմքերով խտրականության արգելքը (հոդված 14.1):

7. Յուրաքանչյուրի իրավունքը՝ իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության (հոդված 18, մաս 1):

8. Անհատական տվյալների պաշտպանության երաշխիքը, հատկապես այն վտանգից, որ վարչական մարմինները, առանց օրենքով լիազորված լինելու, քաղաքացիների մասին տվյալները կհավաքեն, կմուտքագրեն և սեփական հայեցողությամբ վարչական նպատակահարմարության տեսանկյունից կփոխանցեն ուրիշներին (հոդված 23):

9. Յուրաքանչյուրի իրավունքը՝ իր անձնական, ինչպես նաև հանրային շահերի պաշտպանության նպատակով դիմումներով և առաջարկներով դիմելու պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց և խելամիտ ժամկետում դրանց պատասխանն ստանալու (հոդված 27.1):

10. Մարդու և քաղաքացու իրավունքների տարածումը նաև իրավաբանական անձանց վրա (հոդված 42.1):

Հիմնարար նշանակություն ունի հատկապես պետության վարչական մարմինների և պաշտոնատար անձանց համար Սահմանադրության 43-րդ հոդվածի ընդհանուր վերապահումը, որը նորմավորում է այն իրավական նախապայմանները, որոնց առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված որոշ հիմնական իրավունքներ կարող են սահմանափակվել: Շնորհիվ այն բանի, որ համապատասխան հոդվածը թույլատրում է հիմնական իրավունքների միայն սահմանափակում, այսինքն՝ ոչ նրանց վերացում, ապա հիմնական իրավունքների սահմանափակումը թույլատրվում է միայն «օրենքով»՝ միայն պետության և հասարակության հատկապես կարևոր իրավական արժեքների պաշտպանության շահերից ելնելով (պետական անվտանգություն, ժողովրդի առողջություն), Սահմանադրության այդ հոդվածն արտահայտում է իրավական պետության հիմնական գաղափարներից մեկը, որը սովորաբար բնութագրվում է որպես համաչափության սկզբունք: Ըստ Սահմանադրության 43-րդ հոդվածի՝ այդ սկզբունքը պարտադիր է ոչ միայն օրենսդրի համար, այլև իրավական պետության սկզբունքի մասնակի ասպեկտներից է (ՀՀ Սահմանադրություն, հոդված 1) և պարտադիր է նաև հանրային իշխանության մյուս ճյուղերի համար, մասնավորապես գործադիր իշխանության ու դրանով նաև վարչական մարմինների և պաշտոնատար անձանց համար՝ առօրյա վարչարարության ժամանակ օրենքները կիրառելիս: Դրանում արտահայտված է Օրենքի 8-րդ հոդվածի բովանդակությունը:

**Հարց 3. Ինչու՞ է Օրենքի 2-րդ հոդվածը տարբերակում Օրենքի տարբեր բաժինների գործողության ոլորտները: Որո՞նք են այդ ոլորտները:**

**Պատասխան.**

Առաջին հարցի պատասխանից կարելի է արդեն կռահել, որ Օրենքն ունի «դեդուկտիվ» և «ինդուկտիվ» սիմետրիկ կառուցվածք. առավել ընդհանուր և առանցքային հարցերը բոլոր վարչական մարմինների ցանկացած գործունեության համար կարգավորելուց հետո (բաժին I) Օրենքն անցում է կատարում կոնկրետ հարցերի՝ սահմանափակվելով միայն վարչական մարմինների վարչական ակտերով եզրափակվող գործունեության կանոնակարգմամբ (բաժիններ II-VI), այնուհետև անփոփոխ է նախորդ բաժինների բովանդակությունը՝ նույնպես բոլոր վարչական մարմիններին վերաբերող բաժնով, որը սահմանում է պատասխանատվության հիմքերը և կարգը վարչական մարմինների բոլոր տեսակի գործունեությամբ (վարչարարությամբ) պատճառված վնասի համար, ներառյալ այդ վնասի վերականգնման եղանակները (բաժին VII):

Օրենքի գործողության ոլորտի տարբերակման հիմքում ընկած է Օրենքի հիշյալ կառուցվածքով պայմանավորված մոտեցումը:

Այսպիսով, Օրենքի՝ վարչարարության հիմունքներին ու վարչական մարմինների պատասխանատվությանը վերաբերող դրույթները (I և VII բաժիններ) տարածվում են վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա (հոդված 2, մաս 1-ին):

Օրենքի II-IV բաժինների (վարչական վարույթ, վարչական ակտ, բողոքարկման վարույթ, վարչական ակտի հարկադիր կատարման վարույթ և վարչական ծախսեր) գործողությունը տարածվում է վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող վարչական մարմինների գործունեության վրա, ընդ որում՝ Օրենքի IV-VI բաժինների գործողությունը տարածվում է նաև վարչական մարմինների այնպիսի գործողության կամ անգործության վրա, որոնք ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ (հոդված 2, մաս 2-րդ):

Միևնույն ժամանակ Օրենքը սահմանում է այն իրավահարաբերությունների շրջանակը, որոնց վրա Օրենքի գործողությունը չի տարածվում: Մինչ այդ օրենսդիրը կարևորել է այն հանգամանքը,

որպեսզի Օրենքում ընդգծվի «lex specialis derogat legi generali» (հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը) համաճանաչ սկզբունքը:

Օրենսդիրը հատուկ նշում է, որ «առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով» (հոդված 2, մաս 3-րդ), (Դրանք մասնավորապես սահմանված են հետևյալ օրենքներով՝ «Լիցենզավորման մասին», «Քաղաքաշինության մասին», Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքով և այլն): Դա նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրականացվելու է վարչական որևէ վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է պարզի, թե արդյոք իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով գոյություն ունե՞ն հատուկ օրենքներ, և որոշի, թե ինչ չափով է այդ հատուկ օրենքով կարգավորված լուծման ենթակա իր հարցը: Եթե ամբողջովին, ապա վարչական մարմինը պարտավոր է վարույթ իրականացնելիս կատարել միայն Օրենքի I և VII բաժինների պահանջները, իսկ Օրենքի՝ վարչական վարույթին վերաբերող դրույթները (II-VI բաժիններ) չեն կարող կիրառվել այդ հարաբերություններում: Օրինակ, Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է, իսկ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ 5 օր: Բացի այդ, լիցենզավորող մարմինը ոչ պիտանի դարձած լիցենզիայի կամ ներդիրի կրկնօրինակը լիցենզավորված անձին տալիս է նրա կողմից դիմումը տալու օրվան հաջորդող երրորդ օրը: Հետևապես, վարչական վարույթի ժամկետի մասով կիրառման ենթակա օրենքն այս դեպքում «Լիցենզավորման մասին» օրենքն է:

Սովորաբար վարչական մարմինների գործունեության ոլորտները կանոնակարգող հատուկ օրենքներում բացակայում է վարչական վարույթի այնպիսի համապարփակ և բազմակողմանի կանոնակարգումը, որն առկա է Օրենքում: Հատկապես դա վերաբերում է վարչական վարույթի այն սկզբունքներին (չչփոթել վարչարարության հիմնարար սկզբունքների հետ), ինչպիսիք են, օրինակ, վարչական մարմնի՝ արագ գործելու պարտականությունը, վարչական վարույթի մասնակիցներին լսելու պարտականությունը և այլն: Ասվածը չի նշանակում, որ վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը պետք է զբաղվի (ընդհանուր) Օրենքի և հատուկ

օրենքների սուկ քանակական համադրմամբ և փորձի բոլոր դեպքերում՝ անկախ կոնկրետ գործի փաստական հանգամանքներից, հատուկ օրենքի բոլոր բացերը լրացնել Օրենքի համապատասխան դրույթների կիրառմամբ: Քանակական համադրումը, իհարկե, անհրաժեշտ է հատուկ օրենքով չկարգավորված հարցերի շրջանակը պարզելու համար: Առավել կարևորը, սակայն, հաջող քայլն է՝ այն հարցի լուծումը, թե առանձնահատուկ վարույթում Օրենքի՝ իրենց ելությամբ ընդհանուր կարգավորումները կիրառելի՞ են, թե ոչ: Այդ հանգամանքը պարզելու համար վարչական մարմինը պետք է պարզորոշ պատկերացնի հատուկ օրենքի սկզբունքային լուծումները: Պարտադիր չէ, որ դրանք ամփոփված լինեն «սկզբունք» վերտառության ներքո: Բավարար է, որ դրանք իրենցով կանխորոշեն մյուս կարգավորումների բովանդակությունը: Եթե, օրինակ, հատուկ օրենքում ամրագրված են այնպիսի սկզբունքային դրույթներ, որոնք բացառում են վարչական մարմնի՝ արագ գործելու պարտականությունը, բնականաբար, Օրենքի այդ սկզբունքը չի կարող կիրառվել տվյալ հարցը լուծելու համար:

Ինչպես նշվեց, օրենսդիրն առանձնացրել է այնպիսի իրավահարաբերություններ, որոնց վրա Օրենքն ընդհանրապես չի տարածվում: Դրանք դատավարական նորմերով կարգավորվող հարաբերություններն են, որոնց մասնակիցներն էապես տարբերվում են Օրենքով կանոնակարգվող հարաբերությունների մասնակիցներից, բացի դրանից՝ կանոնակարգման առարկան ևս էապես տարբերվում է Օրենքի կարգավորման առարկայից: Այդ հարաբերությունները ՀՀ-ում կարգավորվում են ՀՀ Քաղաքացիական դատավարության և Քրեական դատավարության օրենսգրքերով, Սահմանադրական դատարանի մասին օրենքով, ինչպես նաև Վարչական դատավարության օրենսգրքով:

Վերոգրյալն ակնհայտ է դարձնում այն նրբանկատությունը, որը պահանջվելու է Օրենքը կիրառողից՝ Օրենքի գործողության տարբեր ոլորտները միմյանց հետ ճիշտ համադրելու և իրավակիրառման միասնականությունն ապահովելու համար: Մեկ հանգամանք իրավակիրառողն ամեն դեպքում պարտավոր է հիշել. Օրենքի գործողության տարբեր ոլորտները չեն ենթադրում Օրենքի կառուցակարգային աղճատվածություն: Օրենքի բարդ կառուցվածքը ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է միշտ հիշել, որ Օրենքի I բաժինն իր մեջ «կլանում է» Օրենքի մյուս բաժինները: Դա նշանակում է, որ

նրա գործողությունը տարածվում է նաև այն հարաբերությունների վրա, որոնք կարգավորվում են մյուս բաժիններով: Միևնույն ժամանակ հարկ է նշել նաև, որ Օրենքի II և III բաժիններն ավելի ընդհանուր են IV և V բաժինների համեմատ, այդ իսկ պատճառով, եթե վերջիններում, օրինակ, բացակայում են կանոններ, որոնք առկա են II բաժնում, ապա II բաժնի այդ կանոնները ենթակա են կիրառման նաև այդ բաժինների դրույթներով կարգավորվող հարաբերություններում: Այլ խոսքով՝ օրենքի գործողության ոլորտը նման է շերտավոր բուրգի, որի հիմքում առաջին բաժնի դրույթներն են, երկրորդ և երրորդ բաժնի դրույթներն ավելի ընդհանուր («հիմքային») են Օրենքի IV և V բաժինների համար, իսկ VII բաժինը բուրգի գագաթն է, որը հիմքի և առաջին բաժնի նման նույնպես ընդհանուր է ամբողջ բուրգի համար: Օրենքի VI և վերջին՝ VIII բաժինների գործնական նշանակությունը նույնպես շատ կարևոր է. մի դեպքում կանոնակարգվում է վարչական ծախսերի հարցը (բաժին VI), իսկ մյուս դեպքում՝ Օրենքն ուժի մեջ մտնելու և հարակից հարցեր (բաժին VIII):

Այստեղ հարկ է անդրադառնալ ևս մեկ հիմնախնդրի: Օրենքն ամբողջությամբ՝ իր սեփական ընդհանուր և հատուկ դրույթներով, ընդհանուր է հատուկ վարչական իրավունքի բնագավառի օրենքների, օրինակ՝ քաղաքաշինության կամ սոցիալական ապահովության ոլորտները կարգավորող օրենքների համեմատ: Եվ եթե Օրենքի I, VII բաժինների, ինչպես նաև II բաժնի որոշ դրույթներ գործնականում դեռևս երկար ժամանակ չեն բախվի հատուկ օրենքներին՝ վերջիններում նման նորմերի բացակայության, ինչպես նաև նման նորմերը այդ օրենքներում ամրագրելու անհնարինության պատճառներով, ապա մյուս բաժինների մասին այդ պլանում անհնար է անել: Հետևապես՝ իրավակիրառողից սկզբնական շրջանում կպահանջվեն կրկնակի ջանքեր այդպիսի բախումների դեպքում կիրառման ենթակա իրավադրույթը որոշելու համար:

#### **Հարց 4. Որո՞նք են վարչական մարմինները Հայաստանի Հանրապետությունում:**

##### **Պատասխան.**

Այն հարցի պատասխանը, թե որոնք են վարչական մարմինները Հայաստանի Հանրապետությունում, տալիս է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը: Ըստ այդմ, վարչական են համարվում ՀՀ գործադիր



իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները: Օրենքը որոշակիացնում է նաև, թե հիշյալ դրույթներում որ մարմինների մասին է խոսքը: Դրանք են՝

ՀՀ նախարարությունները և ՀՀ ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմինները (հոդված 3, մաս 1-ին, կետ «ա»), (որպես վերջինների օրինակներ կարելի է հիշատակել Հարկային պետական ծառայությունը, Մաքսային պետական ծառայությունը, Միգրացիայի և փախստականների վարչությունը, ՀՀ ոստիկանությունը, Պետական գույքի կառավարման վարչությունը, Ջրային տնտեսության պետական կոմիտեն, Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը, Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը), մարզպետները (հոդված 3, մաս 1-ին, կետ «բ»), համայնքների ավագանիներն ու համայնքի ղեկավարները. քաղաքային համայնքներում՝ քաղաքապետերը և գյուղական համայնքներում՝ գյուղապետերը (հոդված 3, մաս 1-ին, կետ «գ»):

Բացի դրանից, Օրենքը նախատեսում է, որ պետական բոլոր այն մարմինները, որոնք ընդգրկված չեն վարչական մարմնի բնորոշմամբ, գործառնական իմաստով նույնպես հանդես են գալիս որպես վարչական մարմիններ, եթե իրականացնում են վարչարարություն (հոդված 3, մաս 2-րդ): Օրինակ՝ համաձայն «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, առանձին դեպքերում ՀՀ կառավարությունը որոշում է ՀՀ քաղաքացիների այն կատեգորիաներն ու առանձին քաղաքացիներին, որոնց տարկետում է տրվում պարտադիր զինվորական ծառայության զորակոչից: Տվյալ դեպքում ՀՀ կառավարությունն իրականացնում է այնպիսի գործառույթ, որի արդյունքում ընդունվում է վարչական ակտ, այն է՝ քաղաքացիների որոշակի խմբին կամ առանձին քաղաքացուն տարկետում տրամադրելու վերաբերյալ կառավարության որոշում: Այսինքն՝ որոշ դեպքերում ՀՀ կառավարությունը նույնպես հանդես է գալիս որպես վարչական մարմին և նրա վրա այդ դեպքերում նույնպես տարածվում է Օրենքի գործողությունը:

## **Հարց 5. Ի՞նչ է նշանակում վարչարարություն՝ ըստ Օրենքի:**

### **Պատասխան.**

Եթե Օրենքի բնորոշումից զատ փորձենք արտացոլել վարչարարության իմաստը, ապա այն կհնչի որպես վարչական մարմնի՝ դրանից դուրս գտնվողներին ուղղված գործունեություն: Վերադառնալով Օրենքի ավելի ստույգ ձևակերպմանը, նշենք, որ վարչական մարմնի գործունեությունը պետք է ունենա արտաքին ներգործություն և եզրափակվի իրավական (նորմատիվ կամ վարչական) ակտով կամ փաստական հետևանքներ առաջացնող որևէ գործողությամբ կամ անգործությամբ: Այս բնորոշումից պարզ է դառնում, որ, օրինակ, նախարարի հրամանով շրջաբերական ընդունելու գործընթացը վարչարարություն չէ, իսկ դրա արդյունքում ընդունված ակտը, որքանով էլ պարտադիր է նախարարության աշխատողների համար, ներքին օգտագործման փաստաթուղթ է: Իսկ նորմատիվ ակտը կամ ընդերքի շահագործման արտոնագիրը վարչարարության արդյունքում ընդունված համապատասխանաբար նորմատիվ և վարչական ակտեր են, որոնք ունեն արտաքին ներգործության ուժ, այսինքն՝ տարածվում են ակտն ընդունած մարմնից դուրս գտնվող անձանց վրա:

**Հարց 6. Ո՞րն է Օրենքում վարչարարության սկզբունքների ամրագրման նպատակը, և ինչու՞ են դրանք անվանվում վարչարարության հիմնարար սկզբունքներ: Ո՞րն է այդ սկզբունքների տարբերությունը Օրենքի II՝ վարչական վարույթին վերաբերող բաժնում ամրագրված սկզբունքներից:**

### **Պատասխան.**

Ինչպես արդեն նշվեց առաջին հարցի պատասխանում, Օրենքի ընդունմամբ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ մեկ տեղում, կոնկրետացված ձևով շարադրվեցին ՀՀ վարչական իրավունքի (ընդհանուր մասի) հիմնարար դրույթները, որոնց մի մասը բխում է ՀՀ Սահմանադրությունից: Դրանք առաջին հերթին վարչարարության հիմնարար սկզբունքներն են, որոնց մեծ մասն իրենց էությանը սահմանադրական դրույթներ են, որոնք, ամրագրվելով վարչական մարմինների համար, ստացել են նաև վարչական իրավունքի սկզբունքների բնույթ: Բոլոր այդ սկզբունքների ամ-

րագրման նպատակը մեկն է՝ ապահովել իրավական պետության գաղափարների, դրանց դրսևորումների իրացումը վարչական իրավունքում: Իսկ որո՞նք են այդ գաղափարները, որոնք նորմատիվ իմաստավորում են ստացել ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի այն համառոտ ձևակերպման մեջ, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը իրավական պետություն է: Ավելի կոնկրետ, ի՞նչ է դա նշանակում երկրի գործադիր իշխանության համար՝ համապետական և տեղական մակարդակներում:

Դա նշանակում է, մասնավորապես, նաև վարչական մարմինների կապակցվածություն մարդու հիմնական իրավունքներով և ազատություններով, վարչական մարմինների գործունեության օրինականություն, դրանց որոշումներից պաշտպանվելու բավարար երաշխիքներ ինչպես վարչական մարմինների համակարգում, այնպես էլ դատարաններում, կամայականության արգելք, վարչարարության համաչափություն: Այստեղից պարզորոշ է դառնում, որ Օրենքում ամրագրված այս կարևորագույն սկզբունքներն իրենց «տեղում» են և իրենք էլ կանխորոշում և արտացոլվում են Օրենքի այլ դրույթներում, հատկապես վարչական վարույթի սկզբունքներում, որոնք պակաս կարևոր չեն արդեն իսկ վարչական վարույթի շրջանակներում, ասենք՝ օրինականություն ապահովելու համար: Ընդամին, քանի որ գործնականում անձի և վարչական մարմնի շփումների առանցքում կոնկրետ հարցերին լուծում տալն է, իսկ դա հնարավոր է անհատական (վարչական) ակտերի միջոցով, ապա ակնհայտ է, որ վարչական վարույթի սկզբունքների դերը գործնականում դժվար է թերագնահատել: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ սահմանադրական դրույթների վերացական և շատ հակիրճ բովանդակությունը որոշակիացնող ու մանրամասնող դրույթները չէին կարող չկրել «հիմնարար» ածականը: Բացի դրանից, այդ բնորոշումն ի հայտ է բերում փաստը, որ Հայաստանում ԽՍՀՄ դարաշրջանից հետո օրենքի մակարդակով առաջին անգամ են կողիֆիկացիայի ենթարկվում ընդհանուր վարչական իրավունքի ակունքները: Գաղտնիք չէ, որ մինչ Օրենքի ընդունումը վարչական իրավունքի առօրյա պատկերացումը սահմանափակվում էր վարչական իրավախախտումներով և ֆիզիկական անձանց վարչական կալանքի ենթարկելով, իսկ մասնագետների համար վարչական իրավունքը գործադիր մարմինների բազմաբնագավառ գործունեությունը կանոնակարգող օրենքների և ենթաօրենսդրա-

կան ակտերի, մեղմ ասած, չհամակարգված բազմությունն էր, որին գումարվում էր վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը:

## **Հարց 7. Ո՞րն է վարչարարության օրինականության սկզբունքի էությունը:**

### **Պատասխան.**

Արդեն նշվել է, որ իրենց գործունեությունն իրականացնելիս վարչական մարմինները պարտավոր են պահպանել մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնցից առավել մեծ նշանակությամբ, թերևս, առանձնանում է վարչարարության օրինականության սկզբունքը: Այն իրավական պետության հիմնաքարերից մեկն է: Եթե երկրի գործադիր իշխանությունն իրականացվում է ոչ թե իրավաչափորեն, այլ կամայականորեն, ապա մյուս սկզբունքների պահպանումն այլևս իմաստագրկվում է, իսկ տվյալ պետությունը ոչ թե «մի մասով», այլ ընդհանրապես հակաիրավական և հակաժողովրդավարական է դառնում: Վարչարարության օրինականության սկզբունքը Օրենքով կարգավորվող հարաբերություններում կոնկրետացնում է ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքը, ինչպես նաև վերջինից ածանցվող՝ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի. «Պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով»:

Վարչարարության օրինականության սկզբունքը նշանակում է, որ վարչական մարմիններն իրենց գործունեությունում «ազատ» չեն, այլ կապակցված են իրավունքով և օրենքով: Այդ կապն իր դրսևորումը ստանում է երկու ձևով. օրենքի գերակայությամբ և օրենքի վերապահմամբ:

Օրենքի գերակայությունը նշանակում է, որ վարչական մարմնի ոչ մի իրավական ակտ, գործողություն կամ անգործություն չպետք է հակասի օրենքին: Վարչարարության հանդեպ օրենքն ունի գերակայող նշանակություն: Օրենքն է կանխորոշում վարչարարության բովանդակությունը: Վարչական մարմինը պարտավոր է պահպանել օրենքը (հոդված 4, մաս 1-ին): Հակառակ դեպքում նրա գործու-

նեութիւնը և դրա արդյունքում ընդունված իրավական ակտը կամ նրա գործողութիւնը կամ անգործութիւնը ոչ իրավաչափ են և, որպէս հետևանք, առ ոչինչ կամ անվավեր են:

Իսկ օրենքի վերապահումը նշանակում է, որ վարչական մարմինը որևէ լիազորութիւն իրականացնելու համար պետք է լիազորված լինի օրենքով կամ օրենքով նախատեսված (թույլատրված) դեպքերում՝ նաև այլ իրավական ակտերով: Այլ կերպ ասած՝ վարչական մարմինների լիազորութիւնները պետք է ուղղակիորեն կամ անուղղակի սահմանվեն (վերապահվեն) օրենքով (հոդված 4, մաս 2-րդ):

Օրինակ՝ եթէ վարչական մարմինն ընդունում է իր կարծիքով ապօրինի շինութեան քանդման որոշում՝ առանց դրա սեփականատեր հանդիսացող անձին լսելու և, առանց օրենքով այդ լիազորութիւնն ունենալու, ապա նա խախտում է օրինականութեան սկզբունքն իր երկու տարրերով հանդերձ:

Մեկ այլ օրինակ. «ժողովրդավարութիւն» կուսակցութիւնը Երևանի քաղաքապետին իրազեկում է, որ Մատենադարանին հարող հրապարակում, Օղակածն զբոսայգում սրճարան կառուցելու թույլտվութիւն տալու դեմ ցանկանում է հանրահավաք անցկացնել: Ներկայացված հայտում նշվում են կազմակերպիչների անունները, ազգանունները, հասցեները, միջոցառման տեղը, ժամը, մասնակիցների հնարավոր թիվը: Երևանի քաղաքապետի կարծիքով կազմակերպիչների վերաբերյալ տվյալները բավարար չեն: Վերջինս պահանջում է լրացուցիչ տեղեկութիւններ այն մասին, թէ որտեղ են աշխատում կազմակերպիչները, որքան է նրանց ամսական միջին աշխատավարձը, ինչպէս նաև տեղեկանք կազմակերպիչների՝ Երևանում հաշվառված լինելու մասին ու հնարավոր մասնակիցների անուն ազգանունները:

Ակնհայտ է, որ այս պարագայում Երևանի քաղաքապետը կխախտի օրինականութեան սկզբունքը, քանզի որևէ օրենքով վերջինս հանրահավաքի կազմակերպիչներից նման փաստաթղթեր պահանջելու իրավասութիւն չունի:

**Հարց 8. Ի՞նչ է նշանակում ձևական պահանջների չարաշահում: Ինչու՞ է այդ պահանջների չարաշահման արգելքն ամրագրվել որպես հիմնարար սկզբունք:**

**Պատասխան.**

Ձևական պահանջների չարաշահումը վարչական մարմինների «բյուրոկրատական մոտեցման» ամենավառ և թերևս ամենահաճախ հանդիպող դրսևորումներից է: Դա այն երևույթներից մեկն է, որն էապես նպաստում է անձանց և վարչական մարմինների միջև փոխադարձ անվստահության մթնոլորտի ստեղծմանը և իշխանությունից հանրության «օտարացմանը», չնայած որ այդ դրսևորումները հատուկ են ոչ միայն վարչական մարմիններին: Բայց հատկապես հենց այդ մարմիններում է մարդուն պատում անհարմարության զգացում, երբ օրենքի տառը պահպանելու «նկատառումներից» ելնելով, նրան հարկադրում են տասնյակ տեղեկանքներ բերել կամ մերժում են նրա դիմումի ընդունումը, քանի որ նա, ասենք, «պահանջվածից պվելի» թեք է ստորագրել կամ, օրինակ, իրավաբանական անձի կնիքը նրա ներկայացրած փաստաթղթի վրա փոքր ինչ դրա համար նախատեսված տեղի շրջանակներից դուրս է եկել և այլն: Նման պահանջները որոշակի խորհրդավորություն են հաղորդում իրականում հաճախ շատ «պրոզայիկ» լիազորությունների իրականացմանը: Սակայն պարզ է, որ երբ որևէ օրենք սահմանում է, օրինակ, դիմումը ստորագրելու դիմողի պարտականությունը, այն չի նախատեսում, որ, օրինակ, եթե քաղաքացու ստորագրությունը «ծուռ է», ապա այն անվավեր է: Օրենքի սեփական «լրացման», այլ կերպ ասած, այն չափազանց տառացի հասկանալու վարչական մարմինների հակվածությունը հաճախ նրանց «հնարամտությունն» է, իսկ ամեն բան արհեստականորեն բարդացնելու նրանց հակվածությունից ուղղակի սնունդ է առնում կաշառակերությունը: Ձևական պահանջների հորձանուտում հայտնված անձինք թյուրիմացաբար կարծում են, թե նմանօրինակ միջոցներն օգտագործվում են օրենքը շրջանցելու համար և չեն էլ պատկերացնում, որ այդ «օրենքն» ընդամենը տվյալ պաշտոնատար անձի արհեստածին, անհիմն կամ «հիմքը», ձևն էությունից, բովանդակությունից վեր դասելու ցանկությունն է: Իսկ նման ցանկությունը կարող է որոշ, քաջ հայտնի հանգամանքներում նաև «զսպվել»:

Օրենքը նախատեսում է ոչ միայն այս դեպքերը կանխարգելելու հնարավորություններ, այլև այն դեպքերը, երբ վարչական մարմինը, օրինակ, գերատեսչական նորմատիվ ակտերի կամ պարզապես իր գործողությունների կամ անգործության միջոցով նպաստում է բյուրոկրատական քաջքշուկի առաջացմանը: Այդ նպատակով է Օրենքում խոսվում «վարչարարություն» և ոչ թե միայն վարչական վարույթ իրականացնելիս ձևական պահանջները չարաչափելու արգելքի մասին (հոդված 5): Այս սկզբունքն իր ավելի կոնկրետացված դրսևորումն է գտել նաև Օրենքի բուն վարչական վարույթին նվիրված բաժնում, այդ բաժնի մի քանի դրույթներում (հոդված 32, հոդված 36, մաս 3-րդ, հոդված 40, հոդված 41, հատկապես այդ հոդվածի 2-րդ մաս և այլն):

Անշուշտ, ձևական, ընթացակարգային նախապայմաններն անհրաժեշտ են, սակայն դրանց կիրառումը չպետք է ինքնանպատակ լինի: Վարչական մարմինը չպետք է խստորեն հետևի ձևին, եթե դա արդարացված չէ գործի հանգամանքներով և անթույլատրելի կերպով բարդացնում է սեփական իրավունքներն իրականացնելու անձի հնարավորությունները:

Բերենք մեկ օրինակ. երկվորյակ եղբայրները միասին պետք է ընդունվեն դպրոց, և դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ է ներկայացնել բժշկական տեղեկանք երեխաների առողջության վերաբերյալ: Երեխաների ծնողները, չիմանալով այն մասին, որ յուրաքանչյուր երեխայի համար պետք է ներկայացվի առանձին տեղեկանք, դպրոց են ներկայացրել մեկ տեղեկանք, որը վերաբերում է երկու երեխաներին միասին: Այս դեպքում, եթե դպրոցի տնօրինությունը երեխաների ծնողներից պահանջի ներկայացնել առանձին տեղեկանքներ, ապա դա կլինի ձևական պահանջների չարաչափում, այն արգելող սկզբունքի խախտում, քանզի անհրաժեշտ բովանդակությամբ փաստաթուղթ՝ այս դեպքում տեղեկանք առողջության վերաբերյալ, արդեն իսկ ներկայացվել է, թեպետ ոչ այն ձևով, որը պահանջվում էր: Ուստի դպրոցի տնօրինությունը պետք է երկու երեխաներին էլ ընդունի դպրոց, և դա կլինի իրավաչափ, քանզի բովանդակային առումով օրենքով սահմանված պահանջները կատարված են:

**Հարց 9. Ի՞նչ է նշանակում հայեցողական լիազորություն՝ ըստ Օրենքի: Ինչու՞ է այդ լիազորությունների իրականացումը սահմանափակվում համանուն սկզբունքի միջոցով:**

**Պատասխան.**

Հաշվի առնելով վարչական իրավունքի բնագավառում մարդ-պետություն հարաբերությունների բազմազանությունն ու նրբերանգները, օրենսդրին ոչ միշտ է հաջողվում սահմանել կոնկրետ վարքագծի կանոններ՝ կոնկրետ պայմաններում: Այդ իսկ պատճառով օրենսդիրն իրավակիրառողին հաճախ իրավունք է վերապահում, ելնելով կոնկրետ հանգամանքներից, ընդունել հնարավոր մի քանի իրավաչափ որոշումներից որևէ մեկը՝ դրանց ընտրությունը թողնելով վարչական մարմնի հայեցողությանը:

Սակայն վարչական մարմինների հայեցողական լիազորությունները բնավ էլ չի կարելի դիտարկել որպես կամայականության հիմք և հայեցողությունը հասկանալ որպես վարչական մարմնի բացարձակ ազատություն:

Օրենքում հստակ սահմանված են այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն վարչական մարմիններն իրենց հայեցողական լիազորություններն իրականացնելիս:

Համաձայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ «հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմնին վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը»: Այս ձևակերպումից հետևում է, որ՝

ա) հայեցողական լիազորությունը պետք է վարչական մարմնին վերապահված լինի որևէ օրենքով (սա, թերևս, օրինականության սկզբունքի արտացոլումն է այս սկզբունքում)։

բ) այդ լիազորությունը վարչական մարմնի կողմից մեկ հարցի մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրականացնելու մեջ է, իսկ այդ ընտրությունը վարչական մարմնի իրավունքն է, այսինքն՝ կախված օրենքի կարգավորումից և կոնկրետ իրավիճակից, դա կարող է նշանակել նաև վարչական մարմնի՝ գործելու կամ չգործելու, որոշում ընդունելու կամ ընդհանրապես որևէ որոշում ընդունելուց ձեռնպահ մնալու հայեցողություն։

գ) բոլոր այդ լուծումները պետք է լինեն հնարավոր, այսինքն՝ իրագործելի. սրանից հետևում է, որ պարտադիր չէ, որ այդ լուծումները մատնանշվեն կամ ուրվագծվեն օրենքում, բավարար է, որ



այդ հարցում օրենքը վարչական մարմնին նաև սեփական հնարավոր լուծումների միջև ընտրելու իրավունք վերապահի, ինչը շատ ավելի հաճախակի է լինում:

դ) բոլոր այդ լուծումները պետք է լինեն իրավաչափ (օրինակա-նության սկզբունքի ևս մեկ արտացոլում), իսկ թե ինչ է դա նշանակում ավելի կոնկրետ, երևում է այս հոդվածի 2-րդ մասից: Այն 1-ին մասի համակցությամբ սահմանում է այն սահմանները, որոնցով կապակցված է վարչական մարմինը հայեցողական լիազորություն իրականացնելիս: Դրանք են՝ օրենքով կանխորոշված հայեցողության սահմանները (1-ին մաս) և այդ սահմաններում հայեցողությունն իրականացնելիս հայեցողական լիազորություն վերապահելու նպատակները: Այդ նպատակների մի մասը Օրենքն ուղղակիորեն ամրագրում է («մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտություն, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներ»), իսկ մնացած արժեքները վարչական մարմինը պարտավոր է բացահայտել ինքնուրույն, պարզելով հայեցողական լիազորություն վերապահելու՝ օրենսդրի նպատակը («օրենքով կանխորոշված այլ նպատակներ») և այդ ամենից հետո միայն լուծում տալով կոնկրետ գործին կամ ընդունելով նորմատիվ ակտ:

Վերոգրյալից հետևում է նաև պատասխանը այն հարցի, թե ինչու է հայեցողական լիազորությունների իրականացումը սահմանափակվում հիշատակված սկզբունքի միջոցով: Պատասխանն արդեն ակնհայտ է՝ հակառակ դեպքում վարչական մարմինը կգործեր կամայականորեն և ինքը կորոշեր իր գործելու սահմանները և նպատակը, այսինքն՝ նրա հայեցողությունը կլիներ բացարձակ, իսկ գործելակերպը՝ միգուցե և կամայական: Ակնհայտ է, որ դրանով կխախտվեր նաև օրինականության սկզբունքը, իսկ մեծ հաշվով հայեցողական լիազորությունների սահմանափակումը ևս այդ սկզբունքի դրսևորումը կարելի է համարել:

**Հարց 10. Ո՞րն է կամայականության արգելքի սկզբունքի էությունը: Եթե կամայականության արգելքն արտացոլում է իրավահավասարության գաղափարը, ապա բավարար չէ՞ արդյոք այն, որ իրավահավասարությունն ամրագրված է Սահմանադրությամբ:**

**Պատասխան.**

Պատասխանի շարադրանքը սկսենք երկրորդ հարցից և նշենք, որ վերջինիս պատասխանն արդեն վերևում տրվել է, սակայն բավարար չէ, որովհետև հակառակ դեպքում ամբողջ օրենսդրությունը կարող էր ավելորդ համարվել, չէ՞ որ չկա որևէ ոլորտ, որի իրավական հիմքը Սահմանադրությունը չնախանշեր:

Ինչ վերաբերում է կամայականության արգելքի սկզբունքի էությանը, ապա պետք է փաստել, որ այն, հիրավի, իրավահավասարության սահմանադրական սկզբունքի (ՀՀ Սահմանադրություն, հոդված 14.1) որոշակիացված արտացոլումն է Օրենքում: Իսկ թե ինչ է տալիս այդ որոշակիացումը, պարզաբանենք կոնկրետ օրինակով: Մեր իրականության մեջ սովորական գործելակերպ են դարձել այն դեպքերը, երբ վարչական մարմինները, օրինակ՝ ոստիկանությունը կամ հարկային տեսչությունը վարչական պատասխանատվության միջոցները կիրառում են իրենց ցանկությամբ: Ասենք՝ ճանապարհային ոստիկանները որևէ խախտման համար տուգանում են մեկին, իսկ նրա աչքի առջև մեկ ուրիշը նույն իրավիճակում կատարում է նույն խախտումը, և դա մնում է անհետևանք: Կամ հարկային տեսուչը պարբերաբար ստուգումներ է անցկացնում մեկ խանութում և պահանջ է ներկայացնում չվճարված հարկերը և տուգանքները բռնագանձելու մասին, իսկ դրան հարող խանութը անհասկանալիորեն տարիներով ստուգումների չի ենթարկվում, հարկեր չի վճարում և այլն:

Այսպիսի իրավիճակներն այնքան հաճախ են ի հայտ գալիս, որ օրինակները կարելի է անվերջ շարունակել: Սակայն երկու դեպքում էլ ակնհայտ է այն հանգամանքը, որ տվյալ դեպքում օրինականության խախտում նեղ իմաստով կարծես թե առկա չէ: Երկու դեպքում էլ վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը եղել է իսկապես օրինական: Սակայն կամայականության արգելքի սկզբունքը այն սկզբունքն է, որը ոչ թե իրավունքի հիմքում ընկած օրինականության, այլ նույնպես դրա հենասյունը կազ-

մող արդարության գաղափարի դրսևորումներից է: Այսպիսով՝ վարչական մարմնի այդ գործողությունը ոչ իրավաչափ է, քանի որ նա օրենքը կիրառում է ընտրաբար, շահադիտական կամ ոչ արդարացի այլ նկատառումներով պայմանավորված իր ցանկությամբ, ուրիշ խոսքով՝ կամայականորեն:

Իսկ քանի որ կամայականության արգելքի սկզբունքը՝ որպես վարչարարության հիմնարար սկզբունք, ամրագրվում է նաև Օրենքում, ապա օրինականության սկզբունքի ուժով դրան հակասող վարչարարությունը դառնում է նաև ոչ օրինական՝ հենց այդ սկզբունքի իմաստով: Այսպիսով՝ կամայականության արգելքի սկզբունքը նշանակում է, որ վարչական մարմիններին արգելվում է տարբերակված (անհավասար) մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք (հոդված 7, մաս 1-ին, առաջին պարբերություն): Եվ, ընդհակառակը, նրանք պարտավոր են անհատական մոտեցում ցուցաբերել իրարից էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ (հոդված 7, մաս 1-ին, երկրորդ պարբերություն): Այլ խոսքով՝ էապես նմանին պետք է վերաբերվել միևնույն ձևով, իսկ էապես տարբերվողի հանդեպ անհրաժեշտ է ցուցաբերել այդ տարբերությունները հաշվի առնող (անհատական) մոտեցում:

Այս սկզբունքի գործնական կարևորությունը արտահայտվելու է վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորություններ իրականացնելիս: Մանրամասնելով վերը նշված սկզբունքի հիմնական էությունը՝ օրենսդիրն այդ սկզբունքին վերաբերող հոդվածում հատուկ դրույթներ է նախատեսել հենց հայեցողական լիազորություններ իրականացնելու ժամանակ վարչական մարմինների կամայականությունները կանխելու՝ դրանց դրսևորման դեպքում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրելով դրանցից պաշտպանվելու հզոր և արդյունավետ իրավական միջոցներ: Այսպես՝ եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում նա հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով (հոդված 7, մաս 2-րդ, առաջին պարբերություն): Եթե, օրինակ, ոստիկանությունը սահմանված արագությունը 10 կիլոմետր ժամ գերազանցող վարորդին կարող է զգուշացնել կամ տուգանել նվազագույն աշխատավարձի հնգա-

պատիկից քսանապատիկի չափով, ապա ոստիկանության համապատասխան աշխատակիցը նույն խախտումը կատարած մեկ խմբին չի կարող զգուշացնել, իսկ մյուսին տուգանել, բոլոր նման դեպքերում վարչական մարմինը պետք է գործի նույն կերպ, թեպետ ունի հայեցողություն: Այս սահմանափակումից վարչական մարմինը կարող է հրաժարվել (ազատվել) միայն այն դեպքում, երբ գերակա (հանրային-հեղ.) շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում (հոդված 7, մաս 2-րդ, երկրորդ պարբերություն), օրինակ՝ եթե վարչական մարմինն հայեցողություն վերապահած օրենքն այնպես է փոփոխվել, որ փոխվել են նաև այդ հայեցողության սահմանները կամ այն կիրառելու հիմքերը: Եթե սահմանված արագությունը 10 կիլոմետր ժամ գերազանցող վարորդներին ոստիկանությունը տուգանում էր նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, սակայն վթարների վիճակագրությունը վկայում է, որ այդ խախտման պատճառով էականորեն ավելանում են վթարները, ապա ոստիկանությունը կարող է փոփոխել իր մոտեցումը և այդ պահից տուգանքը նշանակել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով: Բացի «արմատական» ազդեցության նման դեպքերից, վարչական մարմինն իրավունք չունի որևէ այլ հիմքով հանկարծակի փոխել իր վարքագիծը և, ասենք, կենսաթոշակի իրավունք ձեռք բերած տասն անձանց կենսաթոշակ նշանակել առանց այս կամ այն լրացուցիչ նախապայմանի, բայց տասնմեկերորդից պահանջել այդպիսի լրացուցիչ պայմանի տրամադրում կամ քսան վարորդի նույն հիմքով տուգանել նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ քսանմեկերորդին՝ հնգապատիկի չափով:

Մեկ այլ օրինակ. քաղաքացին առանց համապատասխան թույլտվության իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասում, բլրի լանջին տուն է կառուցում: Ստուգում կատարելիս իրավասու մարմինը հարկադրում է երկու ամսվա ընթացքում քանդել տունը: Քաղաքացին մատնացույց է անում, որ մոտակայքում՝ նույն վայրում, կան կառուցված այլ տներ, որոնք կառուցվել են նույն կարգով և հետագայում են միայն օրինականացվել, և որ ինքը տունը կառուցել է ճարտարապետական և շինարարական բոլոր նորմերի պահպանմամբ: Քաղաքացին մատնանշում է այլ տները և խնդրում, որպեսզի իրեն ևս տան համապատասխան թույլտվություն: Վարչական մարմինը մերժում է այդ պահանջը՝ մատնանշե-

լով «Քաղաքաշինության մասին» օրենքի այն դրույթը, համաձայն որի ինքն իրավասու է կարգադրելու քանդել առանց թույլտվության կառուցված տունը: Սակայն Քաղաքաշինության մասին օրենքը վարչական մարմնին իրավունք է տալիս նաև օրինականացնել առանց թույլտվության արդեն իսկ կառուցված շինությունները, եթե վերջիններս համապատասխանում են քաղաքի ճարտարապետական ու շինարարական նորմերին:

Եթե օրինականության տեսանկյունից վարչական մարմնի՝ տունը քանդելու վերաբերյալ կարգադրությունը կարող է և անխոցելի թվալ, սակայն ակնհայտ է կամայականությունը՝ տարբեր սուբյեկտների նկատմամբ միևնույն փաստական հանգամանքներում տարբերակված մոտեցումը, որն իրավաչափ լինել չի կարող:

**Չարդ 11. Ինչո՞վ է կարևորվում համաչափության սկզբունքի ամրագրումը Հայաստանի համար: Արդյո՞ք այդ սկզբունքի ամրագրմամբ մենք արհեստականորեն օտարածին դրույթներ չենք ներմուծում մեր իրավական համակարգ: Որո՞նք են համաչափության սկզբունքի տարրերը:**

### **Պատասխան.**

Համաչափության սկզբունքը բնավ օտարածին չէ ՀՀ իրավակարգի համար: Այն իրավական պետության (ՀՀ Սահմանադրություն, հոդված 1) կարևորագույն տարրերից մեկն է: Բացի դրանից, համաչափության սկզբունքի բաղադրիչներից մեկի անհրաժեշտությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածում՝ որպես մարդու և քաղաքացու մի շարք հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման նախադրյալ: Այդ իրավունքներն ու ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ մի շարք գերակայող հանրային արժեքների պաշտպանության նկատառումներից ելնելով, պայմանով, որ նման սահմանափակումներն անհրաժեշտ են այդ արժեքները պաշտպանելու համար:

Այսպիսով՝ Օրենքում համաչափության սկզբունքի բառացի ամրագրումը նշանակում է հիմնարար սահմանադրական դրույթների ևս մեկ կոնկրետացում ՀՀ ընդհանուր վարչական իրավունքում, և նաև այն, որ այդ սկզբունքն իր ամբողջական տեսքով առաջին անգամ է ամրագրվում մեր օրենսդրության մեջ: Մինչ Օրենքն ուժի մեջ

մտնելը այդ սկզբունքի գոյության փաստը կարող էր և կարող է արձանագրվել միայն ՀՀ Սահմանադրության հիշյալ դրույթների մեկնաբանման միջոցով, սակայն սխալված չենք լինի, եթե պնդենք, որ մեր իրավակիրառողները, ներառյալ նաև դատարանները, դեռևս ձեռնպահ են մնում այդպիսի մեկնաբանությունից<sup>4</sup>, և միայն Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կարելի է կանխագուշակել, որ վարչական մարմինները և նրանց գործունեության վերաբերյալ գործեր քննող դատարանները կսկսեն աստիճանաբար կիրառել այս կարևորագույն սկզբունքը:

Համաչափության սկզբունքի առանցքային կարևորությունն այն է, որ հիշյալ սկզբունքի կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել վարչական մարմինների միջամտող ակտերի կամ գործողությունների իրավաչափությունը՝ այդ միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ դրանց նպատակին հասնելու հնարավորությունը և թույլատրելիությունը:

Օրենքով որևէ հարցին լուծում տալու (օրենքով ամրագրված նպատակ), օրինակ՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական մարմնի հայեցողությանն են վերապահված դրան հասնելու մեկից ավելի միջոցներ, ասենք՝ տուգանք կամ համապատասխան իրավունքից որոշակի ժամկետով զրկում և այլն: Այդ միջոցներից մեկն ավելի մեղմ է ներգործում անձի վրա, քան մյուսը կամ մյուսները:

Համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորելու, որպեսզի այս կամ այն հանգամանքներում վարչական մարմինը համարժեքություն ապահովի իր կողմից կիրառվող միջոցների և դրանց կիրառմամբ հետապնդվող (Սահմանադրությամբ և օրենքով նախանշված) նպատակի միջև՝ համարժեք արձագանքելով որևէ իրավիճակի: Դա նշանակում է, որ եթե մույն նպատակին հասնելու հա-

---

<sup>4</sup> Խոսքը Սահմանադրության պաշտոնական պարտադիր մեկնաբանման մասին չէ, ինչպես, օրինակ, Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ այդ մենաշնորհը վերապահված է ՌԴ Սահմանադրական դատարանին. ՀՀ ՍԳ-ն այդպիսի լիազորություն չունի: Խոսքը իրավական նորմերի կիրառման ժամանակ կատարվող մեկնաբանության մասին է: Հաճախ այս երկու երևույթները շփոթում են միմյանց հետ և պնդում, թե իբր ՀՀ Սահմանադրությունը մեկնաբանելու իրավունք ոչ ոք ՀՀ-ում չունի, այնինչ ՀՀ Սահմանադրության որևէ դրույթի կոնկրետացումը օրենքներում, ինչպես նաև իրավակիրառողի կողմից Սահմանադրության անմիջական կիրառումը կոնկրետ իրավահարաբերություններում անհնար են առանց մեկնաբանության:

մար վարչական մարմինը կարող է գործադրել իր տրամադրության տակ եղած ավելի մեղմ միջոցը (անձի իրավունքներին միջամտող առավել մեղմ միջոցը), ապա պարտավոր է կիրառել հենց այդ միջոցը և ոչ թե ավելի խիստը՝ մյուսներին ևս իր խստությամբ «վախեցնելու» համար: Այսինքն՝ այս սկզբունքն իրավագիտության և իրավակիրառման պրակտիկայի նուրբ հնարքներից է, որը կոչված է ապահովելու համապատասխան հարաբերությունների մեջ ներգրավված վարչական մարմինների՝ իրավիճակին համարժեք ձևով գործելն ու ավելի «մեծ վնաս չպատճառելը», քան անհրաժեշտ է:

Համաչափության սկզբունքը բաղկացած է երեք տարրերից. դրանք են՝ պիտանիություն, անհրաժեշտություն և չափավորություն (հոդված 8): Օրենքի այն պահանջը, համաձայն որի վարչական մարմնի կողմից իրավական նորմերով հետապնդվող նպատակին հասնելու համար գործադրվող միջոցները պետք է լինեն պիտանի, նշանակում է, որ վարչական մարմնի հայեցողությանը վերապահված մի քանի միջոցներից վարչական մարմինը պետք է ընտրի այն միջոցը, որով կարող է հասնել այդ նպատակին: Եթե պիտանի միջոցները մեկից ավելի են, ապա դրանցից պետք է ընտրվի տվյալ նպատակին հասնելու համար անհրաժեշտը, իսկ պիտանի և անհրաժեշտ միջոցներից՝ այն միջոցը, որն առավել նվազ ձևով միջամտելով անձի իրավունքներին, այդուհանդերձ, թույլ է տալիս հասնել հետապնդվող նպատակին: Վերջին՝ չափավորության տարրը կարելի է զեղարվեստորեն անվանել «քիչ արյամբ» նպատակին հասնելու պարտականություն կամ «հրանոթով ճնճղուկ չորսալու» կանոն:

Օրինակ՝ ոստիկանն իրավունք չունի հրազենի կիրառման միջոցով փորձել կանխել, ասենք, մանր խուլիգանությունը, նույնիսկ եթե իր և իրավախախտի միջև եղած հեռավորությունը նրան հնարավորություն չի տալիս այդ վարչական իրավախախտումը կանխել այլ եղանակով: Դա անհրաժեշտ միջոց չէ տվյալ իրավախախտումը կանխելու համար, թեկուզև «միանգամայն» պիտանի է տրվյալ իրավիճակում, այսինքն՝ դրանով կարելի է կանխել այդ իրավախախտումը: Իսկ մեկ այլ իրավիճակում, երբ ոստիկանը նկատում է անձի վրա սառը զենքով հարձակում գործող մեկ այլ անձի<sup>5</sup>, ապա

<sup>5</sup> Այս օրինակը վարչական իրավունքի ոլորտից չէ, սակայն այն ավելի ակնհայտ է դարձնում համաչափության սկզբունքի էությունը:

հրազենի կիրառումը պիտանի և անհրաժեշտ է այդ իրական վտանգը կանխելու համար: Սակայն դա ևս կախված է կոնկրետ իրավիճակից: Եթե, օրինակ, հարձակում գործող անձը ոստիկանի հրահանգով դադարեցրել է հարձակումը և որևէ գործողություն չի ձեռնարկում, ապա ոստիկանը չպետք է մահակ կամ ֆիզիկական ներգործության այլ միջոցներ կիրառի տվյալ անձին սանձելու համար, բավարար է ձեռնաշղթաների կիրառումը, եթե նա այլևս չի դիմադրում: Եթե դիմադրում է, ապա ուժի, նույնիսկ հատուկ միջոցների կիրառումը պիտանի և անհրաժեշտ է, սակայն հրազենինը՝ ոչ, եթե այդ անձը չի դիմում փախուստի: Տվյալ պարագայում հրազենի կիրառումը կլիներ պիտանի և անհրաժեշտ, բայց ոչ չափավոր միջոց այդ անձի դիմադրությունը հաղթահարելու համար:

## **Հարց 12. Ի՞նչ է նշանակում առավելագույնը, և ո՞րն է առավելագույնի սկզբունքի բովանդակությունը:**

### **Պատասխան.**

Օրենքի 9-րդ հոդվածն ամրագրում է առավելագույնի սկզբունքը: Այստեղ հարկ է նշել, որ իրականում խոսքը դեռևս հին հռոմեական իրավունքին հայտնի «a maiore ad minus» («առավելագույնը ներառում է նվազագույնը») սկզբունքի մասին է, որը մեր ժամանակներում դիտարկվում է որպես իրավունքի ընդհանուր սկզբունք՝ անկախ դրա օրենսդրական ձևակերպումից: Վարչական իրավունքի տեսանկյունից, սակայն, Օրենքում այդ սկզբունքի բովանդակությունը որոշակիորեն մանրամասնված է և դրա հետևանքով բավականաչափ արտացոլում է նաև ՀՀ իրողությունը:

Այս սկզբունքը կոչված է անձին երաշխավորել, որ վարչական մարմինն իրենից չի պահանջի կատարել որոշակի գործողություններ, եթե դրանք իրենց ծավալով ընդգրկված են արդեն իսկ կատարված գործողությունների մեջ: Միաժամանակ այս սկզբունքը վարչական մարմինն արգելում է որոշակի գործողությունը մասնատել փոքր հատվածների և անձից պահանջել դրանց կատարումը մաս առ մաս, ինչը նրանից մեծ ժամանակ ու ջանքեր կխլեր, և դա այն դեպքում, երբ հարցը կարելի է լուծել մեկ ընդգրկուն գործողություն կատարելու միջոցով:

Այս սկզբունքի էությունը բացահայտելու համար բերենք հետևյալ օրինակը: Քաղաքացին ձեռք է բերել տարիքային կենսա-



թոշակ ստանալու իրավունք: Ըստ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի, բացի 63 տարին լրանալուց, անհրաժեշտ է, որ քաղաքացին ունենա 25 տարվա ապահովագրական ստաժ: Համաձայն այդ օրենքի 47-րդ հոդվածի, մինչև 1992 թ. հունվար ամիսը քաղաքացու ունեցած ապահովագրական ստաժը հաստատվում է նրա աշխատանքային գրքույկով, իսկ դրանից հետո՝ նաև պարտադիր ապահովագրական վճարումներ կատարելը հաստատող փաստաթղթով: Հայտնի է դեպք, երբ մարզերից մեկում համապատասխան տարածքային վարչական մարմին քաղաքացին տեղեկանք է ներկայացրել իր աշխատանքի վայրից այդ վճարումները կատարելու մասին, սակայն այն չի ընդունվել, քանի որ այդ վճարումները գործատու իրավաբանական անձը կատարել է «նախարարությանը» և ոչ թե տվյալ տարածքային միավորին: Եվ այդ մարմինը քաղաքացուց պահանջել է զնալ Երևան և այնտեղից փաստաթուղթ բերել առ այն, որ վճարումները կատարվել են «նախարարությանը»: Այսպիսով՝ քաղաքացուց պահանջել են, որ տեղեկանք բերի ի հաստատումն նրա արդեն իսկ ներկայացրած տեղեկանքի, որով նա համապատասխան վճարումներ կատարելու փաստը ապացուցել է, ինչն օրենքի պահանջն է: Բովանդակային առումով քաղաքացին կատարել է օրենքով պահանջվող գործողությունը, սակայն վարչական մարմինը նրանից այլ ձևի, բայց նույն բովանդակությամբ փաստաթուղթ է պահանջում: Հենց նաև այսպիսի գործողությունների դեմ է ուղղված այս սկզբունքը, որի ուժով «վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում» (հոդված 9, մաս 1-ին): Իսկ «եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակությունը, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով» (հոդված 9, մաս 2-րդ): Բացի դրանից, Օրենքը նախատեսում է նաև, որ «եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված» (հոդված 9, մաս 3-րդ): Այսպես՝

քաղաքացուն պատկանող բնակելի տան տեղում մեկ այլ տուն կառուցելու վարչական մարմնի թույլտվությունն իր մեջ ներառում է հին տունը քանդելու թույլտվություն, և վարչական մարմինը, որը քանդելու հարցին չի անդրադարձել, անկախ քաղաքացու պահանջից, իրավունք չունի արգելել քաղաքացուն քանդել այդ շինությունն այն պատճառաբանությամբ, թե քանդելու թույլտվություն չի տրվել, քանզի բովանդակային առումով տունը քանդելու թույլտվությունը ներառվում է նույն տեղում նոր տուն կառուցելու թույլտվության մեջ:

### **Հարց 13. Ինչու՞ է Օրենքում հավաստիությունը դարձվել կանխավարկած:**

#### **Պատասխան.**

Օրենքի 10-րդ հոդվածի նպատակը վարչական մարմինների և ֆիզիկական ու իրավաբանական անձանց միջև փոխվստահության ձևավորումն է և բացի դրանից՝ վերջիններիս միջև որոշակի հավասարության ամրապնդումը: Իսկապես, ինչու պետք է վարչական մարմնի տված փաստաթղթին ավելի վստահել, քան քաղաքացու պնդումներին: Միևնույն ժամանակ այնպես, ինչպես վարչական մարմնի պաշտոնատար անձն է ենթակա պատասխանատվության՝ փաստաթղթեր կեղծելու, անձին ոչ ճիշտ տեղեկություն տրամադրելու կամ նմանատիպ այլ չարաշահումների համար, որոնք խաթարում են հասարակության վստահությունը այդ մարմնի և հանրային իշխանության հանդեպ, այնպես էլ քաղաքացին է ենթակա պատասխանատվության, խոսքը վարչական պատասխանատվության մասին է, եթե վարչական մարմնին, որն Օրենքի այս դրույթի ուժով պարտավոր է իրեն վստահել, ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, տեղեկություններ (հոդված 10, մաս 2-րդ):

Այդ է պատճառը, որ Օրենքում խոսքը հավաստիության կանխավարկածի մասին է: Իհարկե, այստեղ կա մի կարևոր վերապահում: Ճիշտ է, «վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել» (հոդված 10, մաս 1-ին, առաջին պարբերություն), և «արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկու-

թյունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ», սակայն միայն այն դեպքերում, «եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով» (հոդված 10, մաս 1-ին, երկրորդ պարբերություն): Օրինակ՝ եթե անձը կորցրել է անձնագիրը և, ներկայանալով ոստիկանության համապատասխան բաժին, հայտարարություն է ներկայացնում անձնագիրը կորցնելու մասին և հայցում նոր անձնագրի տրամադրում՝ պնդելով իր ինքնությունը, ապա անձնագրային բաժինը պարտավոր է հիմք ընդունել անձի պնդումները, քանի որ այդ բաժնում առկա են բոլոր հիմքերը, որոնց հիման վրա այդ անձին վարչական մարմինը՝ ի դեմս նույն անձնագրային բաժնի, անձնագիր է տրամադրել և այդ բաժնում հեշտությամբ կարող են հավաստիանալ այդ անձի ինքնության մեջ<sup>6</sup>: Տվյալ դեպքում վարչական մարմինը պարտավոր է առանց լրացուցիչ փաստաթղթեր կամ այդ անձի ինքնությունը հաստատող տեղեկանքներ պահանջելու սահմանված ժամկետում նրան տրամադրել նոր անձնագիր: Սակայն «եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձի ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքն է պարտավոր ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար» (հոդված 10, մաս 1-ին, երրորդ պարբերություն): Եվ եթե այդ անձի ներկայացրած տեղեկությունները կեղծ են, ապա նա կենթարկվի վարչական պատասխանատվության:

Սակայն եթե անձը մասնագիտությամբ բժիշկ է և ցանկանում է ստանալ իր մասնագիտությամբ որպես անհատ ձեռնարկատեր աշխատելու թույլտվություն, ապա նրա ներկայանալը իրավասու վարչական մարմին և նրա պնդումն առ այն, որ ինքը բժիշկ է, բավարար չեն, քանի որ օրենքը նման դեպքերում պահանջում է բժըշկի որակավորումը հավաստող փաստաթղթի, տվյալ դեպքում բարձրագույն բժշկական կրթության վերաբերյալ վկայականի ներկայացում:

Այնուամենայնիվ, չպետք է ստեղծվի այն թյուր կարծիքը, թե վարչական մարմնի հետ փոխհարաբերություններում անձը կձեր-

---

<sup>6</sup> Նրան զննելու միջոցով՝ այս ընթացակարգն իրականացվում է տվյալ անձի դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի շրջանակներում:

բազատվի բոլոր տեսակի փաստաթղթեր ներկայացնելու պարտականությունից և կարող է բավարարվել վարչական մարմին միայն բանավոր տեղեկություններ ներկայացնելով: Բոլոր այն դեպքերում, երբ հատուկ օրենքներով կսահմանվի վարչական մարմինների հետ հարաբերություններում գրավոր փաստաթղթեր ներկայացնելու պահանջ, անձը պարտավոր է դրանք ներկայացնել:

Հավաստիության կանխավարկածի սկզբունքը գործնականում դառնալու է ևս մեկ միջոց ֆիզիկական կամ իրավաբանական անձ-վարչական մարմին հարաբերություններում ավելորդ բյուրոկրատական քաշքշուկներից ձերբազատվելու համար:

Այս սկզբունքի պահպանման դեպքում իրավաբանական ու ֆիզիկական անձինք վարչական մարմինների հետ հարաբերություններում կձերբազատվեն օրենքով չսահմանված տասնյակ փաստաթղթեր ներկայացնելու գործելակերպից, իսկ համապատասխան փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ասածը, ինչպես արդեն նշվեց, կհամարվի հավաստի, քանի դեռ հակառակն ապացուցված չէ վարչական մարմնի կողմից:

#### **Հարց 14. Ինչպե՞ս հասկանալ տնտեսվարության սկզբունքը:**

##### **Պատասխան.**

Պատկերացումը, թե տնտեսվարությունը տվյալ վարչական մարմնի ներքին խնդիրն է, իրականում թվացյալ է, քանզի վերջինս ուղղակիորեն ամռչվում է յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձի:

Վարչական մարմինների գործունեությունը ֆինանսավորվում է ֆիզիկական և իրավաբանական անձանց վճարած հարկերից ու տուրքերից. հանգամանք, որը վարչարարության խնայողաբար և արդյունավետ իրականացման հարցում արդարացնում է հասարակության շահագրգռվածությունը:

Այս սկզբունքի կիրառման պայմաններում վարչական մարմինները պարտավորվում են վարչարարության նպատակին հասնել միջոցների հնարավորինս տնտեսման, նվազագույն ծախսերի միջոցով: Սակայն այս սկզբունքը ոչ միայն չի ենթադրում, այլ նաև բացառում է այնպիսի վիճակները, երբ վերը նշված միջոցների տնտեսումը կհանգեցնի վարչական մարմինների լիազորություններ-

րի ոչ պատշաճ իրականացմանը: Նվազագույն ծախսատար եղանակը միշտ չէ, որ նաև առավել նպատակահարմարն է լինում: Պարզապես յուրաքանչյուր դեպքում վարչական մարմինը պետք է գտնի միջոցների այն ծավալը, որն անհրաժեշտ և բավարար է իր խնդիրների արդյունավետ լուծման համար:

Այլ խոսքով՝ Օրենքի 11-րդ հոդվածում ամրագրված սկզբունքը նշանակում է միայն այն, որ վարչական մարմինն իր ծախսերը պետք է համադրի իր գործունեության արդյունքների հետ և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում որոշի, թե ինչպես առավել սեղմ ժամկետում առավել նպաստավոր արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված գույքային միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:

Օրինակ. «ժողովրդավարություն» կուսակցությունը նախընտրական քարոզչության փուլում հանրահավաք անցկացնելու վերաբերյալ իր հայտում հաղորդում է վարչական մարմին, որ հանրահավաքին մասնակցելու են մոտ 200 մարդ: Հանրահավաքը տեղի է ունենում և, իրոք, վերջինիս մասնակցում են ոչ ավելի, քան 200 մարդ. մասնակիցների թիվը 195 է: Սակայն ոստիկանությունը հանրահավաքի ընթացքում հասարակական կարգը պահպանելու նպատակով հանրահավաքի վայր է ուղարկում ոստիկանության 300 աշխատակից, 3 ջրցան մեքենա, շտապ օգնության 5 մեքենա:

Վարչական մարմնի նման գործելակերպը ուղղակիորեն կհակասի տնտեսվարության սկզբունքին:

### **Չարք 15. Արդյոք սպառի՞չ են Օրենքում թվարկված հիմնարար սկզբունքները:**

#### **Պատասխան.**

Այս հարցի պատասխանը տալիս է Օրենքի 12-րդ հոդվածը, և այդ պատասխանը ժխտողական է: Օրենքը պարզորոշ ասում է, որ այդ սկզբունքները սպառիչ չեն և չեն կարող արգելք լինել վարչարարության այլ սկզբունքներ կիրառելու համար: Այս կանոնը նշանակում է, որ հատուկ օրենքներով կարող են սահմանվել տվյալ բնագավառում վարչարարության լրացուցիչ հիմնարար և պարզապես այլ սկզբունքներ:

Սակայն Օրենքի այլ, հատուկ բաժիններում ևս սահմանվում են սկզբունքներ, որոնք գործում են վարչարարության տարատեսակ

հանդիսացող վարչական վարույթի շրջանակներում: Օրենսդրական տեխնիկայի տարրական կանոնները պահպանելու անհրաժեշտությունից ելնելով, դրանք զետեղվել են Օրենքի հաջորդ գլխում:

Չի կարելի բացառել նաև, որ վարչարարության առանձին տեսակներ կունենան այնպիսի առանձնահատկություններ, որոնք կարտացոլվեն հիշատակված սկզբունքներին չհակասող, սակայն վերջիններից բխող կամ դրանք լրացնող այլ սկզբունքային դրույթներում:

### **Չարդ 16. Ինչի՞ հիման վրա է որոշվում այս կամ այն գործի ենթակայությունը վարչական մարմիններին:**

#### **Պատասխան.**

Վարչական գործերի ենթակայությունը որոշվում է Օրենքի այն դրույթների հիման վրա, որոնք վերաբերում են վարչական մարմիններին գործերի տարածքային և առարկայական ենթակայությանը: Այս առումով Օրենքը պարունակում է բավականին տարբերակված կանոնակարգումներ վարչական մարմիններին գործերի տարածքային ենթակայության վերաբերյալ (հոդված 13) և նշում է, որ վարչական մարմիններին գործերի առարկայական ենթակայության հարցը լուծվում է այդ գործերում արծարծվող փաստական հանգամանքներին վերաբերող հատուկ օրենքներով (հոդված 14):

Օրենքի 13-րդ հոդվածի առանձին մասերը կոնկրետ կարգավորումներ են տալիս տարածքային ենթակայությանը, մի դեպքում հիմք ընդունելով իրավահարաբերության առարկան, մյուս դեպքում՝ մասնակիցների իրավական վիճակը:

Չաշվի առնելով անշարժ գույքի հետ կապված հարաբերությունների մեծաքանակությունը՝ հոդվածում այս հարցը կարգավորված է առանձին մասով: Տրված կարգավորումը՝ անշարժ գույքին վերաբերող հարցերի քննարկումը և լուծումն այն վարչական մարմնին վերապահելը, որի տարածքում գտնվում է անշարժ գույքը, տրամաբանված ու հիմնավորված է այն առումով, որ անշարժ գույքի հետ կապված գրեթե բոլոր գործառույթներն օբյեկտիվորեն պետք է իրականացվեն դրա գտնվելու վայրում, որպեսզի հնարավոր լինի հրատապ լուծում տալ առաջացող հարցերին, օրինակ՝ վարչական վարույթի ընթացքում անցկացնել դրա զննումը:

Հողվածի առանձին մասով կարգավորված է նաև անհատ ձեռներեցներին և իրավաբանական անձանց վերաբերող գործերի ենթակայության հարցը:

Ֆիզիկական անձանց համար վարչական մարմինների հետ հարաբերություններում առավել նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով Օրենքը սահմանում է, որ նրանց վերաբերող հարցերը քննարկում և լուծում է այն վարչական մարմինը, որի տարածքում հաշվառված է տվյալ անձը, կամ որի տարածքում նա բնակվում է մշտապես կամ առավելապես: Բնական է, որ ցանկացած այլ ձևակերպում, որը ֆիզիկական անձին կստիպեր իր գործի քննարկման նպատակով անցնել ավելի երկար ճանապարհ, քան անհրաժեշտ է, օրինակ, սոսկ այն պատճառով, որպեսզի նա, բնակվելով մեկ այլ վայրում, ներկայանար իր հաշվառման վայրի վարչական մարմին, անձի համար կլիներ պակաս նպաստավոր և կհակասեր Օրենքի տրամաբանությանը:

Հողվածի հաջորդ մասը կարգավորում է տարածքային ենթակայությունը այն դեպքերում, երբ տվյալ լիազորությունը վերապահված է միաժամանակ մի քանի վարչական մարմինների:

Անշուշտ, պատշաճ օրենսդրություն ունենալու դեպքում նման վիճակները կբացառվեին, սակայն մեզանում տարբեր մարմինների գործառույթների կրկնությունը բացառություն չէ: Միևնույն հարցի՝ տարբեր վարչական մարմինների իրավասությանը վերապահված լինելը հնարավոր է, մասնավորապես, ֆիզիկական անձանց վերաբերող գործառույթներ իրականացնելիս, երբ, օրինակ, վերջինս հաշվառված է որևէ հասցեում, սակայն առավելապես կամ մշտապես բնակվում է մեկ այլ հասցեում: Այս պարագայում ֆիզիկական անձը կարող է դիմել ինչպես այն վարչական մարմին, որի սպասարկման տարածքում ինքը հաշվառված է, այնպես էլ այն վարչական մարմին, որի տարածքում նա առավելապես կամ մշտապես բնակվում է:

Օրենքում առանձնահատուկ կարգավորում է տրված անմիջականորեն սպառնացող վտանգի կամ վնասի առաջացման պայմաններում գործերի ենթակայությանը: Այդ իրավիճակներում վարչական մարմիններից անհապաղ լուծում պահանջող հարցերը վերապահվում են այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքում առաջացել է այդ իրավիճակներով պայմանավորված գործողություններ կատարելու կամ որոշումներ ընդունելու անհրաժեշ-

տությունը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքին հարում է այդ տարածքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Օրինակ՝ ջրհեղեղի դեպքում, համայնքի ղեկավարը կարող է որոշում ընդունել համայնքի որոշ բնակավայրերից բնակչությանը տեղահանելու վերաբերյալ՝ չըսպասելով Արտակարգ իրավիճակների վարչության որոշումներին, քանզի հապաղումը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների:

Վերը նշված լուծումները սահմանված են այն դեպքերի համար, երբ հատուկ օրենքներով վերջիններս կարգավորում չեն ստացել. այլ օրենքներով գործերի տարածքային ենթակայության այլ կարգ սահմանված լինելու դեպքում գործում է այդ օրենքներով սահմանված կարգը:

Ինչ վերաբերում է գործերի առարկայական ենթակայությանը, ապա Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն, ինչպես արդեն նշվեց, գործերի առարկայական ենթակայության հարցը լուծվում է այդ գործերում արծարծվող փաստական հանգամանքներին վերաբերող օրենքներով և դուրս է Օրենքի կարգավորման առարկայի շրջանակներից:

### **Հարց 17. Ի՞նչ է նշանակում «վարչական մարմինների փոխօգնության պարտականություն»:**

#### **Պատասխան.**

Հաճախ է պատահում, երբ որևէ վարչական մարմին տիրապետում է այնպիսի տեղեկությունների, որոնք մեկ այլ վարչական մարմնի լիազորությունների իրականացման համար շատ օգտակար, երբեմն նաև անփոխարինելի կարող են լինել, կամ այդ տեղեկությունները կարող է ձեռք բերել ավելի նվազ ջանքերով, քան մեկ այլ մարմին, որին դրանք անհրաժեշտ են որոշում ընդունելու համար: Իսկ ինչպե՞ս կարող է նման դեպքերում տվյալ վարչական մարմինն իրազեկ դառնալ այդ տեղեկություններին: Ինչպե՞ս կարող է հաղթահարվել գործադիր իշխանության մարմինների կազմակերպական տարանջատվածությունը. չէ՞ որ իրականում գործադիր իշխանության մարմինների համակարգը՝ որպես այդպիսին, և ընդհանրապես իշխանության մարմինների համակարգը միասնական է: Իսկ գործադիր իշխանության տարբեր մարմիններ, ստանձ-



նելով տարաբնույթ լիազորություններ, այդուհանդերձ, իրականացնում են սոսկ գործադիր իշխանությանը ներհատուկ գործառույթներ: Իհարկե, գործադիր իշխանության մարմինների ներքին բաժանումն ըստ ճյուղերի (գործառույթների) միանգամայն արդարացված է, քանի որ ապահովում է համապատասխան ոլորտի մասնագիտացված և կոնկրետացված կառավարում՝ օրենքներում վերացական բնույթ ունեցող ընդհանուր պատվիրանները կոնկրետ իրավահարաբերություններում կիրառելու միջոցով: Սակայն տարբեր վարչական մարմինների գոյությունը և բազմազանությունը չպետք է հանգեցնեն այն բանին, որ նրանք մոռանան իրենց հիմնական առաքելությունը՝ օրենքների ճշգրիտ և անվերապահ կատարումը, և տրվեն գերատեսչական հավակնություններին կամ հետապնդեն սոսկ կորպորատիվ շահեր: Ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև այլ վարչական մարմինները չպետք է տուժեն միայն այն պատճառով, որ այս կամ այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է մեկ վարչական մարմնին որոշում ընդունելու համար, գործի բերումով հավաքվել է մեկ այլ վարչական մարմնում: Այդ մարմնի հայեցողությունից կամ այլ խոսքով՝ քնահաճույքից չպետք է կախված լինի տվյալ տեղեկատվության տրամադրումը: Միևնույն ժամանակ անհրաժեշտ են արգելքներ, որոնք կբացառեն սեփական լիազորությունների կատարումն ամեն մանր առիթով այլ մարմիններից օգնություն հայցելու միջոցով նրանց վրա դնելու հնարավորությունները:

Վերոհիշյալ նկատառումներից ելնելով՝ Օրենքն ամրագրում է վարչական մարմինների՝ միմյանց փոխադարձ օգնություն (փոխօգնություն) ցուցաբերելու պարտականությունը (հոդված 15, մաս 1-ին, առաջին պարբերություն)՝ նպատակ ունենալով էապես հեշտացնել նրանց կողմից իրենց լիազորությունների կատարումը և նպաստել նրանց միջև փոխադարձ վստահության և փոխգործակցության մթնոլորտի ձևավորմանը, իսկ ամենակարևորը՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց հանդեպ այդ մարմինների կողմից իրենց պարտականությունների արագ և արդյունավետ կատարմանը:

Օրենքը նախատեսում է, որ փոխօգնությունը տրամադրվում է փոխօգնություն հայցող վարչական մարմնի հայտի հիման վրա (հոդված 15, մաս 1-ին, երկրորդ պարբերություն): Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ Օրենքը տարբերակում է վերա-

դաս վարչական մարմնի՝ ստորադաս մարմնին ցուցումներ տալու լիազորությունը միմյանց հանդեպ ենթակայության հարաբերությունների մեջ չգտնվող մարմինների միջև փոխօգնությունից: Այսպես՝ ըստ Օրենքի, փոխօգնություն չէ միմյանց նկատմամբ ենթակայության հարաբերությունների մեջ գտնվող վարչական մարմինների միջև օգնությունը (հոդված 15, մաս 2-րդ):

### **Չարդ 18. Ո՞րն է փոխօգնության համար դիմելու կարգը:**

#### **Պատասխան.**

Վարչական մարմինը, որին անհրաժեշտ է այդ օգնությունը, դիմում է այն վարչական մարմնին, որը կարող է այն տրամադրել: Դա հիմնականում նշանակում է, որ փոխօգնություն տրամադրելու հիմքը հայցող վարչական մարմնի համապատասխան դիմումն է<sup>7</sup>, և որ հայցված փոխօգնությունը տրամադրելու համար հայցվող վարչական մարմինը պետք է տիրապետի համապատասխան լիազորությունների՝ հայցվող տեղեկությունները ձեռք բերելու և (կամ) տրամադրելու համար: Սակայն կարող են լինել դեպքեր, երբ պահանջվող տեղեկություններին տիրապետում են մեկից ավելի վարչական մարմիններ: Նման դեպքերի համար Օրենքը սահմանում է, որ եթե փոխօգնություն կարող են տրամադրել մեկից ավելի վարչական մարմիններ, ապա հայցող վարչական մարմինը փոխօգնություն տրամադրելու համար պետք է դիմի այն վարչական մարմնին (հայցվող վարչական մարմնին), որն, իր կարծիքով, առավել արդյունավետ և սեղմ ժամկետում կտրամադրի անհրաժեշտ փոխօգնությունը (հոդված 16):

---

<sup>7</sup> Այդ դիմումի ձևը Օրենքը չի սահմանում, ելնելով այն նկատառումներից, որ օգնության տրամադրման եղանակները կարող են բազմապիսի լինել: Յետևաբար, այն հայցելու ձևերն էլ պետք է ընտրեն հենց վարչական մարմինները: Օր.՝ կարող են լինել այնպիսի իրավիճակներ, երբ հրատապ պահանջվող տեղեկությունները կարող են հայցվել և անհապաղ տրամադրվել հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:

## **Յարց 19. Ի՞նչ ժամկետում պետք է ցուցաբերվի հայցվող փոխօգնությունը:**

### **Պատասխան.**

Նախորդ հարցի պատասխանում արդեն նշվեց, որ համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի, փոխօգնության տրամադրման համար դիմելիս, երբ այդպիսի օգնություն կարող են տրամադրել մի քանի վարչական մարմիններ, փոխօգնություն հայցող վարչական մարմինը պետք է դիմի այդ մարմիններից նրան, ով այդ օգնությունը կարող է տրամադրել առավել սեղմ ժամկետում: Իսկ թե ով կարող է այդ անել, որոշում է ինքը՝ վարչական մարմինը: Դա չի նշանակում, որ վարչական մարմինը պետք է առաջնորդվի սոսկ սուբյեկտիվ նախասիրություններով կամ սեղմ ժամկետի մասին սեփական պատկերացումներով: Իհարկե, միայն այդ մարմինը կարող է որոշել, թե երբ է իրեն հարկավոր այդ փոխօգնության տրամադրումը՝ ելնելով իր գործունեության արդյունավետությունից, իսկ վարչական վարույթ հարուցվելու դեպքերում՝ նաև արագ գործելու իր պարտականությունից (հոդված 36): Այս հանգամանքը, ինչպես նաև «առավել սեղմ ժամկետին» վերաբերող դրույթը կանխորոշում են, որ փոխօգնության համար դիմող վարչական մարմինը հնարավորինս ճշգրիտ կանխատեսի այդ օգնությունը առավել սեղմ ժամկետում տրամադրելու ունակ վարչական մարմին:

Օրենքը, սակայն, փոխօգնություն տրամադրելու համար միայն մեկ վարչական մարմնի դիմելու հնարավորության դեպքում չի նախատեսում որևէ, նույնիսկ այնպիսի քիչ որոշակիացված ժամկետ, ինչպիսին է սեղմ ժամկետը: Դրանով օրենսդիրը վարչական մարմինների հայեցողությանն է թողնում այդ ժամկետը որոշելու հարցը: Մինևույն ժամանակ դա չի նշանակում, որ այստեղ ևս չկան ողջամիտ կանխորոշիչներ: Այսպես՝ Օրենքը սահմանում է, որ եթե փոխօգնության համար հայցվող վարչական մարմինը Օրենքով նախատեսված հիմքերով մերժում է փոխօգնության տրամադրումը, ապա նա այդ մասին պարտավոր է եռօրյա ժամկետում տեղեկացնել փոխօգնություն հայցած վարչական մարմնին (հոդված 17, մաս 4-րդ, առաջին պարբերություն): Այսինքն՝ փոխօգնությունը մերժելու համար Օրենքը սահմանել է ժամկետ: Սակայն հիշյալ մյուս դեպքերի համար ժամկետ չսահմանելը չի նշանակում, որ հայցվող վարչական մարմինը, որը չի մերժել փոխօգնության տրամադրումը,

մը, կարող է անհիմն ձգձգել դրա տրամադրումը: Օրինակ՝ փոխօգնություն տրամադրելու վերաբերյալ իր հայտում վարչական մարմինը կարող է նշել, թե սահմանված ժամկետի շրջանակներում, նկատի ունենալով արագ գործելու իր պարտականությունը, երբ է ինքը մտադիր որոշում ընդունել և դրանով կողմնորոշել հայցվող վարչական մարմին, որն այդ դեպքում պարտավոր է նախապես տրամադրել այդ օգնությունը: Եթե նա այդ օգնությունը տրամադրի որոշում ընդունելուց հետո կամ դրանից անմիջապես առաջ, ապա ակնհայտ է, որ դրանով կխախտի փոխօգնության իր պարտականությունը՝ նման օգնությունը կկորցնի իր իմաստը: Հայցվող վարչական մարմինը, հիմք ընդունելով սեփական փորձը, պետք է կարողանա հաշվարկել այն ժամանակահատվածը, որի ընթացքում նա պետք է տրամադրի հայցվող փոխօգնությունը և, եթե այդ մարմինը հանգում է եզրակացության, որ հայցվող օգնության տրամադրումն իր հաշվարկած ժամկետում, ասենք, իրենից կպահանջի փոխօգնությանը ոչ համարժեք ջանքերի գործադրում, ապա նա պարտավոր է մերժել դրա տրամադրումը և այդ մասին հայցող վարչական մարմին իրազեկել եռօրյա ժամկետում:

Հայցող վարչական մարմինը, ինչպես արդեն նշվել է, կարող է վիճարկել մերժումը վերադաս վարչական մարմնում, որը և յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կորոշի այդ մերժման հիմնավորվածությունը: Այսպիսով՝ նույնիսկ այն դեպքերում, երբ վարչական մարմինը մտադիր է տրամադրել փոխօգնությունը, նա պետք է կարողանա տրամադրման ժամկետի վերաբերյալ հաշվարկ կատարել եռօրյա ժամկետում, որպեսզի պարզի՝ արդյո՞ք սոսկ ժամկետի հետ կապված իր մոտ չի առաջանում այնպիսի խոչընդոտ, որն, իր կարծիքով, փոխօգնությունը մերժելու Օրենքով սահմանված հիմք է:

**Հարց 20. Կարո՞ղ է արդյոք փոխօգնության տրամադրումը մերժվել: Եթե այո, ապա ի՞նչ հիմքերով:**

**Պատասխան.**

Եթե Օրենքը չնախատեսեր փոխօգնության պարտականությունից ազատվելու հիմքեր, ապա հնարավոր կլիներ, որպեսզի, ասենք, մեկ վարչական մարմինը մյուսի վրա դներ սեփական լիազորությունների կատարումը և սեփական ներուժն օգտագործելու փոխարեն պատեհ-անպատեհ դիմեր այլ վարչական մարմինների:

Կամ, օրինակ, հաճախ կարող են լինել դեպքեր, երբ հայցվող օգնության տրամադրումը չմտնի հայցվող վարչական մարմնի լիազորությունների մեջ: Այս և այլ նկատառումներից ելնելով, Օրենքը սահմանում է փոխօգնություն չտրամադրելու հիմքերը: Ընդամին՝ այդ հիմքերի մի մասով փոխօգնության տրամադրումն արգելվում է Օրենքով, իսկ մյուս մասով այդպիսի օգնության տրամադրումը վերապահվում է հայցվող վարչական մարմնի հայեցողությանը: Առաջին խմբում ներառված դեպքերը կարելի է համարել օրինակաչության պահանջ, իսկ երկրորդում ներառված հիմքերը կոչված են ապահովելու փոխօգնություն տրամադրելիս վարչական մարմինների գործողությունների արդյունավետությունը և նպատակաուղղվածությունը: Առաջին խմբի հիմքերը վերաբերում են այն դեպքերին, երբ՝

ա) հայցվող վարչական մարմնի համար ակնհայտ է փոխօգնության կարգով ձեռնարկվելիք միջոցների ոչ իրավաչափ լինելը (հոդված 17, մաս 1-ին, կետ «ա»),

բ) փոխօգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը չի մտնում հայցվող վարչական մարմնի իրավասության մեջ (հոդված 17, մաս 1-ին, կետ «բ»),

գ) փոխօգնություն ցուցաբերելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) դասվում են օրենքով պահպանվող գաղտնիքների շարքին, և հայցող վարչական մարմնին դրանք տրամադրելը՝ նույնիսկ տրամադրման գաղտնիությունն ապահովող եղանակով, արգելվում է օրենքով (հոդված 17, մաս 1-ին, կետ «գ»):

Երկրորդ խմբի մեջ են մտնում այն դեպքերը, երբ հայցվող վարչական մարմինը գտնում է, որ՝

ա) որևէ այլ վարչական մարմին, քան ինքն է, փոխօգնությունը կարող է տրամադրել էապես ավելի նվազ ջանքերի գործադրմամբ (հոդված 17, մաս 2-րդ, կետ «ա»),

բ) փոխօգնություն տրամադրելու համար պետք է գործադրի դրա համար անհրաժեշտ ոչ համարժեք ջանքեր (հոդված 17, մաս 2-րդ, կետ «բ») և

գ) փոխօգնության տրամադրումը կարող է էապես խոչընդոտել սեփական խնդիրների իրականացմանը (հոդված 17, մաս 2-րդ, կետ «գ»):

Մյուս բոլոր դեպքերում փոխօգնությունը պետք է տրամադրվի.

այն չի կարող մերժվել վերևում չհիշատակված որևէ այլ հիմքով: Օրենքում այդ հիմքերի ցանկը սպառիչ է (հոդված 17, մաս 3-րդ): Դա նշանակում է, որ հայցվող վարչական մարմինները պետք է նեղ ընկալեն փոխօգնություն չտրամադրելու հիմքերը և գիտակցեն, որ այնպես, ինչպես Օրենքը այդ հիմքերի միջոցով իրենց է պաշտպանում այլ վարչական մարմինների խնդիրներով անհիմն ծանրաբեռնումից, այդպես էլ տվյալ հիմքերի սպառիչ թվարկումը, ինչպես նաև Օրենքի՝ փոխօգնության տրամադրումն անհիմն մերժելու վիճարկման վերաբերյալ դրույթը պաշտպանում են օգնություն հայցող վարչական մարմիններին՝ հայցվող մարմինների «ալարկոտությունից» և վարչական մարմինների միջև փոխադարձ վստահությունը խաթարող այլ դրսևորումներից (հոդված 17, մաս 4-րդ):

**Հարց 21. Ի՞նչ է նշանակում «փոխօգնության կարգով ձեռնարկվող միջոցների իրավաչափություն»:**

**Պատասխան.**

Ավելի պարզ ձևակերպմամբ՝ դա նշանակում է, որ փոխօգնություն հայցող և այն տրամադրող վարչական մարմինների գործողությունների իրավաչափությունը որոշվում է առանձին-առանձին՝ յուրաքանչյուրին վերաբերող իրավական ակտերին համապատասխան (հոդվ. 18, մաս 1-ին): Օրենքի 18-րդ հոդվածի դրույթները ևս կարելի է դասել օրինականության հիմնարար սկզբունքի որոշակիացված դրսևորումների թվին: Իսկ ինչու՞ է Օրենքը կարևորում այդ սկզբունքի որոշակիացումը փոխօգնության հետ կապված իրավահարաբերություններում:

Անհրաժեշտ է գիտակցել, որ փոխօգնություն հայցող վարչական մարմինը պատասխանատվություն է կրում փոխօգնություն հայցելուն ուղղված իր գործողությունների համար, իսկ փոխօգնության համար հայցվող մարմինը՝ այն տրամադրելուն ուղղված գործողությունների (հոդվ. 18, մաս 3-րդ), այդ թվում նաև այնպիսի գործողությունների համար, որոնք հայցվող մարմինը, փոխօգնություն տրամադրելու նպատակով, ձեռնարկում է որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հանդեպ:

Օրինակ՝ եթե ոստիկանությունը քաղաքացուն վարչական կարգով տուգանելու համար նրա վճարունակությունը պարզելու նպատակով Կենտրոնական բանկից տեղեկություններ է հայցում այդ

քաղաքացու վճարունակության մասին, որոնք ձեռք բերելու համար Կենտրոնական բանկն իր հերթին պետք է դիմի այն առևտրային բանկին, որում այդ անձը հաշվեհամար ունի, ապա ակնհայտ է, որ՝

1) տուգանք նշանակելու համար քաղաքացու վճարունակությունը պարզելուն ուղղված ոստիկանության համապատասխան ստորաբաժանման գործողություններն ապօրինի են, քանի որ նրանց՝ տուգանք նշանակելու համապատասխան օրենքով նախատեսված լիազորությունն այդպիսի հնարավորություն իր մեջ չի ներառում.

2) ապօրինի է նաև նման տեղեկությունների տրամադրումը Կենտրոնական բանկի կողմից, քանզի քաղաքացու անձնական հաշվեհամարի մասին տեղեկություններ տրամադրելու այդպիսի հիմք օրենքով նախատեսված չէ:

Այսպիսով՝ ոստիկանության մարմնի՝ տվյալ հարցով փոխօգնություն հայցելն ապօրինի է, և եթե, օրինակ, մեկ այլ դեպքում այդ ապօրինությունն ակնհայտ չլիներ ԿԲ-ի համար, և նա տրամադրեր պահանջվող օգնությունը, ապա իրավունք կունենար հետագայում, երբ իր գործողությունների համար պատասխանատվության ենթարկվեր, հետադարձ պահանջ ներկայացնել ոստիկանության պաշտոնատար անձանց: Սակայն անկախ այդ հանգամանքից, տվյալ դեպքում ԿԲ-ն պատասխանատու է այդ քաղաքացու հանդեպ, եթե ձեռնարկել է ոստիկանության մարմնի կողմից ակնկալվող գործողությունները: Իսկ առևտրային բանկը պատասխանատվություն կկրի այդ քաղաքացու հանդեպ իր (քաղաքացիաիրավական) պայմանագրային պարտավորությունները խախտելու համար, եթե ԿԲ-ին տրամադրի պահանջվող տեղեկությունները:

Վերոգրյալից պարզ է դառնում վարչական մարմինների համար չափազանց կարևոր հետևյալ հանգամանքը. Օրենքի՝ փոխօգնությանը վերաբերող դրույթները լիազորող չեն համարվում փոխօգնություն տրամադրելիս ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներին միջամտելու համար: Այդպիսի միջամտության հնարավորությունը (լիազորությունը) պետք է ուղղակիորեն սահմանված լինի տվյալ բնագավառի (հատուկ) օրենքով: Դա է օրինականության սկզբունքի պահանջը: Պետք է նշել, որ փոխօգնություն տրամադրելու տեսանկյունից այդ պահանջն ստացել է վերը նկարագրված իր յուրահատուկ դրսևորումը: Մեկ անգամ ևս նշենք, որ

հայցվող վարչական մարմինը պատասխանատվություն է կրում ֆիզիկական և իրավաբանական անձի հանդեպ իր գործողությունների իրավաչափության համար, իսկ հայցող մարմինը կարող է պատասխանատվություն կրել հայցվող մարմնի առջև, եթե վերջինս, տուրք տալով հայցող մարմնի փոխօգնության ապօրինի հայտին, դրանով ակնկալվող գործողություններ է ձեռնարկել:

## **ԲԱԺԻՆ II. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑԸ**

**Յարգ 22. Ի՞նչ է վարչական վարույթը և ո՞ւմ կողմից է այն իրականացվում:**

### **Պատասխան.**

Վարչական վարույթն այն ճանապարհն է, որով կառավարչությունն ընդունում է իր գործունեության հիմնական արդյունքը՝ վարչական ակտը: Իրավաչափ պետք է լինի ոչ միայն այդ գործունեության հիմնական արդյունքը, այլ նաև այն ստեղծելու գործընթացը՝ վարչական վարույթը: Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է (Օրենքի 19-րդ հոդված):

Այս սահմանումից հետևում է, որ վարչական մարմնի միայն այն գործունեությունն է ներառվում վարչական վարույթ հասկացության մեջ, որն ուղղված է վարչական ակտի ընդունմանը: Մնացած ցանկացած գործունեություն (օրինակ՝ նորմատիվ իրավական ակտի ընդունումը, ռեալ ակտը և այլն) դուրս է վարչական վարույթ հասկացության շրջանակից: Այդ շրջանակից դուրս է նաև վարչական մարմնի որևէ գործողություն, որն ուղղված է այդ մարմնի ներքին կամ կազմակերպչական հարցերի լուծմանը (օրինակ՝ աշխատողին կարգապահական տույժի ենթարկելը, վարչական մարմնի նյութատեխնիկական, ֆինանսական ապահովմանն ուղղված գործողությունները և այլն): Գործողութունների այս շրջանակը չի մտնում վարչական վարույթ հասկացության մեջ, քանի որ դրանք չունեն արտաքին ներգործություն, ինչը վարչական ակտի բնորոշ հատկանիշներից մեկն է: Այսպիսով՝ վարչական վարույթը ներառում է կառավարչության միայն այնպիսի գործողությունները, որոնք ուղղված են կառավարչությունից դուրս գտնվող անձանց (օրինակ՝ վկաների իրավիրումը, փորձագետի նշանակումը և այլն):



Վարչական վարույթի մեջ են մտնում վարչական մարմինների բոլոր այն առանձին գործողությունները, որոնք կապված են վարչական ակտի նախադրյալների ստուգման, նախապատրաստման և ընդունման հետ: Վարչական ակտի ընդունումը նույնպես վարչական վարույթի բաղկացուցիչ մասն է, որով էլ այն միաժամանակ եզրափակվում է:

Օրենքի 2-րդ բաժինն ամբողջությամբ նվիրված է վարչական վարույթին (Գլուխ 4. Ընդհանուր դրույթներ, Գլուխ 5. Վարչական վարույթի հարուցման փուլ և Գլուխ 6. Վարչական վարույթի ընթացիկ փուլ), սակայն վարչական վարույթի վերաբերյալ դրույթներ կան նաև օրենքի այլ բաժիններում: Մասնավորապես, բողոքարկման վարույթն իրականացվում է օրենքի 2-րդ բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե բողոքարկման վարույթին վերաբերող 4-րդ բաժնով այլ բան նախատեսված չէ:

Վարչական վարույթն իրականացվում է միայն վարչական մարմնի կողմից: Վարչական մարմնի հասկացության վերաբերյալ տես Չարք 3-ը:

### **Չարք 23. Որո՞նք են վարչական վարույթի փուլերը:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթի փուլերն են՝

- ա) վարչական վարույթի հարուցման փուլը.
- բ) վարչական վարույթի ընթացիկ փուլը.
- գ) վարչական վարույթի եզրափակիչ փուլը:

Վարչական վարույթի փուլերը տարանջատված են Օրենքի 20-րդ հոդվածով:

Հարուցման փուլն սկսվում է անձի կողմից համապատասխան վարչական ակտ ընդունելու վերաբերյալ դիմում ներկայացնելու պահով: Եթե վարչական ակտը ընդունվելու է վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հիման վրա, ապա հարուցման փուլը սկսված է համարվում այդ մարմնի նախաձեռնության դրսևորման պահից:

Վարչական վարույթի ընթացիկ փուլում վարչական մարմինն իրականացնում է բոլոր այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են վարչական ակտի ընդունման համար (ներկայացված կան իր մոտ եղած բոլոր փաստաթղթերի ուսումնասիրում, լսումների

անցկացում, եթե օրենքի համաձայն դրանք պարտադիր կամ անհրաժեշտ են, փորձաքննության կամ զննության նշանակում, վկաների հարցաքննություն, լրացուցիչ փաստաթղթերի ձեռքբերում այլ վարչական մարմիններից և այլն):

Վարչական վարույթի եզրափակիչ փուլը բուն վարչական ակտի ընդունումն է, որով բավարարվում կամ մերժվում է դիմումը (բողոքը), կամ եթե վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, ընդունվում է համապատասխան ակտ, իսկ եթե վարչական մարմինը վարույթի ընթացիկ փուլում հանգել է եզրակացության, որ վարչական ակտ ընդունելու անհրաժեշտությունը վերացել է, չի ընդունում այն կամ հայտարարում է իր նախաձեռնությամբ սկսված վարչական վարույթը կարճելու մասին:

Նկատի ունենալով օբյեկտիվ որոշ հանգամանքներ՝ օրինակ՝ երբ անհրաժեշտ է կանխել անմիջական սպառնացող վտանգը կամ վերացնել արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերը, վարչական վարույթը կարող է հարուցման և ընթացիկ փուլեր չունենալ և սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

Օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթը մասնավորապես նկատի ունի բնական աղետները (երկրաշարժ, սողանք, փոթորիկ, կարկտահարություն և այլն), տեխնածին աղետները (պայթյուններ, վթարներ և այլն) կանխելու կամ արդեն իսկ տեղի ունեցած նման աղետների առաջացրած հետևանքները վերացնելու դեպքերը, երբ վարչական մարմինը պարտավոր է գործել անհապաղ և այլ գործողությունների հետ մեկտեղ ընդունել նաև համապատասխան վարչական ակտ (ակտեր):

ՀՀ գործող օրենսդրության մեջ այսօր էլ կարող ենք հանդիպել դեպքերի, երբ վարույթի վերը նշված փուլերը չկան, և վարչական վարույթը սահմանափակվում է բացառապես եզրափակիչ փուլով:

Ինչպես տեսնում ենք, այս դեպքերում վարչական վարույթի դասական երեք փուլերը պահպանելու անհրաժեշտություն չկա, ինչը պայմանավորված է ավելորդ հապաղման հնարավոր առավել մեծ բացասական հետևանքների վտանգով:

## **Հարց 24. Ովքե՞ր կարող են հանդես գալ որպես վարչական վարույթի մասնակիցներ:**

### **Պատասխան.**

Վարչական վարույթն իրականացնում է այն վարչական մարմինը, որը պետք է ընդունի համապատասխան վարչական ակտը, այսինքն՝ այն մարմինը, որը Սահմանադրությամբ կամ օրենքով լիազորված է ընդունելու համապատասխան վարչական ակտը: Հետևաբար՝ վարչական մարմինը վարչական վարույթում հանդես է գալիս միայն որպես այն իրականացնող մարմին: Այդ իմաստով նա վարչական վարույթի մասնակից չէ, այլ լուծում է վարույթի մասնակիցներին առնչվող հարցեր և իր գործողությունները, այդ թվում՝ վարչական ակտի ընդունումը, վերաբերում են վերջիններին:

Օրենքի 21-րդ հոդվածի համաձայն, վարչական վարույթի մասնակիցներ են համարվում՝

ա) այն անձը, որը դիմել է վարչական ակտ ընդունելու համար (բողոք բերելու դեպքում վարույթի մասնակիցը բողոք բերողն է):

Եթե վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, ապա այդ վարույթի մասնակից է հանդիսանում այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինը մտադրություն ունի ընդունելու վարչական ակտ (վարչական ակտի հասցեատեր):

բ) երրորդ անձինք:

Օրենքն ուղղակիորեն չի սահմանել, թե ով կարող է դիմել վարչական մարմին՝ վարչական ակտ ընդունելու խնդրանքով: Սակայն ակնհայտ է, որ դիմող կարող է լինել այն ֆիզիկական և իրավաբանական անձը, որը համապատասխան ակտը ստանալու համար օրենքով օժտված է այդպիսի իրավունքով, այսինքն՝ այդ հարաբերությունների համար օժտված է համապատասխան իրավունակությամբ ու գործունակությամբ: Օրինակ՝ անձնագիր ստանալու իրավունք ունի յուրաքանչյուր քաղաքացի՝ ծնվելու պահից, հետևաբար՝ մինչև անձի 16 տարին լրանալը անձնագիր ձեռք բերելու համար իրավասու մարմնին դիմելու իրավունք ունի երեխայի իրավունքները ներկայացնող և պաշտպանող անձը՝ ծնողը, խնամակալը, հոգաբարձուն (տես՝ Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը):

Ապօրինի կառուցված շինությունը քանդելու հարցով վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթի մասնակից կլինի ապօրինի շինություն կառուցած անձը, իսկ ոստիկանի կող-

մից ավտոմեքենան կանգնեցնելու դեպքում՝ ճանապարհատրանսպորտային երթևեկության կանոնները խախտած վարորդը:

Օրենքը երրորդ անձանց շարքին է դասում ֆիզիկական և իրավաբանական այն անձանց, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել ընդունվելիք վարչական ակտով (տես՝ Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը:

Օրինակ՝ շինարարության թույլտվության համար դիմումով հարուցված վարչական վարույթում երրորդ անձի կարգավիճակով կարող են հանդես գալ այն քաղաքացիները կամ իրավաբանական անձինք, որոնց անշարժ գույքին մոտ է կառուցվելու ապագա շինությունը: Փողոցի մայթ կազմող հատվածի վրա բենզալցման կետ կամ այլ շինություն կառուցելու թույլտվություն տալու դիմումով հարուցված վարույթում որպես երրորդ անձ կարող են հանդես գալ մայթի հարակից տարածքում բնակվող բոլոր քաղաքացիները:

Դիմողը կամ վարչական ակտի այլ հասցեատերը վարչական վարույթի պարտադիր մասնակիցն է, որովհետև վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը անմիջականորեն շոշափելու է նրա իրավունքները:

Երրորդ անձինք վարչական վարույթին կարող են ներգրավվել իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

Որպեսզի երրորդ անձինք տվյալ վարչական վարույթում իրենց մասնակցության հարցը պարզելու հնարավորություն ունենան, վարույթն իրականացնող վարչական մարմինը պարտավոր է իր կողմից հարուցված և երրորդ անձանց իրավունքներն ու շահերը շոշափող վարչական վարույթի մասին իրազեկել այդ անձանց (Օրենքի 35-րդ հոդված):

Այնուամենայնիվ, եթե վարչական մարմնի կողմից իրականացված միջոցառումներին վարչական վարույթի մասնակիցները չեն ներկայանում, ապա դա վարույթի իրականացման և վարչական ակտի ընդունման համար արգելք չէ:

## **Հարց 25. Վարչական վարույթի մասնակիցներից բացի, ուրիշ ովքե՞ր կարող են հանդես գալ վարչական վարույթում:**

### **Պատասխան.**

Վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու

օբյեկտիվությունը ապահովելն առանց վկաներին, փորձագետներին և այլ անձանց լսելու շատ դեպքերում անհնարին է: Այդ իսկ պատճառով օրենքը սահմանում է, որ վարչական վարույթում հանդես գալու իրավունք ունեն նաև վկան, փորձագետը, թարգմանիչը, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները (Օրենքի 22-րդ հոդված), որոնք, սակայն, չեն համարվում վարույթի մասնակիցներ:

Անհրաժեշտ է նկատել, որ վարչական վարույթին նշված անձանց մասնակցությունը գործնականում այնքան էլ հաճախակի չի լինի:

Վկաների, փորձագետների, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցության անհրաժեշտություն է առաջանում հատկապես այն դեպքերում, երբ որոշակի իրավունքներ տրամադրելու դիմումներ են ներկայացվում, և նախքան այդ իրավունքների տրամադրման հարցի լուծումը, անհրաժեշտություն է առաջացել որոշակի ապացույցներ ձեռք բերել համապատասխան իրավունքների տրամադրման հիմնավորման վերաբերյալ (օրինակ՝ դիմում է ներկայացվել վտանգավոր թափոնների մշակման կամ ռադիոակտիվ նյութերի թաղման գործողություններ իրականացնելու թույլտվություն ստանալու խնդրանքով, որի համար անհրաժեշտ է նշանակել համապատասխան փորձաքննություն, գործում ընդգրկել երրորդ անձանց, լսել վկաների և այլն):

Վարչական վարույթին թարգմանչի մասնակցությունն անհրաժեշտ է դառնում այն դեպքում, երբ վարույթի որևէ մասնակից չի տիրապետում դրա իրականացման լեզվին՝ հայերենին:

## **Չարդ 26. Ովքե՞ր և ու՞մ կարող են ներկայացնել վարչական վարույթում և ի՞նչ կարգով:**

### **Պատասխան.**

Վարչական վարույթի մասնակիցները վարչական վարույթին կարող են մասնակցել անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների հետ միասին, կամ ներկայացուցիչների միջոցով՝ առանց իրենց անմիջական մասնակցության (Օրենքի 23-րդ հոդված):

Ներկայացուցիչները վարչական վարույթում ներկայացնում են վարչական վարույթի մասնակիցներին (դիմողին կամ վարչական

ակտի հասցեատիրոջը, երրորդ անձանց) և այլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների:

Վարչական վարույթի մասնակիցներին վարույթում կարող են ներկայացնել ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված ներկայացուցիչները:

Վարչական վարույթի անգործունակ մասնակիցներին վարչական վարույթում կարող են ներկայացնել նրանց օրինական ներկայացուցիչները (ծնողները, խնամակալները):

Վերոհիշյալին համապատասխան, վարչական վարույթի մասնակիցների ներկայացուցիչների հարցը որոշելիս պետք է ղեկավարվել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 24-րդ, 29-30-րդ, 34-35-րդ և 321-րդ հոդվածների դրույթներով:

Եթե վարչական վարույթի մասնակիցը տեղական ինքնակառավարման մարմինն է, ապա վարչական վարույթում այդ մարմնի անունից ի պաշտոնե կարող է հանդես գալ համայնքի անունից հանդես գալու իրավունք ունեցող պաշտոնատար անձը, տվյալ դեպքում համայնքի ղեկավարը:

Վարչական վարույթում որպես մասնակիցներ կամ վարույթում հանդես եկող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորած անձինք հանդես գալու իրավունք է վերապահված նաև փաստաբաններին, եթե նրանց լիազորությունները ձևակերպված են քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Հարկ է նշել, որ վարչական վարույթում որպես ներկայացուցիչ հանդես գալու համար իրավաբանական կրթություն ունենալու անհրաժեշտություն չկա: Այս հանգամանքը պայմանավորված է վարչական վարույթի բազմազանությամբ և վարույթի ընթացքում լուծվող հարցերի մեծաթիվ ու տարբեր լինելով, որոնցից շատերի դեպքում կոնկրետ մասնագիտություն ունեցող անձը ավելի հաջող կարող է իրականացնել ներկայացուցչի պարտականությունները, քան իրավաբանը:

## **Հարց 27. Ովքե՞ր վարչական վարույթում չեն կարող հանդես գալ ներկայացուցչի միջոցով:**

### **Պատասխան.**

Օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վկան, փորձագետը, թարգմանիչը և այլ մարմինների ներկայացուցիչները վար-

չական վարույթում կարող են հանդես գալ միայն անմիջականորեն:

Վկայի՝ միայն անմիջականորեն հանդես գալու պահանջը ուղղակիորեն բխում է վկայի իմաստիտուտի բովանդակությունից. վկան այն անձն է, անձամբ որին հայտնի են վարչական մարմնի կողմից գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ:

Վերը շարադրվածը վերաբերում է նաև փորձագետին՝ որպես համապատասխան որակավորում ունեցող անձի:

Վարչական վարույթում միայն անմիջականորեն են հանդես գալիս վարույթի մասնակիցների և վարույթում հանդես եկող պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները: Այսինքն՝ ինչպես ֆիզիկական ու իրավաբանական անձանց ներկայացուցիչները, այնպես էլ պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները չեն կարող իրենց լիազորած անձանց կամ մարմնին վարույթում ներկայացնելու պարտականությունը վերալիազորել այլ անձանց, եթե միայն համապատասխան լիազորագրով այդ առնչությամբ տվյալ մասնակիցը նշում չի կատարել:

**Չարդ 28. Ո՞ր դեպքերում վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը:**

**Պատասխան.**

Վարչական վարույթը վարչական մարմնի անունից իրականացնում են նրա պաշտոնատար անձինք, ովքեր այդ մարմնին վերաբերող ակտերով կամ վերջիններիս ներքին ակտերին համապատասխան իրավասու են տվյալ վարչական գործը քննարկել և լուծել, այսինքն՝ համապատասխան գործով հարուցված վարույթով վարչական ակտ ընդունել:

Սակայն վարչական գործ քննարկելու և լուծելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձինք ոչ բոլոր դեպքերում կարող են ունենալ համապատասխան վարույթ իրականացնելու և դրա արդյունքում վարչական ակտ ընդունելու իրավունք: Օրենսդիրը նպատակ ունենալով ապահովել վարույթն իրականացնող անձի անաչառությունը՝ բացառել է վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու հնարավորությունը մի շարք հանգամանքների առկայության դեպքում (Օրենքի 24-րդ հոդված):

Այսպես՝ պաշտոնատար անձն իրավունք չունի գործը քննարկել և լուծել, եթե ինքը հարուցված վարչական վարույթի մասնակից է (դիմող կամ երրորդ անձ է) կամ վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է կամ աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ:

Նկատի ունենալով նման հանգամանքների առկայության պայմաններում վարչական ակտ ընդունելիս հնարավոր սուբյեկտիվ, կողմնակալ մոտեցման դրսևորման մեծ հավանականությունը, օրենսդիրը գործը քննարկելու և լուծելու հնարավորությունից վարչական մարմնի պաշտոնատար անձին զրկում է նաև այն դեպքերում, երբ նա նախկինում տվյալ գործի քննարկմանն արդեն իսկ մասնակցել է: Դա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ հարուցվել է բողոքարկման վարույթ, որի ժամանակ, ըստ օրենքի հիշյալ դրույթի, բացառվում է բողոքն այն պաշտոնատար անձի կողմից քննարկելը և լուծելը, որի ընդունած վարչական ակտը բողոքարկվել է, կամ որը վարչական ակտի ընդունման ժամանակ վարչական վարույթ հարուցելու կամ վարույթի ընթացիկ փուլում մասնակցել է տվյալ գործի հանգամանքները պարզելու և լուծելու հետ կապված հարցերի քննարկմանը: Կոլեգիալ կազմով վարույթ իրականացնելիս նշված հիմքով բացառվում է ոչ թե կոլեգիալ կազմի անդամների, այլ այդ կազմով գործի քննարկմանը մասնակցած, բայց կոլեգիալ կազմի մեջ չմտնող այլ պաշտոնատար անձանց մասնակցությունը:

Բացի դրանից, եթե համաձայն օրենքի, բողոքն իրավասու է քննարկել միայն վարչական ակտն ընդունած պաշտոնատար անձն ինքը, ապա նա էլ պարտավոր է վարույթն իրականացնել, սակայն այն պաշտոնատար անձանց բացակայությամբ, որոնք մասնակցել են բողոքարկվող վարչական ակտի ընդունման հետ կապված վարույթին: Օրինակ՝ ՀՀ քաղաքացիություն շնորհելու խնդրանքը մերժելու վերաբերյալ բողոքն իրավասու է քննարկել մերժման մասին ակտն ընդունած ՀՀ Նախագահը, բայց բողոքի քննարկմանը չեն կարող մասնակցել այն պաշտոնատար անձինք, ովքեր մասնակցել են մերժման ակտի քննարկման վարույթին:

Բացի վերոհիշյալ դեպքերից, Օրենքի 24-րդ հոդվածը բացառում է պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու հնարավորությունը, եթե նա տվյալ վարչական վարույթի մասնակիցներից կամ նրանց ներկայացուցիչներից որևէ մեկի ազգական



է: Օրենքը «ազգական» բառի բովանդակությունը չի բացել, սակայն կարծում ենք, որ վերջինիս պետք է տրվի այն նույն բովանդակությունը, որը առկա է ՀՀ գործող օրենսդրության մեջ, որի համաձայն ազգականներ են ազգակցական կապի մեջ գտնվող և մինչև նախապապը կամ նախատատն ընդհանուր նախնիներ ունեցող անձինք: Ազգականի այս բնորոշումն իր մեջ բնականաբար կներառի նաև մերձավոր ազգականներին, որոնք են՝ ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ինչպես նաև ամուսինը և ամուսնու ծնողները, վերջիններիս համար՝ փեսան և հարսը:

Գործը քննարկելը և լուծելը բացառող հանգամանք է նաև պաշտոնատար անձի՝ վարույթի մասնակիցներից կամ նրանց ներկայացուցիչներից որևէ մեկի ամուսինը լինելը, ընդ որում՝ ամուսնալուծության փաստը հավաստող Օրենքի 24-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված հիմքը բացառող հանգամանք չէ: Որպես ամուսին օրենքը նկատի է ունենում միայն այն անձանց, ովքեր օրենքով սահմանված կարգով գտնվում են ամուսնական հարաբերությունների մեջ (գրանցել են իրենց ամուսնությունը) կամ օրենքով սահմանված կարգով ամուսնալուծվել են: Փաստացի ամուսնությունը կամ փաստացի ամուսնալուծությունը սույն դեպքերի համար հաշվի չեն առնվում:

### **Չարց 29. Ովքե՞ր կարող են բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին:**

#### **Պատասխան.**

Նկատի ունենալով վարչական վարույթի անկողմնակալ և անաչառ իրականացման ապահովման հանգամանքը, Օրենքը հնարավորություն է տալիս, որպեսզի վարույթն իրականացնող պաշտոնատար անձի նկատմամբ բացարկ հայտնվի (25-րդ հոդված):

Բացարկ հայտնելու իրավունք ունեն միայն վարչական վարույթի մասնակիցները (դիմողը, ակտի հասցեատերը, երրորդ անձինք): Բացարկը կարող է հայտնվել ինչպես միանձնյա վարույթ իրականացնող պաշտոնատար անձի նկատմամբ, այնպես էլ կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնող կոլեգիալ կազմի ցանկացած անդամի նկատմամբ:

Կոլեգիալ կազմին ամբողջությամբ բացարկ չի կարող հայտնվել, կոլեգիալ կարգով վարույթ իրականացնելիս բացարկ կարող է ներկայացվել նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր անդամի՝ առանձին-առանձին:

Բացարկ հայտնելու հիմք են պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու անհնարինության հանգամանքները, որոնց մասին նշվել է նախորդ հարցի պատասխանում: Այսինքն՝ եթե Օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հիմքերն առկա են, և համապատասխան պաշտոնատար անձը Օրենքի 26-րդ հոդվածով սահմանված կարգով ինքնաբացարկ չի հայտնել, ապա վարույթի մասնակիցներն իրավունք ունեն այդ պաշտոնատար անձին բացարկ հայտնել:

Բացի դրանից, վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձին վարույթի մասնակիցները կարող են բացարկ հայտնել նաև այն դեպքերում, երբ մինչև գործի քննարկման ավարտը տվյալ պաշտոնատար անձը, ներառյալ կոլեգիալ կազմի անդամը (երբ վարույթն իրականացնում է կոլեգիալ մարմինը) հրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին կամ զնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին, կամ մինչև ապացույցների հետազոտումը՝ կանխավ զնահատական է տվել դրանցից որևէ մեկին:

Գործի քննարկման ավարտ է համարվում գործով լսումների, փորձաքննության արդյունքների հետազոտման, զննության, վկաների հարցաքննության և գործի համար նշանակություն ունեցող օրենքով նախատեսված հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ այլ գործողություններ կատարել ավարտելը, որից հետո վարչական մարմինը պետք է ընդունի համապատասխան վարչական ակտը:

Ուշադրություն պետք է դարձնել նաև այն հանգամանքին, որ Օրենքը բացարկի հիմք է համարում նաև մինչև ապացույցների հետազոտումը վարույթն իրականացնող անձանց կողմից քննարկվող գործի փաստական հանգամանքներին կանխավ որևէ զնահատական տալը, որը վարույթի ընթացիկ փուլի այն հատվածն է, երբ գործով պետք է ըստ էության որոշում կայացվի՝ համապատասխան վարչական ակտ ընդունելու միջոցով: Այսինքն՝ ապացույցների հետազոտման սկիզբը չի համընկնում գործի քննարկման ավարտի հետ, հետևաբար՝ այս պարագայում կարևոր պայմանն այն է, որ

ապացույցներից որևէ մեկին զնահատական տալը տեղի ունեցած լինի մինչև ապացույցների հետազոտումը, այլ ոչ թե դրանից հետո: Եթե պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը ապացույցներին կամ դրանցից որևէ մեկին զնահատական է տվել ապացույցների հետազոտումից հետո, ապա դա չի կարող հիմք հանդիսանալ վերոհիշյալ հիմքով տվյալ պաշտոնատար անձի նկատմամբ բացարկ հայտնելու համար:

Օրենքը սահմանում է բացարկի ևս երկու հիմք, դրանք են՝

ա) տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի.

բ) առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են, որ տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված է տվյալ գործի ելքով, կամ կասկած է առաջացել այդ գործի առնչությամբ նրա անաչառության նկատմամբ:

Ո՞ր դեպքում պետք է համարել, թե պաշտոնատար անձը գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի: Օրենքն այդ հարցը չի պարզաբանում, ինչի կարիքը, գտնում ենք, չկա, քանի որ վարչական մարմինն ինքը յուրաքանչյուր որոշակի գործի որոշակի հանգամանքները հաշվի առնելով միայն կարող է պարզել նման հանգամանքի առկայությունը: Նշված հիմքով բացարկ հայտնելու հիմք կարող է հանդիսանալ, օրինակ, այն դեպքը, երբ վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի որևէ անդամ վարույթի մասնակիցներից մեկին ներկայացնելով դատարանում՝ պաշտպանել է նրա իրավունքները և օրինական շահերը: Կամ էլ, ասենք, քաղաքացիաիրավական պայմանագրով մասնակիցներից որևէ մեկին նվիրատվություն է արել, փոխառություն է տվել և այլն:

Իսկ «այլ հանգամանքների» ներքո նկատի պետք է ունենալ ցանկացած հանգամանք, որը կարող է վկայել, որ տվյալ գործի ելքով համապատասխան պաշտոնատար անձը շահագրգիռ է կամ առնվազն կասկածելի է, որ նա անաչառ վերաբերմունք կդրսևորի գործի ելքի նկատմամբ:

«Այլ հանգամանքների» շարքում կարելի է նշել, օրինակ, վարույթն իրականացնող պաշտոնատար անձի և վարույթի մասնակիցներից որևէ մեկի միջև մտերիմ կապերի առկայությունը, որը կարող է առիթ հանդիսանալ պաշտոնատար անձի կողմից տվյալ

գործի ելքով շահագրգռվածությունն դրսևորելու համար, կամ այդ անձանց միջև ուղղակիորեն կամ երրորդ անձի միջոցով կապի հաստատումը՝ գործի ելքը վարույթի համապատասխան մասնակցի օգտին լուծելու նպատակով և այլն:

Գործի ելքով ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն ասելով՝ պետք է նկատի ունենալ այն, թե վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը տվյալ գործի ելքի հետ անմիջական անձնական շահագրգռվածություն ունի<sup>6</sup>, թե շահագրգռվածությունը սոսկ այն է, որ գործն ունենա վարույթի համապատասխան մասնակցին ձեռնտու ելք: Եթե գործի ելքով նա ակնկալում է, որ ինքն էլ է որևէ շահ ունենալու, այսինքն՝ ընդունվելիք համապատասխան վարչական ակտն իրեն ևս որևէ ձևով օգտակար է լինելու, ապա այս դեպքում առկա է ուղղակի շահագրգռվածությունը: Եթե շահագրգռված է միայն նրանով, որ գործով այնպիսի վարչական ակտ ընդունվի, որը համապատասխան մասնակցին է անհրաժեշտ, իսկ ինքն այդ ակտով ոչինչ չի ստանալու, ապա առկա է անուղղակի շահագրգռված լինելու հանգամանքը, որը ևս բացարկ հայտնելու հիմք է:

Վերոհիշյալ և դրանց հարակից այլ հանգամանքներն էլ կարող են նաև կասկած հարուցել առ այն, որ տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը գործի ելքի նկատմամբ անաչառ չի լինի: Այսինքն՝ վարույթի արդյունքում ընդունվելիք ակտը լիովին չի բխի օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներից, այն չի լինի գործի անաչառ, բազմակողմանի և լրիվ քննարկման հիման վրա կազմված փաստաթուղթ, հետևաբար՝ իրավաչափ:

**Յարգ 30. Վարչական վարույթի ո՞ր փուլում է թույլատրելի բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին:**

**Պատասխան.**

Վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձին կամ կոլեգիալ կազմի անդամին վարույթի մասնակիցները բացարկ կարող են հայտնել մինչև վարչական վարույթն ավարտվելը (նախորդ հարցի պատասխանում նշեցինք, թե երբ է վարույթը համարվում ավարտված):

Այսինքն՝ բացարկ կարելի է հայտնել վարչական վարույթի հա-

րուցման և ընթացիկ փուլերի ամբողջ ժամանակամիջոցի ընթացքում, վարույթի այն փուլում կան հատվածում, երբ բացարկ հայտնողին հայտնի է դառնում որևէ հանգամանք, որը, ըստ Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ» և «դ» կետերի, բացարկի հիմք կարող է հանդիսանալ:

Ընդ որում՝ հնարավոր են դեպքեր, երբ մինչև վարչական վարույթն ավարտվելը միևնույն անձին ներկայացված բացարկը մերժված լինի, բայց կրկին բացարկ հայտնելու անհրաժեշտություն առաջանա:

Կրկին բացարկ հայտնելու իրավունքը ծագում է միայն երկու դեպքում. երբ վարույթի մասնակիցը ներկայացնում է բացարկի այլ հիմք, քան այն հիմքը, որի դեպքում մերժվել է նախորդ բացարկը, կամ էլ՝ եթե բացարկ ներկայացնողը նոր փաստեր է բերում, որոնք հիմնավորում են նախորդ հիմքով ներկայացված բացարկը կրկին քննարկելու անհրաժեշտությունը: Օրինակ՝ հիմնավորում է բերում առ այն, որ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամն անցյալում աշխատել է մասնակիցներից որևէ մեկի ենթակայությամբ կամ եղել է նրա ներկայացուցիչը:

### **Չարդ 31. Ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետում է լուծվում ներկայացված բացարկի հարցը:**

#### **Պատասխան.**

Այդ հարցերը լուծված են Օրենքի 25-րդ հոդվածով: Բացարկի վերաբերյալ՝ այն բավարարելու կամ մերժելու մասին, որոշում է ընդունում այն պաշտոնատար անձի անմիջական ղեկավարը, ում նկատմամբ բացարկ է հայտնվել: Օրինակ՝ նախարարության աշխատակազմի վարչության կազմի մեջ մտնող բաժնի պետի նկատմամբ ներկայացված բացարկի վերաբերյալ որոշումն ընդունում է նրա անմիջական ղեկավարը՝ տվյալ վարչության պետը: Եթե վերջինիս նկատմամբ է բացարկ հայտնվել, ապա դրա վերաբերյալ որոշումը՝ ըստ տվյալ նախարարությունում պաշտոնի անձնագրերով կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգի, կարող է կայացնել նախարարի այն տեղակալը, որը պատասխանատու է այդ վարչության գործունեության համար, իսկ եթե վարչության պետն անմիջականորեն ենթարկվում է աշխատակազմի ղեկավարին կամ նախարարին, ապա բացարկի հարցը կարող է լուծել համապատասխանաբար աշ-

խատակազմի ղեկավարը կամ նախարարը և այլն:

Եթե բացարկ է հայտնվել կոլեգիալ մարմնի կազմում ընդգրկված անդամի նկատմամբ, ապա բացարկի վերաբերյալ որոշումն ընդունում է կոլեգիալ մարմինն ինքը: Այս դեպքում կոլեգիալ մարմնի կողմից բացարկի հարցի քննարկմանը մասնակցելու իրավունք ունի նաև այն անդամը, որի դեմ բացարկ է հայտնվել, սակայն նա չի մասնակցում որոշում ընդունելու նպատակով անցկացվող քվեարկությանը: Այս կարգի խախտումով որոշում կայացնելը կրկին բացարկ հայտնելու հիմք կարող է հանդիսանալ:

Այն դեպքում, երբ Օրենքի հիման վրա վարչական վարույթն իրականացնում է վարչական մարմնի ղեկավարը և բացարկ է հայտնվել նրա դեմ, ապա բացարկի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը վերապահված է հենց իրեն՝ ղեկավարին (Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի երրորդ պարբերություն):

Եթե ղեկավարը որոշում է կայացնում իր նկատմամբ հայտնված բացարկը բավարարելու մասին, ապա նրա փոխարեն վարչական վարույթն իրականացնում է իր տեղակալը: Այս դեպքում նկատի է առնվում այն տեղակալը, որն օրենքով կամ այդ մարմնի կանոնադրության կամ այլ իրավական ակտի, օրինակ՝ տվյալ վարչական մարմնի ղեկավարի հրամանով սահմանված աշխատանքի բաժանման հրամանի համաձայն, համապատասխան ղեկավարին փոխարինելու իրավասություն ունի: Ընդ որում՝ նկատի ունենալով տվյալ վարչական մարմնում վարչական վարույթի հետ կապված աշխատանքների հստակ կազմակերպման կարևորությունը, նպատակահարմար է, որ վարչական մարմինների ղեկավարներն իրենց տեղակալների միջև աշխատանքի բաժանում իրականացնելիս համապատասխան հրամանի մեջ նախատեսեն, թե վարչական վարույթ իրականացնելիս ղեկավարին հայտնված բացարկն ընդունելու դեպքում տեղակալներից հատկապես որն է փոխարինելու նրան:

Օրենքը սահմանել է, որ եթե ղեկավարի տեղակալի բացակայության պատճառով վերջինս նույնպես չի կարող վարույթ իրականացնել, ապա այն պարտավոր է իրականացնել ղեկավարին փոխարինելու լիազորություն ունեցող պաշտոնատար այլ անձը:

Պետք է նկատի ունենալ, որ իրավասու տեղակալի, օրինակ՝ առաջին տեղակալի բացակայության դեպքում, ղեկավարին կարող է փոխարինել նրա մեկ այլ տեղակալը: Իսկ եթե բոլոր տեղակալները բացակայում են կամ ընդամենը մեկ տեղակալ կա և նա բացա-

կայուն է, ապա պետք է ենթադրել, որ ղեկավարի բացարկն ընդունելու դեպքում վարչական վարույթը պետք է իրականացնի տվյալ վարչական մարմնի աշխատակազմի ղեկավարը: Նպատակահարմար է, որ վերջինիս վարչական մարմնի ղեկավարը՝ վարչական վարույթը նրա կողմից իրականացնելու համար բավարար իրավական հիմք ստեղծելու նպատակով, իր հրամանով նման լիազորություն տա:

Օրինակ՝ եթե մարզպետին չի կարող փոխարինել նրա տեղակալը, ապա վերջինիս կարող է փոխարինել մարզպետարանի աշխատակազմի ղեկավարը: Սակայն նպատակահարմար է, որ նման փոխարինման հնարավորությունը նախատեսված լինի մարզպետի նախօրոք ընդունված հրամանով:

Բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան բացարկ հայտնելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում:

Օրենքի 46-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերության դրույթներից հետևում է, որ բացարկը կարող է հայտնվել վարչական մարմնում սահմանված աշխատանքային օրվա սկսելու պահից մինչև դրա ավարտման պահը՝ ժամը 9:00-ից մինչև 18:00-ն: Օրենքը չի բացառում, որ այդ ժամկետի մեջ կարող է մտնել նաև ընդմիջման համար նախատեսված ժամանակը:

Այսպիսով՝ եթե աշխատանքային օրվա ընթացքում 9:00-18:00-ն ընկած ժամանակահատվածում, պաշտոնատար անձին բացարկ է հայտնվել, ապա բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան մինչև բացարկ ներկայացնելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18:00-ն: Դա նշանակում է, որ եթե բացարկ հայտնելու օրվան հաջորդում են ոչ աշխատանքային օրեր, ապա այդ օրերը հաշվի չեն առնվում. անհրաժեշտ է սպասել նշված օրերին հաջորդող առաջին աշխատանքային օրվան, որի ընթացքում էլ բացարկի վերաբերյալ պետք է որոշում ընդունվի:

Բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետի հարցը քննարկելիս պետք է նկատի ունենալ Օրենքի 36-րդ հոդվածի՝ վարչական մարմնի արագ գործելու պարտականության վերաբերյալ պահանջները, որոնք հավասարապես տարածվում են նաև բացարկի հարցի լուծման վրա: Դրանից մասնավորապես հետևում է, որ բացարկ հայտնելու վերաբերյալ որոշումը կարող է ընդունվել մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը միայն այն դեպ-

քում, երբ բացարկի վերաբերյալ որոշում ընդունելու համար իրավասու պաշտոնատար անձը բացարկ ներկայացնելու պահին որևէ պատճառով բացակայում է կամ բացարկ հայտնողը դրա հիմքը չի նշել կամ անհրաժեշտ է լսել այն պաշտոնատար անձին, ում դեմ բացարկ է հայտնվել, մինչդեռ բացարկ ներկայացնելու պահին նա բացակայում է և այլն:

Այսպիսով՝ 36-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի հետ համադրելով՝ Օրենքի 25-րդ հոդվածի 4-րդ մասի նորմի իմաստից հետևում է, որ բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի հնարավորինս արագ, սակայն ոչ ուշ, քան մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը:

Բացարկը պետք է հայտնվի գրավոր (Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մաս). բանավոր հայտնված բացարկը հիմք չի կարող հանդիսանալ այդ հարցի քննարկման համար: Թեև Օրենքը չի նշում, թե բացարկն ինչ տեղեկություններ պետք է պարունակի, այնուամենայնիվ, համապատասխան նորմի իմաստից բխում է, որ բացարկում առնվազն պետք է նշվեն բացարկվող պաշտոնատար անձի անուն-ազգանունը, վարչական վարույթի անվանումը, որը վարում կամ որին մասնակցում է պաշտոնատար անձը և, իհարկե, բացարկի հիմքը, կամ հղում արվի Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ», «գ» կամ «դ» կետերից որևէ մեկին կամ մի քանիսին, եթե առկա է բացարկի մեկից ավելի հիմք:

Բացարկը կարող է հայտնվել վարչական վարույթում լսումների անցկացման, փորձաքննության արդյունքների կամ ապացույցների հետազոտման, կամ վարույթի հետ առնչվող վարչական մարմնի կողմից իրականացվող այլ գործողությունների կամ դրանց ընդմիջումների ընթացքում՝ ցանկացած ժամանակ: Պարտադիր չէ, որ բացարկը փոստով ներկայացվի կամ հատուկ մուտքագրվի տվյալ վարչական մարմին, բավարար է, որ այն տրամադրվի վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին կամ նրա անմիջական ղեկավարին, որն իրավասու է որոշում ընդունել բացարկի վերաբերյալ:

Վերջիններս պարտավոր են բացարկ հայտնող վարույթի մասնակցի պահանջով նրա մոտ առկա օրինակի վրա գրառում կատարել բացարկը ստանալու տարեթվի, ամսվա և ամսաթվի վերաբերյալ և ստորագրել այն:

Եթե բացարկը մերժվում է, պաշտոնատար անձը կամ կոլեգիալ



կազմի անդամը, որի դեմ բացարկ է հայտնվել, շարունակում են իրականացնել վարչական վարույթը, որն արգելք չէ Օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն կրկին բացարկ հայտնելու համար:

### **Յարդ 32. Որո՞նք են ինքնաբացարկի հիմքերը:**

#### **Պատասխան.**

Ինքնաբացարկ հայտնելու հիմքերը նույնն են, ինչ նախատեսված է վարչական վարույթի մասնակիցների կողմից վարույթն իրականացնող պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի կողմից գործը քննարկելու և լուծելու առնչությամբ Օրենքի 24-րդ հոդվածով և բացարկ հայտնելու մասին Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով (Օրենքի 26-րդ հոդված):

Վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը Օրենքի 24-րդ հոդվածի և 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմքի առկայության դեպքում պարտավոր է անհապաղ ինքնաբացարկ հայտնել:

«Անհապաղ» բառի ներքո օրենսդիրը նկատի ունի այն պահից անմիջապես հետո ինքնաբացարկ հայտնելը, երբ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը որևէ ձևով՝ վարչական վարույթի մասնակիցների տեղեկատվությամբ կամ գործում առկա փաստաթղթերին անձամբ ծանոթանալով իրազեկվում է ինքնաբացարկի հիմք հանդիսացող մեկ կամ մի քանի հանգամանքի մասին:

Ընդ որում՝ եթե համապատասխան հիմքն առկա է, բայց վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը ինքնաբացարկ չի հայտնում, ապա վարույթի մասնակիցներն իրենք կարող են նրա նկատմամբ բացարկ հայտնել՝ Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն:

### **Յարդ 33. Վարչական վարույթի ո՞ր փուլում կարող է ինքնաբացարկ հայտնվել:**

#### **Պատասխան.**

Ինքնաբացարկը, ինչպես և բացարկը, կարող է հայտնվել մինչև վարչական վարույթն ավարտվելը (տես՝ Օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի և 26-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները), կախված նրանից, թե վարչական վարույթի իրականացման ընթացքում որ պա-

հին է ի հայտ եկել ինքնաբացարկի հիմքը, կամ որ պահին է ինքնաբացարկ հայտնողը իրազեկ դարձել ինքնաբացարկ հայտնելու հիմքի (հիմքերի) առկայությանը. դա կարող է լինել ինչպես վարույթը սկսելու պահին, այնպես էլ ընթացիկ փուլում: Վարույթն իրականացնող պաշտոնատար անձը շատ դեպքերում միայն գործի քննության ընթացքում կարող է իմանալ ինքնաբացարկի հիմքերի առկայության մասին:

Պետք է նկատել, որ ինչպես բացարկի, այնպես էլ ինքնաբացարկի համար բավարար է 24-րդ հոդվածով և 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերից թեկուզև մեկը: Հետևաբար՝ նույնիսկ մեկ հիմքի առկայությունը բավարար է ինքնաբացարկ կամ բացարկ հայտնելու համար:

### **Հարց 34. Ի՞նչ կարգով է հայտնվում ինքնաբացարկը:**

#### **Պատասխան.**

Ինչպես բացարկը, այնպես էլ ինքնաբացարկը հայտնվում են գրավոր:

Թեև այս դեպքում նույնպես Օրենքը չի սահմանում, թե ինքնաբացարկը ինչ բովանդակություն պետք է ունենա, սակայն ակնհայտ է, որ դրանում պետք է նշվեն այն պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի պաշտոնը, անուն-ազգանունը, որն ինքնաբացարկ է հայտնում, ինչպես նաև դրա հիմքը՝ Օրենքի համապատասխան հոդվածի համապատասխան դրույթի նշումով: Օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է, որ ինքնաբացարկ հայտնողը պատճառաբանի դա: Հետևաբար՝ նա ոչ միայն պետք է մատնանշի Օրենքի համապատասխան դրույթը, այլև՝ թե կոնկրետ ինչ պատճառով ինքը չի կարող գործը քննարկել և լուծել:

Օրինակ՝ ենթադրենք ինքնաբացարկի հիմքը Օրենքի 24-րդ հոդվածի «ե» կետն է: Այս պարագայում վարույթն իրականացնող պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը պետք է ինքնաբացարկի մեջ նշի, թե երբ և ինչ կարգավիճակով է մասնակցել տվյալ հարցի քննարկմանը, իսկ եթե 24-րդ հոդվածի «դ» կետով է ինքնաբացարկ հայտնվում, ապա հստակ պետք է նշվի, թե վարույթի որ մասնակցի կամ նրա ներկայացուցչի ազգականն է՝ նշելով ազգակցական կապը՝ հայրը, զավակը կամ հորեղբայրը և այլն:

Ինքնաբացարկ հայտնած անձին փոխարինում են տվյալ վար-

չական մարմնի այլ իրավասու պաշտոնատար անձինք, ինչպես դա արվում է վարույթի մասնակիցների կողմից հայտնված բացարկի հարցը դրական լուծելու դեպքում:

Որոշակի առանձնահատկություն կա միայն վարույթը միանձնյա իրականացնող պաշտոնատար անձի ինքնաբացարկի դեպքում նրան փոխարինող անձին նշանակելու ժամկետի հարցում: Նման դեպքերում վարչական մարմնի ղեկավարին իրավունք է տրվում այդ անձին մեկ այլ իրավասու անձով փոխարինել ինքնաբացարկ հայտնելուց հետո եռօրյա ժամկետում:

Կոլեգիալ կազմի անդամի ինքնաբացարկի դեպքում վարչական վարույթն իրականացվում է կոլեգիալ կազմի մնացած անդամների մասնակցությամբ:

Օրենքի 26-րդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ ինքնաբացարկը ենթակա չէ քննարկման ինքնաբացարկ հայտնած պաշտոնատար անձի անմիջական ղեկավարի կամ համապատասխան վարչական մարմնի ղեկավարի կամ կոլեգիալ մարմնի կողմից, եթե ինքնաբացարկը հայտնել է կոլեգիալ կազմի անդամը:

Դրանից հետևում է, որ ինքնաբացարկ հայտնելու դեպքում համապատասխան պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամն այլևս իրավասու չէ վարչական վարույթ իրականացնել այն գործով, որի առնչությամբ ինքնաբացարկ է հայտնել:

Այսինքն՝ ինքնաբացարկ հայտնելուց հետո վարչական մարմնի ղեկավարը կամ այլ իրավասու պաշտոնատար անձը, կամ կոլեգիալ մարմինը չեն կարող որոշում կայացնել ինքնաբացարկն ընդունելու կամ չընդունելու մասին, կամ ինքնաբացարկ հայտնած պաշտոնատար անձին պարտավորեցնել, որ նա շարունակի իրականացնել համապատասխան վարչական վարույթը. ինքնաբացարկ հայտնելը բավարար հիմք է այն հայտնած անձին ազատելու համապատասխան վարչական վարույթի իրականացումից և թույլ չտալու հետագայում միանալ այն գործով վարույթին, ինչի առնչությամբ այդ անձն ինքնաբացարկ է հայտնել:

Դրա հետ մեկտեղ այս հարցում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ինքնաբացարկ հայտնած պաշտոնատար անձը խստորեն հետևել է Օրենքի 24-րդ հոդվածի պահանջներին և ինքնաբացարկ է հայտնել դրանով նախատեսված որևէ հիմքի (հիմքերի) փաստական առկայության պայմաններում: Այս դեպքում, իհարկե, նրա ինքնաբացարկը պետք է համարվի անվերապահորեն

ընդունված:

Սակայն չի բացառվում, որ պարզվի, որ ինքնաբացարկ հայտնելու համար Օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք չի եղել, և այն ընդամենը թյուրիմացության հետևանք է: Ակնհայտ է, որ նման դեպքում ինքնաբացարկ հայտնած պաշտոնատար անձի անմիջական ղեկավարը կամ կոլեգիալ կազմը, որի անդամն ըստ էության 24-րդ հոդվածով չհիմնավորված ինքնաբացարկ է հայտնել, կարող է ինքնաբացարկը չընդունել և տվյալ պաշտոնատար անձին հանձնարարել իրականացնել վարույթը կամ մասնակցել նրան:

Ինքնաբացարկի պատճենը վարչական մարմինը պարտավոր է պատշաճ ձևով ուղարկել վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն: Ծանուցման նպատակն այն է, որ վարույթի մասնակիցները տեղյակ լինեն վարույթն իրականացնող պաշտոնատար անձի փոփոխման կամ կոլեգիալ կազմի համապատասխան անդամի՝ վարույթի հետագա իրականացմանը չմասնակցելու մասին:

### **Հարց 35. Ի՞նչ լեզվով է իրականացվում վարչական վարույթը:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթի իրականացման լեզվի հարցը կարգավորված է Օրենքի 27-րդ հոդվածով, համաձայն որի վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով: Սույն դրույթը բխում է Սահմանադրության 12-րդ հոդվածի այն նորմից, ըստ որի Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է: Միաժամանակ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, հիմնարկներն ու կազմակերպությունները պարտավոր են գործավարությունը կատարել հայերեն:

Այս դրույթներից բխում է, որ վարչական մարմիններ դիմումները և այլ փաստաթղթերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, իսկ վարչական մարմինը, իր հերթին վարույթի մասնակիցների և վարույթի այլ մասնակիցների հետ ողջ գրագրությունը պետք է կատարի հայերեն, հայերենով պետք է ձևակերպի նաև վարչական ակտը:

**Հարց 36. Ո՞ր դեպքերում և ովքե՞ր կարող են վարչական վարույթում փաստաթղթեր ներկայացնել ոչ հայերեն լեզվով:**

**Պատասխան.**

Չնայած նրան, որ վարչական վարույթի իրականացման լեզուն հայերենն է, այնուամենայնիվ, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության միջազգային որոշ պարտավորություններ, Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասը որոշ դեպքերում հնարավորություն է տալիս վարչական վարույթի իրականացման համար դիմունը և դրան կից փաստաթղթերը ներկայացնել այլ լեզվով:

Տվյալ դեպքում օրենքը նկատի ունի Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց լեզուները: Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի Հանրապետության որևէ օրենքով դեռևս սահմանված չէ, թե Հայաստանում որոնք են ազգային փոքրամասնությունները, այնուամենայնիվ, Հայաստանը, մասնակից լինելով «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների» եվրոպական խարտիային (ստորագրվել է 1992թ. նոյեմբերի 5-ին, Ստրասբուրգում), վերջինիս վավերացման պահին հայտարարություն է արել, որ, համաձայն «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների» եվրոպական խարտիայի 3-րդ հոդվածի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների» եվրոպական խարտիայի իմաստով Հայաստանի Հանրապետության փոքրամասնությունների լեզուներ են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը:

Խարտիայով, մասնավորապես դրա 10-րդ հոդվածով, մասնակից պետությունները պարտավորվել են իրենց տարածքներում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց հնարավորություն տալ, որպեսզի նրանք վարչական մարմիններ բանավոր կամ գրավոր դիմեն իրենց լեզուներով:

Վերը նշվածը համադրելով Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթի հետ, կարելի է եզրակացնել, որ վերոհիշյալ լեզուներին տիրապետող անձինք դիմունը և դրան կից փաստաթղթերը վարչական մարմին կարող են ներկայացնել իրենց լեզվով:

Դա, սակայն, որևէ ձևով չի առնչվում վարույթը հայերենով իրականացնելու վարչական մարմնի պարտականությանը. վարչական

վարույթը բոլոր դեպքերում իրականացվում է հայերենով: Այդ մասին է վկայում նաև Օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթն այն մասին, որ վարչական մարմինը կարող է պահանջել, որպեսզի ներկայացվեն նաև փոքրամասնությունների լեզվով դիմումի և դրան կից փաստաթղթերի հայերեն թարգմանությունները, ինչպես նաև 3-րդ մասի այն դրույթը, ըստ որի վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

Իհարկե, եթե վարույթն իրականացնող պաշտոնատար անձը տիրապետում է համապատասխան փոքրամասնության լեզվին, մասնավորապես այն դեպքերում, երբ այդ լեզուն ռուսերենն է (որին տիրապետում են վարչական վարույթ իրականացնողների գերակշիռ մեծամասնությունը), կարող է չպահանջել այդ լեզվով ներկայացված դիմումի և կից փաստաթղթերի հայերեն թարգմանությունները, սակայն վարույթը և դրա հետ կապված գործավարությունը պետք է իրականացվեն հայերենով:

Դրա հետ մեկտեղ, Օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասը վարչական մարմնին հնարավորություն է տալիս պահանջելու, որ այլ լեզվով ներկայացված փաստաթղթերի դեպքում վարույթի համապատասխան մասնակիցը ներկայացնի նաև դրանց հայերեն թարգմանությունները:

Վարչական մարմնի նման պահանջի դեպքում վարույթի մասնակիցները պարտավոր են տրամադրել այլ լեզվով ներկայացված փաստաթղթերի՝ օրենքով սահմանված կարգով հաստատված հայերեն թարգմանությունները:

Օրենքի 27-րդ հոդվածի նշված դրույթների նշանակությունն այն է, որ փոքրամասնությունների լեզուներով դիմումը և դրան կից փաստաթղթերը ներկայացնելիս վարչական վարույթի հարուցումը չի հետաձգվում մինչև դրանց հայերենով վավերացված թարգմանությունները ներկայացնելը: Դա հնարավորություն է տալիս, որ դիմողը՝ իր լեզվով դիմելու պահից վստահ լինի, որ վարույթը հարուցվելու է, եթե Օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված հիմքերի առկայության դեպքում այն ենթակա չէ վերահասցեագրման կամ վերադարձման:

**Հարց 37. Վարչական վարույթի ընթացքում ովքե՞ր կարող են հանդես գալ օտար լեզուներով և ի՞նչ պարտադիր պայմանի պահպանմամբ:**

**Պատասխան.**

Վարչական վարույթի ընթացքում նրա մասնակիցներին իրավունք է տրվում օգտագործել օտար՝ ինչպես փոքրամասնությունների, այնպես էլ այլ լեզուներ (Օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մաս): Այստեղ խոսքը վարույթի ընթացքում մասնակիցների՝ բանավոր խոսքով հանդես գալու բոլոր դեպքերի մասին է, մասնավորապես, լսումների ժամանակ:

Նշված դեպքերում, սակայն, օտար լեզուներ օգտագործողները պարտավոր են իրենց կողմից հրավիրված թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի:

Նկատի ունենալով վարչական մարմինների պաշտոնատար անձանց լեզվական գիտելիքները, կարելի է պնդել, որ վարույթի ընթացքում մասնակիցների կողմից ռուսերենի, հաճախ նաև անգլերենի օգտագործման դեպքում ոչ միայն թարգմանչի, այլև թարգմանության կարիք չի առաջանա, իսկ առաջանալու դեպքում էլ դա կարող է ապահովել վարչական մարմինն ինքը:

Մնացած դեպքերում, երբ վարույթի մասնակիցն օգտագործում է, օրինակ, ասորերենը, քրդերենը, հունարենը կամ որևէ այլ օտար լեզու, ապա ինքն էլ պարտավոր կլինի իր ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանությունը, իսկ եթե վարչական մարմնում կա համապատասխան լեզվին տիրապետող աշխատող կամ նա կարող է հրավիրել նման անձի, ապա վարչական մարմինն ինքը պետք է հրավիրի թարգմանիչ՝ չսպասելով մասնակցի կողմից հրավիրվող թարգմանչին:

**Հարց 38. Վարչական վարույթի վերաբերյալ ինչպիսի՞ գրանցամատյաններ են վարվում և ո՞ւմ կողմից:**

**Պատասխան.**

Վարչական վարույթի ընթացքը պետք է արտացոլվի վարչական մարմնի կողմից յուրաքանչյուր վարույթով վարվող գործերում (Օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսինքն՝ վարչական վարույթի հարուցման պահից վարչական մարմինը պետք է բացի տվյալ վարույթով առանձին գործ, որտեղ պետք է տեղ գտնեն այդ վարույթի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, ներառյալ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը, ինչպես նաև այդ ակտի բողոքարկման վերաբերյալ տեղեկությունները, այդ վարույթին առնչվող բողոքները՝ ինչպես այն դեպքում, երբ բողոքը տվյալ վարչական մարմինն է քննարկել, այնպես էլ այն դեպքում, երբ բողոքը քննարկել են վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը կամ դատարանը:

Յուրաքանչյուր վարչական գործ պետք է համարակալվի՝ վարչական մարմնի սահմանած կարգով:

Վարչական գործը վարելուց բացի, վարչական մարմինը պարտավոր է վարել նաև՝

ա) վարչական գործերի հաշվառման գրանցամատյան.

բ) վարչական ակտերի հաշվառման գրանցամատյան:

Վարչական գործերի վարման, այդ գործերի հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման նպատակն է նշված ոլորտում ապահովել վարչական մարմնի կողմից կանոնավոր գործունեության իրականացումը, ֆիզիկական և իրավաբանական անձանց համար ստեղծել վարչական գործերում առկա տեղեկությունների, փաստաթղթերի և այլ նյութերի մասին արագ և հեշտ իրազեկման հնարավորություն (տես՝ նաև հաջորդ հարցի պատասխանը):

**Հարց 39. Ինչի՞ հիման վրա են վարչական մարմինները սահմանում վարչական վարույթի վերաբերյալ գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները:**

**Պատասխան.**

Վարչական գործերի, ինչպես նաև այդ գործերի և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանում են վարչական մարմինները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած օրինակելի կարգի հիման վրա:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2004թ. հունիսի 25-ին ընդունել է «Վարչական վարույթի վերաբերյալ գործե-



րի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» N 975 -Ն որոշումը:

Դրան համապատասխան, վարչական մարմինները մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը՝ 2005 թվականի հունվարի 1-ը, պետք է ընդունեին իրենց գերատեսչական նորմատիվ ակտերը, դրանցով սահմանելով յուրաքանչյուր վարչական մարմնում վարչական գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները:

ՀՀ կառավարության վերոհիշյալ որոշմամբ հաստատված օրինակելի կարգը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր վարչական մարմնի՝ մշակելու և հաստատելու սեփական կարգը՝ հաշվի առնելով տվյալ մարմնի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ տարածքային ստորաբաժանումներ կամ ծառայություններ ունենալու հանգամանքը:

Պետք է նկատի ունենալ, որ եթե վարչական վարույթի հարցեր կարգավորող որևէ օրենքով արդեն իսկ սահմանված է համապատասխան գործերը վարելու կամ համապատասխան հաշվառման գրանցամատյանները վարելու կարգը, ապա վարչական մարմինը պետք է ղեկավարվի այդ օրենքով, և եթե դրա հիման վրա ինքը համապատասխան գերատեսչական ակտով սահմանել է որոշակի կարգ, ապա վերջինս կարող է, կառավարության վերը նշված օրինակելի կարգը հաշվի առնելով, այդ կարգը փոփոխել կամ լրացնել այնպիսի դրույթներով, որոնք դրանում բացակայում են և առավել կիստակեցնեն համապատասխան կարգավորումները:

Օրենքի 28-րդ հոդվածի պահանջները տարածվում են այն վարչական վարույթներով գործերի վրա, որոնց արդյունքում պետք է ընդունվի գրավոր վարչական ակտ:

Վարչական վարույթի վերաբերյալ գործերը, ներառյալ դրանց հաշվառման գրանցամատյանները և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանները, պահպանվում են օրենսդրությամբ սահմանված գործավարության կանոններին համապատասխան և օրենքով սահմանված կարգով էլ հանձնվում են արխիվ:

Յուրաքանչյուր վարչական մարմին պետք է ունենա իր գործավարական կանոնները՝ հաստատված համապատասխան վարչա-

կան մարմնի ղեկավարի հրամանով:

Այդ կանոններով սահմանված կարգով էլ տվյալ վարչական մարմնում պահվում են վարչական վարույթի վերաբերյալ գործերը և օրենքով սահմանված ժամկետները լրանալու դեպքում՝ հանձնվում արխիվ (գերատեսչական, պետական և այլն):

#### **Հարց 40. Ո՞ր դեպքերում վարչական մարմինը չի իրականացնում գործավարություն և հաշվառում:**

##### **Պատասխան.**

Վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը գործավարություն և հաշվառում չի իրականացնում բանավոր և այլ ձևի վարչական ակտեր ընդունելու դեպքում (Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մաս):

Դա կապված է այն հանգամանքի հետ, որ բանավոր և այլ ձևի վարչական ակտերը մեծ թիվ են կազմում և, որպես կանոն, ընդունվում են ոչ թե վարչական մարմիններում՝ նրանց աշխատասենյակներում, այլ այդ մարմինների գտնվելու վայրից դուրս, մասնավորապես՝ հասարակական վայրերում (օրինակ՝ երբ ոստիկանության ներկայացուցիչներն արգելում են մարդկանց մուտքը փողոցի որևէ հատված կամ տարածք, որտեղ ճանապարհատրանսպորտային երթևեկության խախտման հետևանքով վթար է տեղի ունեցել, և օպերատիվ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության բերումով փակում են մարդկանց մուտքն այդ հատված, կամ երբ շինարարական աշխատանքների իրականացման պատճառով այդ աշխատանքների տարածք կողմնակի անձանց մուտքն արգելող նշան է դրվում, որոնք ըստ էության պատկերային արտահայտություն ունեցող վարչական ակտեր են:

Այնուամենայնիվ, եթե բանավոր վարչական ակտը, Օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, գրավոր ձևակերպում է ստանում, ապա այս դեպքում այդ ակտը ևս ենթակա է հաշվառման՝ համապատասխան գրանցամատյանների վարման ձևով:

Օրենքի որոշ հոդվածների՝ մասնավորապես 28-րդ հոդվածի 4-րդ մասի և 54-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթների ուսումնասիրությունից հետևում է, որ այլ ձևի վարչական ակտերը՝ լուսային, ձայնային, պատկերային, ազդանշանների կամ նշանների ձևերով ընդունված վարչական ակտերը չեն կարող գրավոր ձևակերպում

ստանալ, հետևապես՝ դրանց վրա չեն կարող տարածվել գրավոր վարչական ակտերին ներկայացվող պահանջները, այդ թվում՝ այդ ակտերի ընդունման վերաբերյալ գործավարություն և հաշվառում իրականացնելը:

Այլ ձևի վարչական ակտերը գրավոր չձևակերպվելու հիմնական պատճառն այն է, որ այլ ձևի վարչական ակտերի գրավոր ձևակերպման անհրաժեշտություն առհասարակ չկա և հնարավոր էլ չէ՝ բացառապես այդ ակտերի՝ ընդունման պահին գործելու և միայն այդ պահի համար նշանակություն ունենալու, ինչպես նաև մարդու, օրինակ՝ ոստիկանի կողմից անմիջական գործողություններ իրականացնելու հետ կապված լինելու հանգամանքների բերումով:

Այսպես՝ երբ ավտոտեսուչը սուլիչով կարգադրում է, որ ընթացքի մեջ գտնվող մեքենայի վարորդը կանգնեցնի այն, ապա նման ձևի վարչական ակտը (սուլոցը, ազդանշանը) հենց սուլելու պահին է գործում, և դրա հիման վրա վարորդը, ում այն հասցեագրված է, պարտավոր է կանգնեցնել մեքենան: Այս դեպքի առումով մեքենայի վարորդը չի կարող պահանջել, որ տեսուչը սուլոցի վերաբերյալ կազմի գրավոր վարչական ակտ, որովհետև այն պարզապես անհնար է նման ձևով ձևակերպելը: Նմանապես գրավոր չի կարող ձևակերպվել նույն տեսուչի մեկ այլ ձևի վարչական ակտը. ձեռքի մահակը առաջ մեկնելու միջոցով դարձյալ ավտոմեքենայի կանգառ պահանջող հրահանգը (վարչական ակտը), ինչպես նաև փողոցների խաչմերուկներում տեղադրված ճանապարհային երթևեկությունը կարգավորող լուսային ազդանշանների՝ մեկը մյուսին հաջորդող կարմիր, դեղին և կանաչ գույների փոփոխումները:

Այսպիսով՝ ոչ միայն անհրաժեշտություն չկա, այլև հնարավոր էլ չէ այլ ձևի վարչական ակտերը հաշվառել և դրանց վերաբերյալ համապատասխան գրանցամատյաններ վարել:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատել, որ Օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթը որոշակի տեղ է թողել, սահմանելով, որ եթե այլ օրենքով նախատեսված լինի այլ ձևերի վարչական ակտեր ընդունելու վերաբերյալ գործավարություն և հաշվառում իրականացնել, ապա դա, այնուամենայնիվ, հնարավոր է:

Առայժմ չկա որևէ օրենք, որը նման հնարավորություն նախատեսեր: Սակայն Օրենքի նշված դրույթի իմաստն այն է, որ հասարակական հարաբերությունների բազմազան դրսևորումները, տեխնի-

կայի սրընթաց զարգացումը չեն բացառում երբևէ նման հնարավորության ի հայտ գալը:

**Հարց 41. Ո՞ր դեպքերում են արձանագրվում վարչական գործի քննարկումները:**

**Պատասխան.**

Վարչական մարմինը վարչական գործի քննարկումներն արձանագրում է այն դեպքում, երբ դրանք կատարվում են վարույթի մասնակիցների, վկաների, փորձագետի, այլ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ (Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մաս):

Ակնհայտ է, որ գործի քննարկումը կարող է տեղի ունենալ ինչպես վերը նշված բոլոր անձանց միաժամանակյա մասնակցությամբ, այնպես էլ նրանց մի մասի կամ որևէ մեկի մասնակցությամբ:

Դրանից հետևում է, որ եթե վարչական վարույթի ընթացքում անցկացվող քննարկումներին մասնակցում է թեկուզև վարույթի որևէ մասնակից կամ վկա, կամ փորձագետ, կամ այլ մարմինների ներկայացուցիչ, ապա վարչական մարմինը պարտավոր է արձանագրել քննարկումները:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ պետք է արձանագրվի ոչ թե վարչական վարույթն ամբողջությամբ, այլ վարույթի այն հատվածը, երբ գործի քննարկումը կատարվում է վարույթի մասնակիցների, վկաների և վերը նշված այլ անձանց մասնակցությամբ:

Պետք է հիշել, որ գործի քննարկումը պարտադիր պայման է, որն իրականացնում է վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմը: Եթե այդ քննարկումներին ներգրավվում են վերը հիշատակված անձինք, ապա այդ դեպքում էլ կազմվում է արձանագրություն:

Ընդ որում՝ հնարավոր են դեպքեր, որ քննարկումներն ընթանան ընդմիջումներով: Օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթից հետևում է, որ նման դեպքերում կազմվում է մեկ արձանագրություն: Նրանում պետք է տեղեկություն պարունակվի այն մասին, որ քննարկումներն ընդմիջվել են, և նշվեն քննարկումների ընդմիջման և վերսկսման վերաբերյալ տվյալները՝ օրը, ժամը, ընդմիջման (հետաձգման) առիթը կամ պատճառը:

Բացի դրանից, հնարավոր են դեպքեր, երբ քննարկումները ոչ թե ընդմիջվում են, այլ տեղի են ունենում մի քանի քննարկումներ, թեկուզև նախորդ քննարկումներին մասնակցած անձանց մասնակցությամբ: Օրինակ՝ նախորդ քննարկումները վերաբերել են վարույթին առնչվող մի հարցի, իսկ դրան հաջորդողները՝ տարբեր հարցերի, բայց դարձյալ վարույթին առնչվող: Դա չի նշանակում, իհարկե, որ հաջորդ քննարկումներին հնարավոր չէ անդրադառնալ այն հարցերին, որոնք շոշափվել են նախորդ քննարկումների ընթացքում:

#### **Չարց 42. Ի՞նչ տեղեկություններ պիտի պարունակի գործի քննարկման արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը:**

##### **Պատասխան.**

Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ արձանագրությունը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

ա) վարույթն իրականացնող վարչական մարմնի անվանումը.

բ) վարույթն իրականացնելու վայրը, տարին, ամիս ամսաթիվը.

գ) այն անձանց անուն-ազգանունը, ովքեր մասնակցել են գործի քննարկումներին և տվյալ գործով նրանց կարգավիճակը (դիմող, երրորդ անձ, վկա, այլ մարմինների ներկայացուցիչ).

դ) քննարկվող հարցի բովանդակությունը (օրինակ՝ օդային փոխադրումներ իրականացնելու համար արտոնագրի տրամադրում).

ե) քննարկումներին մասնակցած անձանց ելույթների համառոտ շարադրանքը:

Արձանագրությունը նաև պետք է տեղեկություն պարունակի տվյալ քննարկումների արդյունքում ընդունված որոշման մասին՝ արձանագրության մեջ նշելով դրա եզրափակիչ մասը:

Գործնականում ի՞նչ որոշումներ կարող են կայացվել քննարկումների ընթացքում: Հնարավոր է, որ քննարկումները վերաբերեն փորձաքննության արդյունքներին, որի ընթացքում պարզվի որևէ հանգամանք: Ահա այդ հանգամանքն էլ դիտվում է իբրև քննարկումների արդյունքում ընդունված որոշում:

Սա չի նշանակում, թե արձանագրությամբ ամրագրված որևէ պարզաբանված կամ ճշգրտված հանգամանք, կամ հարց այլևս անվիճելի է, և վարչական վարույթն իրականացնող վարչական

մարմինը կաշկանդված է վերջնական որոշում ընդունելիս:

Արձանագրությունն ընդամենը գործում եղած մյուս փաստաթղթերի և այլ նյութերի հետ միասին դասվում է այն ապացույցների շարքը, որոնց զնահատումը կատարում է վարչական մարմինն ինքը (տես Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասը):

Մի քանի քննարկումներ անցկացնելու դեպքում վարչական մարմինը դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ պետք է կազմի առանձին արձանագրություններ: Այդ արձանագրությունները պետք է համարակալվեն և սահմանափակվեն միայն տվյալ գործով կազմված արձանագրությունների թվով: Այսինքն՝ տվյալ գործով արձանագրությունների համարակալումները չպետք է կրեն դրան նախորդող գործերով կազմված արձանագրությունների համարակալումներին հաջորդող հերթական համարները:

### **Հարց 43. Ո՞րոնք են վարչական վարույթ հարուցելու հիմքերը:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, իսկ վարչական բողոք բերելու դեպքում՝ բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

«Անձ» բառի ներքո, ինչպես արդեն նշել ենք, Օրենքը նկատի ունի ֆիզիկական և իրավաբանական անձանց, ովքեր դիմում են ներկայացնում իրավասու վարչական մարմին՝ համապատասխան վարչական ակտ ընդունելու մասին: Բողոքի դեպքում էլ նույն անձինք գրավոր բողոք են ներկայացնում վարչական մարմին կամ նրա վերադասին՝ վիճարկելով վարչական մարմնի ընդունած վարչական ակտը կամ նրա գործողությունը, կամ անգործությունը (Օրենքի 30-րդ հոդված):

Փաստորեն այս պարագայում վարչական վարույթ հարուցելու հիմքը անձի նախաձեռնությունն է, որը պետք է արտահայտվի վարչական մարմին (վերադաս վարչական մարմին) գրավոր դիմում կամ բողոք ներկայացնելու ձևով:

Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելը կարող է դրսևորվել անմիջականորեն համապատասխան ակտ ընդունելու ձևով, իսկ եթե նման ակտի ընդունումը որոշակի ժամանակ է պահանջում՝ նախապես ակտի հասցեատի-

րոջը (հասցեատերերին) ծանուցելու ձևով: Օրինակ՝ վարչական մարմինը ռադիոյով, հեռուստատեսությամբ, թերթերով կամ այլ միջոցով հայտարարում է, որ առաջիկա օրերին վերանորոգման պատճառով փակվելու է մայրաքաղաքի փողոցներից մեկը:

Այդ դեպքում վարչական ակտը ուժի մեջ է մտնում այն օրը, երբ փողոցը փաստացի փակվում է:

Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, օրենքից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

Օրենքի պահանջով վարչական ակտ ընդունելու դեպք է առանց թույլտվության կառուցվող շենքի շինարարությունը դադարեցնելու վերաբերյալ որոշումը:

Օրենքից բխող անհրաժեշտության դեպք է ջրի հնարավոր աղտոտվածությունը պարզելու նպատակով ջրամատակարարումը դադարեցնելու վերաբերյալ որոշումը, իսկ վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորության դեպք է ՀՀ Նախագահի կողմից անձին Հայաստանի Հանրապետության հերոսի կոչում շնորհելը:

Վերոգրյալից հետևում է, որ միայն նշված հիմքերից մեկի առկայության դեպքում վարչական մարմինը կարող է իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցել: Այդ հիմքերի բացակայության պայմաններում վարչական մարմնի կողմից վարչական վարույթ հարուցելը կլինի օրինականության սկզբունքի ուղղակի խախտում:

#### **Հարց 44. Ո՞ր օրվանից է վարչական վարույթը համարվում հարուցված:**

##### **Պատասխան.**

Անձի դիմումի կամ բողոքի հիման վրա վարչական վարույթը հարուցված է համարվում համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից (Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդից 4-րդ մասեր):

Դիմումը կամ բողոքը այն ներկայացնող անձը կարող է առձեռն հանձնել համապատասխան վարչական մարմին, որտեղ, այդ

մարմնի գործավարական կանոններին համապատասխան, գրանցվում է (նուտքագրվում է)՝ հետագայում համապատասխան ղեկավարի նակագրությանը ներկայացնելու և կատարող ծառայությանը կամ ստորաբաժաննանը հանձնելու համար: Մուտքագրման կամ գրանցման պահից էլ դիմումը կամ բողոքը տվյալ վարչական մարմնում ստացված է համարվում, իսկ վարչական վարույթը՝ այդ օրվանից հարուցված:

Եթե դիմումը կամ բողոքը փոստով է ուղարկվել, ապա այն վարչական մարմնում ստացված է համարվում վերջինիս սպասարկող փոստային կազմակերպության կողմից համապատասխան ծրարը փոստային կանոններով սահմանված կարգով այդ մարմնին հանձնելու օրը: Այդ օրվանից էլ համարվում է, որ վարչական վարույթը հարուցվել է:

Ըստ էության, վարչական վարույթ հարուցելու համար վարչական մարմնին որևէ ժամկետ չի տրված: Դիմումը տվյալ վարչական մարմնում նուտքագրվելու օրվանից համարվում է, որ դրանով արդեն վարչական վարույթ է հարուցվել: Սակայն վերապահում պետք է անել այն դեպքերի կապակցությամբ, երբ դիմումը վերահասցեագրվում կամ վերադարձվում է:

Դա բխում է Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի այն դրույթից, ըստ որի՝ եթե վարչական մարմինը պարզում է, որ դիմումը կամ բողոքն իր իրավասությանը վերաբերող հարցի չի առնչվում, ապա նա պարտավոր է այն եռօրյա ժամկետում վերահասցեագրել իրավասու վարչական մարմնին կամ վերադարձնել դիմողին կամ բողոք բերողին՝ եթե դիմումը կամ բողոքը առհասարակ որևէ վարչական մարմնի իրավասությանը վերաբերող հարցի չի առնչվում: Նման դեպքերում համարվում է, որ վարչական մարմնում վարույթ չի հարուցվել:

Միևնույն ժամանակ, ըստ Օրենքի, դիմումը կամ բողոքը վերը նշված կարգով վարչական մարմնում ստացվելու օրվանից վարչական վարույթը հարուցված չի համարվում, եթե վարչական մարմինը, Օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, դիմումը կամ բողոքը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում այն վերահասցեագրել է այլ վարչական մարմնի:

Սակայն եթե դիմումը կամ բողոքն իր որևէ մասով առնչվում է այն վարչական մարմնի իրավասությանը, որին հասցեագրվել է, ապա այդ մարմնում դիմումը կամ բողոքը ստանալու օրվանից դրա



համապատասխան մասով վարչական վարույթը համարվում է հարուցված:

Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթը հարուցված է համարվում այն օրվանից, երբ վարչական մարմինը սկսում է իրականացնել որոշակի գործողություն (գործողություններ), որն ուղղված է իր նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը: Օրինակ՝ իրավասու վարչական մարմինը սկսում է ուսումնասիրել հասարակական նշանակություն ունեցող վայրում տնտեսվարող սուբյեկտների կողմից որոշակի գործողություններ կատարելն արգելելու հնարավորության հարցը: Այդ նպատակով նրա իրավասու պաշտոնատար անձը այցելում է տվյալ հասարակական վայր (օրինակ՝ զբոսայգի): Այցելելու օրվանից էլ համարվում է, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ է հարուցվել:

Ընդ որում՝ համապատասխան գործողություններ սկսելը չի ենթադրում, որ անհրաժեշտ պարզաբանումներն ու ուսումնասիրությունները կատարելուց հետո պարտադիր կերպով վարչական ակտ է ընդունվելու: Եթե, օրինակ, պարզվի, որ տվյալ հասարակական վայրում որևէ գործողության արգելման կարիք չկա, ապա վարչական մարմինը վարչական ակտ չի ընդունի: Իսկ եթե ուսումնասիրությունները ցույց տան, որ անհրաժեշտ է տվյալ հասարակական վայրում արգելել, ասենք, աղմկոտ երաժշտությունը, ապա վարչական մարմինը՝ բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելուց, օրինակ՝ այդ վայրում տնտեսական կամ համապատասխան այլ գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց լսելուց, անհրաժեշտության դեպքում՝ փորձաքննություն նշանակելուց հետո և այլն, ընդունում է վարչական ակտ՝ տվյալ վայրում որոշակի հզորության ձայնով երաժշտություն հաղորդելն արգելելու մասին:

Վարչական մարմինը պարտավոր է վարչական վարույթ հարուցելու մասին եռօրյա ժամկետում ծանուցել վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին (Օրենքի 35-րդ հոդված): Եռօրյա ժամկետը պետք է հաշվարկվի Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վարույթը հարուցելու պահից սկսած, որն ըստ էության, չպետք է գերազանցի չորսօրյա ժամկետը՝ վարչական մարմնում համապատասխան դիմումը կամ բողոքը ստանալու օրվանից հաշված:

Ընդ որում՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին այդ մասին ծանուցում է այն պարագայում, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Սույն դրույթի իմաստն այն է, որ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթներում անհետաձգելի հանգամանքների առկայության դեպքերում (տարերային կամ տեխնաժին աղետ և այլն) վարչական մարմինն այդ հանգամանքներից բխող կամ դրանց առաջացրած հետևանքների վերացման անհրաժեշտությունից ելնելով՝ կարողանա անհապաղ ընդունել համապատասխան վարչական ակտ, որի պարագայում այդ ակտի ընդունման հետաձգումը կարող է հանգեցնել առավել բացասական հետևանքների, հետևաբար՝ անհնարին կամ ոչ նպատակահարմար է դառնում վարչական վարույթ հարուցելու մասին ծանուցելը, քանի որ ըստ էության ծանուցելու ժամկետը տվյալ դեպքում համընկնում է վարչական ակտի ընդունման ժամկետի հետ:

**Հարց 45. Վարչական վարույթ հայցելու համար վարչական մարմին ի՞նչ ձևի և ի՞նչ բովանդակությամբ դիմում պետք է ներկայացվի:**

**Պատասխան.**

Եթե վարչական ակտ ընդունելու համար շահագրգիռ է ֆիզիկական կամ իրավաբանական անձը, որն այդ նպատակով պետք է տվյալ վարչական մարմնին դիմում ներկայացնի, ապա Օրենքը սահմանում է, որ դիմումը պետք է լինի գրավոր (31-րդ հոդվածի 1-ին մաս):

Ընդ որում՝ Օրենքը սահմանել է նաև դիմումին ներկայացվող պահանջները:

Այսպես՝ դիմումի մեջ պետք է նշվեն այն վարչական մարմնի անվանումը, որին դիմումը ներկայացվում է, ինչպես նաև՝

ա) դիմողի անուն-ազգանունը, իսկ եթե դիմողն իրավաբանական անձ է՝ վերջինիս լրիվ անվանումը.

բ) դիմողի հասցեն, իսկ եթե դիմողն իրավաբանական անձ է՝ վերջինիս գտնվելու վայրը.

գ) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը.

դ) դիմումի առարկան, այսինքն՝ այն պահանջը, որն անձը ներկայացնում է վարչական մարմնին (օրինակ՝ արտոնագրի տրամադրում որպես անհատ ձեռնարկատեր կամ առևտրային կազմակերպություն, պետական գրանցում և այլն)։

ե) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (այն դեպքում, երբ նման փաստաթղթեր ներկայացվում են)։

զ) դիմումը կազմելու տարին և ամիս-ամսաթիվը։

Դիմումը պետք է ստորագրի դիմող ֆիզիկական անձը, իսկ եթե դիմում ներկայացնողն իրավաբանական անձ է, ապա այն պետք է ստորագրի վերջինիս՝ նման փաստաթղթեր ստորագրելու համար իրավասու պաշտոնատար անձը։

Այն դեպքում, երբ դիմումով հայցվող վարչական ակտը ստանալու համար օրենքը նախատեսում է պետական կամ տեղական տուրքի վճարում (օրինակ՝ շինարարության թույլտվության կամ որևէ տեսակի տնտեսական գործունեություն իրականացնելու արտոնագիր ստանալու դեպքում) կամ այլ պարտադիր վճարում կատարելու պարտականություն, ապա դիմումին պետք է կցվի տուրքի մուծման կամ այլ պարտադիր վճարման կատարումը հաստատող փաստաթուղթը։

Եթե դիմումը ներկայացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի ներկայացուցչի կողմից, ապա դիմումին կից պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով ներկայացուցչին տրված լիազորագիրը։ Անհրաժեշտ է նկատել, որ իբրև օրինական ներկայացուցիչ հանդես գալու դեպքում լիազորագիր չի կարող պահանջվել։

Օրինակ՝ եթե անձնագիր ստանալու համար երեխայի դիմումը ներկայացնում է նրա ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչ՝ խնամակալը, հոգաբարձուն, ապա այս դեպքում բավարար է, որ ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչը ներկայացնի իր անձը հաստատող որևէ փաստաթուղթ, որից հետևում է, որ ինքն անձնագիր ստացող անձի ծնողը կամ այլ օրինական ներկայացուցիչն է։

Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը կարևոր դրույթ ունի այն մասին, որ դիմում է համարվում նաև վարչական մարմնում անձանց ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը։

Բոլոր վարչական մարմններում սահմանված կարգով կատարվում է անձանց ընդունելություն (նկատի են առնվում ֆիզիկական անձինք՝ անկախ նրանից, ում են ներկայացնում՝ իրենց, թե որևէ

իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձանց խմբի և այլն): Ընդունելության ժամանակ վարչական մարմինը գործավարական կանոններով սահմանված կարգով գրանցումներ է կատարում ընդունելության եկած անձանց և նրանց կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ:

Ընդ որում՝ եթե որևէ հարց առնչվում է վարչական մարմնի կողմից վարչական ակտ ընդունելու խնդրին, ապա վարչական մարմինը կազմում է համապատասխան արձանագրություն, որը բխում է Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի իմաստից:

Եթե այդ արձանագրության մեջ կան ընդունելության եկած անձի վերաբերյալ տեղեկություններ՝ անուն-ազգանունը, իրավաբանական անձին ներկայացնող պաշտոնատար կամ այլ անձի դեպքում՝ իրավաբանական անձի լրիվ անվանումը, ինչպես նաև ընդունելության եկած անձի հասցեն կամ իրավաբանական անձի գտնվելու վայրի հասցեն ու այն պահանջը, որը ընդունելության եկած անձը ներկայացրել է վարչական մարմնին, ապա այս դեպքում արձանագրությունը դիտվում է որպես դիմում, որի հիման վրա էլ վարչական մարմինը վարչական վարույթ է հարուցում արձանագրությունը կազմելու օրվանից:

Միաժամանակ Օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասը որոշակի վերապահում է անում՝ նախատեսելով, որ վերը նշված տեղեկությունների առկայության դեպքում արձանագրությունը կարող է դիմում դիտվել միայն այն պարագայում, եթե օրենքով չի պահանջվում, որ դիմումը ներկայացվի բոլոր այն պայմանների պահպանմամբ, որոնք սահմանված են Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով:

Դա նշանակում է, որ եթե որևէ վարչական ակտ ընդունելու, օրինակ՝ ֆիրմային անվանումը գրանցելու համար օրենքով նախատեսվում է ներկայացնել ոչ միայն այն տեղեկությունները, որոնց մասին վերը հիշատակվեց, այլև այլ տեղեկություններ, ապա նման դեպքերում ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը չի կարող դիմումի հիման վրա վարչական վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ:

Այդ և նման այլ դեպքերում շահագրգիռ անձը պետք է գրավոր դիմում ներկայացնի Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

**Հարց 46. Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, ինչպե՞ս պետք է վարվի վարչական մարմինը:**

**Պատասխան.**

Պրակտիկայում բացառություններ չեն այն դեպքերը, երբ վարչական մարմին ներկայացված դիմումը վերադարձվում է՝ դրանում առկա զուտ ձևական սխալները վերացնելու և դրանից հետո միայն դիմումը ներկայացնելու պայմանով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խոսքը միայն ձևական սխալների մասին է, որոնց առկայությունը բովանդակային առումով չի կարող խոչընդոտ հանդիսանալ հայցվող վարչական ակտն ընդունելու համար, Օրենքը նման դեպքում միանգամայն այլ կարգավորում է տալիս՝ նպատակ ունենալով վարչական մարմինների հետ հարաբերություններում ֆիզիկական ու իրավաբանական անձանց չժանրաբեռնել ձևական պահանջների կատարմամբ, ինչը նաև Օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված «ձևական պահանջների չարաշահման արգելքի» սկզբունքի պայմաններից է: Օրենքն այն ուղին է ընտրել, որ դիմումում ձևական սխալների առկայությունն ինքնին հիմք չի կարող հանդիսանալ այն դիմողին վերադարձնելու, հետևաբար՝ վարույթ չհարուցելու համար:

Ընդհակառակը՝ եթե դիմումում (ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ խոսքը սոսկ դիմումի մասին է, այլ ոչ թե դրան կից փաստաթղթերի) առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը պարտավոր է դիմողին իր մոտ հրավիրելով կամ գրավոր ծանուցելով՝ մատնացույց անել այդ սխալները և հնարավորություն ընձեռել շտկելու կամ էլ ինքը շտկել դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին այդ մասին իրազեկելով:

Ձևական սխալներ հասկացությունը Օրենքը չի տվել, սակայն Օրենքի 32-րդ հոդվածի նորմի իմաստից հետևում է, որ դրանց ներքո պետք է նկատի ունենալ դիմումում առկա այն անճշտությունները, որոնք, ի մասնավորի, վերաբերում են դիմումում ներկայացվող միևնույն հարցին, հանգամանքին կամ փաստին: Օրինակ՝ դիմողի անունը կամ ազգանունը դիմումում օգտագործված է մեկից ավելի անգամ, սակայն կրկնություններում սխալ կա, մի տեղ անունը ուրիշ է, քան մեկ այլ տեղ:

Կամ, ասենք, դիմումում նշվում է արտոնագիր ստանալու մա-

սին, բայց դիմումի վերջում շարադրված խնդրանքում բոլորովին այլ անվանումով վարչական ակտ հայցելու մասին է խոսվում: Ձևական սխալների շարքում կարելի է հիշատակել նաև դիմումում տվյալ վարչական մարմնի կամ դրա ղեկավարի անուն ազգանունը սխալ նշելը, որը նույնպես դիմումը վերադարձնելու հիմք լինել չի կարող:

Օրենքի 32-րդ հոդվածը ձևական սխալների մեջ նկատի է ունենում նաև դիմումին կից փաստաթղթերի ցանկի և ներկայացված փաստաթղթերի միջև եղած անհամապատասխանությունը: Այսպես՝ եթե դիմումին կից ցանկից հետևում է, որ ներկայացվում են, օրինակ, 10 անուն փաստաթուղթ, սակայն իրականում ներկայացված է 10-ից պակաս կամ ավելի, ապա վարչական մարմինն այս դեպքում ևս դիմողին առաջարկում է համալրել ցանկը՝ ներկայացնելով պակաս փաստաթուղթը կամ ուղղել դիմումի մեջ տեղ գտած սխալ թվանշունը:

Ընդ որում՝ ձևական սխալներն ուղղելու անհրաժեշտության դեպքում վարչական մարմինը դիմողին համապատասխան ժամանակ պետք է տա՝ վարույթի իրականացման համար նախատեսված ընդհանուր ժամկետի սահմաններում, առանց վարույթի ժամկետը կասեցնելու:

### **Ջարգ 47. Ո՞ր դեպքերում է վարչական մարմինը դիմումը վերահասցեագրում և ու՞մ:**

#### **Պատասխան.**

Դիմումը ստանալուց հետո, որպես կանոն, վարչական մարմինը հարուցում է վարույթ, սակայն բացառություն չեն այն դեպքերը, երբ դիմումով վարչական մարմնից հայցվում է այնպիսի վարչական ակտի ընդունում, որը դուրս է այդ մարմնի լիազորությունների շրջանակից:

Գործող օրենսդրության ու դրա փաստական կիրառման վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ նման իրավիճակներում վարչական մարմինները համապատասխան դիմումը վերադարձնում են՝ նշելով, որ տվյալ հարցի լուծումը չի մտնում իրենց իրավասության մեջ: Միանգամայն այլ, անձի համար ավելի բարենպաստ կարգ է սահմանում Օրենքը, համաձայն որի, համապատասխան վարչական մարմինն իր լիազորությանը չվերաբերող դիմումը վերահաս-

ցեազրում է իրավասու մարմնին:

Դիմումը վերահասցեագրվում է այն դեպքերում, երբ դիմում ստացած վարչական մարմինը պարզում է, որ իր իրավասության մեջ չի մտնում այն հարցի լուծումը, որն առաջադրված է դիմումով, բայց վարչական մարմնին հայտնի է, թե որ վարչական մարմինն է իրավասու այդ հարցով (Օրենքի 33-րդ հոդվածի 1-2-րդ մասեր):

Օրինակ՝ վտանգավոր թափոնների թաղման կամ վերամշակման գործողություններ կատարելու արտոնագիր տալու մասին դիմումը ներկայացվել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, մինչդեռ նման արտոնագիր տալու իրավունքը վերապահված է ՀՀ բնապահպանության նախարարությանը: Նման դեպքում ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն իր ստացած դիմումը պարտավոր է ոչ թե վերադարձնել դիմողին, այլ վերահասցեագրել ՀՀ բնապահպանության նախարարությանը:

Վերահասցեագրվում են դիմումը և դրան կից բոլոր փաստաթղթերը, ինչի մասին վերահասցեագրող վարչական մարմինը պարտավոր է գրավոր ծանուցել դիմողին:

Միաժամանակ չի բացառվում, որ դիմումում ներկայացված հարցերը վերաբերեն մեկից ավելի վարչական մարմինների իրավասությանը: Այդ դեպքում վարչական մարմինը համապատասխան փաստաթղթերը՝ դրանցից պատճեններ հանելով, պետք է վերահասցեագրի այդ մի քանի վարչական մարմիններին՝ նրանցից յուրաքանչյուրին վերաբերող մասով:

Հնարավոր են դեպքեր, որ վարչական մարմինը պարզի, որ իրեն ներկայացված դիմումում բարձրացված են մի քանի հարցեր, և դրանցից մեկն իր իրավասության մեջ է մտնում, իսկ մյուսները ոչ: Այդ դեպքում դիմում ստացած վարչական մարմինն իր իրավասությանը առնչվող հարցերով վարչական վարույթ է հարուցում և այն իրականացնում ընդհանուր հիմունքներով, իսկ վերահասցեագրում է միայն դիմումում ներկայացված այն հարցերը, որոնք առնչվում են այլ վարչական մարմնի (մարմինների) իրավասությանը:

Վարչական մարմինն իր մոտ պահում է դիմումի և դրան կից փաստաթղթերի պատճենները, երբ դիմումում ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը մտնում են իր իրավասության մեջ:

Դիմումը և դրան կից փաստաթղթերն այլ վարչական մարմնի (մարմինների) վերահասցեագրվում են դրանք ստանալու օրվանից եռօրյա ժամկետում:

**Հարց 48. Ո՞ր դեպքերում է վարչական մարմինը դիմումը վերադարձնում դիմողին:**

**Պատասխան.**

Այն դեպքում, երբ դիմումով առաջադրված պահանջը (ներկայացվող հարցը) չի մտնում ինչպես դիմումը ստացած վարչական մարմնի, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ, դիմումը վերադարձվում է դրա հասցեատիրոջը (Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մաս):

Այսինքն՝ հնարավոր են դեպքեր, երբ դիմումում բարձրացվում են հարցեր, որոնց լուծումը վարչական մարմինների իրավասության շրջանակների մեջ չեն մտնում կամ դրանցով ակնկալվում է ոչ թե վարչական ակտի ընդունում, այլ բոլորովին ուրիշ ակտի ընդունում կամ գործողության կատարում:

Օրինակ՝ դիմումով ներկայացվող հարցի լուծումն իրավասու է տալ դատարանը կամ Սահմանադրական դատարանը, մինչդեռ այն ներկայացվել է վարչական մարմնին: Դիմումը վերադարձման ենթակա է նաև այն դեպքում, երբ դրա պատասխանը պետք է տա որևէ մասնավոր անձ:

Դիմումը վերադարձնելու դեպքում նույնպես այն ստացած վարչական մարմինը դիմումի և կից փաստաթղթերի պատճենները կամ դրանց ցանկերը պահում է իր մոտ: Դիմումը և դրան կից փաստաթղթերը վերադարձվում են վարչական մարմնում դրանք ստանալուց հետո եռօրյա ժամկետում՝ նշելով վերադարձման պատճառները:

**Հարց 49. Ի՞նչ ժամկետում, ո՞վ և ու՞մ է ծանուցում վարչական վարույթի հարուցման մասին:**

**Պատասխան.**

Վարչական վարույթի հարուցումից հետո եռօրյա ժամկետում վարույթ հարուցած վարչական մարմինը վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին (տես՝ նաև 42-րդ հարցի պատասխանը):

Եթե վարչական մարմինն անհրաժեշտ է համարում, ծանուցագրում նշում է նաև վարույթի համար անհրաժեշտ միջոցառումների (լսումներ, վկայի հարցաքննություն և այլն) անցկացման տեղի, օր-



վա, ժամի և այլ պայմանների մասին: Այլ պայմանների ներքո պետք է նկատի ունենալ, օրինակ, վարույթը դռնփակ անցկացնելը, երբ հնարավոր է, որ վարույթի ընթացքում շոշափվեն պետական կամ ծառայողական գաղտնիքին առնչվող տեղեկությունների հրապարակելու հարցեր և այլն:

Եթե վարույթին պետք է ներգրավվեն նաև վկա, փորձագետ, քարզմանիչ կամ այլ մարմինների ներկայացուցիչներ, ապա վարչական մարմինը նույն ժամկետում վարույթ հարուցելու մասին ծանուցում է նշված անձանց:

Եթե վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, ապա վարույթի մասնակիցներին և վերը հիշատակած մյուս անձանց վարչական մարմինը ծանուցում է միայն այն դեպքում, եթե վարչական ակտն ընդունելու համար պահանջվում է 3 օրից ավելի ժամկետ՝ այն օրվանից հաշված, երբ վարույթը հարուցվել է: Խոսքն անհապաղ վարչական ակտ ընդունելու դեպքերի մասին է, երբ հապաղումը կարող է հանգեցնել անձանց իրավունքների խախտման: Մասնավորապես, եթե նախաձեռնությունը վերաբերում է պահանջվող որակին չհամապատասխանող խմելու ջրի մատակարարման դադարեցմանը, ապա հապաղելու դեպքում անորակ ջրի մատակարարման պատճառով առաջացած բացասական հետևանքներն ավելի մեծ կլինեն, քան եթե վարույթի մասնակիցներն իրազեկվեն վարույթ հարուցելու մասին, և նոր միայն դադարեցվի ջրամատակարարումը:

Այն ժամանակը, որի ընթացքում կարող է վարչական ակտն ընդունվել, որոշում է վարույթ հարուցած վարչական մարմինը, քանի որ հենց նրան կարող է հայտնի լինել՝ վարչական ակտ ընդունելու համար 3 օրից ավելի ժամկետ կպահանջվի, թե ոչ՝ հաշվի առնելով իրեն հայտնի հանգամանքները և Օրենքից բխող որոշ այլ հանգամանքներ, օրինակ՝ ակտի ընդունումն արդյո՞ք կապված է անհետաձգելի իրավիճակների հետ, թե՛ ոչ (տես՝ օրինակ, Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի դրույթը):

Այստեղ խոսքն առաջին հերթին կարող է վերաբերել գրավոր վարչական ակտի ընդունմանը: Որոշ դեպքերում այն կարող է առնչվել նաև առարկայական վարչական ակտի ընդունման հետ, օրինակ՝ երբ նախապես հայտարարվում է, որ որևէ ժամկետից սկսած որևէ փողոցի ինչ-որ հատված վերանորոգման պատճառով փակ է լինելու: Համապատասխան ժամկետից սկսած՝ փողոցի

տվյալ հատվածի սկզբնամասում և վերջնամասում արգելափակող նշաններ են տեղադրվում:

Բանավոր վարչական ակտեր ընդունելու համար գործնականում որևէ նախնական ժամկետ սահմանել հնարավոր չէ: Այդ իսկ պատճառով վարչական մարմնի նախաձեռնությամբ բանավոր վարչական ակտերի ընդունման և դրա վերաբերյալ վարչական մարմնի պաշտոնատար անձի նախաձեռնության դրսևորման համար որոշակի ժամանակ չի պահանջվում. որպես կանոն, դրանք հանընկնում են կամ միանգամից հաջորդում են միմյանց:

Օրինակ՝ եթե հետիոտնը խախտում է ճանապարհային երթևեկության կանոնները, և դա նկատում է ոստիկանության համապատասխան ծառայության տեսուչը, ապա վերջինս իրավունք ունի խախտում թույլ տված անձին անմիջապես փողոցից դուրս անվտանգ տեղ հրավիրել և բանավոր նախազգուշացնել խախտման կապակցությամբ (կարծում ենք, որ նման դեպքերում վկայի, փորձագետի անհրաժեշտություն չի լինի):

Որոշ դեպքերում առարկայական վարչական ակտը նույնպես կարող է անմիջապես հաջորդել նման ակտ ընդունելու համար վարչական մարմնի դրսևորած նախաձեռնությանը: Այսպես՝ երբ ավտոտեսուչը ձեռքի կամ մահակի մեկնումով կարգազանց վարորդին «Կանգնիր» ազդանշանն է տալիս, որն ազդանշանային վարչական ակտ է, ապա դա խախտմանն անմիջականորեն հաջորդող ակտ է, որի ընդունման համար, ակնհայտ է, ոչ միայն 3 օրից ավելի ժամկետ չի կարող պահանջվել, այլև հնարավոր չէ դա անել որևէ հասանելի ձևով նախապես ծանուցելով: Իրավախախտ վարորդի՝ խախտում թույլ տալուց հետո նույնիսկ մի քանի վայրկյան ուշացումով «Կանգնիր» կարգադրությունը տալու դեպքում դեռևս հարցական է, թե որքանով ավտոտեսուչը կարող է նրան ապացուցել թույլ տված խախտման փաստը, եթե համապատասխան տեսագրանցող սարքերի միջոցով անհրաժեշտ նկարահանում չլինի:

Այսպիսով՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի հիման վրա վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ ժամկետի հարցի լուծումը կախված է մի քանի կարևոր հանգամանքներից, որոնցից են՝

ա) ի՞նչ տեսակի վարչական ակտ է ընդունվելու (գրավոր, բանավոր, առարկայական և այլն).

բ) որքա՞ն է հրատապ համապատասխան վարչական ակտի ըն-

դուռնունը՝ ըստ վարույթը հարուցած վարչական մարմնի.

գ) անձանց ո՞ր խմբի վրա է այն տարածվելու և այդ պատճառով անհրաժեշտություն կա՞ արդյոք այդ խմբին ծանուցել վարչական վարույթի մասին:

Վերոհիշյալ և այլ էական հանգամանքները ևս հաշվի առնելով ու վերլուծելով, վարչական մարմինը որոշում է վարչական ակտ ընդունելու հավանական ժամկետը, և եթե իր նախաձեռնությամբ վարչական վարույթի հարուցման օրվանից այն 3 օրից ավելի է լինելու, ապա այդ մասին ծանուցում է վարույթի մասնակիցներին, իսկ եթե 3 օրից պակաս ժամկետ է պահանջվելու, չի ծանուցում:

### **Հարց 50. Ի՞նչ է նշանակում վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը:**

#### **Պատասխան.**

Օրենքը սահմանել է, որ վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է, նախատեսելով նաև, որ այլ օրենքներով կարող են սահմանվել 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Նման մոտեցում ցուցաբերելով՝ օրենսդիրը նկատի է ունեցել, որ որևէ վարույթով որոշում կայացնելու, այն է՝ համապատասխան վարչական ակտ ընդունելու համար տվյալ ժամկետն իրատեսական է և բավարար կլինի անգամ ամենաբարդ գործերի դեպքում, եթե բացակայում են վարույթի կասեցման կամ երկարաձգման հիմքերը, հարցը լրիվ պարզելու և ըստ էության դրա վերաբերյալ որոշում կայացնելու համար:

Այսինքն՝ 30-օրյա կամ այլ օրենքով սահմանված ավելի կարճ կամ երկար ժամկետն առավելագույնն է, որի ընթացքում վարչական մարմինը պետք է ընդունի համապատասխան վարչական ակտը (Օրենքի 47-րդ հոդված):

Դրանից հետևում է, որ վարչական մարմինը համապատասխան վարչական ակտը կարող է ընդունել նաև մինչև 30-օրյա կամ օրենքով նախատեսված այլ ժամկետը լրանալը:

Իսկ ո՞ր դեպքերում դա կարող է տեղի ունենալ: Օրենքի 36-րդ հոդվածը տվել է այդ հարցի պատասխանը՝ սահմանելով, որ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պար-

զաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո ողջամիտ ժամկետում չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Սա էլ ըստ էության վարչական մարմնի արագ գործելու պարտականությունն է. վարույթ հարուցելուց հետո վարչական մարմինը չպետք է հապաղի գործի լուծման համար անհրաժեշտ գործողությունները կատարելուց՝ անկախ նրանից, որ վարույթի ավարտին դեռ որոշակի ժամանակ կա: Վարույթը հարուցելուց անմիջապես հետո վարչական մարմինը պետք է ձեռնամուխ լինի անհրաժեշտ գործողությունների կատարմանը, իսկ դրանց ավարտից հետո անհապաղ ընդունի համապատասխան վարչական ակտը:

Վարչական մարմինը պետք է վարչական վարույթն իրականացնի առանց այն բարդացնելու և անհարկի դանդաղկոտություն ցուցաբերելու: Այսինքն՝ առանց լրացուցիչ լսումներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ զննություն կատարելու, եթե առկա չեն գործի փաստացի հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ:

Արագ գործելու պարտականության էությունը հետևյալն է: Եթե, օրինակ, դիմումով հարուցված վարչական վարույթում ներկայացված փաստաթղթերով լիովին հիմնավորվում է համապատասխան վարչական ակտի ընդունումը և որևէ լրացուցիչ միջոցառում անցկացնելու անհրաժեշտություն չկա, ապա վարչական մարմինը համապատասխան վարչական ակտը պարտավոր է ընդունել ոչ թե օրենքով նախատեսված ժամկետի վերջին օրը, այլ մինչ այդ՝ «ողջամիտ ժամկետում»: այն օրը, երբ նա համոզվել է, որ բոլոր փաստաթղթերն առկա են, և լրացուցիչ միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտություն չկա:

Իսկ դա նշանակում է, որ եթե վարույթ հարուցելու օրվանից եռօրյա ժամկետում վարչական մարմինը վարույթի մասնակիցներին ծանուցում է այդ մասին, ուրեմն՝ նա այդ ժամկետում նաև ծանոթացել է դիմումին ու դրան կից փաստաթղթերին: Հետևաբար՝ եթե այդ պահի դրությամբ նաև պարզվել է, որ բոլոր փաստաթղթերն առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար, ապա պետք է «ողջամիտ ժամկետում» ընդունել այդ ակտը: «Ողջամիտ ժամկետի» որոշակի տևողությունը նույնպես վարչական մարմնի որոշելիք հարցն է: Եթե վարչական մարմինը

գործում է այդ սկզբունքով, կարելի է համարել, որ նա հետևողականորեն կատարում է արագ գործելու՝ Օրենքով իր վրա դրված պարտականությունը: Հակառակ դեպքում ակնհայտ կդառնա, որ վարչական մարմինը ձգձգում է տվյալ վարույթով վարչական ակտի ընդունումը:

Այդ պարագայում շահագրգիռ անձն իրավասու է արագ գործելու պահանջ ներկայացնել տվյալ վարչական մարմնին: Իսկ վարչական մարմինը չպետք է հերքի իր հապաղումը՝ պատճառաբանելով, որ համապատասխան վարչական ակտն ընդունելու համար օրենքով սահմանված ժամկետը ընթացքի մեջ է և տակավին չի լրացել:

Վերը հիշատակվածը վերաբերում է նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներով գործերի կապակցությամբ համապատասխան վարչական ակտի ընդունման դեպքերին:

**Հարց 51. Ինչո՞ւմ են արտահայտվում վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և անաչառությունը:**

**Պատասխան.**

Օրենքի 37-րդ հոդվածը վերաբերում է վարչական վարույթի բազմակողմանիությանը, լրիվությանը և անաչառությանը, ինչը նշանակում է, որ վարչական մարմինը պարտավոր է տվյալ վարույթով ապահովել գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկումը՝ գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները բացահայտելու նպատակով:

Գործի բազմակողմանի քննարկումը նշանակում է բոլոր այն հարցերի պարզաբանումը, որոնք առնչվում են վարույթի առարկային: Օրինակ՝ կենսաթոշակ ստանալու համար ներկայացված դիմումով վարչական մարմինը պարտավոր է պարզել հետևյալ կարևոր հարցերը՝

- ա) կենսաթոշակի իրավունք տվող տարիքի առկայություն.
- բ) աշխատանքային գրքույկի և այլ փաստաթղթերի առկայություն, որոնք աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկություններ են պարունակում.
- գ) համապատասխան ստաժի առկայություն.

դ) նշանակվելիք կենսաթոշակի չափը՝ հաշվի առնելով դրան առնչվող բոլոր հավելումները, որոնք կարող են օրենքով նախատեսված լինել տվյալ կատեգորիայի աշխատողի համար:

ե) այլ հարցեր, որոնք կարող են նշանակություն ունենալ կենսաթոշակի նշանակման համար:

Վերոհիշյալ հարցերի պարզաբանումը կարող է ապահովել գործի բազմակողմանի քննարկումը:

Իսկ յուրաքանչյուր հարց պետք է պարզաբանվի լրիվ ծավալով՝ առանց որևէ հանգամանք բաց թողնելու: Տվյալ գործին առնչվող բոլոր հարցերի համակցությամբ՝ ամեն մի հարցի լրիվ պարզաբանումը, ըստ էության, բացահայտում է գործի լրիվ քննարկման նշանակությունը:

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ գործի բազմակողմանի քննարկումը ոչ թե վարույթի մասնակիցների, այլ վարչական մարմնի պարտականությունն է, հետևաբար՝ այս սկզբունքի ապահովման նպատակով վարչական մարմինը սահմանափակված չէ վարույթի մասնակիցների կողմից ներկայացված տեղեկություններով. վարույթի բազմակողմանիության ապահովման նպատակով վարչական մարմինն ինքն է պարտավոր ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ, ձեռք բերել անհրաժեշտ տեղեկություններ:

Բացի դրանից, գործը պետք է քննարկվի անաչառ կերպով, այն է՝ առկա բոլոր հարցերի հստակ լուծմանը համապատասխան՝ օրենքի պահանջների հետ համադրմամբ, առանց գործը քննարկող պաշտոնատար անձի սուբյեկտիվ մոտեցումների կամ գործի հանգամանքներից չբխող եզրահանգումների: Վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձի սուբյեկտիվ մոտեցումները չեն կարող հիմք հանդիսանալ գործի ելքի համար:

## **Չարդ 52. Ի՞նչ է նշանակում վարույթի մասնակիցներին լսելը:**

### **Պատասխան.**

«Վարույթի մասնակիցներին լսելը», ըստ էության, նոր հասկացություն է և նոր ինստիտուտ՝ Հայաստանի Հանրապետության վարչական օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի համար:

Արդեն նշել ենք, որ Օրենքով վարչական վարույթում ներառված

են դատավարական որոշ ինստիտուտներ, որոնցից մեկն էլ հենց վարույթի մասնակիցներին լսելն է: Եթե դատավարական օրենսդրությունը բացառում է առանց դատավարության մասնակիցներին լսելու գործն ըստ էության լուծող դատական ակտի ընդունումը, ապա վարչական վարույթում, մինչև Օրենքն ուժի մեջ մտնելը, առանց դրա մասնակիցներին լսելու համապատասխան որոշում ընդունելը միանգամայն իրավաչափ կլիներ: Սակայն գործին առնչվող բոլոր հանգամանքները բացահայտելու, պարզաբանելու, համապատասխան ապացույցներով հիմնավորելու, (համակողմանիության ու լրիվության ապահովում) հետևաբար՝ իրավաչափ որոշում ընդունելու համար անհրաժեշտ է, որպեսզի մինչև գործով որոշում ընդունելը վարչական մարմինն իրազեկ դառնա գործի ելքով շահագրգիռ բոլոր անձանց կարծիքներին, հատկապես՝ եթե ընդունվելու է միջամտող վարչական ակտ: Դա պարտադիր է դարձել Օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2005թ. հունվարի 1-ից:

Դրա համար շատ կարևոր է վարույթի մասնակիցներին լսելը: Իսկ ո՞վ է «լսում»: Իհարկե, լսելու պարտականությունը կրում են վարչական վարույթն իրականացնող վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմը: Վերջիններս պարտավոր են վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

Այսպես՝ ենթադրենք առևտրային կազմակերպությունում հարկային կամ այլ մարմին օրենքով սահմանված կարգով ստուգում է անցկացրել, որի արդյունքներով պետք է կազմվի համապատասխան ակտ:

Եթե ստուգումներ անցկացրած վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձը մտադրություն ունի բացահայտված խախտումների մասին նշումներ կատարել այդ ակտում, ապա նա պարտավոր է առևտրային կազմակերպության իրավասու պաշտոնատար անձանց կամ այլ աշխատողների հնարավորություն տալ համապատասխան խախտումների վերաբերյալ արտահայտելու իրենց տեսակետները, խախտման պատճառները, ինչպես նաև բացատրություններ ներկայացնելու դրանց վերաբերյալ՝ որպես գործին առնչվող փաստական հանգամանքներ:

Բացառված չէ նաև այն իրավիճակը, որ միայն համապատասխան անձին լսելուց հետո վարչական մարմինը կարող է պարզել այս կամ այն վարչական ակտը (բարենպաստ, միջամտող, զուգորդող) ընդունելու անհրաժեշտությունը:

Լսումներ իրականացնելու դրական օրինակների կարող ենք հանդիպել Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի գործունեության մեջ, երբ վերջինս քրեմարկում է տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերը: Այս քննարկումներին հետևելիս կարելի է տպավորություն ստանալ, որ հետևում ես դատական նիստի:

### **Հարց 53. Ե՞րբ է վարչական մարմինը պարտավոր անցկացնել լսումներ, և ե՞րբ կարող են դրանք չանցկացվել:**

#### **Պատասխան.**

Սովորաբար լսելու պարտականությունը վարչական մարմինը պետք է իրականացնի այն դեպքում, երբ ընդունելու է միջամտող վարչական ակտ (վարչական ակտի հասցեատիրոջ պահանջը մերժվելու է, կամ սահմանափակվելու են նրա իրավունքները կամ որևէ ձևով շոշափվելու են նրա շահերը): Մնացած դեպքերում վարչական մարմինն իր վերոհիշյալ պարտականությունը պետք է գործի դնի, եթե վարույթի մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչները պահանջում են լսել գործի այս կամ այն փաստական հանգամանքների վերաբերյալ իրենց հիմնավորումները:

Այդուհանդերձ, Օրենքը նախատեսել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում լսումների անցկացումը դառնում է պարտադիր, և այն հիմքերը, որոնց առկայության դեպքում լսումներ կարող են և չանցկացվել: Այսինքն՝ Օրենքը վարչական մարմինն հնարավորություն է տվել որոշ դեպքերում հայեցողական կարգով ինքնուրույն որոշելու՝ անհրաժեշտ է արդյոք տվյալ գործով լսումներ անցկացնել, թե՛ ոչ:

Ըստ Օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի՝ վարչական մարմինը կարող է իր հայեցողությամբ լսումներ չանցկացնել, եթե՝

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը կամ վարչական ակտի հասցեատերը



չի պնդում, որ լսումներ անցկացվեն.

բ) դիմումն ակնհայտ անհիմն է (օրինակ՝ դիմողը խնդրում է իրեն սեփականության իրավունքով հողատարածք հատկացնել պետական սահմանային գոտում).

գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ:

#### **Յարգ 54. Ո՞ր դեպքերում լսումներ չեն անցկացվում:**

##### **Պատասխան.**

Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանել է այն հիմքերը, որոնց առկայության պայմաններում լսումներ չեն անցկացվում: Այսպես՝ լսումներ չեն անցկացվում, եթե՝

ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման (օրինակ՝ երբ խմելու ջրի ավազանի մեջ լցվել են ջուրն աղտոտող թափոններ, ինչը կարող է վտանգել ջուրն օգտագործողների կյանքը կամ առողջությունը, և այդ կապակցությամբ իրավասու մարմինը դադարեցնում է աղտոտված ջրի մատակարարումը բնակչությանը, կամ երբ գազատար մայրուղին պայթել է, և գազի հետագա մատակարարումը կարող է հրդեհի պատճառ դառնալ, վնասել մարդկանց կյանքին և առողջությանը).

բ) ընդունվում է առարկայական վարչական ակտ:

Առարկայական վարչական ակտի բնորոշ օրինակ են փողոցային երթևեկության կանոններով կարգավորվող լուսային ազդանշանները: Դրանք հնարավոր չէ ընդունել կարգավորման «տակ ընկնող» անձանց նախապես լսելուց հետո:

Ավտոտեսուչի ձեռքի կամ մահակի մեկնումով կարգազանց վարորդին կանգնեցնելու առարկայական ձևով արտահայտված վարչական ակտը նույնպես հնարավոր չէ ընդունել ակտի հասցեատիրոջը՝ կարգազանց վարորդին լսելուց հետո:

Վերոհիշյալ դեպքերը հստակ մատնանշելուց բացի, Օրենքը սահմանել է նաև, որ վարչական մարմինը լսումներ չի անցկացնում «օրենքով նախատեսված այլ դեպքերում»:

Գիշտ է, որևէ առանձին օրենքով առաջմ ուղղակիորեն նախատեսված չէ, թե էլ որ դեպքերում լսումներ չեն անցկացվում, սակայն ակնհայտ է, որ նույն ավտոտեսուչի հատուկ սուլիչի միջոցով

«Կանգնիր» ակտի ընդունման համար նույնպես լսումներ հնարավոր չէ անցկացնել, որովհետև «սուլիչով» վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն որևէ խախտում թույլ տալուց անմիջապես հետո, այլապես առանց որևէ խախտման դեպքի «սուլելով» ավտոտեսուչն ընդունած կլինի ոչ իրավաչափ վարչական ակտ:

### **Յարց 55. Ինչո՞ւմ է արտահայտվում վարչական վարույթի նյութերի մատչելիությունը:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթի նյութերը պետք է մատչելի լինեն: Մատչելիությունն ինքնին ենթադրում է վարչական վարույթ իրականացնող մարմնում վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորություն: Օրենքի 39-րդ հոդվածը համապատասխան նյութերին ծանոթանալու իրավունքը վերապահում է տվյալ վարչական վարույթի մասնակիցներին: Մատչելիության նպատակն է՝ ապահովել վարույթն իրականացնող վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունը, ինչու չէ՝ նաև վարույթի լրիվությունը:

Վարույթի մասնակիցներն իրենց վերաբերող գործով վարչական վարույթի նյութերին ծանոթանում են տվյալ վարչական մարմնում ներկայացնելով գրավոր դիմում: Վարչական մարմինը պարտավոր է համապատասխան նյութերին ծանոթանալու հնարավորություն տալ դիմումն ստանալու օրվանից 3 օրվա ընթացքում:

Նյութերին ծանոթանալիս վարույթի մասնակիցները կարող են դրանցից կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:

Վարչական վարույթի նյութերը տրամադրելիս վարչական մարմինը պարտավոր է պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ, իսկ այդպիսի գաղտնիքներ տրամադրելիս պարտավոր է պահպանել նաև համապատասխան գաղտնիքի մասին օրենքով սահմանված կարգն ու պայմանները:

Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ վարչական վարույթի նյութերին ծանոթանալիս վարչական ակտի կամ վարույթի հետ առնչություն ունեցող այլ փաստաթղթերի լրացուցիչ օրինակները, դրանց պատճենները, լուսապատճենները և քաղվածքներ կատարելու հետ կապված ծախսերը դասվում են վարչա-

կան վարույթում կատարվող այլ ծախսերի շարքը: Վարչական գործի նյութերից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու հետ կապված ծախսերը կրում է դրանց նկատմամբ պահանջ ներկայացրած անձը: Այդ դեպքում ծախսերի չափը չպետք է գերազանցի պատճենահանման, լուսապատճենահանման կամ քաղվածք կատարելու համար վարչական մարմնի կատարած փաստացի ծախսերի չափը:

Օրենքը շոշափում է տվյալ վարչական վարույթի վերաբերյալ նյութերի՝ նրա մասնակիցների համար մատչելի լինելու հետ կապված հարցերը, եթե դա չի խոչընդոտում այդ վարչական մարմնին հայտնի որևէ տեղեկատվության ծանոթանալու՝ այլ անձանց իրավունքների իրականացմանը: Այդ հարցերը կարգավորվում են «Տեղեկատվության ազատության մասին» 2003թ. հոկտեմբերի 22-ի ՀՀ օրենքով:

**Հարց 56. Ո՞վ և ինչպիսի՞ օգնություն է ցուցաբերում վարչական վարույթի մասնակիցներին և դրա համար ի՞նչ պարտականություն է կրում:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինը, Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների համաձայն, պարտավոր է ֆիզիկական անձանց պարզաբանումներ տալ վերջիններիս դիմումներով հայցվող հարցերի առնչությամբ՝ տվյալ վարչական վարույթի հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, օժանդակել դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի ձևակերպմանը, իսկ հնարավորության դեպքում՝ կազմել դրանք:

Ակնհայտ է, որ եթե դիմողը իրավաբանական անձանց ներկայացնող ֆիզիկական անձ է, ապա վարչական մարմինը վերը նշված օգնությունները կարող է ցույց տալ, բայց և պարտավոր չէ դա անել իրավաբանական անձանց համար, քանի որ վերջիններս ունեն համապատասխան ծառայություններ:

Բացի դրանից, իրավաբանական անձինք, որոնք որոշակի խնդիրներ ու նպատակներ իրականացնող, կազմակերպական առումով հստակորեն ձևավորված միավոր են, իրենց գործողություններն իրականացնելիս պարտավոր են նաև դրանց օրենսդրա-

կան համապատասխանությունն ապահովել հենց իրենց միջոցներով ու կարողություններով, առանց ակնկալելու այդ հարցում պետական որևէ մարմնի աջակցությունը, եթե, իհարկե, խոսքը տվյալ վարչական մարմնի իրավասությանն առնչվող հարցերով պարզաբանումներ ստանալու մասին չէ:

Այսպիսով՝ Օրենքը նկատի է ունեցել հատկապես այն ֆիզիկական անձանց, ովքեր չեն ներկայացնում իրավաբանական անձանց, այլ ներկայացնում են անմիջականորեն իրենց կամ այլ քաղաքացիների, ներառյալ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց: Իսկ ֆիզիկական անձինք շատ հաճախ, առանց փաստաբանի օգնության, անմիջականորեն դիմում են վարչական մարմիններին: Մինչդեռ նրանցից շատերը իրազեկ չեն դիմումներով բարձրացված հարցերի կապակցությամբ իրենց և տվյալ վարչական մարմնի միջև ծագող իրավահարաբերության բովանդակությանը:

Բացի դրանից, օրենքով նախատեսված են դեպքեր, թե երբ կարող է վարչական ակտի համար կազմվել հատուկ ձևի դիմում, որն առկա է համապատասխան վարչական մարմնում, որտեղ էլ այն պետք է լրացվի: Օրինակ՝ ամուսնության ակտի գրանցման համար պահանջվում է լրացնել ամուսնացողների ստորագրություններով ամրագրված հատուկ ձևի դիմում: Քաղաքացիական կացության ակտերի գրանցման տվյալ վայրի մարմինը ապագա ամուսիններին պարտավոր է տրամադրել հատուկ ձևի դիմումը և նրանց բացատրել դրա լրացման ու ստորագրման կարգը կամ էլ ապագա ամուսինների անձը հաստատող փաստաթղթերի տեղեկությունների հիման վրա կազմել այն՝ ամրագրելով նրանց ստորագրություններով:

Բացի վերոշարադրյալից, Օրենքը վարչական մարմնին պարտավորեցնում է անձանց համար պայմաններ ստեղծել՝ իր կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև այդ մարմնի գործունեությանն առնչվող օրենքներին ու իրավական այլ ակտերին ծանոթանալու համար:

Դրանից հետևում է, օրինակ, որ խաղատներ բացելու կամ շահումով խաղեր կազմակերպելու գործունեության արտոնագիր տալու իրավասություն ունեցող պետական մարմինը պարտավոր է այդ նպատակով իրեն դիմած անձանց տրամադրել կամ որևէ ձևով նրանց հնարավորություն տալ ծանոթանալու «Շահումով խաղերի

և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, ինչպես նաև իր կողմից ընդունված այն նորմատիվ իրավական ակտերին, որոնք ուղղակիորեն առնչվում են հայցվող արտոնագրի տրամադրման հետ կապված հարցերի կարգավորմանը:

Տվյալ վարչական մարմինը կարող է վերոհիշյալ հնարավորությունը տալ իր իրավասու կառուցվածքային ստորաբաժանման մասնագետների կողմից համապատասխան անձին բանավոր պարզաբանումներ տալու ձևով կամ հատուկ առանձնացված սենյակում այդ ակտերին ծանոթանալու հնարավորություն ընձեռելով:

**Հարց 57. Ի՞նչ կարգով են վերացվում վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում առկա սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները:**

**Պատասխան.**

Հնարավոր է, որ վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում լինեն սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ:

Օրենքի 41-րդ հոդվածը դրանք դիտում է որպես վարչական վարույթի վերաբերյալ գործում առկա փաստաթղթերի թերություններ և սահմանում դրանց վերացման կարգը:

Այս հարցում գլխավորն այն է, որ նման դեպքերում վարչական մարմինն իրավունք չունի համապատասխան թերությունները վերացնելու համար այդ փաստաթղթերը վերադարձնել վարույթի՝ դրանք ներկայացրած մասնակիցներին:

Նման թերությունների առկայության դեպքում վարչական մարմինը պարտավոր է փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ ինքնուրույն ուղղել փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:

Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է ոչ թե դիմումում առկա ձևական սխալներին և դրանց վերացմանը, ինչի մասին նշված է Օրենքի 32-րդ հոդվածում և դրան առնչվող պատասխանում, այլ դիմումին առնչվող այն փաստաթղթերին, որոնք վարույթի մասնակիցները ներկայացրել են իրենց դիրքորոշումները պնդելու, ապացուցելու նպատակով: Այդ փաստաթղթերի շարքում կարելի է նշել, օրինակ, դիմումին կցված իրավաբանական անձի կանոնադրու-

թյունը, դատարանի վճիռը, որը դիմումին վերաբերող հարցի հետ կապված ինչ-որ լուծումներ է պարունակում, մեկ ուրիշ վարչական մարմնի ակտը, վարույթի որևէ մասնակցի կողմից հրավիրված փորձագետի եզրակացությունը և այլն:

Վերոհիշյալ թերություններն ըստ էության այն թերություններն են, որոնք ուղղելը որևէ ձևով չի կարող ազդել համապատասխան փաստաթղթերի բովանդակության կամ դրանով լուծվող հարցի (հարցերի) էության վրա:

Փաստաթղթերում առկա սխալների ներքո պետք է հասկանալ հետևյալ տեսակի սխալները: Ենթադրենք, ծնողները դիմում են ներկայացրել իրենց երեխայի ծննդյան գրանցման մասին՝ կցելով համապատասխան բժշկական հիմնարկի տեղեկանքը, իրենց անձնագրերը և անուսնության վկայականը: Վարչական մարմինը պարզել է, որ ամեն ինչ ճիշտ է, սակայն բժշկական հիմնարկի տեղեկանքում սխալ է նշված ծնողներից մեկի ազգանունը, օրինակ՝ «Արմեն Պողոսյանի» փոխարեն գրված է «Արմեն Պոգոսյան»: Այս դեպքում բժշկական հիմնարկի տեղեկանքում համապատասխան տառի ուղղումը պետք է կատարի դիմողը կամ նրա ներկայությամբ՝ վարչական մարմինը (նրա պաշտոնատար անձը):

Եթե նույն տեղեկանքում բացակայում են, ասենք, ծնողի անունը կամ անվան սկզբնատառը, ապա գործ ունենք վրիպակի հետ, որը նույնպես կարող է վերացնել դիմողը կամ վարչական մարմինը:

Թե որքանով են ներկայացված փաստաթղթերում առկա ջնջումներն ու քերվածքները կասկածի տակ դնում տվյալ փաստաթղթերի հիմնավորվածությունը և ամբողջականությունը, որոշում է վարչական մարմինը, որը կասկածները փարատելու համար դիմողին պետք է հրավիրի և պարզի ջնջումների, քերվածքների առաջացման պատճառները:

Եթե, օրինակ, վարույթի մասնակցի հրավիրած փորձագետի եզրակացության տեքստում ջնջումներ կան, ապա դիմողը վարչական մարմնի պահանջով պետք է իր հետ ներկայացնի եզրակացությունը կազմած անձին և նրանից պարզելով, որ այդ ջնջումները տեքստի բովանդակությունը չեն շոշափում, օրինակ՝ մի բառը ջնջվել և փոխարինվել է այլ բառով, որն ավելի է հստակեցնում տեքստի իմաստը, ապա լրացուցիչ որևէ բան անելու կարիք չկա: Իսկ եթե ջնջելու և նոր բառ գետեղելու հետևանքով՝ ըստ վարչական մարմնի, բոլորովին այլ իմաստ է արտահայտվում, քան եզրակացություն

կազմողն է նկատի ունեցել, ապա պետք է համապատասխան ջնջումը շտկվի՝ գրելով ճիշտ բառը կամ ձևակերպումը, որի դեպքում նպատակահարմար է, որ եզրակացությունը կազմող անձը դրա համապատասխան էջի լուսանցքի մասում նշի, որ ուղղումն իր կողմից է արված և ստորագրի դրա տակ:

**Չարց 58. Ո՞ր դեպքերում վարչական մարմինն իրավունք չունի ինքը վերացնելու վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում առկա սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները:**

**Պատասխան.**

Պետք է նշել, որ ոչ բոլոր փաստաթղթերում առկա սխալները, ջնջումները, քերվածքները կամ վրիպակները կարող են վերացվել և ուղղվել վարույթն իրականացնող մարմնի կամ վարույթի համապատասխան մասնակցի կողմից:

Օրինակ՝ եթե վարույթի մասնակիցը գործին առնչվող դատարանի վճիռ է բերել, որում առկա են սխալներ, ջնջումներ և այլն, ապա վարչական մարմինը կամ վարույթի համապատասխան մասնակիցը իրավասու չեն դրանք վերացնելու: Դա իրավասու է անել վճիռը կայացրած դատարանը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի համաձայն. «Վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել վճիռը, ուղղել թույլ տրված վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալները՝ չփոփոխելով վճռի բովանդակությունը և էությունը»:

Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ Օրենքի 41-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել է, որ վարույթի մասնակիցը կամ նրա ներկայությամբ վարչական մարմինն իրավունք չունեն վերացնելու այն փաստաթղթերում առկա սխալները, ջնջումները, քերվածքները կամ վրիպակները, որոնց շտկման իրավունքը օրենքով վերապահված է տվյալ փաստաթուղթն ընդունած կամ տված մարմիններին:

Այսպես՝ հատուկ ձև ունեցող արտոնագիր տված մարմնի արտոնագրում կամ անձի անձնագրում առկա սխալը կարող է ուղղել միայն արտոնագիր տված իրավասու պետական մարմինը կամ համապատասխան անձնագրային բաժանմունքը՝ հետ վերցնելով

սխալներ պարունակող արտոնագիրը կամ անձնագիրը և այն փոխարինելով ճիշտ տեղեկություններ պարունակող արտոնագրով կամ անձնագրով:

**Յարդ 59. Վարչական վարույթում ի՞նչը կարող է դիտվել իբրև ապացույց:**

**Պատասխան.**

Վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, որոնք կարող են տրված լինել ինչպես վարչական վարույթի մասնակիցների, այնպես էլ վարույթին մասնակցած փորձագետի, այլ մարմինների ներկայացուցիչների կողմից, ինչպես նաև վարույթին մասնակցած վկայի (վկաների) ցուցմունքները, փորձագետի կազմած փորձագիտական եզրակացությունը, վարույթի մասնակիցների, վարչական մարմնի կամ այլ մարմինների ներկայացրած փաստաթղթերը, գործում առկա նյութերը (օրինակ՝ ստուգումների արդյունքով բացահայտված կեղծ արտադրանքը և այլն), իրերը (օրինակ՝ վարույթին առնչվող ձայներիզները, տեսաերիզները, լուսանկարները և այլն), ինչպես նաև այն հանգամանքները (օրինակ՝ վարույթի ընթացքում նրա մասնակիցներից որևէ մեկի օգտին երրորդ անձի կողմից այն բանի ընդունումը, որ վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով չեն խախտվի իր իրավունքները կամ չեն շոշափվի նրա շահերը), որոնք վարչական մարմինն իր հայեցողությամբ պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար (Օրենքի 42-րդ հոդված):

Ըստ էության, վարույթի մասնակիցները կամ այլ մարմինների ներկայացուցիչները, վկաները, փորձագետները վարույթին առնչվող և իրենց իրավասության շրջանակներում ներկայացրած վերոհիշյալ գնահատողական նշանակություն և ապացուցողական հնարավոր դեր ունեցող փաստաթղթերը և այլ նյութերը կարող են ներկայացնել առանց սահմանափակման: Սակայն վարչական մարմինն ինքն է գնահատում դրանք՝ հաշվի առնելով տվյալ գործի փաստական հանգամանքների բացահայտման գործում յուրաքանչյուրի դերը:

Ընդ որում՝ վարչական մարմինն իրավունք չունի վարույթի մաս-



նակիցներից պահանջել, որ նրանք ներկայացնեն այնպիսի փաստաթղթեր կամ դրանց նուտարական կամ այլ կարգով վավերացրած պատճենները, որոնց ներկայացնելը կամ համապատասխան վավերացմամբ ներկայացնելը նախատեսված չէ օրենքով. ցանկացած նման պահանջ կդիտարկվի որպես անօրինական:

Օրինակ «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն, եթե երեխայի ծնվելու պահին նրա ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրյա պետության քաղաքացի, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ:

Այդ դրույթը Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի վերոհիշյալ դրույթի հետ համադրելիս հետևում է, որ եթե ծնողները իրենց երեխային ՀՀ քաղաքացիություն տալու մասին գրավոր համաձայնություն են ներկայացրել ՀՀ իրավասու մարմին՝ ապա իրավասու մարմինը պարտավոր է համապատասխան անձնագիրը տալ՝ առանց պահանջելու, որ ծնողների գրավոր համաձայնությունը նուտարական կամ որևէ այլ կարգով վավերացվի, ինչպես նաև իրավունք չունի լրացուցիչ պահանջելու որևէ այլ փաստաթուղթ, քանի որ վերոհիշյալ Օրենքի 11-րդ հոդվածը ծնողների գրավոր համաձայնությունից բացի այլ փաստաթուղթ ներկայացնելու պահանջ չի սահմանում:

### **Հարց 60. Ո՞վքեր են վարչական վարույթում կրում ապացուցման պարտականությունը:**

#### **Պատասխան.**

Օրենքի 43-րդ հոդվածը վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է կատարում՝ ելնելով նրանից, թե վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը վերջինիս հասցեատիրոջ համար բարենպաստ, թե անբարենպաստ փաստական հետևանքներ է ունենալու:

Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Օրենքի վերը նշված դրույթից հետևում է, որ եթե միևնույն վարչական գործով վարչական ակտի հասցեատիրոջ համար բա-

րենպաստ փաստական հանգամանքներ են առկա, ապա դրանց ապացուցման պարտականությունը կրում է տվյալ անձը, իսկ եթե անձի համար ոչ բարենպաստ հանգամանքներ են առկա՝ վարչական մարմինը:

Երկու դեպքերում էլ ապացուցման պարտականությունը կրող անձը կամ վարչական մարմինը պարտավոր են ապացուցել համապատասխան բարենպաստ կամ ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայությունը: Օրենքի նման մոտեցումը պետք է արդարացված համարել, եթե նկատի ունենանք, որ անձի համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության ապացուցումը հնարավոր չէ դնել վարչական մարմնի վրա, քանի որ անձն ինքը պետք է ապացուցի, որ այդպիսի հանգամանքներ կան, իսկ վարչական մարմինը, ընդհակառակը, պետք է ցույց տա, որ կան նաև այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք հերքում են անձի ներկայացրած հանգամանքները կամ դրանց մի մասը: Արդյունքում պետք է պարզվեն գործի բոլոր փաստական հանգամանքները, որոնք հոգուտ անձի են կամ ի վնաս նրա: Կախված նրանից, թե ինչպիսի հարաբերակցություն ի հայտ կգա՝ ըստ այդմ էլ վարչական մարմնի համար պարզ կդառնա, թե ինչ որոշում ընդունի՝ անձի համար ամբողջությամբ կամ մասնակիորեն բարենպաստ, թե՞ ամբողջությամբ ոչ բարենպաստ (միջամտող):

Ճիշտ է, այստեղ խոսք չի կարող լինել վարչական մարմնի և վարչական ակտի հասցեատիրոջ միջև որևէ մրցակցության մասին, բայց ըստ էության գոյություն ունի ապացուցման որոշակի գործընթաց, որի արդյունքում ոչ միայն վարչական մարմինը, այլև վարչական ակտի հասցեատերը ապացույցների գնահատման արդյունքում փաստորեն պետք է հանգեն համանման կամ միանման հետևության, որը թեև վարույթի մասնակցի իրավունքների մեջ չի մտնում, բայց նաև փաստացի իր համար գնահատում է ապացույցները և արդյունքում կայացնում որոշում՝ բողոքարկել՝ վարույթն իրականացնող վարչական մարմնի ընդունած վարչական ակտը, թե՞ ոչ:

Հնարավոր են մի շարք այլ դեպքեր կամ իրավիճակներ, որոնց առկայության պարագայում ապացուցման պարտականությունը բաշխվում է վերը նշված ընդհանուր կարգից տարբերվող ձևով:

Օրինակ՝ եթե անձի համար բարենպաստ հանգամանքների վերաբերյալ տվյալներին անձը կարող է իրազեկ դառնալ բացառա-

պես տվյալ վարչական մարմնի միջոցով (օրինակ՝ հենց կենսաթոշակ նշանակող մարմնից, որի աշխատողը կենսաթոշակի է անցնում, վերջինս կարող է պահանջել համապատասխան տեղեկություններ իր աշխատանքային ստաժի վերաբերյալ և այլ հարցերով, որոնք առնչվում են այդ մարմնում կենսաթոշակի գնացողի աշխատանքային գործունեության հետ), ապա այս դեպքում ապացուցման պարտականությունը նույնպես դրվում է այդ վարչական մարմնի վրա (Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նմանապես, եթե անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով (օրինակ՝ երբ անձը փաստաթուղթ ունի երրորդ խմբի հաշմանդամ լինելու վերաբերյալ, բայց հայցում է առաջին խմբի հաշմանդամի կենսաթոշակ), ապա այս դեպքում ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա (Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մաս), (որը մեր օրինակում պարտավոր է իրավասու այլ մարմնից փաստաթուղթ ներկայացնել կենսաթոշակ նշանակող մարմնին՝ առաջին խմբի հաշմանդամ լինելու հանգամանքը փաստելու վերաբերյալ):

Ի՞նչ է հետևում վերոշարադրյալից: Այն, որ ապացուցման պարտականություն կրողը ոչ թե ապացուցում է, որ անձի օգտին բարենպաստ փաստական հանգամանքներ (Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում) կամ ոչ բարենպաստ հանգամանքներ կան (Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքում), այլ ապացուցում կամ փորձում է ապացուցել, որ համապատասխան հանգամանքները որքանով են անձի օգտին կամ ի վնաս նրա: Այսինքն՝ մի դեպքում վարչական մարմինը վեր է հանում իր մոտ առկա այն տեղեկությունները, որոնք բարենպաստ են անձի համար, մյուս դեպքում էլ անձն է պարտավոր վարչական մարմնին տեղյակ պահել իրեն վերաբերող այն հանգամանքների մասին, որոնք ոչ բարենպաստ են իր համար:

«Տնտեսական նրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, ելնելով հենց այս տրամաբանությունից, սահմանում է՝ «Եթե որևէ տնտեսավարող սուբյեկտ սահմանված ժամկետում չի ներկայացնում քննարկման, վարույթի, հետազոտության, ստուգման, ուսումնասիրության և (կամ) դիտանցման համար անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն կամ այլ կերպ խոչընդոտում է դրանց ընթացքը, կամ բացակայում են դրանց համար

անհրաժեշտ փաստաթղթերն ու այլ տեղեկատվությունը, ապա Հանձնաժողովն իրավասու է որոշումներ կայացնելու իր տրամադրության տակ առկա փաստաթղթերի և այլ տեղեկատվության հիման վրա» (Հոդված 19, կետ 12):

### **Հարց 61. Ո՞ր դեպքերում վարչական մարմինը կարող է նշանակել փորձագետ և ի՞նչ կարգով:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը կարող է փորձագետ նշանակել, եթե գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության համար անհրաժեշտություն է առաջանում որևէ հարցով փորձաքննություն կատարել (Օրենքի 45-րդ հոդված):

Փորձագետ նշանակելու հարցով վարչական մարմինը կարող է դիմել համապատասխան փորձագիտական կամ իրավասու կազմակերպության ղեկավարին՝ անկախ դրա սեփականության ձևից կամ էլ դիմել համապատասխան ոլորտում մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձի:

Փորձագետ նշանակելու համար իրավասու կազմակերպության ղեկավարին կամ ֆիզիկական անձին դիմելու մասին վարչական մարմինը պարտավոր է ծանուցել վարույթի մասնակիցներին:

Ընդ որում՝ վարչական մարմինը որպես փորձագետ կարող է նշանակել նաև ինչպես իր մոտ կամ որևէ այլ վարչական մարմնում աշխատող համապատասխան մասնագետի, որը տիրապետում է տվյալ բնագավառի գիտելիքներին, այնպես էլ ցանկացած ֆիզիկական անձի, որը իբրև անհատ ձեռնարկատեր կամ աշխատանքային պայմանագրով զբաղվում է համապատասխան բնագավառում՝ տիրապետելով տվյալ բնագավառի գիտելիքներին:

Ուսումնասիրությունների հիման վրա փորձագետը կազմում է եզրակացություն և ներկայացնում փորձաքննություն նշանակած վարչական մարմնին: Փորձագետի եզրակացությունը պետք է հստակ պատասխաններ պարունակի բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք առաջադրել է վարչական մարմինը: Անորոշ պատասխաններ կամ հարցերին ըստ էության պատասխաններ չտվող եզրակացությունը չի կարող դրվել ապացուցման ենթակա հանգամանքների պարզաբանման հիմքում:

Վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը կամ վարույթի մասնակիցները կարող են փորձագետից պահանջել լրացուցիչ պարզաբանումներ տալ փորձագիտական եզրակացության վերաբերյալ: Այդ պահանջները փորձագետը պարտավոր է կատարել:

Փորձագիտական եզրակացությունը պետք է կազմվի վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ընթացքում: Սակայն եթե փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտն է, ապա փորձագետի միջնորդությամբ վարչական մարմինը կարող է երկարաձգել վարչական վարույթի ժամկետը՝ մինչև համապատասխան փորձագիտական եզրակացություն ստանալը (Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետ):

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ փորձագետ նշանակելու նախաձեռնություն կարող են ցուցաբերել ինչպես վարչական մարմինը, այնպես էլ վարույթի մասնակիցները՝ վարչական մարմին համապատասխան միջնորդություն ներկայացնելու միջոցով:

## **Հարց 62. Ո՞ր դեպքերում է նշանակվում զննում:**

### **Պատասխան.**

Ինչպես արդեն նշեցինք, ապացույցների ձեռքբերման աղբյուրներից մեկը զննումն է: Վարչական մարմինը կոնկրետ գործի քննարկման լրիվությունն ապահովելու նպատակով կարող է ինչպես տեղանքի՝ որևէ օբյեկտի կամ առարկայի, այնպես էլ ֆիզիկական անձի զննում նշանակել: Վարչական մարմնի որոշմամբ զննմանը կարող են ներկա գտնվել վարչական վարույթի մասնակիցները: Ձննումը կարող է իրականացնել վարչական մարմինն ինքը, իր իրավասու մասնագետի կողմից: Իսկ եթե զննումը պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքներ, վարչական մարմինն այս դեպքում ևս կարող է նշանակել փորձագետ՝ զննում կատարելու նպատակով, որը զննման արդյունքներով փորձագիտական եզրակացություն պետք է կազմի ընդհանուր հիմունքներով: Ձննման անհրաժեշտությունն առաջանում է հատկապես տրասնպորտային միջոցների շահագործման կանոնների խախտումների դեպքում (այստեղ խոսքը հանցակազմ պարունակող արարքների մասին չէ),

երբ ավտոտեսուչը զննում է համապատասխան տրանսպորտային միջոցը՝ պարզելու, թե տեխնիկական ինչ անսարքության պայմաններում է այն շահագործվում՝ համապատասխան ակտը կազմելու համար: Հողահատկացման վարույթներով վարչական մարմինը կարող է որոշել զննել համապատասխան հողատարածքը՝ դրա վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելիս անաչառություն ապահովելու նպատակով: Օրինակ՝ եթե զննությամբ պարզվի, որ տվյալ տարածքում գրունտային ջրեր կան և դրանք հողի վերին շերտին մոտ են, ապա այդ հողատարածքը բնակելի տուն կառուցելու նպատակով կարող է չհատկացվել:

ՀՀ տարածք օտարերկրյա քաղաքացի մուտք գործելիս ՀՀ իրավասու մարմիններն իրավունք ունեն ստուգելու ՁԻԱՀ-ով նրա վարակված լինել չլինելու հանգամանքը և այդ նպատակով կարող են այլ գործողությունների հետ մեկտեղ մաս զննել տվյալ օտարերկրացուն՝ ՁԻԱՀ-ով նրա վարակվածության կամ դրա բացակայության մասին համապատասխան փաստաթուղթ տալուց առաջ:

### **Հարց 63. Փորձագետ կամ զննում նշանակելու հարցում վարույթի մասնակիցներն ի՞նչ իրավունքներ ունեն:**

#### **Պատասխան.**

Փորձագետի կողմից փորձաքննության ընթացքում կատարվող գործողություններին կարող են ներկա գտնվել տվյալ վարչական վարույթի մասնակիցները, եթե նրանց ներկա գտնվելը չի խոչընդոտում փորձաքննության անցկացմանը:

Օրենքի 45-րդ հոդվածի 3-րդ մասը չի պահանջում որևէ որոշում կամ թույլտվություն փորձաքննությանը ներկա գտնվելու համար: Այնուամենայնիվ, նրանց ներկայությունը թույլատրելու կամ չթույլատրելու վերաբերյալ վերջնական բանավոր որոշում կայացնելը վերապահված է փորձագետին, որովհետև նա է իրավասու որոշելու՝ տվյալ անձանց ներկայությունը կխոչընդոտի՞ արդյոք բազմակողմանի, լրիվ և անաչառ փորձաքննությանը, թե՞ ոչ:

Հետևաբար՝ եթե փորձագետն առարկի, ապա վարույթի մասնակիցները չեն կարող ներկա գտնվել փորձաքննությանը: Սակայն փորձագետի առարկությունը ևս պետք է հիմնավոր լինի:

Այսպիսով՝ փորձագետի համաձայնությամբ կամ թույլտվությամբ փորձաքննությանը կարող են ներկա գտնվել միայն վարույ-

թի մասնակիցները: Փորձաքննությանը ներկա գտնվելու մասին Օրենքի դրույթը պետք է ըմբռնել ուղղակիորեն: Այսինքն՝ ներկա գտնվելիս վարույթի մասնակիցները պարտավոր են հարցերով կամ այլ գործողություններով անհարկի չզբաղեցնել փորձագետին և հնարավորություն տալ նրան բազմակողմանի, լրիվ և անաչառ փորձաքննություն կատարել:

Ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննմանը նույնպես կարող են ներկա գտնվել վարչական վարույթի մասնակիցները:

Ինչպես փորձաքննության դեպքում, զննությանը նույնպես կարող են ներկա գտնվել միայն վարչական վարույթի մասնակիցները:

#### **Հարց 64. Ի՞նչ ժամկետների ընթացքում պետք է իրականացվի վարչական վարույթը:**

##### **Պատասխան.**

Արդեն նշել ենք, որ վարչական վարույթի իրականացման համար՝ որպես ընդհանուր ժամկետ, Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասը սահմանել է 30 օր: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տարբեր տեսակի վարչական վարույթների առանձնահատկություններից ելնելով կարող են նաև բավարար լինել ավելի կարճ ժամկետները կամ հակառակը՝ դրանք լինեն ավելի ժամանակատար, Օրենքը նախատեսել է, որ օրենքով կարող են սահմանվել նաև հատուկ ժամկետներ՝ 30 օրից կարճ կամ երկար:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ ավելի կարճ կամ երկար ժամկետները պետք է ուղղակիորեն սահմանված լինեն միայն օրենքով: Այսինքն՝ այս դեպքում օրենքը չի կարող հղում կատարել այլ իրավական ակտի, որն էլ կարող է ավելի կարճ կամ երկար ժամկետ սահմանել:

ՀՀ գործող օրենսդրության մեջ այսօր էլ այլ օրենքներով ուղղակիորեն սահմանված են և՛ 30 օրից կարճ, և՛ դրանից երկար ժամկետներ:

Օրինակ՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գործակալություն ներկայաց-

նելուց ոչ ուշ, քան երկու աշխատանքային օրվա ընթացքում գործակալությունը պետք է կատարի համապատասխան պետական գրանցումը:

«Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից վարչական վարույթի իրականացման առավելագույն ժամկետը 90 օր է:

«Լիցենզավորման մասին» օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարզ արտոնագիրը տրվում է հայտատուի կողմից օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց 5 օր հետո, իսկ բարդ արտոնագիրը՝ 23 օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նշված չէ (հիշյալ օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մաս):

### **Հարց 65. Ո՞ր դեպքերում կարող է երկարաձգվել վարչական վարույթի ժամկետը և ի՞նչ ժամկետով:**

#### **Պատասխան.**

Օրենքի 47-րդ հոդվածը վարչական մարմնին իրավունք է տվել վարչական վարույթի ժամկետը երկարաձգել, եթե սահմանված ժամկետի ընթացքում հնարավոր չէ կազմակերպել գործի բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկումը:

Օրենքը սահմանել է ինչպես այն դեպքերը, երբ վարչական մարմնը կարող է երկարաձգել վարույթի ժամկետը, այնպես էլ երկարաձգման համար նախատեսված ժամկետները:

Այդ դեպքերն ու ժամկետներն են՝

ա) գործի քննարկման համար էական համարվող հանգամանքների պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, Օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում կայացնել:

Այս դեպքերում վարույթը երկարաձգվում է մինչև 10 օր ժամկետով: Ընդ որում՝ նման դեպքերում թույլատրվում է երկարաձգում կատարել երկու անգամ՝ չխախտելով 10-օրյա ժամկետը:

բ) փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:



Այդ դեպքերում վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև համապատասխան փորձագիտական եզրակացություն ստանալը:

Նման դեպքերի համար երկարաձգման հստակ ժամկետ չսահմանելը դեռ չի նշանակում, որ որոշակի ժամկետն իսպառ բացակայում է: Համապատասխան իրավական ակտերով սահմանվում են այն ժամկետները, որոնք անհրաժեշտ են այս կամ այն ոլորտում փորձագիտական եզրակացություն կազմելու համար:

Օրենքը նախատեսում է ևս երկու դեպք, երբ վարչական մարմինը կարող է երկարաձգել վարչական վարույթի ժամկետը. առաջին՝ երբ փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը, և երկրորդ՝ երբ վարչական ակտի ընդունմանը մասնակցում են մի քանի վարչական մարմիններ:

Նշված երկու դեպքերում վարչական վարույթը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

Եթե վարչական վարույթը երկարաձգելու մի քանի հիմքեր են առաջացել, ապա վարչական մարմինը կիրառում է դրանցից միայն մեկը, որն ավելի մեծ հնարավորություն է ընձեռում վարույթն արագ և արդյունավետ իրականացնելու և ըստ էության որոշում ընդունելու համար: Եթե առկա են վարույթը երկարաձգելու մի քանի հիմքեր, ապա վարչական մարմինը պարտավոր է վարույթը երկարաձգել թեկուզև առկա հիմքերից մեկով, սակայն այդ ընթացքում նա նաև պետք է իրականացնի այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են գործի բազմակողմանի, լրիվ և անաչառ քննարկման համար:

**Հարց 66. Վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու համար վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն ինչպիսի՞ գործողություններ է պարտավոր իրականացնել:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու համար վարույթն իրականացնող վարչական մարմինն ընդունում է որոշում, որի մասին պարտավոր է սահմանված կարգով ծանուցել վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև

վարույթին մասնակցող այլ անձանց (փորձագետին, վկային, այլ մարմիններին):

Վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարչական մարմնի որոշում ընդունելու պարտականությունը չպետք է դիտել հենց «որոշում» անվանումով փաստաթղթի ընդունման պարտականություն: Վարչական մարմնի՝ վարույթի ժամկետը երկարաձգելու որոշումը կարող է արտահայտվել սովորական գրավոր տեղեկացմամբ վարույթի մասնակիցներին և այլ անձանց, որ Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված համապատասխան հիմքով ինքը երկարաձգել է դրա ժամկետը՝ նշելով երկարաձգման որոշակի ժամկետ: Իսկ եթե դա հնարավոր չէ, ապա երկարաձգման համար հիմք հանդիսացած հանգամանքի վերացման օրվանից վարչական մարմինը պարտավոր է վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին և այլ անձանց այդ մասին ևս ծանուցել:

### **Չարց 67. Ի՞նչ հետևանքներ է առաջացնում վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ չընդունելը:**

#### **Պատասխան.**

Գործնականում բացառություն չեն այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում վարչական մարմինը, ըստ էության, ցուցաբերելով անգործություն, որևէ վարչական ակտ չի ընդունում: Նախքան Օրենքն ուժի մեջ մտնելը գործող կարգավորումների համաձայն՝ տվյալ պարագայում անձին ոչինչ չէր մնում անել, քան բողոքներ ներկայացնել տարբեր ատյաններ: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ վերադաս ատյաններում անձը կարող է հանդիպել նույն վերաբերմունքին, իսկ տարբեր ատյանի դատարաններում գործի քննությունը կարող է ամիսներ տևել, ապա ստացվում է, որ անձը ստիպված է լինում երկար ժամանակ ու ջանք գործադրել իրավասու վարչական մարմնից համապատասխան վարչական ակտ ստանալու համար: Բնականաբար, այդօրինակ պրակտիկան չի կարող գոհացնել նման վիճակում հայտնված անձանց: Այդպիսի գործելակերպը հակացուցված է իրավական պետությանը:

Նման իրավիճակներին վերջ տալու և վարչական մարմինների ու նրանց պաշտոնատար անձանց պատասխանատվությունը բարձրացնելու, ինչպես նաև վարչական մարմիններից վարչական ակտ հայցող անձանց իրավունքները հետևողականորեն պաշտ-

պանելու նպատակով Օրենքը կտրուկ քայլի է գնացել, ինչն արտահայտվում է հետևյալում.

Օրենքի 48-րդ հոդվածը սահմանել է, որ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում համապատասխան վարչական ակտը, որը հայցվել է անձի դիմումով, համարվում է ընդունված: Այդ դեպքում դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, որը նա ակնկալում էր ստանալ վարչական ակտով:

Օրինակ՝ եթե անձը դիմել է լիցենզավորվող գործունեություն իրականացնելու (կաթնամթերքի արտադրություն կամ այլ գործունեություն) նպատակով անհրաժեշտ արտոնագիր ստանալու խնդրանքով, բայց իրավասու վարչական մարմինը օրենքով սահմանված ժամկետում (այս պարագայում նկատի են առնվում նաև վարույթը կասեցնելու կամ երկարաձգելու ժամկետները, եթե դրանք կիրառվել են վարույթն իրականացնող մարմնի կողմից) չի տվել այն կամ չի մերժել դիմումը, ապա Օրենքի հիշյալ դրույթից հետևում է, որ անձն արդեն ստացել է համապատասխան արտոնագիրը և կարող է զբաղվել իր նախաձեռնած տնտեսական գործունեությամբ, օրինակ՝ արտադրել համապատասխան սննդամթերք:

Դա նշանակում է, որ անձը պատասխանատվություն չի կրելու առանց համապատասխան արտոնագրի լիցենզավորվող գործունեությամբ զբաղվելու համար, որովհետև Օրենքի հիշյալ դրույթի ուժով համարվում է, որ նա այդ արտոնագիրն արդեն ունի: Դա չի նշանակում, որ անձն ազատվում է պատասխանատվությունից նաև անորակ կամ օրենքներով սահմանված չափանիշներին չհամապատասխանող սննդամթերք արտադրելու համար: Խոսքը միայն այդ գործունեությամբ առանց թույլտվության զբաղվելու համար պատասխանատվությունից ազատվելու մասին է:

Ինչպես նշեցինք, Օրենքը նախատեսում է, որ վարչական մարմնի նման անգործության հետևանքով համապատասխան վարչական ակտը կամ դրա մերժումը չստացած անձը ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականությունից, որոնք օրենքով սահմանվում են համապատասխան վարչական ակտը չունենալու համար:

Խոսքը վերաբերում է, մասնավորապես, անձի կարգավիճակը

կամ նրան առնչվող որևէ փաստ հաստատող վարչական ակտերին, ինչպես օրինակ՝ անձի ծնունդը, մահը, տվյալ վայրից նրա բացակայությունը և համանման այլ հանգամանքները հաստատող կամ արձանագրող ակտերին:

Օրինակ՝ եթե նախազորակոչիկը սահմանված կարգով ներկայացել է համապատասխան զինկոմիսարիատ, իսկ վերջինիս համապատասխան հանձնաժողովը այդ անձի զինվորական կցագրում անհիմն չի կատարել, ապա անձը զինվորական հաշվառման չկանգնելու համար վարչական կամ այլ պատասխանատվության չի կարող ենթարկվել: Եթե օտարերկրյա քաղաքացին դիմել է իրավասու մարմնին՝ Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության վկայական ստանալու համար, սակայն այս մարմինը սահմանված ժամկետում համապատասխան վկայականը չի տվել կամ դրա տալը չի մերժել, ապա Հայաստանում տվյալ անձի գտնվելը կհամարվի իրավաչափ, և վերջինս չի կարող պատասխանատվության ենթարկվել կացության վկայական չունենալու համար:

Կարող է հարց առաջանալ. իսկ ինչպե՞ս վարվել, եթե վարչական մարմնի կողմից սահմանված ժամկետում չտրված ակտը, որն Օրենքի 48-րդ հոդվածի ուժով համարվում է արդեն իսկ ստացված, իրավաչափության հետ բախվող տարրեր ունի կամ ըստ էության ոչ իրավաչափ է: Ասենք՝ այն վարչական ակտը, որը համարվելու է, որ անձն այլևս ունի, չի համապատասխանում ՀՀ օրենքներին:

Օրինակ՝ ենթադրենք, Օրենքի 48-րդ հոդվածի ուժով համարվում է, որ անձը ստացել է կաթնամթերք արտադրելու լիցենզիա, սակայն այն տեխնոլոգիաները, որոնցով վերջինս պատրաստվում է դրանք արտադրել, չեն համապատասխանում օրենքով սահմանված ստանդարտներին: Այս պարագայում ակնհայտ է, որ համապատասխան անձին ենթադրյալ տրված լիցենզիան՝ կաթնամթերք արտադրելու վերաբերյալ ոչ իրավաչափ ակտ է դիտվելու, քանի որ հակասում է համապատասխան նյութական օրենքին:

Իրավասու մարմինը պարտավոր է դատական կարգով վիճարկել այդ անձի՝ Օրենքի 48-րդ հոդվածի ուժով ձեռք բերած ակտը՝ այս դեպքում ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով:

Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Օրենքի 48-րդ հոդվածի ուժով այն վարչական ակտն է համարվում անվիճելիորեն ստացված, որը

կգործեր, լինելով իրավաչափ, եթե իրավասու վարչական մարմինն օրենքով սահմանված ժամկետում և կարգով այն տրամադրեր դիմողին՝ ի բավարարումն դիմումով հայցվող խնդրանքի:

**Հարց 68. Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով է կասեցվում վարչական վարույթը:**

**Պատասխան.**

Վարչական վարույթի իրականացման ընթացքում հնարավոր են դեպքեր, որոնք վարույթը կասեցնելու անհրաժեշտություն են առաջացնում: Վարույթի կասեցումը դրա համար օրենքով նախատեսված ժամկետի ընթացքի ընդհատումն է մինչև սահմանված կարգով դրա վերսկսելը:

Ընդ որում՝ որոշ հիմքերի առկայության պայմաններում վարույթի կասեցումը վարչական մարմնի պարտականությունն է, իսկ որոշ հիմքերի առկայության պայմաններում՝ նրա հայեցողությունը:

Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսել է երեք դեպք, երբ որոշակի պայմանների առկայությամբ վարչական մարմինն անվերապահորեն պարտավոր է կասեցնել վարչական վարույթը:

Վարչական վարույթը պարտադիր կասեցվում է, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը՝ մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

Օրինակ՝ Սահմանադրական դատարանը քննում է որևէ օրենքի սահմանադրականության հարցը, որը պետք է դրվի վարույթի արդյունքում ընդունվող վարչական ակտի հիմքում, և վարչական մարմինը գտնում է, որ Սահմանադրական դատարանի որոշումից հետո միայն հնարավոր կլինի պարզել տվյալ օրենքը կամ դրա առանձին դրույթը վարչական վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի հիմքում դնել չդնելու հարցը.

բ) վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական վարույթն իրականացնելու հնարավորությունը:

Օրինակ՝ ամուսնության գրանցումը կարող է կատարվել ամուսինների ներկայությամբ՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համապատասխան մարմնում: Եթե սահմանված ժամ-

կետում ամուսիններից թեկուզ և մեկը չներկայանա համապատասխան մարմին, ապա ամուսնությունը չի կարող գրանցվել: Եթե ապագա ամուսիններից մեկի բացակայությունը պայմանավորված է օբյեկտիվ հիմքերով՝ Չանրապետություն վերադառնալու անկարողությամբ, տևական անկողնային հիվանդությամբ և այլն, ապա վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարույթը՝ մինչև կասեցման վերջնական հիմքերի վերացումը:

գ) վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

Օրինակ՝ ներկայացված դիմումում հստակ նշվել է, թե դիմողն ինչ վարչական ակտ է հայցում վարչական մարմնից, ստորագրել է այն, կից փաստաթղթերը բավարար չափով ներկայացրել է, սակայն դիմումում և կից փաստաթղթերում նշված չէ դիմողի անուն-ազգանունը:

Եթե Օրենքի 41-րդ հոդվածին համապատասխան վարչական մարմինը միջոցներ է ձեռնարկում դիմողին ի հայտ բերելու համար, սակայն դա նրան չի հաջողվում, ապա այս դեպքում էլ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը:

Երբ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ է հարուցվել իրավախախտման փաստի առնչությամբ, սակայն սահմանված ժամկետում իրավախախտը չի հայտնաբերվել, այս դեպքում ևս վարույթը պետք է կասեցվի:

Վերը նշված դեպքերում վարույթը վերսկսվում է կասեցման հիմք հանդիսացած հանգամանքները վերանալուց հետո: Օրինակ՝ վարչական ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու հիմքով կասեցված վարույթը կարող է վերսկսվել, երբ վարչական մարմինը համապատասխան միջոցներ ձեռնարկելով բացահայտել է դիմողի ինքնությունը:

Օրենքը նախատեսել է ևս երկու հատուկ դեպք, երբ վարչական մարմինը ոչ թե պարտավոր է, այլ կարող է իր հայեցողությամբ, գործի հանգամանքները հաշվի առնելով, կասեցնել վարչական վարույթը:

Այդ դեպքերն են՝

ա) վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է համարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար:

Օրինակ՝ դիմում ներկայացրած անձի՝ վարչական մարմնի գտնվելու վայրից բացակայելու ժամանակ, տվյալ վարույթով որպես երրորդ անձ հանդես եկող անձը հայտարարել է, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի մեջ առկա է կեղծ փաստաթուղթ, որը կարող է վճռորոշ դեր խաղալ հայցվող վարչական ակտի ընդունման կամ դրա մերժման համար: Եթե այդ պարագայում վարչական մարմինը՝ մինչև հնարավոր փորձաքննություն նշանակելու հարցը լուծելը, անհրաժեշտ է համարում լսել դիմողին, ապա կարող է կասեցնել վարչական վարույթը:

բ) ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր իրավաբանական անձը վերակազմակերպվել է:

Այս դեպքերում վարչական վարույթը կասեցնելու անհրաժեշտություն, որպես կանոն, կարող է առաջանալ, եթե վարչական ակտը, որը պետք է ընդունվի տվյալ վարույթի արդյունքում, ուղղակիորեն կարող է առնչություն ունենալ վերակազմակերպման հետ: Օրինակ՝ դիմում է ներկայացվել բաժնետիրական ընկերությանը որևէ թույլտվություն տալու հարցով, մինչդեռ դրանից հետո այդ ընկերությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմակերպվելու գործընթաց է սկսել:

Այս դեպքում վարչական մարմինը կարող է չսպասել վերակազմակերպման գործընթացի ավարտին, եթե, իր կարծիքով, դա երկար կտևի, և տալ համապատասխան թույլտվություն կամ մերժել այն:

Վարչական մարմինը նաև կարող է, մասնավորապես՝ եթե իրեն հայտնի է, որ վերակազմակերպումը շուտով կավարտվի, կասեցնել վարույթը և սպասել մինչև վերակազմակերպման հետևանքով ստեղծվող իրավաբանական անձի վերաբերյալ համապատասխան որոշում ընդունվելը՝ միաժամանակ դիմողին առաջարկելով դրանից հետո անհրաժեշտ վերաձևակերպումներ կատարել դիմումում և դրան կից ներկայացված փաստաթղթերում:

Վարչական մարմնի հայեցողությամբ վարույթը կասեցնելու վերոհիշյալ դեպքերում վարույթը վերսկսվում է կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը վերանալուց հետո՝ Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված հիմքերով կասեցնելու դեպքերում: Իսկ եթե կասեցումը կատարվել է Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով և 2-րդ մասով նախատեսված դեպքերում, ապա այն չի կարող գերազանցել 60 օրը՝ վարույթի

կասեցման մասին վարչական մարմնի որոշում ընդունելու օրվանից հաշված:

Վարչական վարույթը կասեցնելու վերաբերյալ վարչական մարմինն ընդունում է որոշում, որը պարտավոր է եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկել վարույթի մասնակիցներին:

Վարույթը կասեցնելու մասին վարչական մարմնի որոշումը կարող է ձևակերպվել տարբեր տեսքով, այդ թվում՝ վարույթի մասնակիցներին գրությամբ տեղեկացնելով, որ Օրենքի 49-րդ հոդվածի համապատասխան հիմքով կասեցվել է տվյալ գործով վարչական վարույթը:

Վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում:

### **Հարց 69. Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով է կարճվում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը:**

#### **Պատասխան.**

Օրենքը նախատեսում է, որ կարող են կարճվել ինչպես դիմումի հիման վրա, այնպես էլ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթները:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն դեպքերը, երբ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Այդ դեպքերն են՝

ա) դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը:

Վերոնշյալ դեպքերը հիմնականում առնչություն ունեն կեղծ կամ անանուն դիմումների հետ, որի պարագայում ակնհայտ է, որ վարչական վարույթը պետք է կարճվի, քանզի փաստացի ի հայտ չի գալիս ակտի ապագա հասցեատերը:

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից: Այս հիմքով վարույթը կարճելը հնարավոր է ընդհուպ մինչև օրենքով սահմանված ժամկետում վարույթի արդյունքում ակնկալվելիք վարչական ակտի ընդունումը:

գ) գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերա-



բերյալ և միևնույն հիմքով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ:

Նման հիմքն առկա է, երբ անձն արդեն իսկ ունի այն վարչական ակտը, որը հայցում է: Օրինակ՝ դիմել է տվյալ տարվա համար համապատասխան գործունեություն իրականացնելու թույլտվություն ստանալու հարցով, մինչդեռ իրեն այդ թույլտվությունը տրված է այլ վարչական ակտով, որը ժամկետային որևէ սահմանափակում կամ թույլտվության վերածնակերպում չի նախատեսել, կամ երբ նման հիմքով արդեն իսկ մերժվել է այդպիսի վարչական ակտ տալը:

Նշված հիմքը կարող է առկա լինել նաև վարչական ակտի բողոքարկման վարույթներով, երբ Օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝ բողոքը ներկայացվել է ինչպես ակտն ընդունած վարչական մարմին, այնպես էլ նրա վերադաս վարչական մարմին:

Այն պահին, երբ հայտնի է դառնում, որ համապատասխան ակտը բողոքարկվել է նաև վերադաս վարչական մարմնում, ակտն ընդունած մարմնում բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճվում է: Նույն կերպ պետք է վարվի նաև վերադաս վարչական մարմինը, եթե համապատասխան ակտն այդ իսկ մասնակցի կամ մեկ այլ մասնակցի կողմից բողոքարկվել է դատարանում.

դ) դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց՝ միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքով գործ:

Այս դեպքը նույնպես հիմնականում առնչվում է բողոքարկման վարույթին: Օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միաժամանակ վարչական և դատական կարգով բողոք ներկայացնելու դեպքերում բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Բայց հնարավոր են դեպքեր, երբ անձը վարչական և դատական մարմիններ ոչ թե բողոք է ներկայացրել, այլ դիմում, որով ներկայացվում է միևնույն խնդրանքը: Օրինակ՝ դիմումը վերաբերում է բնակտարածությունից զրկելուն: Նման դեպքում վարչական մարմինը պարտավոր է կարճել իր կողմից հարուցված վարչական վարույթը, քանի որ դա դատարանի իրավասության հարց է.

ե) փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը: Օրինակ՝ դիմում ներկայացրած անձը, լինելով ՀՀ քաղաքացի, խնդրել է իրեն սեփականության իրավունքով հող հատկացնել: Բայց մինչև համապատասխան ակտ ընդունելը, նա կորցրել է ՀՀ քաղաքացիությունը:

Քանի որ ՀՀ հողային օրենսդրությամբ օտարերկրյա քաղաքացուն սեփականության իրավունքով հող ձեռք բերելու հնարավորություն չի տրված, այդ հիմքով վարչական վարույթը պետք է կարճվի:

զ) լրացել է վարույթը կասեցնելու համար սահմանված առավելագույն՝ 60-օրյա ժամկետը (Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերություն), և այդ ընթացքում չի վերացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը:

Օրինակ՝ վարորդական իրավունք տալու հարցով հարուցված վարույթը կասեցվել է՝ այդ նպատակով դիմող անձի իր առողջության վերաբերյալ տեղեկանք ներկայացնելու պատճառով, սակայն վարույթը կասեցնելու առավելագույն ժամկետում՝ 60 օրում, դիմողը չի ներկայացնում համապատասխան փաստաթղթերը: Նման պայմաններում վարչական մարմինը պետք է կարճի վարչական վարույթը (Օրենքի 50-րդ հոդված, 1-ին մաս, կետ ե<sup>1</sup>):

ե) դիմումն անթույլատրելի է: Սույն հիմքն առկա է հիմնականում բողոքարկման վարույթներում: Օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է այն դեպքերը, երբ վարչական ակտը դառնում է անբողոքարկելի, հետևաբար՝ դրա վերաբերյալ բերված բողոքը՝ անթույլատրելի: Հնարավոր են նաև այլ դեպքեր, որոնք դիմումն անթույլատրելի կդարձնեն: Այսպես՝ եթե վարչական վարույթի ընթացքում պարզվում է, որ դիմողը հանդես է եկել այլ անձի համար որևէ իրավունք հայցելու խնդրանքով, մինչդեռ պարզվել է, որ օրենքով նա դրա իրավունքը չունի կամ համապատասխան անձի կողմից սահմանված կարգով լիազորված չէ:

Ասեմք՝ դիմողը հայցում է անհատ ձեռնարկատիրոջ վկայական այլ անձի համար, որն իրեն նման լիազորություն չի տվել: Վարույթն իրականացնող մարմինը, պարզելով այդ հանգամանքը, պետք է կարճի վարույթը:

Վերոհիշյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում վարչական մարմինը ոչ թե կարող է, այլ պարտավոր է կարճել վարչական վարույթը: Այլ օրենքներով նախատեսված այլ հիմքերի առկայության դեպքում ևս վարույթը ենթակա է կարճման:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ վերը նշված հիմքերի առկայության դեպքում կարճման ենթակա է այն վարչական վարույթը, որը հարուցվել է անձի դիմումի հիման վրա:

Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ վարչական մարմնի որոշումը եռօրյա ժամկետում պետք է պատշաճ ձևով ուղարկվի

վարույթի մասնակիցներին (բնականաբար, այն դեպքում, երբ վերջինս հայտնի է):

**Չարց 70. Ի՞նչ առանձնահատկություններ են գործում վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի կարճման դեպքերում:**

**Պատասխան.**

Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունումը:

Օրինակ՝ որևէ մեկը աղբ է թափել արգելված տեղում, և վարչական մարմինը վարույթ է հարուցել համապատասխան ակտ կազմելու համար: Բայց մինչև ակտ կազմելը պարզվում է, որ աղբ թափողն ինքը վերացրել է խախտումը՝ աղբը մաքրել և տեղափոխել է դրա համար նախատեսված վայր:

Կամ, օրինակ, ինչ-որ մեկը առանց համապատասխան թույլտվության ձեղնահարկ է սկսել կառուցել, բայց մինչև իրավասու մարմնի ակտ կազմելը դադարեցրել է շինարարությունը և վերացրել այն, ինչ արդեն կառուցել էր:

Քանի որ նման դեպքերում օրենքը պարտադիր չի համարում վարչական ակտի ընդունումը, հետևաբար՝ վարչական մարմինը կարող է կարճել իր նախաձեռնությամբ հարուցված վարույթը:

բ) օրենքի կամ այլ իրավական ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Օրինակ՝ վարչական մարմինը վարույթ է հարուցել՝ նախապես չիրազեկված հանրահավաքն արգելելու մասին վարչական ակտ ընդունելու նպատակով: Դրա համար նրա իրավասու աշխատակիցը այցելում է հայտարարված հանրահավաքի վայր և համոզվում, որ հանրահավաքն արդեն ավարտված է: Այս դեպքում վերանում է նաև հանրահավաքն արգելելու մասին իրավասու վարչական

մարմնի կողմից վարչական ակտ ընդունելու անհրաժեշտությունը: Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարճելու վերաբերյալ վարչական մարմինը որոշում է ընդունում, որը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկում է վարույթի մասնակիցներին: Այս դեպքում ևս «որոշում» բառը չպետք է բառացի ընդունել և կարծել, թե վարչական մարմինը պարտադիր կարգով մի փաստաթուղթ պիտի ընդունի՝ «որոշում» անվանումով. վարչական մարմինն իր գրությամբ կարող է տեղեկացնել վարույթի մասնակիցներին, որ Օրենքի 50-րդ հոդվածի համապատասխան հիմքով ինքը կարճել է իր նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը:

Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել այդ վարույթը հարուցած վարչական մարմնի հայեցողությամբ: Այսինքն՝ այդ դեպքերում վարչական մարմինը կարող է կարճել կամ չկարճել վարույթը:

### **Հարց 71. Ի՞նչ հետևանքներ ունի վարչական վարույթը կարճելը:**

#### **Պատասխան.**

Վարույթը կարճելու որոշում ընդունելուց հետո, եթե դա առնչվում է անձի դիմումի հիման վրա հարուցված վարույթին, նույն հարցով վարույթի վերսկսում չի թույլատրվում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով այլ բան է նախատեսված: Այս կանոնը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ վարույթը կարճվել է Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի հիման վրա (դիմումը ներկայացվել է առանց դիմողի ստորագրության): Երբ դիմումը ներկայացրած անձի ստորագրության բացակայության հիմքով վարույթը կարճվում է, բայց հետագայում ի հայտ է գալիս դիմողը և ստորագրում այն, ապա վարչական մարմինը պարտավոր է վերսկսել վարույթը և ընդունել վարչական ակտ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարույթը կարճելիս հարցը լուծվում է ըստ էության, այսինքն՝ այս որոշումը բովանդակային առումով էականորեն տարբերվում է վարույթի կասեցման վերաբերյալ որոշումից, Օրենքը հնարավորություն է տվել, որ վարույթը կարճելու մասին վարչական մարմնի որոշման դեմ շահագրգիռ անձը բողոք բերի:

Նկատենք, որ վարույթը կարճելու մասին վարչական մարմնի որոշումը ևս վարչական ակտ է:

**Հարց 72. Ու՞մ դիմումի հիման վրա և ո՞ր դեպքերում է վարչական վարույթը ենթակա պարտադիր վերսկսման:**

**Պատասխան.**

Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանել են, թե որ դեպքերում է վարչական ակտն անբողոքարկելի: Հիմնական դրույթն այդ իմաստով հանգում է նրան, որ Օրենքով սահմանված որոշակի ժամկետների սահմաններում վարչական ակտը, եթե չի բողոքարկվում, ապա դառնում է անբողոքարկելի:

Օրենքը միաժամանակ հնարավորություն է տվել, որ շահագրգիռ անձը դիմի համապատասխան վարչական մարմին՝ վերջինիս կողմից ընդունված և անբողոքարկելի դարձած վարչական ակտը փոփոխելու կամ ուժը կորցնելու նպատակով վարչական վարույթը վերսկսելու խնդրանքով (Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մաս):

Նման խնդրանքով վարչական մարմին դիմում կարող է ներկայացվել հետևյալ դեպքերում՝

ա) վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել: Օրինակ՝ քաղաքացուն կենսաթոշակ են նշանակել, որից հետո որոշակի ժամանակ անց օրենքով նախատեսված որևէ հիմքով նա արտոնյալ կարգով կենսաթոշակ ստանալու իրավունք է ձեռք բերել: Այս դեպքում անձը դիմում է կենսաթոշակ նշանակելու մասին իրավասու մարմնի ակտը փոփոխելու խնդրանքով, քանի որ փոփոխվել է այն փաստական հանգամանքը, որի համար նրան ժամանակին սովորական կենսաթոշակ էր նշանակվել:

բ) առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի բարենպաստ որոշում ընդունելուն:

Օրինակ՝ Հայրենական մեծ պատերազմի վետերանին, «Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» ՀՀ օրենքի համաձայն, նշանակվել է էլեկտրաէներգիայից և տրանսպորտից օգտվե-

լու համար դրամական փոխհատուցում՝ 3000 դրամի չափով: Սակայն, ենթադրենք, հիվանդության կամ այլ պատճառով վետերանը հաշմանդամ է դարձել: Այս դեպքում այդ հիմքով նրան արդեն պետք է դրամական փոխհատուցում տրվի ամսական 4500 դրամի չափով: Դրա համար նա, իրավասու մարմին ներկայացնելով հաշմանդամությունը հաստատող փաստաթղթերը, կարող է պահանջել վերսկսել 3000 դրամի չափով փոխհատուցում տալու մասին վարչական վարույթը և նոր հիմքերի առկայությամբ՝ վարչական ակտ ընդունել՝ 4500 դրամի փոխհատուցման իրավունքի վերաբերյալ:

գ) ի հայտ են եկել տվյալ վարչական ակտի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց, կամ թեև հայտնի են եղել, սակայն նրանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին:

Այսպես՝ կենսաթոշակի համար դիմած անձին հայտնի չի եղել, որ իր աշխատանքային ստաժում առկա է մի ժամանակահատված (օրինակ՝ 25 տարվա ապահովագրական ստաժից 15 տարին աշխատել է առանձնապես վնասակար կամ առանձնապես ծանր պայմաններում), որը նրան արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունք է տալիս, և կենսաթոշակ նշանակող մարմին ներկայացրած փաստաթղթերում այդ հանգամանքը հաստատող փաստաթուղթ չի ներկայացրել:

Նման պայմաններում կենսաթոշակ նշանակող մարմինը առկա փաստաթղթերի հիման վրա կենսաթոշակ է նշանակել սովորական պայմաններով: Այնուհետև դիմողին հայտնի է դարձել արտոնյալ պայմանների առկայության հանգամանքը, որի հիման վրա նա իրավունք ունի դիմելու նույն մարմին՝ վարույթը վերսկսելու և արտոնյալ պայմաններով կենսաթոշակի իրավունքը հաստատող փաստաթուղթ ստանալու համար:

Մեկ այլ օրինակ: Անձը նախապես իմացել է նման արտոնյալ պայմանների առկայության մասին, սակայն դրանք հաստատող փաստաթուղթը չի կարողացել ձեռք բերել՝ այդ փաստաթուղթը տիրապետող հիմնարկի կամ կազմակերպության լուծարման և համապատասխան արխիվի բացակայության պատճառով:

Ստանալով սովորական պայմաններով կենսաթոշակի իրավունքը հաստատող փաստաթուղթը, հետագայում նա կարողանում է սահմանված կարգով այլ արխիվներում ձեռք բերել արտոնյալ

պայմաններով կենսաթոշակ նշանակելու հիմք հանդիսացող փաստաթուղթը կամ դատական կարգով հաստատել այդպիսի պայմանների առկայությունը՝ ներկայացնելով դատարանի վճիռը: Համապատասխան փաստաթղթերը կենսաթոշակ նշանակող մարմին ներկայացնելիս վերջինս պարտավոր է վերսկսել վարչական վարույթը՝ նոր հանգամանքներ ի հայտ գալու հիմքով արտոնյալ պայմաններով կենսաթոշակ նշանակելու հարցը լուծելու համար:

Ահա այն երեք հիմնական դեպքերը, երբ վարչական վարույթը պետք է վերսկսվի: Այդ մասին վարչական մարմինը պարտավոր է որոշում կայացնել՝ շահագրգիռ անձի դիմումն ստանալուց հետո:

Միաժամանակ Օրենքը հղում է արել այլ օրենքի, որով ևս հնարավոր է, որ նախատեսված լինեն վարույթը վերսկսելու հիմք հանդիսացող այլ դեպքեր: Վարույթը վերսկսելու արդյունքում վարչական մարմինը իրավասու է փոփոխություններ կատարել ավելի վաղ ընդունված վարչական ակտում կամ էլ անվավեր կամ ուժը կորցրած ճանաչել նախկին ակտը՝ ընդունելով նոր ակտ:

### **Հարց 73. Ո՞ր պահից հաշված և ի՞նչ ժամկետում կարող է դիմում ներկայացվել վարչական վարույթը վերսկսելու խնդրանքով:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթը վերսկսելու համար դիմումը պետք է վարչական մարմին ներկայացվի 3 ամսվա ընթացքում՝ այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարույթը վերսկսելու հիմք դարձած վերը հիշատակված հանգամանքներից որևէ մեկի կամ դրանցից մի քանիսի մասին:

Օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթից հետևում է, որ վարույթը վերսկսելու համար վարույթի մասնակիցը կարող է դիմել ինչպես համապատասխան ակտն ընդունած վարչական մարմին, այնպես էլ այդ մարմնի վերադաս վարչական մարմին կամ իրավասու այլ վարչական մարմին, եթե օրենքով նման դեպքերում վարույթի վերսկսման իրավասությունը վերապահված է այլ իրավասու վարչական մարմնի, կամ այն իրավունքներն ու պարտականությունները, որոնցով օժտված է եղել վարչական ակտն ընդունած մարմինը, փոխանցվել են այլ վարչական մարմնի:

Ըստ այդմ՝ վերսկսման արդյունքում վարչական ակտ է ընդու-

նում այն վարչական մարմինը, որը վարույթը վերսկսել է և դիմումի հիման վրա գործն ըստ էության քննարկել:

**Հարց 74. Ի՞նչ կանոններ են կիրառվում, եթե վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ են այլ մարմինների թույլտվությունը կամ համաձայնությունը:**

**Պատասխան.**

Վարչական մարմինների պրակտիկայում բացառություն չեն դեպքերը, երբ անձն այս կամ այն վարչական ակտն ստանալու համար պարտադրված է լինում անցնել երբեմն մի քանի վարչական մարմիններ և նրանցից ստանալ տարբեր թույլտվություններ, համաձայնություններ, որոնք անհրաժեշտ են հիմնական կամ վերջնական վարչական ակտի ընդունման համար: Գաղտնիք չէ, որ անձի կողմից մեկից ավելի վարչական մարմիններ այցելելն ու անցնելը դյուրին գործ չէ, մասնավոր եթե նկատի ունենանք դեռևս տեղ գտնող բյուրոկրատական քաշքշուկները: Նման վիճակը ժամանակի կորուստ է առաջացնում, ինչպես նաև մեծացնում է կոռուպցիոն ռիսկերը:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ Օրենքը նման վիճակների համար միանգամայն այլ կանոնակարգում է նախատեսել, որը բնորոշվում է որպես «մեկ պատուհանի սկզբունք»: Ինչո՞ւմ է դա արտահայտվում:

Հնարավոր են դեպքեր, երբ որևէ վարչական ակտ ստանալու խնդրանքով անձը դիմել է իրավասու մարմին, բայց օրենքը պահանջում է, որ նախքան այդ ակտը տալը պետք է գործում առկա լինի նաև այլ վարչական մարմնի (մարմինների) վարչական ակտը (ակտերը):

Օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը դիմել է իրավասու պետական մարմին՝ կապիտալ շինարարություն իրականացնելու արտոնագիր ստանալու համար: Իսկ օրենքը սահմանել է, որ նախքան արտոնագիր տրամադրելը պետք է ներկայացնել նաև այլ փաստաթղթեր, օրինակ՝ թույլտվություններ հրդեհային անվտանգության և լեռնային հսկողության իրավասու մարմիններից և այլն:

Նման դեպքերում, Օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան, թույլտվությունները սահմանափակ պա-



տասխանատվությամբ ընկերության անունով պետք է ձեռք բերի ոչ թե այդ ընկերությունը, այլ այն վարչական մարմինը, որին ընկերությունը դիմել է կապիտալ շինարարության իրականացման արտոնագիր ստանալու համար:

Անհրաժեշտ թույլտվությունները կամ համաձայնությունները, որոնք օրենքով իրավասու են տալ այլ վարչական մարմինները, պարտավոր է ձեռք բերել համապատասխան դիմումը ստացած վարչական մարմինը՝ գրավոր դիմելով այդ մարմիններին, որոնք իրենց հերթին պարտավոր են փոխօգնության կարգով տրամադրել հայցվող ակտերը (Օրենքի ընդհանուր կանոնների համաձայն՝ դրանք կարող են լինել բարենպաստ կամ միջամտող):

Այսինքն՝ «մեկ պատուհանի սկզբունքի» համաձայն, անձն ազատվում է հիմնական վարչական ակտն ստանալու համար անհրաժեշտ այն փաստաթղթերը ձեռք բերելու պարտականությունից, որոնք պետք է տան այլ վարչական մարմիններ: Այդ պարտականությունը դրվում է հիմնական վարչական ակտի տրամադրման հարցում իրավասու և այդ նպատակով վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի վրա: Վերը բերված օրինակում դա կապիտալ շինարարության իրականացման արտոնագիր ստանալու դիմում ստացած վարչական մարմինն է:

Ընդ որում՝ եթե համապատասխան ակտը տալու համար անհրաժեշտ մյուս փաստաթղթերը (թույլտվությունները, համաձայնությունները, եզրակացությունները) պետք է տան բուն վարչական ակտը տրամադրող վարչական մարմնի տարբեր ստորաբաժանումները, ապա այդ մարմնի վարչական վարույթն իրականացնող ստորաբաժանումը պարտավոր է նշված փաստաթղթերը ստանալ նույն մարմնի այն ստորաբաժանումներից, որոնք իրավասու կամ պարտավոր են դրանք տալու:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ «մեկ պատուհանի սկզբունքը» չի տարածվում այն դեպքերի վրա, երբ անձը հայցում է միմյանց հետ կապ չունեցող վարչական ակտերի ընդունում: Օրինակ՝ եթե անձը հայցում է երկու կամ ավելի տեսակների արտոնագրերի տրամադրում, որոնք պայմանավորված չեն մեկը մյուսով, այլ նրանցից յուրաքանչյուրը բացառապես ինքնուրույն արտոնագիր է, և դրանք տրվում են տարբեր տեսակի գործունեություն իրականացնելու համար, այսինքն՝ մեկ արտոնագիրը մյուսը տալու հիմք չի հանդիսանում, ապա նման դեպքերում յուրա-

քանչյուր արտոնագիրը ստանալուն վերաբերող վարույթներն իրականացնում են առանձին-առանձին, և տրվում են ինքնուրույն արտոնագրեր՝ դրանք հայցող անձի առանձին դիմումների հիման վրա:

Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է, որ վերոհիշյալ դեպքերում բողոքարկման ենթակա չեն այն վարչական ակտերը (թույլտվությունները, համաձայնությունները և այլն), որոնք դիմում ստացած վարչական մարմինը, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն, ստացել է դրանք տալու իրավասություն ունեցող այլ վարչական մարմիններից:

Երբ դիմում ստացած վարչական մարմինը այլ վարչական մարմինների թույլտվությունների, համաձայնությունների (կամ դրանց մերժման մասին փաստաթղթերի) հիման վրա ընդունի համապատասխան վարչական ակտ, ապա այս վերջին ակտն էլ կարող է բողոքարկվել, որի հետ միաժամանակ կարող են բողոքարկվել նաև մյուս վարչական մարմինների կողմից տրված թույլտվությունները, համաձայնությունները կամ դրանց տրամադրման մերժումները՝ բողոքարկման վարույթում ներգրավելով նաև այդ մարմիններին:

«Մեկ պատուհանի սկզբունքի» կիրառման ժամանակ դիմող անձը, այնուամենայնիվ, պարտավոր է կատարել պետական տուրքի կամ այլ պարտադիր վճարումների մուծման հետ կապված այն պարտավորությունները, որոնք օրենքով սահմանված են ինչպես հիմնական վարչական ակտի, այնպես էլ դրա տրամադրման համար անհրաժեշտ այլ ակտերի՝ թույլտվությունների, համաձայնությունների և այլնի համար:

Ընդ որում՝ այդ բոլոր վճարումները դիմող անձը կարող է կատարել և դրանց համապատասխան փաստաթղթային հաստատումները ներկայացնել հիմնական վարչական ակտը տրամադրող վարչական մարմին կամ նախնական վարչական ակտերը տրամադրող վարչական մարմիններ՝ վերջին դեպքում համապատասխան հաստատումների պատճենները ներկայացնելով հիմնական վարչական ակտը տրամադրող մարմին:

### ԲԱԺԻՆ III. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ

#### **Հարց 75. Ո՞րն է վարչական ակտի հասկացությունը: Որո՞նք են վարչական ակտերի տեսակները:**

##### **Պատասխան.**

Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն (Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերություն): Արտաքին ներգործության ներքո նկատի է առնվում այն, որ վարչական ակտը պետք է առնչվի ֆիզիկական կամ իրավաբանական անձի, որը կազմակերպական, աշխատանքային, ենթակայական կամ որևէ այլ ուղղակի կապի մեջ չի գտնվում այն վարչական մարմնի հետ, որը վարչական ակտ է ընդունելու, կամ եթե նման կապ առկա է, այդուհանդերձ, ընդունվելիք վարչական ակտը չի առնչվում այդպիսի կապից բխող կողմերի հարաբերությունների բովանդակությամբ:

Այսպես՝ ՀՀ ոստիկանության համապատասխան ստորաբաժանման անձնագրային բաժնի աշխատակիցը, որը պետական ծառայողական կապի մեջ է այդ մարմնի հետ, դիմել է վերջինիս՝ դրա իրավասության մեջ մտնող հարցով, օրինակ՝ նոր անձնագիր ստանալու խնդրանքով: Նոր անձնագիր տալն ինքնին վարչական ակտ է: Սակայն այս հարաբերություններում համապատասխան վարչական մարմնի աշխատակիցը գտնվում է այն նույն կարգավիճակում, ինչ-որ անձնագիր ստացող մյուս բոլոր անձինք: Վարչական մարմնի համար տվյալ պարագայում իր աշխատակիցը դիտարկվում է որպես իրենից դուրս գտնվող անձ, քանի որ տվյալ վարչական ակտը չի առնչվում այդ մարմնի հետ վերջինիս ծառայողական հարաբերությունների բովանդակությամբ:

Վարչական մարմինը վարչական ակտով այդ ակտի հասցեատիրոջ հետ կապված է բացառապես այն հանգամանքով, որ ինքն է համապատասխան ակտն ընդունել, որը վարչական մարմնի համար անմիջական իրավական պարտականություններ չի առաջաց-

նում այն անձի հանդեպ, որին հասցեագրված է, մինչդեռ իրավա-  
կան հետևանքներ առաջացնում է ակտի հասցեատիրոջ համար:

Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասը նշում է, որ վարչական ակտն  
անհատական ակտ է: Դա նշանակում է, որ այն վերաբերում է որոշա-  
կի ֆիզիկական կամ իրավաբանական անձի, այսինքն՝ ունի հստա-  
կորեն որոշված հասցեատեր: Օրինակ՝ անհատ ձեռնարկատիրոջը  
տրված վկայականից ուղղակի երևում է, թե որոշակիորեն ում է այն  
տրվել և ինչ տեսակի գործունեություն իրականացնելու համար:

Երբ ավտոտեսուչը կանգնեցնում է կարգազանց վարորդին,  
ապա ինչպես նրան, այնպես էլ կարգազանցին հայտնի է, թե ում է  
վերաբերում «Կանգնիր» հրահանգը:

Երբ լուսային ազդանշանն իր գունային ցուցիչներով «Կանգ-  
նիր», «Ուշադրություն» կամ «Անցիր» հրահանգներն է տալիս,  
դրանք ևս անհատական վարչական ակտեր են. վերաբերում են  
առանձին-առանձին բոլոր նրանց, ովքեր համապատասխան հրա-  
հանգը տալու պահին պետք է ենթարկվեն դրան, թեկուզև լինեն մե-  
կից ավելի անձինք (հետիոտն, վարորդ, հեծանվորդ և այլն): Սա  
արդեն վարչական ակտի այն տարատեսակներից է, որը բնորոշում  
է որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց  
որևէ խմբի, տվյալ դեպքում՝ հետիոտների և այլն:

Վարչական ակտը բնորոշվում է նաև հանրային իրավունքի բնա-  
զավառին առնչվելու հանգամանքով: Այսինքն՝ դա պետք է լինի  
վարչական մարմնի կողմից և վարչական (հանրային) իրավունքի  
բնագավառում որոշակի հարցի լուծման նպատակով ընդունված  
ակտ: Եթե նորմատիվ ակտը որևէ որոշակի հարցի կամ անձի չի վե-  
րաբերում, այլ ընդհանուր նշանակություն ունի և կիրառվում է իր  
կարգավորման տակ ընկնող ցանկացած անձի և հարցի նկատ-  
մամբ, ում կամ ինչի նկատմամբ դրա կիրառման անհրաժեշտու-  
թյունը կառաջանա, ապա այլ է վարչական ակտի դեպքում:

Այն պետք է գործի լոկ այն անձի համար, ում վերաբերյալ ըն-  
դունվել է: Մյուս անձինք կամ սուբյեկտներն ուղղակի պարտավոր  
են այդ ակտը ընդունել և դրա դեմ գործողություններ չձեռնարկել:

Օրինակ՝ արտոնագիր ունեցող անձի այդ փաստաթուղթը մյուս  
անձանց չի վերաբերում և նրանց համար որևէ նշանակություն չու-  
նի դրա առկայությունը համապատասխան անձի մոտ: Սակայն,  
եթե որևէ անձ ցանկություն ունի կամ նրան անհրաժեշտ է արտոնա-  
գիր ունեցող անձի հետ դրան վերաբերող հարցով առնչվել, ապա

պետք է նախ տեղեկանա դրա առկայության մասին և ապա՝ պահպանի արտոնագրով նրան տրված իրավունքները, ինչն օրենքով սահմանված պարտականություն է:

### **Հարց 76. Ի՞նչ է ռեալ ակտը, ինչո՞վ է այն տարբերվում վարչական ակտից:**

#### **Պատասխան.**

Իրավական ակտեր և վարչական ակտեր ընդունելուց զատ կառավարչության գործունեության մեկ այլ կարևորագույն ձև է հանդիսանում ոչ ձևական վարչարարությունը՝ ռեալ ակտը: Ոչ ձևական վարչարարությունը վարչական մարմինների հանրային իրավունքի բնագավառում այնպիսի գործունեությունն է, որը տեղի չի ունենում իրավական ակտեր և վարչական ակտեր ընդունելու միջոցով: Ռեալ ակտը վարչական մարմինների այնպիսի գործողություն է, որն ուղղված չէ իրավական հետևանքների առաջացմանը: Ռեալ ակտ է հանդիսանում, օրինակ, գումարի վճարումը, տեղեկանքների տրամադրումը, հաղորդագրություններ տալը, իրազեկումները, զգուշացումները, ֆիզիկական գործողությունները և այլն:

Ցանկացած վարչարարության, այդ թվում՝ ոչ ձևական վարչարարության համար, կառավարչության համար անհրաժեշտ է լիազորություն: Եթե ռեալ ակտը միջամտում է քաղաքացու իրավունքներին, ապա ռեալ ակտի համար անհրաժեշտ է օրենքի լիազորություն: Այլ դեպքերում դա անհրաժեշտ չէ: Եթե ոստիկանը կիրառում է ներգործության հատուկ միջոցներ, ապա դրա համար անհրաժեշտ է օրենքի լիազորություն: Սակայն երբ ոստիկանը երթևեկում է ծառայողական մեքենայով, ապա դրա համար իրավական հիմք պետք չէ, որովհետև չկա որևէ միջամտություն մարդու իրավունքներին:

Ռեալ ակտի հիմնական տարբերությունը վարչական ակտից կայանում է նրանում, որ ի տարբերություն վերջինի, ռեալ ակտը չունի կարգավորող բնույթ: Վարչական ակտը, օրենքի 53 հոդվածի առաջին մասի համաձայն, արտաքին ներգործություն ունեցող այնպիսի որոշումը, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճա-

նաչելուն: Ռեալ ակտը որևէ կոնկրետ գործ չի կարգավորում (չի սահմանում որևէ իրավունք կամ պարտականություն), սակայն դա չի նշանակում, որ այն որևէ իրավական նշանակություն չունի: Շատ հաճախ ռեալ ակտով ավարտվում է վարչական մարմինների իրավական պարտականությունների իրականացումը, օրինակ, երբ վճարվում է քաղաքացու կենսաթոշակը: Սպառողներին ուղղված զգուշացումը այս կամ այն ապրանքի վերաբերյալ կարող է շատ մեծ ազդեցություն ունենալ շուկայի վրա: Այսպիսով՝ ռեալ ակտով չի սահմանվում որևէ իրավական հետևանք, սակայն կարող է ունենալ շատ մեծ իրավական նշանակություն: Քանի որ ռեալ ակտը կարող է միջամտել քաղաքացու իրավունքներին, ապա քաղաքացին ունի դրանից պաշտպանվելու հնարավորություն ինչպես վարչական մարմիններում, այնպես էլ դատական կարգով:

### **Հարց 77. Որո՞նք են վարչական ակտի տեսակները:**

#### **Պատասխան.**

Ինչպես նշվեց վերը, յուրաքանչյուր վարչական ակտ առանձնանում է որոշակի անհատականացվածությամբ: Այսինքն՝ այն ունի հստակորեն որոշված կամ հայտնի հասցեատեր: Հետևաբար՝ վարչական ակտը կարող է իր հասցեատիրոջ համար ունենալ բարենպաստ կամ ոչ բարենպաստ (միջամտող) նշանակություն՝ մերժել որևէ իրավունքի տրամադրումը, զրկել այս կամ այն իրավունքից, տալ թույլտվություն, որևէ գույքի նկատմամբ իրավունք և այլն, ինչպես նաև պարունակել խառը՝ բարենպաստ և միջամտող նշանակություն ունեցող տարրեր:

Այդ իրողությունը նկատի ունենալով՝ Օրենքի 53-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանել է վարչական ակտի երեք տարատեսակ՝ բարենպաստ, միջամտող և զուգորդվող:

Բարենպաստ է այն վարչական ակտը, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման:

Այդպիսի ակտերի թվում կարելի է նշել արտոնագիր կամ վարորդական իրավունք տալը, շինարարական աշխատանքներ կատարելու թույլտվությունը և այլն:

Միջամտող է այն վարչական ակտը, որի միջոցով վարչական

մարմինը մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում է անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն է դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում է նրանց իրավական կամ փաստացի դրությունը:

Միջամտող ակտերից կարելի է նշել, օրինակ, ցանկացած հարցով տրված դիմումը մերժելու, տրամադրված արտոնագրի գործողությունը ժամանակավորապես կասեցնելու, անօրինական շինությունը քանդելու, հատկացված հողատարածքն ըստ նշանակության չօգտագործելու կամ օրենքով սահմանված ժամկետում չօգտագործելու պատճառով այն հատկացված անձից հետ վերցնելու մասին իրավասու վարչական մարմնի ակտը, վարորդական իրավունքից զրկելու վերաբերյալ ակտը և այլն:

Ձուգորդվող վարչական ակտով այդ ակտի հասցեատիրոջ համար կարող են սահմանվել ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող դրույթներ:

Օրինակ՝ եթե անձը դիմել է իրավասու մարմին՝ պահանջելով քանդել իր հարևանի կողմից իրենց բակում ապօրինաբար կառուցված ավտոտնակը և այդ հողատարածքը տրամադրել իրեն՝ ավտովերանորոգման կայան կառուցելու համար, սակայն վարչական մարմինը որոշում է ընդունել քանդել ապօրինի կառուցված ավտոտնակը, իսկ բակը տրամադրել համատիրությանը՝ խաղահրապարակ կառուցելու համար, ապա այդ ակտը դիմում տված անձի համար կլինի զուգորդված վարչական ակտ, որի առաջին մասով բավարարվել է նրա պահանջը, և քանդվել է ապօրինաբար կառուցված շինությունը, սակայն երկրորդ մասով մերժվել է այդ տարածքն իրեն տրամադրելու վերաբերյալ պահանջը:

Չպետք է կարծել, թե վարչական ակտերի նման տեսակային սահմանազատումն ունի զուտ տեսական նշանակություն: Տարանջատման գործնական նշանակությունն ուղղակի կապի մեջ է մտնում վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխման հետ:

## **Չարց 78. Որո՞նք են վարչական ակտի ձևերը:**

### **Պատասխան.**

Ձևի առումով վարչական ակտերը կարող են լինել՝

ա) գրավոր.

բ) բանավոր.

գ) ձայնային.

դ) լուսային.

ե) ազդանշանային.

զ) պատկերային.

է) նշանների և օրենքով նախատեսված այլ ձևի:

Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթներով պետք է ընդունվեն գրավոր վարչական ակտեր, որոնք կարող են անվանվել որոշում, հրաման, կարգադրություն կամ ունենալ օրենքով նախատեսված այլ անվանում:

Բանավոր վարչական ակտեր, որպես կանոն, ընդունվում են ոստիկանության համապատասխան ծառայությունների աշխատակիցների կողմից՝ հասարակական վայրերում կարգ ու կանոնը պահպանելու գործողություններ իրականացնելիս:

Օրինակ՝ ցույցի մասնակիցներին իրավունք է վերապահված երթ կատարել իրավասու մարմնին իրազեկած երթուղով: Երթն ուղեկցող ոստիկանության աշխատակիցները հետևում են, որ ցույցի մասնակիցները պահպանեն երթուղին՝ այդ նպատակով անելով երթից չչեղվելու վերաբերյալ բանավոր կարգադրություններ:

«Լուսային» կամ լուսաազդանշանային ձևի վարչական ակտերի բնորոշ օրինակներ են փողոցային երթևեկությունը, ինչպես նաև երկաթուղային անցումները կարգավորող լուսակիրների ազդանշանները և համանման լուսային սարքերով տրվող այլ կարգադրությունները:

Պատկերային կամ առարկայական վարչական ակտ են ավտոտեսուչի՝ ավտոմեքենան կամ հետիոտներին կանգնեցնելու կարգադրություն պարունակող ժեստը, որը կարող է արտահայտվել ձեռքի մեկնումով, ինչպես նաև խաչմերուկը կարգավորող տեսուչի համապատասխան ժեստերը:

Ձայնաազդանշանային վարչական ակտ են ավտոտեսուչի սուլիչով տրված կարգադրությունը, ոստիկանության, հրշեջ ծառայության, շտապօգնության և այլ հատուկ ծառայության մեքենաների կողմից լուսային և ձայնային եղանակներով արձակվող հրահանգները:

Նշանների ձևով վարչական ակտերը ևս հիմնականում կիրառվում են ճանապարհային երթևեկության կարգավորման ոլորտում: Օրինակ՝ ավտոմեքենաների կամ տրանսպորտային այլ միջոցների երթևեկությունը, վազանցը կամ ճանապարհի որոշակի հատվածնե-



րում կամ վայրերում կանգառն արգելող կամ թույլատրող նշանները:

**Հարց 79. Ինչպիսի՞ պահանջներ են ներկայացվում գրավոր վարչական ակտին:**

**Պատասխան.**

Օրենքի 55-րդ հոդվածով գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները:

Ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը: Այսինքն՝ վարչական ակտը պետք է կազմվի այնպես, որպեսզի դրանում ամփոփվեն համապատասխան ակտի համար օրենքով նախատեսված պահանջները և այն փաստական հանգամանքները, որոնք տվյալ ակտի ընդունման հիմք են հանդիսացել: Այլ խոսքով՝ ակտից պետք է հստակ երևա, թե ինչու է վարչական մարմինը հանգել այդ տեսակի ընդունմանը: Բացի դրանից, վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա: Ընդ որում՝ միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ): Օրինակ՝ անձնագիրը, փախստականի կարգավիճակը հաստատող վկայականը և այլն: Թղթի ձևը (չափսերը) և նմուշը (ջրաթափանցիկ և այլն) որոշվում է օրենքով կամ այն վարչական մարմնի կողմից, որն իրավասու է ընդունել համապատասխան վարչական ակտը:

Օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են տվյալ ակտի ընդունման կապակցությամբ: Օրինակ՝ եթե վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների միջնորդության հիման վրա նշանակվել է փորձաքննություն կամ կատարվել է զննում, ապա վարչական ակտում պետք է նշվի, թե ում կողմից և ինչ չափով պետք է հատուցվեն փորձաքննություն կամ զննում անցկացնելու հետ կապված ծախսերը:

Եթե վարչական ակտ է ընդունվում ծախսերը վերադարձնելու վերաբերյալ, ապա այդ ակտում պետք է նշվեն վերադարձման են-

թակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները, ինչպես նաև այն, թե ում պետք է դրանք վերադարձվեն:

Վարչական ակտը կարող է բաղկացած լինել ոչ միայն բուն ակտից, այլև ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ փաստաթղթեր, որոնք ինքնուրույն վարչական ակտեր չեն, այլ բուն վարչական ակտի բաղկացուցիչ մասերը և կարող են գործել այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը և այն ժամկետով, ինչ ժամկետով գործում է այդ ակտը:

Օրինակ՝ ԲՈՒՀ-ի ավարտական դիպլոմի բաղկացուցիչ մաս է կազմում տվյալ որակավորումը ստացած անձի՝ ուսման ամբողջ ժամանակաշրջանում անցած բոլոր առարկաների քննությունների կամ ստուգարքների արդյունքում ստացած գնահատականների վերաբերյալ փաստաթուղթը, որը որպես ներդիր կցվում է դիպլոմին:

Սեփականության իրավունքով հողահատկացման մասին վարչական ակտին, որպես նրա բաղկացուցիչ մասը կազմող փաստաթուղթ, պետք է կցվի նաև այն հողատարածքի նախագիծը՝ նրա չափերի և գտնվելու վայրի վերաբերյալ նշումներով, որը սեփականության իրավունքով հատկացվում է համապատասխան անձին: Ընդ որում՝ եթե միևնույն ակտով դիմողին տրամադրվում են տարբեր վայրերում մի քանի հողատարածքներ, ապա յուրաքանչյուր հողատարածքի նախագիծը կարող է հավելվածի տեսքով կցվել հողահատկացման մասին վարչական ակտին:

Օրենքի 55-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված է նաև, թե ինչ պետք է պարունակի վարչական ակտը, որով ըստ էության մանրամասնվում են նույն հոդվածի 1-ին մասով ներկայացվող պահանջները:

Այսպես՝ գրավոր վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական ակտի հասցեատիրոջ անուն-ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) վարչական ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարեթիվը, ամիս ամսաթիվը, ակտի համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս)։

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվել է որոշակի ժամկետով։

ը) ակտի բողոքարկման ժամկետը և այն մարմինը, ներառյալ՝ դատարանը, որտեղ կարող է այդ ակտը բողոքարկվել։

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անուն ազգանունը և նրա ստորագրությունը։

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը։

## **Յարց 80. Ինչո՞ւմ է արտահայտվում վարչական ակտի որոշակիությունը:**

### **Պատասխան.**

Վարչական ակտի որոշակիությունն արտահայտվում է նրա ձևակերպման հստակությամբ, պարզությամբ և հասկանալի լինելով (Օրենքի 56-րդ հոդված): Ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որ դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում: Օրինակ՝ հողահատկացման ակտից հստակ պետք է երևա, թե որ հողատարածքը, ինչ չափսերով, երբ և ում է հատկացվում, ինչ նպատակով, ինչ ժամկետով և ինչ իրավունքով (սեփականության, օգտագործման):

Կամ, ասենք, իրեն տրված վարչական ակտի հիման վրա անձն օգտվում է մի քանի տեսակի նպաստներից, սակայն օրենքով նախատեսված հիմքի առկայությամբ որոշում է ընդունվում նշանակված նպաստներից որևէ մեկից զրկելու մասին: Այդ հարցով ընդունված վարչական ակտից հստակ պետք է երևա, թե հատկապես որ տեսակի նպաստից է նա զրկվում, որ պահից սկսած և ինչ հիմքով:

Անհրաժեշտ է նշել, որ այլ ձևի վարչական ակտերը՝ բանավոր, պատկերային, ազդանշանային և այլք, նույնպես պետք է որոշակի լինեն: Օրինակ՝ երբ ավտոտեսուչը ժեստերի ձևով համապատասխան կարգադրություններ է անում, ապա նա պետք է անի այնպես, որ ակնհայտ լինի, թե դրանք ում են վերաբերում, և կոնկրետ ինչ պետք է անեն կարգադրությունները ստացած անձինք (կանգնեն, շարժվեն, փոխեն շարժման ուղղությունը և այլն):

## **Հարց 81. Ինչո՞ւմ է արտահայտվում վարչական ակտի հիմնավորվածությունը:**

### **Պատասխան.**

Վարչական ակտը, որոշակի լինելուց բացի, պետք է նաև հիմնավորված լինի, որն արտահայտվում է նրանով, որ վարչական ակտում նշվում են համապատասխան որոշում ընդունելու համար բոլոր էական փաստական և իրավական հիմքերը (Օրենքի 57-րդ հոդվածի 1-ին մաս):

Վարչական ակտից հստակ պետք է երևա, թե որ փաստական հանգամանքներն է հիմք ընդունել վարչական մարմինը, ընդունելով իր որոշումը, ինչպես է որոշվել դրանց հավաստիությունը, և որ իրավական հիմքերով է ընդունվել այդ որոշումը (հղում կատարելով համապատասխան օրենքի կամ, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև այլ իրավական ակտերի վրա): Անհիմն վարչական ակտերը պարարտ հող են կամայականությունների համար:

Եթե վարչական մարմինը վարչական ակտ է ընդունում մի հարցով, որով նա հայեցողական լիազորություն ունի, այսինքն՝ կարող է ընդունել օրենքով նախատեսված մի քանի որոշումներից որևէ մեկը, ապա վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց վրա հիմնվելով վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը, այլ ոչ թե մեկ ուրիշը:

Այսպես՝ «Վիճակախաղերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով նախատեսվում է, որ այդ օրենքի պահանջների խախտման համար լիազոր մարմինը վիճակախաղերի կազմակերպչի նկատմամբ կիրառում է պատասխանատվության հետևյալ միջոցները՝

ա) նախազգուշացում և խախտումները վերացնելու մասին հանձնարարական.

բ) տուգանք.

գ) արտոնագրի գործողության կասեցում.

դ) արտոնագրի ուժը կորցրած ճանաչում:

Ինչպես տեսնում ենք, վարչական մարմինն իրավասու է պատասխանատվության վերոհիշյալ չորս միջոցներից կիրառել որևէ մեկը: Հետևաբար՝ համապատասխան ակտն ընդունողը պարտավոր է հիմնավորել, թե ինչու է հատկապես կիրառում դրանցից այն, որն ինքն է նախատեսում՝ հիմք ընդունելով նաև ընտրված համապատասխան միջոցի կիրառման համաչափությունը (պիտանիու-

թյունը, անհրաժեշտությունը և չափավորությունը):

**Հարց 82. Ո՞ր դեպքերում վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում:**

**Պատասխան.**

Հիմնավորում պահանջվում է գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտ ընդունելու դեպքում: Հիմնավորում չի պահանջվում բանավոր կամ այլ ձևի (պատկերային, ազդանշանային և այլն) վարչական ակտեր ընդունելիս: Միաժամանակ Օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված են դեպքեր, երբ գրավոր վարչական ակտի հիմնավորում ևս չի պահանջվում: Այդ դեպքերն են՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչական ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները:

Օրինակ՝ անձը դիմել է իրավասու վարչական մարմին՝ խնդրելով իրեն թույլատրել մուտք գործել սահմանային գոտի, և վարչական մարմինը տվել է այդ թույլտվությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանով չեն շոշափվում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից:

Օրինակ՝ իրավասու վարչական մարմինը որոշում է ընդունում ապօրինի շինությունը օրինականացնելու վերաբերյալ: Այս դեպքում ակտի հասցեատիրոջն ակներևաբար հայտնի է, որ այդ ակտի իրավական հետևանքը տվյալ կառույցի նկատմամբ իր սեփականության իրավունքը ճանաչելն է.

գ) վարչական մարմինը նույնաման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրապարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ և յուրաքանչյուր անհատին դեպքերում հիմնավորելու անհրաժեշտությունը չկա:

Այս դեպքին առնչվող վարչական ակտերի բնորոշ օրինակ կարող են ծառայել իրավասու մարմինների կողմից տրվող սնանկության գործերով կառավարիչների վկայականները, փաստաբանական գործունեություն իրականացնելու կամ նոտարի պաշտոնին

հավակնելու համար համապատասխան որակավորման քննություններն անցնելու վերաբերյալ վկայականները, ինչպես նաև անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթերը (անձնագիրը, ծննդյան վկայականը, փախստականի կարգավիճակը կամ քաղաքական ապաստանի իրավունքը հաստատող վկայականը և այլն):

Վարչական ակտի հիմնավորման հիմքում պետք է դրվեն այնպիսի փաստեր, որոնք առնչվում են տվյալ ակտն ընդունող վարչական մարմնի իրավասությանը:

Օրինակ՝ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի համապատասխան տարածքային ստորաբաժանումը չի կարող իրավաբանական անձի պետական գրանցումը մերժել՝ դրա ստեղծման աննպատակահարմարության պատճառաբանությամբ, որովհետև օրենքով նման հիմքով մերժման իրավասություն այդ ստորաբաժանումն ունի կամ որևէ այլ մարմնի տրված չէ:

Կամ, ասենք, հողահատկացման վերաբերյալ ՀՀ քաղաքացու դիմումը չի կարող մերժվել այն հիմքով, որ նա այն տարածքի բնակիչ չէ, որտեղ ինքը հողահատկացման խնդրանքով դիմում է ներկայացրել, կամ էլ այն հիմքով, որ նա մշտական բնակություն է հաստատել որևէ օտարերկրյա պետությունում:

### **Հարց 83. Ո՞ր պահից է վարչական ակտը համարվում ընդունված:**

#### **Պատասխան.**

Գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի (անձանց) կողմից ստորագրվելու օրվանից:

Բանավոր և այլ ձևի վարչական ակտերն ընդունված են համարվում դրանք հրապարակելու պահից:

Օրինակ՝ այն պահին, երբ ոստիկանության համապատասխան աշխատակիցը հայտարարում է արգելված վայրում անցկացվող զանգվածային հրապարակային միջոցառումը դադարեցնելու մասին, այդ պահից էլ ընդունված է համարվում համապատասխան ակտը: Այն պահին, երբ ոստիկանության տեսուչը համապատասխան նշան է անում, այդ պահից էլ ընդունված է համարվում «Կանգնիր» վարչական ակտը:

Թեև Օրենքն այդ մասին չի նշում, առարկայական վարչական

ակտը կարող է ընդունված համարվել որոշակի գործողություն կատարելով: Այսպես՝ ոստիկանության մեքենան կանգնեցվում է որևէ տեղ, այդ միջոցով իրազեկելով տվյալ վայր անձանց մուտքն արգելված լինելու մասին: Երբ ոստիկանության մեքենան հեռանում է համապատասխան վայրից (տեղից), ապա այդ պահից, հեռանալու գործողությամբ էլ ընդունված է համարվում տվյալ տարածք մուտք գործելը թույլատրելու վերաբերյալ վարչական ակտը: Բերված օրինակի մեջ երկու դեպքում էլ (արգելելու և թույլատրելու) վարչական ակտն ընդունվում է գործողություն կատարելու միջոցով, որը զուգորդվում է առարկայական դրսևորումներով՝ ավտոմեքենա կանգնեցնելով կամ այն հեռացնելով:

Եթե ճանապարհային երթևեկությունը կարգավորող լուսային ազդանշանի գույները փոփոխվում են, ապա համապատասխան գույնն ի հայտ գալու պահից էլ ընդունված են համարվում համապատասխան ակտերը՝ «Կանգնի՛ր», «Ուշադրություն», «Անցի՛ր»:

### **Յարգ 84. Ո՞ր պահից է վարչական ակտն ուժի մեջ մտնում:**

#### **Պատասխան.**

Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին ակտի հասցեատիրոջը կամ նրա ներկայացուցչին Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ բուն վարչական ակտով այլ բան նախատեսված չէ:

Եթե վարչական ակտում նշում կա նրա՝ ուժի մեջ մտնելու ժամկետի վերաբերյալ, ապա ակտն ուժի մեջ է մտնում այդտեղ նշված ժամկետում: Օրինակ՝ իրավասու մարմինը կարող է անձին, որի տարիքը չի լրացել վարորդական իրավունքի վկայական ստանալու համար, տալ այդ վկայականը, սակայն դրա մեջ նշել այն ժամկետը, որից սկսած վկայականը ուժի մեջ պետք է մտնի: Դա պետք է համընկնի վարորդական իրավունք ստացող անձի համապատասխան տարիքը լրանալուն հաջորդող օրվան, տվյալ դեպքում՝ նրա 18 տարեկանը լրանալու օրը:

Յետևապես՝ հնարավոր են դեպքեր, որ վարչական ակտը պարունակի դրույթներ, որոնք այդ ակտի միայն որևէ մասով ուժի մեջ մտնելը կապեն որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման հետ: Այդպիսի դեպքերում վարչական ակտն այդ մա-

սով ուժի մեջ է մտնում համապատասխան պայմանի կամ հանգամանքի առաջացման պահից (պայմանով ակտ):

Եվս մեկ օրինակ՝ վարչական մարմինը բնակելի տուն կառուցելու նպատակով ընդունված հողահատկացման ակտով դրա հասցեատիրոջը պարտավորեցրել է, որ տվյալ հողամասում հողային աշխատանքներ իրականացվեն միայն այն բանից հետո, երբ իրավասու մարմինը կպարզի այդտեղ պատմամշակութային արժեքների բացակայությունը:

Մինչև այդ պայմանը չկատարվի, հողի հատկացման ակտ ստացած անձը, ըստ Օրենքի վերը նշված դրույթի, իրավունք չունի հողաշինարարական աշխատանքների իրականացնել: Հետևաբար՝ այդ մասով վարչական ակտը ուժի մեջ կարող է մտնել միայն իրավասու մարմնի կողմից այն մասին համապատասխան փաստաթուղթ տալու դեպքում, որ այդտեղ պատմամշակութային արժեքներ չեն հայտնաբերվել:

Բանավոր և այլ ձևի վարչական ակտերն ուժի մեջ են մտնում դրանք հրապարակելու պահից: Օրինակ՝ փողոցային երթևեկությունը կարգավորող լուսաազդանշանային հրահանգներն ուժի մեջ են մտնում յուրաքանչյուր գույնի լուսային ազդանշանի արձակման պահից: Նույն կարգով ավտոտեսուչի սուլիչի ծայնը հնչելուն պես ուժի մեջ է մտնում դրանով տրված «Կանգնիր» կամ «Անցիր» հրահանգը:

Բանավոր կամ այլ ձևի վարչական ակտի հրապարակում է համարվում տվյալ ակտի հասցեատիրոջը (հասցեատերերին) այդ ակտի մասին անմիջականորեն տեսանելի, ընկալելի կամ որևէ այլ ձևով հասանելի դարձնելը (Օրենքի 59-րդ հոդվածի 7-րդ մաս):

### **Հարց 85. Վարչական ակտի ընդունման մասին ի՞նչ եղանակներով և ո՞ւմ է իրազեկվում:**

#### **Պատասխան.**

Վարչական ակտի ընդունման մասին վարչական մարմինն իրազեկում է տվյալ վարչական վարույթի մասնակիցներին (ակտի հասցեատիրոջը, երրորդ անձանց):

Վարչական ակտի մասին իրազեկման ներքո նկատի են առնվում վարչական ակտը վարույթի մասնակիցներին հանձնելը, հրապարակելը (Օրենքի 59-րդ հոդված):



Վարույթի մասնակիցներին հանձնվում է գրավոր վարչական ակտը: Իսկ բանավոր կամ այլ ձևի վարչական ակտը, ակնհայտ է, որ չի կարող «հանձնվել»։ այն հրապարակվում է և հրապարակումն ինքնին դիտվում է իբրև «հանձնում»:

Գրավոր վարչական ակտը վարույթի մասնակիցներին է հանձնվում այդ ակտի ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում:

Հանձնման ձևերը կամ եղանակներն են՝

ա) ակտը ստորագրությամբ դրա հասցեատիրոջը հանձնելը.

բ) այն պատվիրված փոստով վարույթի մասնակիցներին ուղարկելը, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ:

Օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսել է, որ հանձնումը կարող է կատարվել նաև «օրենքով նախատեսված այլ ձևով»:

Օրենքը սահմանել է, որ վարչական ակտը, որպես կանոն, վարույթի մասնակիցներին պետք է հանձնվի առձեռն՝ նրանցից ստորագրություն վերցնելով: Իսկ փոստով կամ օրենքով նախատեսված այլ ձևով հանձնելու միջոցով իրազեկելը պետք է տեղ գտնի այն դեպքում, եթե առձեռն հանձնելը հնարավոր չէ, կամ ակտի հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման (իրազեկման) այլ միջոցներ:

Գրավոր վարչական ակտի հետ հանձնվում են նաև դրա բաղկացուցիչ մասը կազմող փաստաթղթերը:

Վերը նշված կարգով էլ վարույթի մասնակիցներն իրազեկվում են նաև հանձնված վարչական ակտի մեջ կատարված փոփոխությունների և լրացումների մասին:

Վարչական ակտի մասին իրազեկումը կարող է կատարվել նաև այդ ակտի հրապարակման միջոցով: Հրապարակումը կարող է կատարվել վարչական ակտն ընդունած մարմնի տեղեկագրում կամ պաշտոնական այլ տեղեկագրում կամ զանգվածային լրատվության միջոցներով ակտի հրապարակմամբ:

Գրավոր վարչական ակտի հրապարակումը, սակայն, չի վերացնում առձեռն հանձնման կամ փոստով հանձնման միջոցով վարույթի մասնակիցներին ընդունված ակտի մասին իրազեկելու վարչական մարմնի պարտականությունը: Որպես կանոն, վարչական ակտերը պետք է հրապարակվեն այն դեպքերում, երբ դրանք հասարակայնության համար կարող են մեծ հետաքրքրություն ներկայացնել՝ մարզադաշտի կառուցման, թափոնների վերանշակման, գործարան կառուցելու, հանք շահագործելու թույլտվությունները և այլն:

Բանավոր կամ այլ ձևի վարչական ակտերի մասին դրանց հասցեատերերն իրազեկվում են բանավոր կամ այլ ձևով (լուսային, ձայնային ազդանշանների, ժեստերի ձևով ազդանշաններ տալու և այլն) հրապարակելու, ակտի հասցեատիրոջ համար անմիջականորեն լսելի, տեսանելի, ընկալելի կամ որևէ այլ ձևով (օրինակ՝ ճանապարհային երթևեկության նշաններով) հասանելի դարձնելու միջոցով:

**Հարց 86. Ո՞ր դեպքերում կարող է վարչական ակտը տրամադրվել օտար լեզվով, և դա որևէ իրավաբանական հետևանք առաջացնու՞մ է արդյոք:**

### **Պատասխան**

Վարչական ակտի հասցեատիրոջ խնդրանքով, վարչական մարմինը նրան կարող է տրամադրել վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը:

Օտար լեզվով թարգմանված վարչական ակտի պատճենը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով (պաշտոնական կնիքի ներքո նկատի է առնվում վարչական մարմնի այն կնիքը, որը պարունակում է վարչական մարմնի լրիվ անվանումը և Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերը):

Այսպիսով՝ վարչական ակտը բոլոր դեպքերում կազմվում է հայերեն, բայց կարող է և տրվել դրա որևէ օտար լեզվով թարգմանված պատճենը:

Վարչական ակտի՝ օտար լեզվով տրված պատճենը որևէ իրավաբանական ուժ չունի: Օրենքի 59-րդ հոդվածի 4-րդ մասի երկրորդ պարբերության դրույթներից հետևում է, որ օտար լեզվով թարգմանված պատճենը չի կարող հիմք լինել նշված ակտի իմաստը կամ բովանդակությունը մեկնաբանելու կամ պարզաբանելու համար, իսկ վեճ առաջանալու կամ բողոք ներկայացնելու դեպքում հիմք է ընդունվում վարչական ակտի հայերենով ընդունված տեքստը:

Այս դրույթը հիմնավորվում է նրանով, որ վարչական վարույթը իրականացվում է հայերենով և վարչական ակտի հայերեն տեքստը կարող է իրավաբանական նշանակություն ունենալ: Իսկ դրա օտար լեզվով պատճենը տալու հնարավորություն նախատեսելը բխում է վարչական ակտի հասցեատիրոջ շահերից, որին կարող է դա անհրաժեշտ լինել տարբեր նպատակներով:

Օրինակ՝ Հայաստանում գրանցված առևտրային կազմակերպությունը մտադրություն ունի տնտեսական գործունեություն իրականացնել նաև որևէ այլ պետությունում, որի համար նրան անհրաժեշտ է այդ պետություն ներկայացնել կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթ՝ պետական ռեգիստրի մարմնի գրանցման վկայականը, որի օտար լեզվով թարգմանված պատճենն էլ՝ այդ կազմակերպության խնդրանքի դեպքում, պարտավոր է տալ համապատասխան ստորաբաժանումը:

Միաժամանակ, համաձայն Օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի, վերը նշված կանոններից շեղում կարող է նախատեսվել օրենքով և Հայաստանի Հանրապետության պայմանագրերով: Այսպես՝ «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով (կից թիվ 7 հավելվածի 2-րդ կետ) նախատեսված է, որ միջազգային վարորդական վկայականների ներսի երկու հարևան էջերը պետք է ձևակերպվեն ֆրանսերենով, իսկ դրանց նախորդող ներսի երկու էջերից առաջինը ձևակերպված լինի մի քանի լեզուներով, որոնցից պարտադիր են համարվում անգլերենը, իսպաներենը և ռուսերենը: Հետևաբար՝ նման դեպքերում կիրառվելու է նշված բացառությունը, և այդ կոնվենցիային համապատասխան Հայաստանի իրավասու մարմինների կողմից տրվող միջազգային վարորդական վկայականները պետք է կազմվեն ոչ միայն հայերենով (վկայականի շապիկի առաջին թերթի երեսի և ներսի կողմերը), այլև վերոհիշյալ օտար լեզուներով:

### **Հարց 87. Ի՞նչ ժամկետով է գործողության մեջ լինում վարչական ակտը:**

#### **Պատասխան.**

Օրենքի 61-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտը կարող է գործել՝

- ա) անորոշ ժամկետով.
- բ) որոշակի ժամկետով:

Անորոշ և որոշակի բառերը բովանդակային առումով արդեն իսկ պարզաբանում են այդ եզրույթների իմաստը:

Օրինակ՝ «Լիցենզավորման մասին» օրենքի համաձայն (25-րդ և 26-րդ հոդվածներ), ինչպես պարզ, այնպես էլ բարդ արտոնագրերը

տրվում են անժամկետ կարող են տրվել նաև որոշակի ժամկետով օրենքով նախատեսված դեպքերում):

Անժամկետ են տրվում ծննդյան, ամուսնության, որդեգրման, կենսաթոշակ նշանակելու մասին ակտերը և այլն:

Անձնագրերը, կացության կարգավիճակ սահմանող փաստաթղթերը, փախստականի, քաղաքական ապաստանի իրավունքը հաստատող վկայականները և մի շարք այլ փաստաթղթեր տրվում են որոշակի ժամկետով:

Որոշակի ժամկետով են տրվում նաև անձի իրավունքները սահմանափակող որոշ վարչական ակտեր: Օրինակ՝ արտոնագրի գործողության կասեցման մասին իրավասու վարչական մարմնի ակտը գործում է այդ ակտում նշված որոշակի ժամկետով:

Այսպիսով՝ որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև տվյալ ակտով նախատեսված ժամկետի լրանալը: Ընդ որում՝ Օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության դրույթը հնարավորություն է տալիս, որ մինչև որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտի ժամկետը լրանալը կամ լրանալուց հետո 15 օրվա ընթացքում այդ վարչական ակտի ժամկետը երկարաձգվի նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով:

Օրինակ՝ ջրավազանային կառավարման պլան ունեցող տարածքներում ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը, ՀՀ ջրային օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն, մինչև 25 տարի է:

Հետևաբար՝ եթե որևէ անձ սահմանված կարգով նման տարածքներում ջրօգտագործման թույլտվություն է ստացել որևէ ժամկետով, օրինակ՝ 3, 5, 7 կամ 10 տարի և այլ ժամկետով, ապա համապատասխան ժամկետը լրանալուն պես անձը կարող է դիմել և խնդրել դրա երկարաձգում՝ 25 տարին չզերազանցող տևողությամբ: Բացառիկ դեպքերում այդ ժամկետը կարող է երկարաձգվել նույնիսկ մինչև 40 տարի, որը նախատեսված է հիշյալ օրենսգրքի նույն հոդվածի 4-րդ մասով:

Կամ եթե որևէ անձ ժամանակավոր հաշվառման է վերցվել որևէ բնակելի տարածքում, ժամկետը լրանալուց հետո, օրենսդրությամբ նախատեսված հիմքերի առկայության դեպքում, նա կարող է ժամանակավոր հաշվառումը որոշակի ժամկետով նորից երկարաձգել կամ նշտական (անորոշ ժամկետով) հաշվառման վերցվել,

ինչի վերաբերյալ իրավասու պետական մարմինը համապատասխան ակտ է ընդունում: ՀՀ քաղաքացու անձնագրերը տրվում են 10 տարի ժամկետով, որը լրանալուց հետո յուրաքանչյուր անգամ անձնագրերի գործողության ժամկետները երկարաձգվում են ևս 10-ական տարի:

Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:

Օրինակ՝ իրավաբանական անձը պետական գրանցման պահին հայտարարել է, որ ինքը գործողություն է ծավալելու անորոշ ժամկետով և նրա պետական գրանցման վկայականում նշվել է այդ մասին: Սակայն հետագայում իրավաբանական անձի ներկայացուցիչը, դիմելով իրավասու պետական մարմին, խնդրում է փոփոխել այդ դրույթը՝ սահմանելով, որ այդ անձը գործունեություն է իրականացնելու մինչև որոշակի ժամկետը լրանալը: Այս դեպքում պետական գրանցում իրականացնող մարմինը համապատասխան փոփոխություն է կատարում գրանցման փաստաթղթերում:

Կամ, ասենք, ամուսնալուծության վերաբերյալ օրենքով սահմանված կարգով իրավասու վարչական մարմնի ընդունած վարչական ակտով ուժը կորցրած է ճանաչվում նախկինում նույն անձանց տրված՝ ամուսնության գրանցման մասին վարչական ակտի գործողությունը:

Մեկ այլ օրինակ: Վարչական ակտն ընդունած վարչական մարմինը կամ նրա վերադաս վարչական մարմինը, Օրենքի 65-րդ հոդվածի համաձայն, պարզել են, որ նախկինում տրված հողահատկացման ակտը հակասում է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջներին: Այս դեպքում որոշում է ընդունվում այդ ակտն անվավեր ճանաչելու և հողահատկացման ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Վարչական ակտը օրենքով նախատեսված դեպքերում կարող է գործողության ժամկետի վերաբերյալ որևէ նշում չպարունակել, եթե այդ ակտով կարգավորվող հարցի լուծումը կապված է որոշակի մեկ կամ մի քանի այնպիսի գործողությունների կատարման կամ վերահաս իրադարձության հետ, որոնց կատարման կամ վրա հասնելու պահով էլ որոշվում է այդ ակտի գործողության ժամկետը:

Օրինակ՝ շինարարության թուլյալվության մասին ակտը գործում է մինչև դրանով նախատեսված շինարարության իրականացման ավարտի պահը շինարարության ընդունման-հանձնման մասին ակտի ստորագրումը պատվիրատուի և կապալառուի, անհրաժեշտության դեպքում՝ նաև ենթակապալառուի կողմից:

Առևտրային կազմակերպություններում հարկային կամ այլ հարցերով ստուգումներ անցկացնելու մասին իրավասու մարմինների ակտերը գործում են մինչև համապատասխան ստուգումների արդյունքների վերաբերյալ ստուգման ակտի ընդունումը:

Սեզոնային գործունեություն, օրինակ՝ առևտուր իրականացնելու վերաբերյալ վարչական ակտը գործում է մինչև տվյալ սեզոնի ավարտը՝ անկախ տվյալ ակտում սեզոնի ավարտի ժամկետի մասին նշում լինել չլինելուց: Բանավոր վարչական ակտը գործում է մինչև այն պահը, երբ այդ ակտն ընդունած վարչական մարմինը ավարտում է դրա հետ կապված՝ օրենքով նախատեսված գործողությունների կատարումը, կամ օրենքով նախատեսված որևէ եղանակով ակտի հասցեատերը որևէ ձևով իրազեկ է դարձվում ակտի գործողության դադարեցման մասին:

Օրինակ՝ ռադիոյով իրավասու մարմնի պաշտոնատար անձը հայտարարում է, որ խմելու ջուրը որոշակի ժամկետով չպետք է օգտագործել՝ աղտոտված լինելու պատճառով: Աղտոտվածությունը վերացնելու հետ կապված գործողություններ կատարելուց հետո նույն մարմնի պաշտոնատար անձը դարձյալ ռադիոյով հայտարարում է, որ ջուրը մաքրվել է և կարելի է օգտագործել: Այդ պահից դադարում է գործել աղտոտված ջուրը չօգտագործելու մասին բանավոր ակտի գործողությունը:

Այլ ձևի վարչական ակտը գործում է մինչև այն պահը, երբ ակտի հասցեատերը որևէ ձևով իրազեկ է դառնում այդ ակտի գործողության դադարեցման մասին: Օրինակ՝ վազանցն արգելող ճանապարհային նշանը տեսնելու պահից գործում է վազանց չկատարելու վերաբերյալ այդ նշանից բխող հրահանգը: Վերջինս դադարում է գործել այն պահից, երբ նշանով սահմանված տարածքը ավտոմեքենան հատում-անցնում է:

Ճանապարհային շինարարություն իրականացնելու պատճառով դրա որոշ հատված այլ անձանց մուտքն արգելող նշանի գործողությունն ուժի մեջ է մինչև շինարարության ավարտի պահը:

Ձայնային ազդանշանների ձևով ընդունված վարչական ակտե-

րը գործում են մինչև այդ ազդանշաններին հաջորդող գործողությունների ավարտը:

Լուսային ազդանշանների ձևով ընդունված վարչական ակտերը գործում են մինչև տվյալ գույնի փոխարինումը մեկ այլ գույնի լույսով:

### **Չարց 88 Ո՞ր դեպքերում է վարչական ակտը համարվում առ ոչինչ:**

#### **Պատասխան.**

Առ ոչինչ է համարվում վարչական մարմնի ընդունած այն ակտը, որում կան ակնառու կոպիտ սխալներ:

Օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասը նշում է ակնառու կոպիտ սխալների մի քանի դեպքեր, այն է՝

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել:

Օրինակ՝ գրավոր ակտի վրա բացակայում են ակտն ընդունող մարմնի վերաբերյալ նշումները կամ այդ նշումներն այնքան պարզորոշ չեն, որ հավաստի լինի, թե որ վարչական մարմնի կողմից է ակտն ընդունվել (ակտի վրա նշում կա «տեղական ինքնակառավարման մարմնի» մասին, բայց նշում չկա այն մասին, թե հատկապես որ մարմինն է ակտն ընդունողը և այլն):

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը: Օրինակ՝ անհատ ձեռնարկատիրոջ գրանցումը կատարել է տեղական ինքնակառավարման մարմինը, մինչդեռ այդ իրավունքը վերապահված է իրավաբանական անձանց պետական գրանցման գործակալության համապատասխան տարածքային ստորաբաժանմանը:

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ուն է հասցեագրված կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում:

Օրինակ՝ ակտը վերաբերում է հողօգտագործմանը, սակայն նրանում բացակայում են այն անձի վերաբերյալ տվյալները, որը պետք է համապատասխան հողատարածքն օգտագործի, կամ ակտից չի երևում է, թե ուն է այն հասցեագրված, կամ առկա են տեղեկություններ ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ, ուն հասցեագրված է ակտը, սակայն նշում չկա այն մասին, որ այդ անձին հող է հատկացվում և ինչ նպատակով:

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտորեն ոչ

իրավաչափ պարտականություն կամ նրան տրամադրվում է ոչ իրավաչափ իրավունք:

Օրինակ՝ անձին հրահանգ է տրվում օրինական շինությունը քանդելու մասին կամ նրան հողօգտագործման իրավունք է տրվում այն անձի սեփականությունը համարվող հողն օգտագործելու մասին, որը դրանից անտեղյակ է և, օրենքի համաձայն, միայն ինքը կարող է նման իրավունք վերապահել այլ անձանց:

**Հարց 89. Վարչական ակտը ի՞նչ կարգով կարող է ճանաչվել առ ոչինչ:**

**Պատասխան.**

Վարչական մարմինը, որն ընդունել է առ ոչինչ վարչական ակտ, պարտավոր է իր նախաձեռնությամբ կամ արդարացված շահ ունեցող անձի դիմումի հիման վրա անհապաղ հաստատել այդ ակտի առ ոչինչ լինելը: Արդարացված շահ ունեցող անձի ներքո Օրենքի 62-րդ հոդվածի 4-րդ մասը նկատի ունի ցանկացած անձի, որը կարող է լինել նաև այն անձը, որը վարչական վարույթի մասնակից չէ, այդ թվում՝ նա, ում համար կարևոր է վարչական մարմնի իրավաչափության շրջանակներում գործելը:

Եթե առ ոչինչ ակտն ընդունած վարչական մարմինն իր նախաձեռնությամբ կամ շահագրգիռ անձի դիմումի հիման վրա չի հաստատում ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը, ապա շահագրգիռ անձը կարող է Օրենքի VI բաժնով սահմանված կարգով բողոք ներկայացնել ակտն ընդունած վարչական մարմին կամ նրա վերադաս վարչական մարմին կամ դատարան՝ այդ ակտն առ ոչինչ ճանաչելու պահանջով:

Բողոքը քննող մարմինը, պարզելով ակտի առ ոչինչ լինելու հանգամանքը, պարտավոր է որոշում ընդունել այն առ ոչինչ ճանաչելու մասին:

**Հարց 90. Առ ոչինչ վարչական ակտը չկատարելը իրավական հետևանքներ առաջացնու՞մ է:**

**Պատասխան.**

Ինչպես որ երևում է առ ոչինչ վարչական ակտի անվանումից, ընդունման պահից այն իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ



կատարման կամ կիրառման:

Ակտի հասցեատերը ոչ միայն իրավունք ունի, այլև չպետք է կատարի առ ոչինչ ակտը, և չկատարելը չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն դրա հասցեատիրոջ համար:

Առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն (օրինակ՝ պաշտոնատար անձը, որը ստորագրել է այդ ակտը և ջանքեր է գործադրում այն կիրառելու համար, որպես իր պարտականությունները թերի իմացող և օրենքը խախտող, կարող է կարգապահական տույժի ենթարկվել, ընդհուպ պաշտոնից ազատվելը):

### **Չարց 91. Ո՞ր դեպքերում է վարչական ակտը համարվում անվավեր:**

#### **Պատասխան.**

Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել, եթե այն՝

ա) ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ մեկնաբանման հետևանքով:

Օրինակ՝ վարչական մարմինը որևէ թույլտվության վերաբերյալ վարչական ակտ է ընդունել, սակայն հետագայում պարզվել է, որ այդ ակտը տալու համար օրենքով նախատեսված մեկ կամ մի քանի այլ փաստաթղթեր դիմողի կողմից ներկայացված չեն եղել: Այսպես՝ բանկային գործունեության արտոնագիր տալու համար «Բանկերի և բանկային գործունեության արտոնագիր տալու համար «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը սահմանում է երկու պայման: Նախ՝ դիմում ներկայացրած անձին պետք է տրվի արտոնագիր ստանալու նախնական հավանություն, այնուհետև՝ գրանցվի տվյալ բանկը կամ օտարերկրյա բանկի մասնաճյուղը, որից հետո միայն տրվի արտոնագիրը: Եթե նշված փուլերը չպահպանելով ՀՀ կենտրոնական բանկը միանգամից բանկային գործունեություն իրականացնելու արտոնագիր տա, ապա դա կդիտվի իբրև ոչ իրավաչափ վարչական ակտ:

բ) ընդունվել է կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

Օրինակ՝ անձը նպաստի իրավունք է ստացել կեղծ փաստաթղթեր ներկայացնելով ամուսնացած լինելու և անչափահաս

երեխաներ կամ ընտանիքի անաշխատունակ անդամներ ունենալու վերաբերյալ կամ ներկայացված օրինական փաստաթղթերի հիման վրա նրան պետք է նշանակվեր ոչ թե նպաստ, այլ կենսաթոշակ և այլն:

Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմքերը տարբերվում են ոչ իրավաչափ վարչական ակտի առ ոչինչ լինելու հիմքերից: Ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչումը նշանակում է, որ այդ ակտը գոյություն ունեցել և գործել է, սակայն կորցրել է իր իրավաբանական ուժը, մինչդեռ առ ոչինչ վարչական ակտի դեպքում մենք գործ ունենք իր ընդունման պահից իրավաբանորեն գոյություն չունեցած, սակայն գուցե փաստացի գործած ակտի հետ, որի առ ոչինչ լինելու փաստը կարող է միայն հաստատվել: Նման հաստատումը չի զրկում այդ ակտին իրավաբանական ուժից, ինչպես որ դա տեղի է ունենում ոչ իրավաչափ այլ ակտերի անվավեր ճանաչվելու դեպքերում, քանզի այդ ուժը երբևէ առկա էլ չի եղել: Այսինքն՝ եթե պարզվի, որ վարչական ակտն առ ոչինչ է, ապա դրա նկատմամբ կիրառվում են առ ոչինչ ակտի համար Օրենքով նախատեսված պահանջները: Մինչդեռ ոչ իրավաչափ այլ վարչական ակտի նկատմամբ կիրառվում են այլ կանոններ, և դրան հաջորդում են իրավական որոշակի հետևանքներ (տես՝ հաջորդ հարցի պատասխանները):

**Հարց 92. Ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը:**

**Պատասխան.**

Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավական հետևանքներին (Օրենքի 64-րդ հոդված) անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել այդ ակտի հասցեատիրոջ կողմից տվյալ ակտի նկատմամբ վստահության իրավունքի առկայությանը (Օրենքի 65-րդ հոդվածի 3-րդ մաս): Այսպես՝ ոչ իրավաչափ ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե տվյալ ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի: Վարչական ակտին վստահելու իրավունքի ներքո նկատի է առնվում այն իրողությունը, որ վարչական մարմինն ի պաշտո-

նե պարտավոր է գործել օրինականության սկզբունքով, հետևաբար՝ ընդունել միայն իրավաչափ վարչական ակտեր: Այսինքն՝ անձանց համար վարչական մարմինը այնպիսի հեղինակություն ունի, որ վերջինիս ցանկացած գործողություն, այդ թվում՝ վարչական ակտի ընդունումը, անձանց կողմից դիտարկվում է իբրև պետական հեղինակությամբ և պատասխանատվությամբ կատարված գործողություն, որին պետք է վստահությամբ վերաբերվել՝ դրա իրավաչափ լինելու տեսանկյունից, որովհետև պետական մարմինների անմիջական պարտականությունների մեջ է մտնում օրենքի շրջանակներում գործելը: Դա բխում է նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածից, որի երկրորդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Այս գիտակցումով յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ վարչական մարմնի ընդունած ակտերին վերաբերվում է իբրև իրավաչափ ակտերի՝ վստահ լինելով, որ վարչական մարմինը գործել է օրենքով, հետևաբար՝ նրա կողմից ընդունված վարչական ակտերն իրավաչափ են:

Սակայն, երբ պարզվում է, որ վարչական ակտը ոչ իրավաչափ է, ապա դրա հասցեատերը կարող է այդ ակտի նկատմամբ իր վստահության իրավունքով պահանջել, որ այն պահպանի իր ուժը:

Իսկ ո՞ր դեպքերում ոչ իրավաչափ վարչական ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու այդ ակտի գոյությանը (այսինքն՝ իրավաչափ գործելու հնարավորությանը):

Այն դեպքերում, երբ տվյալ վարչական ակտի հիման վրա ստացածը այդ ակտի հասցեատերն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, երբ ակտի հիման վրա ստացածի վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

Օրինակ՝ Հայրենական մեծ պատերազմի վետերանին տրանսպորտային ծախսերի փոխհատուցման դիմաց ամենամսյա 3000 դրամի փոխարեն տվել են 3500 դրամի օգնություն՝ վարչական մարմնի սխալի հետևանքով: Այս գումարները վետերանը տնօրինել է, օգտագործել է, հետևապես՝ նման դեպքերում ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել. վարչական վարույթը վերսկսելու և նոր ակտ ընդունելու միջոցով փոխհատուց-

ման չափ պետք է սահմանվի 3000 դրամը: Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում չէ, որ վստահության իրավունքը կիրառելի է: Ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությանը դրա հասցեատերը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելու միջոցով:

Օրինակ՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք չունեցող անձն այդ իրավունքը հաստատող վկայական է ստացել իրավասու պետական մարմնից՝ դրա համապատասխան պաշտոնատար անձին սպառնալու կամ նրան մոլորեցնելու կամ կաշառք տալու միջոցով:

բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով:

Օրինակ՝ անձը քաղաքացիական ծառայության խորհուրդ է ներկայացրել բարձրագույն կրթության մասին վկայական, մասնակցել է համապատասխան մրցույթին և նշանակվել համապատասխան պաշտոնի: Սակայն հետագայում պարզվել է, որ վկայականը կեղծ է: Այս պարագայում վարչական ակտն ընդունած վարչական մարմինը կամ դատարանը կարող են այդ ակտն անվավեր ճանաչել:

գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա:

Օրինակ՝ վարչական մարմնի պաշտոնատար անձի անհետևողական և անփույթ գործելակերպի հետևանքով վարչական ակտ է ընդունվել անուսինների միջև անուսնալուծության վերաբերյալ, մինչդեռ հետագայում պարզվել է, որ անուսնալուծության վերաբերյալ որոշում կայացնելու իրավունքը տվյալ դեպքում վերապահված է դատարանին, որի մասին նախապես տեղյակ են եղել անուսնալուծության համար դիմողները: Մեկ այլ օրինակ՝ վարչական մարմնի պաշտոնատար անձի անփույթ գործելակերպի հետևանքով վարորդական իրավունքի վկայական է տրամադրվել 17 տարեկան մի անձի, որը, սակայն, հանձնելով վարորդական իրավունքի վկայական ստանալու համար սահմանված քննությունները, պարտավոր էր իմանալ այդ վկայականը ստանալու իր իրավունքի բացակայության մասին:

Այս դեպքում վարորդական իրավունքի վկայական տալու վերա-

բերյալ որոշու՞մը պետք է անվավեր ճանաչվի կամ փոփոխվի այն հաշվով, որպեսզի այդ որոշման ուժի մեջ մտնելը պայմանավորվի հիշատակված անձի չափահաս դառնալու հանգամանքով:

**Հարց 93. Ի՞նչ ծավալով կարող է վարչական ակտը անվավեր ճանաչվել:**

**Պատասխան.**

Որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ, սակայն այս կանոնից շեղում թույլատրվում է այն դեպքում, երբ հնարավոր է վարչական ակտն անվավեր ճանաչել մի մասով, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի (Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մաս):

Օրինակ՝ վարչական ակտ է ընդունվել պարզ արտոնագիր տալու մասին, որը տրվում է անժամկետ, սակայն ակտում նշված է որոշակի ժամկետ, որի ընթացքում այն իբր պետք է գործի: Քանի որ գործողության ժամկետի վերաբերյալ դրույթը օրենքից չի բխում, ուրեմն վարչական մարմինն իրավասու է արտոնագիր տալու մասին ակտի այդ դրույթն անվավեր ճանաչել, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ արտոնագիրը կարող է լիարժեք գործել մնացած մասով:

Կամ՝ երբ անձին հողահատկացում է կատարվել և թույլատրվել է այդ հողատարածքում կառուցել բնակելի տուն և ավտոտնակ, սակայն հետագայում պարզվել է, որ ավտոտնակը կառուցելու նպատակով հատկացված հողամասի տակով անցնում են բարձր լարման հոսանքի մալուխներ, ինչի պատճառով այդ հատվածում շինարարություն կատարել չի թույլատրվում: Այս դեպքում վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել միայն ավտոտնակ կառուցելու թույլտվության մասով, քանի որ մյուս մասով այն կարող է գործել:

**Հարց 94. Ի՞նչ ժամկետում կարող է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչվել:**

**Պատասխան.**

Օրենքի 65-րդ հոդվածում խոսքը չբողոքարկված ոչ իրավաչափ

վարչական ակտն անվավեր ճանաչելու ժամկետի մասին է: Դրանից հետևում է, որ եթե վարչական ակտն օրենքով սահմանված ժամկետում բողոքարկվել է, ապա դրա վերաբերյալ գործում են Օրենքի բողոքարկման վարույթին վերաբերող՝ այդ թվում՝ բողոքարկելու ժամկետի մասով դրույթները: Նկատի ունենալով, որ ոչ իրավաչափ լինելու հանգամանքով, այնուամենայնիվ, վարչական ակտի հասցեատերը կարող է բողոքարկել այն՝ օրենքի վատ իմացության կամ ոչ իրավաչափ ակտն իր համար բարենպաստ լինելու կամ որևէ այլ պատճառով, Օրենքի 65-րդ հոդվածը վարչական մարմնին հնարավորություն է տվել սեփական նախաձեռնությամբ ուղղել սխալը և անվավեր ճանաչել իր կողմից ընդունված ոչ իրավաչափ վարչական ակտը:

Ըստ այդմ, ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել 6 ամսվա ընթացքում՝ այն օրվանից, երբ իրավասու վարչական մարմնին իմացել է այն փաստերի մասին, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ:

Օրինակ՝ վարչական ակտն ընդունելուց որոշ ժամանակ, ենթադրենք՝ 3 ամիս անց, ակտն ընդունած վարչական մարմինը բացահայտել է, որ առկա է Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմք՝ այն անվավեր ճանաչելու համար: Այդ պահից էլ սկսվում է 6 ամսվա ժամկետի հաշվարկը, որի ընթացքում վարչական մարմինը կարող է այդ ակտն անվավեր ճանաչել:

Վեցամսյա ժամկետը նախատեսվել է նրա համար, որ վարչական մարմինը լիարժեք կերպով հնարավորություն ունենա ստուգելու իր իսկ ընդունած վարչական ակտի իրավաչափության հարցը, մանավանդ այն դեպքում, երբ հարցը կարող է վերաբերել այնպիսի ակտի անվավեր ճանաչմանը, որի գոյության նկատմամբ ակտի հասցեատերը վստահության իրավունք ունի:

Դրա հետ մեկտեղ վարչական մարմնին չի կարող անսահմանափակ ժամկետ տրամադրվել չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտն իր նախաձեռնությամբ անվավեր ճանաչելու համար:

Հաշվի առնելով դա, ինչպես նաև այն հանգամանքը, որ այս պարագայում պետք է գործի վստահության իրավունքը, Օրենքը միաժամանակ սահմանել է, որ չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտն այլևս անվիճարկելի է, և վարչական մարմինը զրկվում է այն անվավեր ճանաչելու իրավունքից, եթե ակտի ընդունման օրվանից անցել է 10 տարի:

Այս պարագայում ևս Օրենքը որոշակի տեղ է թողել՝ սահմանելով, որ առանձին օրենքով կարող է նախատեսվել այլ կարգ, քան 10 տարվա ժամկետով սահմանափակումն է:

Օրենքի 65-րդ հոդվածով նախատեսված դեպքերում վարչական ակտն անվավեր կարող է ճանաչվել ինչպես այդ ակտն ընդունած վարչական մարմնի, այնպես էլ դրա վերադաս վարչական մարմնի կողմից:

### **Յարգ 95. Ինչո՞վ է տարբերվում վարչական ակտերի անվիճարկելիությունը դատական ակտերի օրինական ուժից:**

#### **Պատասխան.**

Դատական ակտի առնչությամբ տարբերում են ձևական և նյութական իրավաբանական ուժ: Ձևական իրավաբանական ուժը նշանակում է, որ դատական ակտն այլևս չի կարող բողոքարկվել: Նյութական իրավաբանական ուժը նշանակում է, որ տվյալ կողմերի միջև առկա կոնկրետ վեճը դատարանի կողմից ըստ էության վերջնական լուծում է ստացել:

Ինչպես և ձևական իրավաբանական ուժը, վարչական ակտի անվիճարկելիությունն ըստ Օրենքի, նշանակում է, որ վարչական ակտն այլևս չի կարող վիճարկվել համապատասխան ժամկետը լրանալու պատճառով: Սակայն վարչական ակտի անվիճարկելիությունն այնքան խիստ և ուժեղ չէ, ինչպես դատական ակտի օրինական ուժը, քանի որ որոշ իրավական նախադրյալների առկայության դեպքում կարող են վերացվել ինչպես ոչ իրավաչափ միջամտող և բարենպաստ վարչական ակտերը, այնպես էլ նույնիսկ իրավաչափ միջամտող և բարենպաստ վարչական ակտերը: Վարչական ակտի անվիճարկելիության այս սահմանափակումները կարգավորված են Օրենքի 63-66 հոդվածներում:

### **Յարգ 96. Օրենքի պահանջներին համապատասխան ընդունված վարչական ակտը (իրավաչափ ակտը) ի՞նչ հիմքերով կարող է ուժը կորցնել:**

#### **Պատասխան.**

Որպես կանոն, օրենքի պահանջներին համապատասխան ընդունված վարչական ակտերը (իրավաչափ վարչական ակտեր),

որոնք տրված են որոշակի ժամկետով, ուժը կորցնում են այդ ժամկետը լրանալու պահին, իսկ եթե դրանք անժամկետ են, ապա դրանց ուժը կորցնելը կարող է կախված լինել որևէ պայմանից: Սակայն Օրենքը սահմանում է նաև վարչական ակտի ուժը կորցնելու այլ հիմքեր և դրանց տարբերակման հիմքում դնում միջամտող կամ բարենպաստ լինելու հանգամանքը:

Այսպես՝ միջամտող իրավաչափ վարչական ակտը ուժը կարող է կորցնել ցանկացած պարագայում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է նորից ընդունվի միևնույն բովանդակությամբ նոր վարչական ակտ, կամ եթե ակտի ուժը կորցրած ճանաչելն արգելվում է օրենքով:

Օրինակ՝ վարչական ակտ է ընդունվել արտոնագրի գործողության կասեցման մասին: Իրավասու մարմինը, որը համապատասխան ակտ է ընդունել, կարող է իր այդ ակտն ուժը կորցրած ճանաչել, ասենք, նպատակահարմար չգտնելով դրա կիրառումը տվյալ կազմակերպության նկատմամբ:

Իսկ եթե նույն մարմինը արտոնագրի գործողության կասեցման ակտ է ընդունել, բայց այն հիմնավորող օրենսդրական պահանջները ճշգրտման կարիք ունեն, ապա նա կարող է ուժը կորցրած ճանաչել այդ ակտը և նոր ակտով համապատասխան ճշգրտումներ կատարել:

Բարենպաստ իրավաչափ ակտը բոլոր դեպքերում չէ, որ կարող է ուժը կորցնել: Օրենքի 66-րդ հոդվածը սահմանել է հետևյալ դեպքերը՝

ա) օրենքի փոփոխության պատճառով վերանում է տվյալ վարչական ակտի անհրաժեշտությունը, կամ դադարում է այդ ակտի գործողությունը:

Օրինակ՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն է կատարվում լիցենզավորվող որևէ տեսակի գործունեություն իրականացնելու համար այլևս արտոնագիր չպահանջվելու մասին: Դրան համապատասխան տվյալ տեսակի գործունեության համար նախկինում տրված բոլոր արտոնագրերն ըստ էության դադարում են գործել:

բ) ուժը կորցրած ճանաչելը թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ:

Օրինակ՝ «Ավիացիայի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի հա-



մածայն, եթե թռիչքային պիտանիության ստուգումների արդյունքում կամ այլ պատճառներով ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությունը գտնում է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված օդանավը թռիչքների համար պիտանի չէ, ապա նա դադարեցնում է օդանավի թռիչքային պիտանիության հավաստագիրը կամ կասեցնում է դրա գործողությունը, մինչև օդանավը կրկին կճանաչվի թռիչքների համար պիտանի: Նման դեպքերում թռիչքային պիտանիության հավաստագիրը պետք է վերադարձվի ՀՀ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչությանը:

Բարենպաստ իրավաչափ վարչական ակտի գործողության դադարեցման բնորոշ օրինակներից է ակտում առկա որևէ պայման, որը չկատարելու պարագայում այդ ակտը ուժը կորցնում է: Օրինակ՝ ՀՀ ջրային օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն, ժամկետային ջրօգտագործման թույլտվության մեջ նշվում է, որ ջրօգտագործողը կարող է դադարեցնել օգտագործման իր իրավունքը մինչև նախատեսված ժամկետը, ասենք՝ 25 տարին լրանալը, եթե մինչև այդ ժամկետի վրա հասնելը թույլտվություն ստացողը ջրօգտագործման վաղաժամկետ դադարեցման մասին գրավոր տեղեկացնի իրավասու պետական մարմնին:

զ) վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարել այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ կերպով չի կատարել:

Օրինակ՝ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն, եթե լիազոր մարմինը օրենքով սահմանված կարգով կասեցրել է արտոնագրի գործողությունը, ապա այդ փաստաթղթի տերը պարտավոր է կատարել այն պահանջները, որոնք կասեցման ժամկետում նրան կներկայացնի լիազոր մարմինը: Սակայն, եթե կասեցման ժամկետում տվյալ անձը կասեցման պահանջները խախտի, մասնավորապես՝ իրականացնի կասեցված գործունեություն կամ այդ գործունեության առանձին գործառույթ, կամ արտոնագրով վերապահված առանձին գործողություն, ապա լիազոր մարմնի պահանջով և դատական կարգով կարող է ուժը կորցնել տվյալ անձին տրված արտոնագիրը:

դ) ակտի ընդունումից հետո՝ փաստական հանգամանքների փոփոխության հետևանքով, վարչական մարմնին իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, և եթե վարչական ակտը

ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը:

Օրինակ՝ «Փախստականների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «գ» կետի համաձայն, փախստականի կարգավիճակը կորցնելու հիմքերից մեկն էլ այն է, երբ փախստականը ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Քանի որ այդ դեպքում փոխվում է այն փաստական հանգամանքը, որը հիմք է հանդիսացել նրան փախստական ճանաչելու համար, այդ իսկ պատճառով ուժը կորցնում է նրա փախստականի կարգավիճակը հաստատող փաստաթուղթը: Այս պարագայում գերակայող հանրային շահը ՀՀ քաղաքացիություն ստացած անձի, օրինակ՝ ընտրական իրավունքի իրականացումն է, որից նա լիարժեք չի օգտվի, եթե պահպանի փախստականի կարգավիճակը:

ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու պարագայում (փաստական հանգամանքի փոփոխություն) անձը կորցնում է նաև Հայաստանի Հանրապետությունում քաղաքական ապաստանի իրավունքը (տես՝ «Քաղաքական ապաստանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը):

Իսկ ո՞ր դեպքում կարող է բարենպաստ իրավաչափ վարչական ակտը ուժը կորցրած ճանաչվել՝ գերակայող հանրային շահը չխախտելու հիմքով: Դրա համար օրինակ կարող է ծառայել հետևյալը: Տնտեսվարող սուբյեկտին թույլատրվել է իր գործունեության արդյունքում կատարել վնասակար արտանետումների որոշակի քանակ, սակայն հետագայում՝ օդի աղտոտվածության աստիճանից ելնելով, երբ նման արտանետումները շարունակելը կարող է ուղղակիորեն վնասել մարդկանց կյանքին և առողջությանը, այսինքն՝ առկա է գերակայող շահ, ապա այս դեպքում կարող է ուժը կորցրած ճանաչվել համապատասխան վարչական ակտը:

ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել դրանով տրամադրված օգուտներից կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը:

Ենթադրենք վարչական ակտ է ընդունվել անձին 2 տարուց հետո ատոմակայան կառուցելու թույլտվություն տալու վերաբերյալ:

Սակայն մինչև այդ ատոմակայանի կառուցմանն ուղղված որևէ գործողություն կատարումը օրենքում փոփոխություն է կատարվել, որով վերացվել են անձին ատոմակայան կառուցելու թույլտվություն տալու հիմքերը: Ահա այս դեպքում համապատասխան վարչական ակտը կարող է ուժը կորցրած ճանաչվել այն ընդունած վարչական մարմնի կողմից, նկատի ունենալով հանգամանքը, որ դրա՝ ուժի մեջ մնալը կվնասի հանրության գերակա շահերին, անվտագության նկատառումներով:

գ) անհրաժեշտ է վերացնել այլ անձանց կյանքի, առողջության կամ սեփականության, ինչպես նաև պետության անվտանգության կամ առանձնապես կարևոր հանրային շահերի պաշտպանության համար ծանր հետևանքները կամ խուսափել դրանց առաջացումից:

Օրինակ՝ պետական անվտանգությանը սպառնացող վտանգի առնչությամբ ուժը կորցրած է ճանաչվում սահմանային հատվածում արտադրական շինություն կառուցելու վերաբերյալ տրված վարչական ակտը:

Մեկ այլ օրինակ: Խոնականների կողմից կատարված և իրավասու մարմին ներկայացրած ուսումնասիրություններից հետևում է, որ տվյալ տարածքի բնահողի երկրաբանական կառուցվածքի պատճառով սողանքի վտանգ կա, և դրա առաջացման դեպքում այն կվնասի հարակից տարածքը: Նկատի ունենալով այդ հանգամանքը, իրավասու վարչական մարմինը (մարմինները) ուժը կորցրած է (են) ճանաչում այն վարչական ակտերը, որոնց հիման վրա վտանգի ենթակա տարածքում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հողահատկացումներ են կատարվել, և տրվել է (են) բնակարան կառուցելու թույլտվություն(ներ):

Նկատենք, որ վերոհիշյալ բոլոր դեպքերում բարենպաստ վարչական ակտերը ոչ թե պետք է ուժը կորցնեն պարտադիր կարգով, այլ ըստ այդ ակտերն ընդունած վարչական մարմինների հայեցողության:

Միաժամանակ, եթե համապատասխան հիմքերից որևէ մեկն առկա է, և տվյալ վարչական մարմինը կասկած չունի, որ այդ հիմքով բարենպաստ իրավաչափ վարչական ակտը ուժը չկորցնելու դեպքում վրա կհասնեն ինչպես իրավական, այնպես էլ գույքային ոչ նպաստավոր հետևանքներ անձանց կամ պետության, կամ համայնքի համար, ապա նա պարտավոր է որոշում ընդունել իր տրա-

մադրած բարենպաստ իրավաչափ վարչական ակտն ուժը կորցրած ճանաչելու մասին:

**Յարդ 97. Ո՞ր մարմինն է իրավասու իր նախաձեռնությամբ վերանայել վարչական ակտը և ի՞նչ կարգով:**

**Պատասխան.**

Բողոքի բացակայության դեպքում վարչական ակտը կարող է վերանայել այդ ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը, եթե վերջինիս իրականացրած վերահսկողության արդյունքում բացահայտվել է, որ ընդունված վարչական ակտը ոչ իրավաչափ է (Օրենքի 67-րդ հոդված):

Իր նախաձեռնությամբ ստուգումներ անցկացնելով և պարզելով ենթակա վարչական մարմնի ընդունած վարչական ակտի ոչ իրավաչափ լինելը՝ վերադաս վարչական մարմինը կարող է դրա վերաբերյալ ընդունել Օրենքի 76-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը:

Անհրաժեշտ է նկատել, որ խոսքն այն դեպքերի մասին է, երբ վարչական մարմինն ունի վերադաս վարչական մարմին: Սակայն կան նաև վարչական մարմիններ, որոնք վերադաս չունեն: Օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինները: Ինչպես վարվել այն դեպքերում, երբ տեղական ինքնակառավարման մարմիններն են ընդունում ոչ իրավաչափ վարչական ակտեր: Այդ հարցերը փորձ է արվում լուծել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով, համաձայն որի.

Եթե օրենսդրությանը հակասող որոշում է ընդունել համայնքի ավագանին, ապա համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը) դիմում է համայնքի ղեկավարին՝ այդ հարցով եռօրյա ժամկետում հրավիրել ավագանու արտահերթ նիստ:

Եթե մարզպետի (Երևանի քաղաքապետի) պահանջով հրավիրվող ավագանու նիստում որոշումը չի փոխվում կամ ավագանու նիստը չի կայանում, ապա մարզպետն իրավունք ունի ավագանու՝ օրենսդրությանը հակասող որոշումը բողոքարկել դատական կարգով: Իսկ եթե համայնքի ղեկավարի որոշումներն են հակասում օրենսդրությանը, ապա համապատասխան մարզպետը (Երևանի քաղաքապետը) դրանք փոխելու նպատակով իրավունք ունի դիմելու տվյալ համայնքի ղեկավարին: Ընդ որում՝ դիմելու պահից

մարզպետը (Երևանի քաղաքապետը) իրավունք ունի մինչև 14 օր ժամկետով կասեցնել համայնքի ղեկավարի այն որոշման գործողությունը, որն ինքը համարում է օրենսդրությանը հակասող: Նման կասեցումը հնարավոր է, եթե համայնքի ղեկավարի տվյալ որոշումը դեռևս չի կատարվել, և հնարավոր է այդ որոշման կատարման հետաձգումը:

Եթե մարզպետի (Երևանի քաղաքապետի) դիմումը ստանալու օրվանից եռօրյա ժամկետում համայնքի ղեկավարն իր որոշումը չի համապատասխանեցնում օրենսդրության կամ համայնքի ավագանու որոշումների պահանջներին, կամ որոշում չի ընդունում մարզպետի (Երևանի քաղաքապետի) դիմումը չընդունելու մասին, ապա մարզպետը (Երևանի քաղաքապետը) կարող է համայնքի ղեկավարի տվյալ որոշումն անվավեր ճանաչելու հայց ներկայացնել դատարան:

Այսպիսով՝ ինչպես դժվար չէ նկատել, համայնքի ավագանու կամ ղեկավարի ոչ իրավաչափ ակտերը, այդ թվում՝ վարչական, կարող են բողոքարկվել դատարանում՝ համապատասխան մարզպետի (Երևանի քաղաքապետի) կողմից: Վերադաս չունեցող այլ վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերն անվավեր ճանաչելու հարց, ըստ էության, կարող են բարձրացնել այդ ակտերի հասցեատերերը՝ նույնպես դատական կարգով:

### **Ֆարց 98 Ո՞ր դեպքերում են վերադարձվում վարչական վարույթին առնչվող փաստաթղթերը և իրերը, և ո՞ւմ:**

#### **Պատասխան.**

Փաստաթղթերը և իրերը դրանք տիրապետող անձանց կողմից ենթակա են վերադարձման այն դեպքում, երբ տրամադրվել են անվավեր կամ ուժը կորցրած ճանաչված վարչական ակտի հիման վրա (Օրենքի 68-րդ հոդված): Վարչական ակտի հիման վրա տրված փաստաթղթերի շարքում առաջին հերթին պետք է նշել բուն վարչական ակտը, ինչպես նաև դրան առնչվող բոլոր փաստաթղթերը (վարչական ակտի բաղկացուցիչ մասը կազմող լրացուցիչ փաստաթղթերը), այդ թվում՝ ակտում կատարված փոփոխությունների վերաբերյալ փաստաթղթերը, ակտի հիման վրա ստացածի (օրինակ՝ նպաստի, օգնության և այլն) վերաբերյալ վճարային փաստաթղթերը, դրանց կրկնօրինակները և այլն: Իրերի շարքում պետք

է նշել, օրինակ, վարչական ակտի հիման վրա տրված կնիքը, դրոշմակնիքը և այլն: Թեև Օրենքը հստակ չի նշել, թե փաստաթղթերն ու իրերը ում պետք է վերադարձնել, այնուամենայնիվ, 68-րդ հոդվածի իմաստից հետևում է, որ դրանք տիրապետող անձանց կողմից պետք է վերադարձվեն այն վարչական մարմիններին, որոնք տվել են համապատասխան փաստաթղթերը կամ իրերը:

Եթե փաստաթղթերը չեն վերադարձվում դրանք տիրապետող անձանց կողմից, ապա վարչական ակտն ընդունած վարչական մարմինն իրավունք ունի պաշտոնական հրապարակման միջոցով (թերթով, ռադիոյով, հեռուստատեսությամբ և այլն) հայտարարելու, որ տվյալ վարչական ակտն այլևս չի գործում:

Նման հայտարարությունից հետո ակնհայտ է, որ անվավեր կամ ուժը կորցրած վարչական ակտը տիրապետող անձը, եթե փորձի կիրառել այն, ապա կարող է ենթարկվել օրենքով նախատեսված պատասխանատվության: Օրինակ՝ եթե անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվել անհատ ձեռնարկատիրոջ վկայականը, բայց այդ ակտի հիման վրա գործունեություն է իրականացնում, ապա նա կենթարկվի վարչական կամ քրեական պատասխանատվության՝ անօրինական ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

Օրենքը հնարավորություն է տվել, որ փաստաթղթերը տիրապետող կամ դրանք վերադարձնող անձի ցանկության պարագայում վարչական մարմինը նրան տա վերադարձված փաստաթղթերի պատճենները:

Թե ինչ դրդումներով կարող է անձը ցանկություն հայտնել իր կողմից վերադարձված փաստաթղթերի պատճեններն ունենալու վերաբերյալ, Օրենքը չի նշել, հետևաբար՝ դա կապված է անձի հայեցողությունից:

Օրենքը չի նշել նաև, թե անձն իր նման ցանկությունն ինչ ձևով պետք է արտահայտի: Կարծում ենք, որ նման դեպքերում բավարար պետք է համարել ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ձևով հայտնված ցանկությունը: Բոլոր դեպքերում, եթե բանավոր ցանկությանը վարչական մարմինը չի արձագանքում, ապա գրավոր ներկայացված նման խնդրանքը վարչական մարմինը պարտավոր է կատարել:

Վերադարձված փաստաթղթերի պատճենները տալով, վարչական մարմինը միաժամանակ պարտավոր է համապատասխան

նշում կատարել դրանց վրա՝ նշելով, որ տվյալ փաստաթուղթն անվավեր կամ ուժը կորցրած է ճանաչվել, ինչպես նաև իր կնիքով հաստատել դա:

#### **ԲԱԺԻՆ IV. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ**

**Հարց 99. Ո՞վ իրավունք ունի բողոքարկել վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները կամ անգործությունը<sup>8</sup>:**

##### **Պատասխան.**

Բողոքարկման վարույթն ըստ Օրենքի, ճիշտ այնպես, ինչպես և դատարան հայց ներկայացնելը, ծառայում է վարչական մարմնի գործունեության հետևանքով վնաս կրած անձանց իրավունքների պաշտպանությանը: Դրա համար առնվազն պետք է, որ առկա լինի բողոք բերողի իրավունքների խախտում, կամ, դիմողի կարծիքով, դա այդպես լինի: Այդ հնարավորությունն առկա է այն դեպքում, երբ նա պնդում է, որ խախտվել են Սահմանադրության կամ օրենքի այն դրույթները, որոնք իրենք պետք է պաշտպանեն: Դա այդպես է բուլոր այն դեպքերում, երբ բողոք բերողն իր դեմ ուղղված միջամտող վարչական ակտի հասցեատերն է:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանվածության աստիճանը ցանկացած պետության իրավական և ժողովրդավարական լինելու յուրօրինակ չափորոշիչ է: Սահմանադրորեն ամրագրված՝ մարդու իրավունքների շարքում առանձնահատուկ տեղ է գրավում խախտված իրավունքների պաշտպանության իրավունքը, քանզի վերջինիս առկայությունից են կախված մյուս իրավունքների իրական լինելն ու դրանց իրականացման հնարավորությունը:

Մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է ստացել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքներն ու ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Օրենքով չարգելված եղա-

<sup>8</sup> Վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը և անգործությունը Օրենքը միավորել է «ակտ» անվանման ներքո, ուստի և բողոքարկման վարույթին վերաբերող այս բաժնում մեր կողմից «ակտ» բառը գործածվում է նույնպես հենց այդ իմաստով:

նակների տարրապատկերը բավականին ընդարձակ է և ընդգրկում է ինքնապաշտպանությունից մինչև դատարան և միջազգային տարբեր աստիճաններ դիմելը:

Իրավունքների ու ազատությունների պաշտպանության հնարավոր ձևերի ու եղանակների մեջ մեզանում դեռևս առավել կիրառվող է մնում խախտված իրավունքների պաշտպանությունը վարչական կարգով:

Օրենքի 69-րդ հոդվածը սահմանում է մարդու իրավունքների պաշտպանության եղանակներից մեկը՝ վարչական ակտերը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելը:

Վարչական մարմին ներկայացված բողոքն, ըստ էության, մի փաստաթուղթ է, որում առկա է վարչական մարմնին ուղղված պահանջ՝ վարչական ակտի ընդունման միջոցով վերացնելու անձի սուբյեկտիվ իրավունքի խախտումները:

Մինչև Օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունում պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպություններին առաջարկություններ, դիմումներ և բողոքներ ներկայացնելու ու դրանք քննարկելու հետ կապված հարաբերությունները կարգավորված էին 1999 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունված «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքով:

Այդ օրենքը կարգավորում է նաև քաղաքացիների՝ վարչական մարմիններ ներկայացրած առաջարկությունների (որպես իրավունքի խախտման հետ չկապված հանրագրերի) հետ կապված հարաբերությունները: Օրենքի 113-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22 դեկտեմբերի 1999 թվականի, ՀՕ-24) գործում է միայն քաղաքացիների առաջարկությունների մասով:

Վարչական բողոքի հիմքում պետք է դրված լինի անձի՝ Սահմանադրությամբ, օրենքներով, նորմատիվ այլ ակտերով կամ վարչական ակտերով սահմանված իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի խախտման փաստը (ինչը ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի պահանջն է), սակայն դա դեռևս չի ենթադրում, որ եթե բողոք է ներկայացվել, ապա առկա է իրավունքների խախ-



տում: Խախտման փաստը հաստատվում կամ հերքվում է միայն Օրենքով սահմանված կարգով բողոքը քննարկելու արդյունքում:

Պետք է ուշադրություն հրավիրել այն հանգամանքին, որ վարչական բողոք բերելու իրավունք ունի միայն այն անձը, որի իրավունքները խախտվել են: Դրանով, ըստ էության, բացառվում է վարչական կարգով այլ անձանց իրավունքների պաշտպանության հարցով վարչական մարմին բողոք բերելու հնարավորությունը: Սակայն այլոց իրավունքները պաշտպանելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձինք և կազմակերպությունները այս պարագայում ևս չեն զրկվում համապատասխան հայցով դատարան դիմելու իրավունքից, մասնավորապես՝ դա վերաբերում է մարդու իրավունքների պաշտպանին՝ համանուն օրենքին համապատասխան:

### **Յարգ 100. Ո՞ր մարմիններին կարող է ներկայացվել բողոքը:**

#### **Պատասխան.**

Օրենքի IV բաժնում իր կարգավորումն է ստացել նաև վարչական բողոք բերելու կարգը:

Վարչական բողոք բերելու հետ կապված հարաբերություններում կարևորվում է հարցը, թե արդյո՞ք վարչական բողոք բերելը նախապայման է համապատասխան ակտի դատական կարգով բողոքարկման համար, թե՞ ոչ:

Օրենսդրության և ՀՀ սահմանադրական դատարանի պրակտիկայի վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետությունում բողոքարկման վարչական կամ դատական կարգի ընտրությունը անձի իրավունքն է, իսկ վարչական բողոք բերելը նախապայման չէ տվյալ հարցով դատարան դիմելու համար: Սակայն, հաշվի առնելով վարչական բողոքները քննելու և լուծելու արտասահմանյան երկրների փորձը, կարող ենք ասել, որ պատշաճ կարգավորման պայմաններում վարչական բողոքը լիովին կարող է մրցակցել դատական կարգով ներկայացվող հայցի (դիմումի) հետ: Այս հանգամանքը թերևս պայմանավորված է դատական պաշտպանության ընթացակարգերի բարդության և ժամանակատարության հետ, ինչը, մի կողմից կարելի է դիտարկել որպես առավելություն, քանի որ այն հնարավորություն է տալիս օգտագործելու դատավարական բոլոր երաշխիքները, մյուս կողմից՝ դիմողից պահանջում է գործադրել ավելի մեծ ջանքեր, և նրա համար

առաջացնում է ավելի մեծ ծախքեր՝ վարչական կարգով բողոքի քննարկման ընթացակարգի համեմատ: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ վարչական բողոքն իր հերթին ունի որոշակի առանձնահատկություններ դատական կարգով բողոքարկման եղանակի համեմատ, որոնք էլ հիմք ընդունելով, մի շարք մասնագետներ կարևորում են դատարան դիմելու համար վարչական կարգով բողոքարկման հնարավորությունների սպառված լինելու փաստը: Մասնավորապես, այդ նախապայմանի անհրաժեշտությունը հիմնավորվում է դատարաններն ավելորդ ծանրաբեռնումից զերծ պահելու հանգամանքով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական ակտերը կոչված են ապահովելու նաև վարչարարության արդյունավետությունը՝ մեծ կարևորություն է ստանում բողոքների քննության օպերատիվությունը: Վարչական ակտերի, վարչական մարմինների գործողությունների կամ անգործության դեմ բերված բողոքները, ի տարբերություն դատարաններում գործերի քննության, քննարկվում են ավելի արագ, քանզի այստեղ չկան խիստ ձևականացված ընթացակարգային պահանջներ, և երկրորդ՝ ի տարբերություն դատարանների, վարչական մարմինները բողոքը քննարկելիս իրավունք ունեն ստուգելու ոչ միայն բողոքարկվող ակտի իրավաչափությունը, այլև այն ընդունելու նպատակահարմարությունը: Դատարաններում նպատակահարմարության տեսանկյունից վիճարկվող ակտը քննարկելու իրավասության բացակայությունը ուղղակիորեն բխում է իշխանությունների տարանջատման՝ սահմանադրորեն անրագրված սկզբունքից, որն արգելում է մեկ իշխանության միջամտությունը մյուսների գործառույթներին:

Վարչական կարգով բողոքարկման ընթացակարգերի կատարելագործումն ու արդյունավետության բարձրացումը, իհարկե, բնավ էլ չի կարող փոխարինել խախտված իրավունքների դատական պաշտպանությանը: Ինչպես նշվեց, խախտված իրավունքների վերականգման հարցում անձն ունի պաշտպանության վարչական և դատական եղանակների միջև ընտրություն կատարելու իրավունք: Բացի դրանից, Օրենքով սահմանված կարգը չի սահմանափակում վարչական բողոքի քննարկման արդյունքում ընդունված վարչական ակտը կամ վարչական մարմինների ձեռնարկած գործողությունները կամ անգործությունը ևս դատարանում վիճարկելու՝ անձի իրավունքը:

Օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝ բողոքը կարող է ներկայացվել ինչպես ակտն ընդունած վարչական մարմին, այնպես էլ վերջինիս համար վերադաս հանդիսացող վարչական մարմին:

Ակտն ընդունած մարմին վարչական բողոք ներկայացնելու՝ Օրենքով սահմանված հնարավորությունը, կարծում ենք, գործնականում լայնորեն չի օգտագործվի, այլ կգործադրվի հիմնականում այն դեպքերում, երբ բողոքարկվող ակտում առկա լինեն ակնհայտ սխալներ:

Սակայն գործնականում քիչ չեն դեպքերը, երբ վիճարկվող ակտի ոչ իրավաչափությունը թյուրիմացության կամ բացթողման արդյունք է լինում, ինչը շատ արագ՝ նույնիսկ ավելի արագ, քան վերադաս վարչական մարմինը, կարող է շտկել ինքը՝ ակտն ընդունած վարչական մարմինը, քանզի արդեն իսկ ծանոթ է գործի փաստական հանգամանքներին: Միայն դրանց ծանոթանալու համար վերադաս վարչական մարմնից կամ դատարանից ժամանակ է պահանջվելու: Այս պարագայում ևս, ինչպես ակտը դատական կամ վարչական կարգով բողոքարկման կարգերի միջև ընտրություն կատարելիս, բողոք բերողն իրավունք ունի ընտրելու այն վարչական մարմինը, որն իր կարծիքով առավել արդյունավետ կքննարկի իր բողոքը:

Մյուս վարչական մարմինը, ուր անձը կարող է վարչական բողոք ներկայացնել, ինչպես արդեն նշվեց, ակտն ընդունած մարմնի վերադաս վարչական մարմինն է: Վերադաս վարչական մարմին հասկացության պարզաբանմանն անդրադառնալիս պետք է ուշադրություն հրավիրել վարչական մարմինների համակարգի կառուցվածքին:

Այդ կառուցվածքը կարող է սահմանված լինել ինչպես տվյալ վարչական մարմինների գործունեությունը կարգավորող օրենքով, այնպես էլ ՀՀ Նախագահի՝ կառավարության կառուցվածքն ու գործունեության կազմակերպման կարգը սահմանող հրամանագրով կամ էլ համապատասխան վարչական մարմնի կանոնադրությամբ:

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ վարչական մարմինների համակարգը կազմող մարմինների մի ստվար խումբ պարզապես չունեն վերադաս մարմիններ: Դրանք և՛ կարգավորող հանձնաժողովներն են (Հանրային ռադիոյի և հեռուստատեսության, Տնտեսական մրցակցության և այլն), և տեղական ինքնակառավարման մարմինները և՛, վերջապես ՀՀ կառավարությունը: Ուստի այս մարմինների ակտերի բողոքարկման դեպքում մնում է

երկու հնարավորություն՝ բողոքը ներկայացնել կամ ակտն ընդունած մարմին, կամ դատարան:

Ցանկացած պարագայում այն մարմինը, որտեղ ներկայացվում է բողոքը, Օրենքում սահմանված օրինականության սկզբունքի համաձայն, պետք է իրավասու լինի լուծել այդ հարցը, հակառակ դեպքում բողոքը պետք է վերահասցեագրի իրավասու մարմնին, կամ այն պետք է վերադարձվի:

Օրենքը վարչական ակտին ներկայացվող պահանջների շարքում (հոդված 55, մաս 4-րդ, կետ «ը») սահմանում է, որ վարչական ակտում պետք է նշված լինեն ակտի բողոքարկման ժամկետը և այն մարմինը, ներառյալ դատարանը, որտեղ կարող է այդ ակտը բողոքարկվել: Ուստի գրավոր վարչական ակտի պարագայում բողոք բերողից լրացուցիչ ջանքեր չեն պահանջվի՝ պարզելու համար, թե ով է վարչական մարմնի վերադաս մարմինը:

### **Հարց 101. Տարածվում է արդյոք Օրենքը վարչական ակտը դատական կարգով վիճարկելու վրա:**

#### **Պատասխան.**

Հարցի պատասխանը շարադրված է Օրենքի 1-ին հոդվածում, համաձայն որի՝ Օրենքը կարգավորում է վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած համապատասխան հարաբերությունները: Բնականաբար, դատարաններն Օրենքի իմաստով վարչական մարմիններ չեն, հետևաբար՝ Օրենքը չի կարգավորում վարչական ակտը դատական կարգով վիճարկելու հետ կապված հարաբերությունները: Իսկ Օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասն ուղղակիորեն սահմանում է, որ Օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա:

Վարչական ակտը դատական կարգով վիճարկելու հետ կապված հարաբերությունները Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում են Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով:

## **Հարց 102. Հնարավո՞ր է արդյոք ակտը բողոքարկել վարչական և դատական կարգով միաժամանակ:**

### **Պատասխան.**

Օրենքի 70-րդ հոդվածի համաձայն՝ ակտը չի կարող միաժամանակ բողոքարկվել ինչպես դատական, այնպես էլ վարչական կարգով:

Նման սահմանափակումը միտված է նախևառաջ վարչական մարմիններին այնպիսի գործերի քննարկումից զերծ պահելուն, որոնց արդյունքում ընդունված ակտերը չեն կարող ինքնուրույն իրավաբանական ուժ ունենալ և կախված են այլ պետական մարմնի, տվյալ դեպքում՝ դատարանի որոշումից: Իսկ այն դեպքերը, երբ միևնույն ակտը գրեթե միաժամանակ բողոքարկվում է ինչպես վարչական, այնպես էլ դատական կարգով, մեր իրավակիրառական պրակտիկայում հազվադեպ երևույթ չեն: Դրանք ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ միևնույն անձը միաժամանակ նույնաբովանդակ բողոք է ներկայացնում ինչպես դատարան, այնպես էլ վերադաս վարչական մարմին, ինչպես նաև այն ժամանակ, երբ վարույթին մասնակից դարձած կամ չդարձած տարբեր անձինք, շատ դեպքերում միմյանցից անկախ, նույն առարկայի վերաբերյալ դիմումներ են ներկայացնում. մեկի կողմից՝ դատարան, իսկ մյուսի կողմից՝ վերադաս վարչական մարմին: Նման իրավիճակներից հնարավոր էր խուսափել, եթե սահմանված լիներ դատարան դիմելու համար վերադաս վարչական մարմին բողոք ներկայացնելու և այն քննարկված լինելու նախապայմանը:

Ինչպես արդեն նշեցինք, ակտը չի կարող միաժամանակ դառնալ ինչպես վերադասության, այնպես էլ դատական կարգով վիճարկման առարկա, այսինքն՝ միաժամանակ քննարկվել ինչպես վերադաս վարչական մարմնի կողմից, այնպես էլ քննության առնվել դատարանում: Ուստի այն դեպքերում, երբ ակտը բողոքարկվել է և՛ վարչական, և՛ դատական կարգով, վարչական մարմնում բողոքի հիման վրա հարուցված վարչական գործը ենթակա է կարճման: Այս պարագայում պարզապես անհրաժեշտ է արդեն դատավարական օրենսգրքերում սահմանել դիմողի կամ դատարանի պարտականությունը՝ համապատասխան վարչական մարմնին տեղեկացնելու, որ դատարանում այդ հարցով գործ է հարուցված, ինչի հիման վրա էլ համապատասխան վարչական մարմինը կկարճի իր

վարույթում գտնվող գործը: Նման սահմանման բացակայության պարագայում անգամ, այսօր գործող դատավարական նորմերին համապատասխան, վարչական մարմինը դատարանի կողմից տեղեկացվում է դատարանում գործի հարուցման մասին, քանզի վերջինս դատարանի կողմից պետք է ընդգրկված լինի որպես պատասխանող կողմ:

Նույնաբովանդակ կարգավորում է տրված նաև այն դեպքի առնչությամբ, երբ միևնույն ակտը միաժամանակ բողոքարկվել է ինչպես ակտն ընդունած վարչական մարմնում, այնպես էլ վերջինիս վերադասը հանդիսացող վարչական մարմնում (հոդված 70, 2-րդ մասի երկրորդ պարբերություն): Այս դեպքում բողոքի հիման վրա ակտն ընդունած վարչական մարմնում հարուցված գործը կարճվում է, և բողոքի քննարկումը իրականացվում է միայն վերադաս վարչական մարմնում: Այստեղ ակտն ընդունած վարչական մարմնում բողոքի հիման վրա հարուցված գործը կկարճվի այն պահին, երբ վերադաս վարչական մարմինը բողոքի հիման վրա վարույթ հարուցելուց հետո ակտն ընդունած վարչական մարմնից կպահանջի վարույթին վերաբերող գործը:

### **Չարդ 103. Ինչպիսի՞ ժամկետներ են սահմանված ակտի բողոքարկման համար:**

#### **Պատասխան.**

Բողոքարկման ժամկետները սահմանված են Օրենքի 71-րդ հոդվածում: Այն տարբերակված ժամկետներ է սահմանում բողոքարկման համար՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, թե ինչն է բողոքարկվում՝ վարչական ա՞կտը, վարչական մարմնի գործողություն՞ը, թե՛ անգործությունը:

Սահմանվում է, որ վարչական բողոքը կարող է բերվել՝

-վարչական ակտի դեմ՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

-վարչական մարմնի գործողության դեմ՝ այն կատարելու օրվանից մեկ ամսվա ընթացքում.

-վարչական մարմնի անգործության դեմ՝ այն ցուցաբերելու օրվանից 2 ամսվա ընթացքում, և մասնավոր մեկ դեպքում, երբ գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չէ՝ վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

Տարբերակման հիմքում, բնականաբար, դրված են բողոքարկվող ակտերի բնույթը, դրանց մատչելիությունը, վերջիններիս իրազեկ դառնալու հնարավորությունը: Եթե գրավոր վարչական ակտերի դեպքում մենք գործ ունենք որոշման հետ, որը ֆիզիկական և իրավաբանական անձանց համար սահմանում է իրավունքներ, պարտականություններ, փոփոխում, վերացնում կամ անվավեր է ճանաչում դրանք, ապա գործողության կամ անգործության դեպքում դեռևս կարող ենք գործ ունենալ մեկ միջանկյալ ակտի հետ, որը կարող է ուղղված լինել իրավունքի սահմանմանը, ճանաչմանը կամ վերացմանը: Հենց այս տարբերությունը հաշվի առնելով են մաս սահմանված տարբերակված ժամկետներ:

Վարչական ակտի դեպքում Օրենքի 60-րդ հոդվածը հստակ սահմանում է վերջիններիս՝ ուժի մեջ մտնելու կարգը: Օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ընդունումից հետո եռօրյա ժամկետում պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին, և դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցումով, ստորագրությամբ հասցեատիրոջն առձեռն հանձնելու, ինչպես նաև օրենքով սահմանված այլ եղանակներով:

Ինչպես նշվեց, Օրենքում վարչական ակտերի՝ վարչական կարգով բողոքարկման համար սահմանվում է վեցամսյա ժամկետ՝ հաշված ակտն ընդունելու պահից: Օրենքը չի կարգավորում այդ հարցով դատարան դիմելու ժամկետները, քանզի այն դատավարական օրենքի կարգավորման առարկա է, սակայն ցանկալի է, որ այդ օրենքում ևս սահմանվեն նույնական ժամկետներ:

Այսպիսով՝ Օրենքում սահմանված բողոքարկման ժամկետները վարչական ակտն ընդունած վարչական մարմին և նրա վերադաս վարչական մարմին բողոք ներկայացնելու ժամկետներն են:

Ինչ վերաբերում է վարչական մարմինների կողմից գործողություն կատարելուն, ապա նման ակտերի բողոքարկման համար սահմանված է մեկամսյա ժամկետ: Այս դեպքում մենք գործ ունենք ոչ թե վարչական, այլ ռեալ ակտի հետ, որն, ի տարբերություն վարչական ակտի, չի սահմանում, չի հաստատում կամ չի վերացնում որևէ իրավունք, այլ միայն փոփոխում է անձի փաստական դրությունը:

Վարչական մարմնի անգործության պարագայում, որը նույնպես ռեալ ակտ է, սահմանվում է բողոքարկման եռամսյա ժամկետ:

## **Հարց 104. Հնարավո՞ր է արդյոք վերականգնել վարչական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետը:**

### **Պատասխան.**

Օրենքի 71-րդ հոդվածում նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի՝ վարչական բողոք ներկայացնելու առումով: Սակայն չպետք է կարծել, թե վերը նշված ժամկետները քարացած են ու անվերականգնելի: Թեպետ Օրենքը վարչական մարմնի հայեցողությանը չի թողնում այս ժամկետների փոփոխման լիազորությունը, այնուամենայնիվ սահմանում է, որ այդ ժամկետները հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում դրանք վերականգնվում են վարչական մարմնի որոշմամբ:

Բողոքարկման ժամկետները բաց թողնելը հարգելի կամ անհարգելի համարելու հիմքերի միջև ջրբաժան տանելը բավականին բարդ, իսկ երբեմն անհնարին խնդիր է, քանզի կապված է վարչական մարմինների կողմից գնահատման ենթակա մի շարք գործոնների հետ: Այդ իսկ պատճառով Օրենքում սահմանված են հիմքեր, որոնց առկայության դեպքում բաց թողնված ժամկետը պետք է համարել հարգելի, և տրված է մեկ ընդհանուր սահմանում բաց թողնված ժամկետը հարգելի համարելու մասին: Այն է՝ երբ անձը իրենից անկախ հանգամանքների բերումով չի կարողացել պահպանել բողոքարկման ժամկետը: Նման հանգամանքներ գործնականում բավականին շատ են հանդիպում՝ սկսած նրանից, որ ինչ-ինչ հիվանդության պատճառով անձն ի վիճակի չի եղել սահմանված ժամկետում ներկայացնել բողոքը, վերջացրած անձին բողոքարկման համար սահմանված ժամկետի ընթացքում ապօրինաբար անազատության մեջ պահելով կամ նրա՝ գործուղման մեջ գտնվելով:

Այս հիմքերի առկայության պարագայում վարչական մարմինը պարտավոր կլինի բողոքարկման ժամկետն անցած լինելու պարագայում ևս բողոքի հիման վրա հարուցել գործ և քննարկել այն:

Օրենքի 7-րդ հոդվածում ամրագրված՝ կամայականության արգելքի սկզբունքի հիման վրա վարչական մարմինները պարտավորված կլինեն միասնական մոտեցում ցուցաբերել նաև բաց թողնված ժամկետները հարգելի համարելու հարցում:



## **Յարդ 105. Ի՞նչ պահանջների պետք է բավարարի բողոքը:**

### **Պատասխան.**

Բողոքին ներկայացվող ընդհանուր պահանջները սահմանված են Օրենքի 72-րդ հոդվածում: Այս պահանջների վերլուծությունից պարզ է դառնում, որ բողոքը պետք է ներկայացվի գրավոր, ուստի Օրենքում շարադրված պահանջները վերաբերում են այդ գրավոր փաստաթղթի ինչպես ձևին, այնպես էլ բովանդակությանը:

Դեռ խորհրդային օրենսդրությունը սահմանում էր անանուն դիմում-բողոքներն առանց քննարկման թողնելու վերաբերյալ դրույթներ, և դա հիմնավորված ու արդարացված էր: Այս հարցում Օրենքում տրված կարգավորումը չի շեղվել արդեն իսկ ձևավորված պրակտիկայից: Օրենքն ուղղակիորեն սահմանում է, որ բողոքում պետք է նշված լինեն բողոք բերող ֆիզիկական անձի անուն-ազգանունը, հասցեն, (հասցեի տակ նկատի է առնվում անձի հաշվառման հասցեն, իսկ եթե անձը չունի հաշվառում՝ նրա մշտական կամ ժամանակավոր բնակության հասցեն), իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական անձի անունից հանդես եկող պաշտոնատար անձի անուն ազգանունը, պաշտոնը:

Բողոքում պարտադիր կերպով պետք է նշված լինի, թե ինչ ակտ է բողոքարկվում՝ վարչական ակտ, վարչական մարմնի գործողություն, գործողություն կատարելու մերժում, թե անգործություն: Բողոքից պարզ ու հստակ պետք է երևա բողոք բերողի պահանջը: Կախված հանգամանքներից՝ բողոք բերողը կարող է պահանջել անբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել կամ փոփոխել վարչական ակտը, ընդունել այն վարչական ակտը, որի ընդունումը մերժվել է վարչական մարմնի կողմից, կամ այն նրա կողմից չի ընդունվել, կատարել որոշակի գործողություններ կամ ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք ուղղված չեն վարչական ակտի ընդունմանը, ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև վարչական ակտի առ ոչինչ լինելը:

Բողոքի համակողմանի քննարկման համար, բնականաբար, անհրաժեշտ են այնպիսի փաստեր, որոնք կհաստատեն պահանջի հիմնավորվածությունը: Դրանք կարող են լինել ցանկացած փաստաթղթեր, որոնք առնչվում են բողոքի առարկային: Ուստի վարչա-

կան մարմնում այդ փաստաթղթերի ամբողջականության ապահովման նպատակով Օրենքը պահանջում է, որ այդ ցանկը նշվի հենց բողոքում: Բողոքին ներկայացվող պահանջների շարքում սահմանված է նաև դիմումը ներկայացնելու ամիս ամսաթվի առկայությունը:

### **Յարդ 106. Ո՞րն է բողոքի հիման վրա վարույթ հարուցելու կարգը:**

#### **Պատասխան.**

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմք է նաև վարչական մարմիններին ներկայացված բողոքը: Վարչական մարմնում բողոքի հիման վրա վարչական վարույթ է հարուցվում բողոքի մուտքագրման օրը: Սակայն բողոքի մուտքագրումը բնավ չի բացառում դիմումի չքննարկումը: Դիմումը մուտքագրելուց հետո վարչական մարմինը դեռ պետք է ստուգի, թե արդյո՞ք ներկայացված բողոքը համապատասխանում է բողոքին ներկայացվող պահանջներին, և արդյո՞ք բողոք ներկայացնողը բաց չի թողել բողոք ներկայացնելու համար Օրենքով սահմանված ժամկետը: Այն դեպքերում, երբ բողոքը ներկայացվել է սահմանված ժամկետների խախտմամբ, և բողոք բերողը բողոքում չի նշել բաց թողնված ժամկետները հարգելի համարելու հիմքերը, իսկ այդ հիմքերը վարչական մարմնի կողմից հարգելի չեն ճանաչվել, ապա դիմումը թողնվում է առանց քննության: Բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքերը կարող են մատնանշված լինել բողոքի մեջ, իսկ դրանք հաստատող փաստաթղթերը՝ կցված բողոքին: Եթե բողոքում առկա են բացթողուններ, վրիպակներ, ապա բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս կիրառվում են Օրենքի 32-րդ հոդվածում սահմանված դրույթները: Օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝ եթե դիմումում առկա են ձևական այնպիսի սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը դրանք մատնացույց է անում դիմողին՝ հնարավորություն ընձեռելով նրան շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին:

Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, վարչական մարմինը սահմանված ժամկետում առաջարկում է դիմողին համալրել այդ ցանկը: Այս դրույթն ամբողջությամբ տարածվում է նաև բողոքների վրա:

Այն դեպքերում, երբ բողոքը ներկայացվում է վերադաս վարչական մարմին, առանց վերջինս ստորադաս վարչական մարմնում իրականացված վարույթին վերաբերող նյութերն ունենալու, չի կարող իրականացնել բողոքի համակողմանի ու ճիշտ քննարկումը: Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքը, ինչպես նաև խիստ ժամկետները, հողվածում սահմանվում է վերադաս վարչական մարմնի պարտականությունը՝ վարույթ հարուցելուց հետո անհապաղ ստորադաս մարմնից պահանջել վարչական գործը, որն Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն, պահվում է տվյալ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերի հետ միասին: Բնականաբար, այս պահանջը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ ստորադաս վարչական մարմնում վարույթ է իրականացվել և կազմվել է գործ, իսկ, օրինակ, վարչական մարմինների անգործության կամ բանավոր վարչական ակտերի բողոքարկման պարագայում չի կարող խոսք լինել կազմված գործի առկայության մասին:

### **Յարգ 107. Արդյո՞ք վարչական բողոքը կասեցնում է վարչական ակտի կատարումը:**

#### **Պատասխան.**

Օրենքի 74-րդ հոդվածը սահմանում է վարչական բողոք բերելու իրավական հետևանքների հետ կապված հարաբերությունները: Այն կարևոր է անձի իրավունքների պաշտպանության համակարգում, քանզի անհրաժեշտ են լրացուցիչ երաշխիքներ՝ իրավունքների պաշտպանությունը լիարժեք իրականացնելու համար: Գործնականում մեզանում քիչ չեն դեպքերը, երբ բողոքարկման արդյունքում ընդունված որոշումը լինում է ուշացած, քանզի այն ակտը, որը բողոքարկվում է, արդեն իսկ կատարված է լինում, և բողոքարկման արդյունքում ընդունված միանգամայն հիմնավոր ակտն անձի իրավունքների պաշտպանության կամ իրավունքների իրականացման հարցում այլևս որևէ դերակատարություն չի ունենում՝ վեճի առարկայի փոփոխության կամ իրադրության այնպիսի փոփոխության պատճառով, որոնք բացառում են տվյալ վարչական ակտի կատարումը:

Ուստի, հաշվի առնելով նման իրավիճակների առաջացման հնարավորությունը, Օրենքում որպես վարչական բողոք բերելու իրավական հետևանք, սահմանվում է բողոքարկվող վարչական

ակտի կատարման կասեցում: Սակայն հասկանալի է նաև, որ գործնականում այս դրույթը կարող է չարաշահվել և հիմք դառնալ այլոց իրավունքների խախտման կամ վարչական ակտի կատարումն անհիմն ձգձգելու համար:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ բողոքարկվող ակտի չկատարումը կարող է հանգեցնել ավելի մեծ բացասական հետևանքների, քան կատարումը, Օրենքը սահմանում է նաև դրույթներ այն դեպքերի համար, երբ վարչական բողոքը չի կասեցնում բողոքարկվող ակտի գործողությունը:

Բացառություն են կազմում բոլոր այն դեպքերը, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման:

Մասնավորապես՝ նման իրավիճակ կարող է առաջանալ, երբ ջրի աղտոտվածության պատճառով իրավասու մարմինը որոշում ընդունի ջրամատակարարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին, և այն բողոքարկվի: Այս պարագայում, եթե կասեցվի վարչական մարմնի որոշումը, որով դադարեցվել է ջրամատակարարումը, ապա աղտոտված ջրի օգտագործման արդյունքում առաջացած բացասական հետևանքների ազդեցությունը բազմակի անգամ ավելի մեծ կլինի, քան այն հնարավոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ ջրամատակարարման բացակայության պարագայում:

Ինչպես արդեն նշվեց, այս դրույթը կարող է նաև չարաշահման տեղիք տալ (ինչպես և շատ ու շատ իրավունքներ), ուստի պետք է բացառել վարչական ակտի կատարման կասեցումը բոլոր այն դեպքերում, երբ դիմողը՝ հետապնդելով այս կամ այն նպատակը, ցանկանում է առանց հիմնավոր պատճառի ժամանակավորապես կասեցնել վարչական ակտի կատարումը: Հաշվի առնելով այս հանգամանքը, Օրենքը սահմանում է այն հիմքերը, որոնց առկայությամբ վարչական մարմինը պատճառաբանված որոշմամբ կարող է չկասեցնել վարչական ակտի կատարումը՝ եթե բողոքը բերվել է միայն վարչական ակտի կատարումը կասեցնելու նպատակով:

Սակայն չպետք է բացառել նաև, որ վարչական մամինների նման լիազորությունը ևս կարող է չարաշահման տեղիք տալ, սակայն բավականին դժվար է տալ այն հստակ ջրբաժանը, երբ ակներև է դիմողի նման մտադրությունը:

## **Հարց 108. Ի՞նչ կարգով է քննարկվում և լուծվում վարչական բողոքը:**

### **Պատասխան.**

Օրենքի 75-րդ հոդվածը կարգավորում է միմյանց հետ սերտորեն փոխկապակցված հետևյալ հարցերը. վարչական բողոքի քննարկման կարգը և սահմանները, վարչական բողոքի քննարկման ժամկետները, վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում ընդունելը և վարչական ակտի բեկանման հիմքերը: Ինչպես արդեն նշեցինք, Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն, վարչական վարույթ հարուցելու հիմք է նաև վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության դեմ ներկայացվող բողոքը: Անշուշտ, անկախ այն հանգամանքից, թե այդ հոդվածում նախատեսված որ հիմքով է հարուցվել վարչական վարույթ, դրա ընթացիկ փուլում քննարկումն ընթանում է գրեթե նույն կարգով: Օրենքը որևէ տարբերակում չի դնում դիմումի և վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթների միջև, քանզի հարցի քննարկման համար դա նշանակություն չունի, ինչը չի կարելի ասել բողոքի հիման վրա հարուցված վարույթի մասին, որն ընդհանրությունների հետ մեկտեղ ունի որոշակի առանձնահատկություններ, որոնք էլ անհրաժեշտ է հաշվի առնել: Մասնավորապես՝ դիմումի հիման վրա և վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթներում դեռևս գոյություն չունի վարչական ակտ: Պարզապես այս պարագայում և՛ դիմումը, և՛ վարչական մարմնի նախաձեռնությունը կոչված են ապահովելու անձի այս կամ այն իրավունքի իրականացումը, իսկ բողոքի պարագայում նպատակն այլ է՝ վերականգնել արդեն խախտված իրավունքները: Հաշվի առնելով վերոգրյալը՝ հոդվածի առաջին իսկ մասը սահմանում է, որ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է Օրենքի երկրորդ բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե բողոքարկման վարույթը սահմանող բաժնով այլ բան նախատեսված չէ: Դա նշանակում է, որ վարչական մարմինը բողոքը քննարկելիս չպետք է սահմանափակվի միայն բողոքարկման վարույթը սահմանող բաժնի դրույթներով, այլ պետք է կիրառի նաև Օրենքի II բաժնի բոլոր այն դրույթները, որոնք վերաբերում են վարչական վարույթի մասնակիցներին, ներկայացուցիչներին, բացարկներին, վարչական վարույթի լեզվին,

վարչական վարույթն արձանագրելուն, վարույթ հարուցելու մասին ժանուցելուն, վարչական մարմինների՝ արագ գործելու պարտականությանը, վարույթի բազմակողմանիությանը, լրիվությանը և անաչառությանը, ապացույցներին, վարույթի մասնակիցներին լսելուն, վարույթի մասնակիցներին օգնություն ցուցաբերելուն, վարույթի կասեցմանը, կարճմանը և այլն: Միաժամանակ վարույթի ընթացքում եթե բողոքարկմանը վերաբերող բաժնում սահմանված են այլ դրույթներ, քան Օրենքի II բաժնում, վարչական մարմինները պետք է կիրառեն բողոքարկմանը վերաբերող բաժնում ամրագրված դրույթները:

### **Հարց 109. Ի՞նչ ժամկետներում պետք է քննարկվի վարչական բողոքը:**

#### **Պատասխան.**

Օրենքի IV բաժնում, որը կրում է «Բողոքարկման վարույթ» վերտառությունը, վարչական բողոքի քննարկման ժամկետներ սահմանված չեն, սակայն Օրենքի 75-րդ հոդվածի համաձայն, վարչական բողոքի քննարկումն իրականացվում է Օրենքի II բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե բողոքարկման վարույթին վերաբերող բաժնով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի բողոքը՝ նրա դիմումի և վարչական մարմնի նախաձեռնության հետ միասին, վարչական վարույթ հարուցելու հիմքեր են՝ տրամաբանական է, որ վարույթին վերաբերող դրույթները կիրառվում են նաև այս պարագայում: Ուստի, եթե Օրենքի 46-րդ հոդվածի համաձայն, վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է, և բողոքի հիման վրա վարչական մարմնում հարուցվում է վարչական վարույթ, ապա սահմանված 30-օրյա ժամկետը հավասարապես տարածվում է նաև այդ վարույթի վրա:

Բնականաբար, բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի նկատմամբ տարածվում են նաև վարչական վարույթի ժամկետների հետ կապված հարցերը կարգավորող այլ դրույթներ՝ կապված ժամկետների հաշվարկման, դրանց ավարտի հետ և այլն (հոդված 46, մասեր 2-րդ, 3-րդ): Վարչական մարմինը պարտավոր է սահմանված ժամկետում կատարել բոլոր գործողությունները, ձեռնարկել բոլոր միջոցները՝ բողոքն ըստ էության քննարկելու և

լուծելու համար, լսել վարույթի մասնակիցներին, վկաներին, անհրաժեշտության դեպքում նշանակել փորձաքննություն, փոխօգնության կարգով դիմել այլ վարչական մարմինների և այլն:

Բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի վրա հավասարապես տարածվում են նաև Օրենքի 47-րդ և 49-րդ հոդվածները, որոնք սահմանում են վարչական վարույթի ժամկետը երկարածոցելու և վարչական վարույթը կասեցնելու հիմքերը և կարգը:

Այս վարույթի վրա հավասարապես տարածվում է նաև Օրենքի 36-րդ հոդվածում սահմանված վարչական մարմնի՝ արագ գործելու պարտականությունը: Ուստի, ինչպես դիմումի հիման վրա հարուցված վարույթի պարագայում, այս դեպքում ևս վարույթը պետք է իրականացվի հնարավորինս արագ, առանց անտեղի հապաղումների, և եթե վարույթն իրականացնող վարչական մարմինն արդեն իսկ համակողմանի ու անբողջական քննարկում է իրականացրել, ձեռք է բերել անհրաժեշտ բոլոր ապացույցները, պարզաբանել ու ճշտել է գործի հանգամանքները, ապա պարտավոր է վարչական ակտն ընդունել դրանից հետո ողջամիտ ժամկետում՝ չսպասելով բողոքարկման վարույթի համար սահմանված ընդհանուր՝ 30-օրյա ժամկետը լրանալուն:

Սահմանված ժամկետում վարչական ակտ չընդունվելու դեպքում նույնպես պետք է կիրառվեն Օրենքի 48-րդ հոդվածում սահմանված դրույթները:

### **Չարց 110. Ինչպիսի՞ որոշումներ կարող են ընդունվել բողոքի քննարկման արդյունքում:**

#### **Պատասխան.**

Օրենքի 76-րդ հոդվածը սահմանում է բողոքը քննարկելու առնչությամբ վարչական մարմնի լիազորությունները:

Եթե փորձենք զուգահեռ անցկացնել դատական ակտերի բողոքարկման հետ, ապա վարչական բողոքի քննարկման կարգն առավելապես մոտ է վերաքննիչ բողոքի քննության կարգին, քանզի վարչական կարգով բողոքի քննարկման ժամանակ գործը վերստին քննարկվում է ըստ էության և վարչական մարմինը կարող է ընդունել ըստ էության նոր որոշում (վարչական ակտ):

Նույն հոդվածի 1-3 մասերը սահմանում են այն դեպքերը, երբ բողոքը քննարկում է բողոքարկվող ակտն ընդունած վարչական

մարմինը: Առաջին մասում սահմանվում է այն դեպքը, երբ բողոքարկվել է վարչական ակտը: Այս դեպքում վարչական ակտն ընդունած մարմինը, քննարկելով բողոքը, կարող է ընդունել հետևյալ որոշումներից մեկը՝

ա) բավարարել բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչել վարչական ակտն անվավեր կամ՝ առ ոչինչ, ընդունել նոր վարչական ակտ:

բ) մերժել բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ: Այն դեպքում, երբ բողոքարկվել են վարչական մարմնի գործողությունները, ապա վարչական մարմինը, որի գործողությունը բողոքարկվել է, քննարկելով բողոքը, իրավասու է՝

ա) բավարարել բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն, ճանաչել բողոքարկվող գործողությունն ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրավաչափ և դադարեցնել տվյալ գործողությունը, եթե բողոքի վերաբերյալ դիմում ընդունելու պահին այն շարունակվել է:

բ) մերժել բողոքը՝ գործողության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

Այն դեպքում, երբ բողոքարկվել է վարչական մարմնի անգործությունը, ապա վարչական մարմինը, որի անգործությունը բողոքարկվել է, քննարկելով բողոքը, իրավասու է՝

ա) բավարարել բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն և կատարել հայցվող գործողությունը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն:

բ) մերժել բողոքը՝ անգործության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

Հոդվածի 4-րդ մասը կարգավորում է վերադաս վարչական մարմնի լիազորությունները, բողոքի քննարկման արդյունքում որոշում ընդունելիս:

Նույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում, եթե համապատասխան բողոքը Օրենքին համապատասխան քննարկում է վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը, ապա բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարման ենթակա համարելու դեպքում վերադաս վարչական մարմինը կարող է ընդունել հիշյալ մասերով նախատեսված որոշումներից որևէ մեկը կամ հանձնարարել վարչական ակտն ընդունած ստորադաս վարչական մարմնին՝ ընդունելու նոր վարչական ակտ կամ դադարեցնելու ոչ իրավաչափ գործողու-



թյունը, կամ կատարելու հայցվող գործողությունը:

Եթե վարչական բողոքը վերաբերում է բողոքարկվող վարչական ակտի մի մասին, ապա բողոքի քննարկումը կարող է սահմանափակվել հենց այդ մասով:

Վարչական բողոքը մերժվում է, իսկ վարչական ակտը թողնվում է անփոփոխ, եթե բողոքի քննարկման արդյունքում վարչական մարմինը գալիս է եզրակացության, որ վարչական ակտն իրավաչափ է և հիմնավորված:

Վարչական ակտն իրավաչափ է, եթե այն կայացվել է կիրառման ենթակա նյութական և ընթացակարգային նորմերին համապատասխան:

Ակտը կարելի է հիմնավորված համարել այն դեպքում, երբ դրանում արտացոլված են գործի քննարկման համար նշանակություն ունեցող ապացուցված փաստական հանգամանքները կամ ապացուցման կարիք չունեցող փաստերը:

Բողոքը քննարկող վարչական մարմինը՝ եթե այն համարում է հիմնավորված, պարտավոր է բավարարել բողոքարկողի պահանջը և ընդունել բարենպաստ վարչական ակտ, իսկ այն դեպքում, երբ բողոքը բավարարվում է մասնակիորեն, ապա բողոքի քննարկման արդյունքում ընդունված վարչական ակտը կարող է լինել նաև գույզողված:

Վարչական ակտի վերանայման հիմք կարող են հանդիսանալ նաև նոր ի հայտ եկած հանգամանքները, ինչպես նաև նոր հանգամանքները, որոնք բողոքարկվող վարչական ակտի ընդունման պահին համապատասխանաբար հայտնի չեն եղել կամ ընդհանրապես չեն եղել: Մասնավորապես, վարչական ակտի վերանայման հիմք կարող են լինել բողոքարկվող վարչական ակտի հիմք հանդիսացող իրավական ակտի հակասահմանադրական ճանաչվելը կամ միջամտող վարչական ակտ ընդունելու այլ հիմքերի վերացումը:

Ինչ վերաբերում է վարչական ակտը մասնակի բավարարելուն, ապա այստեղ կարող ենք գործ ունենալ երկու դրության հետ: Առաջին պարագայում բողոք բերողը կարող է բողոքում ներկայացրած լինել միմյանց հետ կապակցված մի քանի պահանջներ, որոնց մի մասը կարող է բավարարվել, մյուսը՝ ոչ: Իսկ մյուս դեպքում բողոքում ներկայացված պահանջը կարող է և մեկը լինել, սակայն բավարարվել ոչ ամբողջ ծավալով:

Միշտ չէ, որ վերադաս վարչական մարմիններին վերապահված

է ստորադաս վարչական մարմինների վարչական ակտերն ընդունելու անմիջական լիազորություն: Նման դեպքերում վարչական մարմինը ոչ թե իր ակտով կփոփոխի ստորադաս վարչական մարմնի ընդունած՝ բողոքարկվող վարչական ակտը, այլ բողոքը բավարարելու պարագայում կհանձնարարի ստորադաս վարչական մարմնին՝ ընդունելու բողոքարկողի կողմից հայցվող որոշումը:

Այն պարագայում, երբ վերադաս վարչական մարմինը, քննարկելով բողոքում շարադրված պահանջները, գտնում է, որ դրանք անհիմն են, այսինքն՝ բողոքը բերվել է իրավաչափ վարչական ակտի դեմ, ապա մերժում է բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ: Սակայն դա դեռ չի նշանակում, որ անձն ընդհանրապես զրկվում է բողոք բերելու հնարավորությունից: Այն դեպքում, եթե բողոքը բերվել է վարչական ակտն ընդունած վարչական մարմնին և մերժվել է, անձն իրավունք ունի այդ մերժումը բողոքարկել վերադաս վարչական մարմնում, և եթե այն կրկին մերժվել է՝ այս անգամ այդ մարմնի կողմից, և վերջինս իր հերթին ունի վերադաս վարչական մարմին, ապա անձը պահպանում է վերադասին դիմելու իր իրավունքը: Վերջապես՝ անձը վարչական ակտն ընդունվելուց հետո ցանկացած ժամանակ կարող է դիմել դատարան՝ շրջանցելով վարչական մարմինների համակարգը:

### **Յարդ 111. Որո՞նք են վարչական ակտի բեկանման հիմքերը:**

#### **Պատասխան.**

Վարչական ակտի բեկանման հիմքերը սահմանված են Օրենքի 77-րդ հոդվածում: Դրանցում առանձնանում են Օրենքի 62-64 և 66-րդ հոդվածներում սահմանված հիմքերը, որոնք վերաբերում են վարչական ակտի առ ոչինչ լինելուն, ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելուն և իրավաչափ վարչական ակտի՝ ուժը կորցնելուն:

Վարչական ակտերի բեկանման հիմքերում կարևոր տեղ են զբաղեցնում նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ ոչ ճիշտ կիրառումը:

Եթե վարչական բողոքը քննարկող վարչական մարմինն ի հայտ բերի, որ որոշում ընդունելիս վարչական մարմինը պարզել է գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, հետազոտել ապացույցները, սակայն վարչական ակտն ընդունելիս կիրառել է

ոչ այն իրավական ակտը, որը պետք է կիրառեր, ապա նման վարչական ակտը ենթակա է բեկանման:

Նյութական իրավունքի սխալ կիրառում է ոչ միայն այլ նյութական նորմի կիրառումը, այլև կիրառման ենթակա իրավական ակտի իմաստը սխալ հասկանալը, վերջինիս սխալ մեկնաբանումը:

Հոդվածի 1-ին մասի հաջորդ երկու ենթակետերում առանձնացվում են երկու հիմքեր, դրանք են՝ «բ»՝ վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, այդ թվում նաև կոլեգիալ մարմնի կազմում, և «գ»՝ վարչական ակտը վարույթն իրականացրած պաշտոնատար անձանց կողմից ստորագրված չլինելը կամ դրա իրավունքը չունեցող անձի կողմից ստորագրված լինելը, որոնք բացարձակ հիմքեր են վարչական ակտը բեկանելու համար:

«Բ» կետում նշված հիմքի պարագայում նկատի են առնվում բոլոր այն դեպքերը, երբ պաշտոնատար անձն իրավասու չէ քննարկել տվյալ հարցը. քննարկումը կարող է տեղի ունենալ ինչպես այն դեպքում, երբ տվյալ մարմինը՝ թեպետ պետք է քննարկեր հարցը, բայց իր կանոնադրությամբ դրա քննարկումը վերապահված է այլ պաշտոնատար անձի, այնպես էլ այն դեպքում, երբ առկա են եղել տվյալ պաշտոնատար անձին բացարկ կամ ինքնաբացարկ հայտնելու հիմքեր, որոնք հայտնի են դարձել ավելի ուշ՝ արդեն բողոքարկման վարույթում:

Ինչ վերաբերում է «գ» կետում նշված հիմքերին, ապա այս դեպքում մենք գործ ունենք վարչական ակտի վավերապայմանների հետ, որոնք սահմանված են Օրենքի 55-րդ հոդվածում, որի 4-րդ մասի «բ» կետի համաձայն, վարչական ակտը պետք է պարունակի «ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը»:

Հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Ընթացակարգային նորմերը խախտելը վարչական ակտի բեկանման հիմք կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու չէ ընդունելու բողոքարկվող վարչական ակտը»:

Այն դեպքերում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինը իրավասու է այդ հարցով ընդունելու ըստ էության որոշում, ապա վերջինս, բնականաբար, թույլ չտալով այն ընթացակարգային նորմերի խախտումները, որոնք առկա են եղել գործի քննարկման ընթացքում, քննարկում է բողոքը և ընդունում Օրենքի 76-րդ հոդվա-

ծով սահմանված նոր որոշում: Այս կանոնակարգումը միտված է վարչական վարույթն ապահովելու ավելորդ ժամանակատար գործընթացներից՝ զուտ ընթացակարգային նորմերը խախտված լինելու պատճառով, որոնք բողոքը քննող մարմնի կողմից ըստ էության պետք է շտկված լինեն: Սակայն, այն դեպքերում, երբ բողոքը քննարկող մարմինը իրավասու չէ այդ հարցն ըստ էության լուծելու և բողոքի քննարկման ընթացքում պարզում է, որ գործի քննարկման ընթացքում տեղի են ունեցել ընթացակարգային նորմերի խախտումներ, ապա վարչական մարմինը պարտավոր է բեկանել համապատասխան ակտը:

Հոդվածի 3-րդ մասում սահմանվում են այն պայմանները, որոնց առկայության դեպքում վարչական ակտը կարող է բեկանվել մասնակիորեն: Դա նշանակում է, որ բողոքարկվող վարչական ակտում կան դրույթներ, որոնք սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերով պետք է բեկանվեն, և կան իրավաչափ դրույթներ, որոնց բեկանման համար հիմքեր չկան: Սակայն վարչական ակտի մասնակի բեկանումը հնարավոր է միայն այն պայմանով, երբ մնացած մասը կարող է ինքնուրույն գործել:

Եթե վարչական ակտում առկա են դրույթներ, որոնցով անձը ստանում է փոխկապակցված իրավունքներ, որոնց մի մասի բացակայությունը կհանգեցնի կամ կխոչընդոտի մյուս մասի իրականացմանը, ապա վարչական ակտի մասնակի բեկանումն անթույլատրելի է:

## **ԲԱԺԻՆ V. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ**

**Հարց 112. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը:**

### **Պատասխան.**

Օրենքներն իրավական պետությունում իրականացվում են առաջին հերթին ոչ թե օրենք խախտող անձանց նկատմամբ պատժամիջոցներ կիրառելով, այլ վարչական ակտերի միջոցով, որոնցով օրենքը հասկանալի և վերահսկելի եղանակով որոշակիացվում (կոնկրետացվում) և անհատականացվում է, այսինքն՝ հայտարարվում է կիրառելի որոշակի անձի ու որոշակի հանգամանքների նկատմամբ: Եթե վարչական ակտի հասցեատերը կատարում է ակ-

տի պահանջները, ապա դա նշանակում է, որ վարչական ակտը կատարել է իր ֆունկցիան, և հարկադիր կատարման անհրաժեշտություն չի լինում: Այլ է վիճակը, երբ ակտի հասցեատերը դրա պահանջները չի կատարում: Այս դեպքերում Օրենքի 78 և հաջորդ հոդվածներով նախատեսվում է վարչական ակտի հարկադիր կատարման հնարավորություն: Դրանով Օրենքի արդյունավետ կատարման հնարավորություն է ստեղծվում:

Վարչական ակտն ու դրա հարկադիր կատարումը ավտորիտար պետության մնացուկներ չեն: Նրանք ժողովրդավարական ճանապարհով ընդունված օրենքների՝ հավասարության պահանջին համապատասխանող կատարման անհրաժեշտ գործիքներ են, անկախ այն բանից, թե արդյոք այս կամ այն քաղաքացին պատրաստակամ է այդ օրենքները կատարելու, թե ոչ: Այդ գործիքների կիրառումը կախված է օրենքի բազմաթիվ պահանջներից, իսկ այն անձինք, ուն նկատմամբ նրանք պետք է կիրառվեն, իրավունք ունեն պահանջել, որ դատարանը քննի այդ պահանջները:

Իրավունքների և օրենքով պաշտպանվող շահերի խախտման հետևանքների վերացումը, նրանց վերականգնումը ինչպես դատական, այնպես էլ վարչական մարմինների կարևոր խնդիրներից են:

Վարչական մարմինների որոշումները ենթակա են պարտադիր կատարման վարչական ակտի հասցեատիրոջ կողմից: Եթե վարչական ակտով այլ ժամկետներ սահմանված չեն, ապա վարչական ակտը ենթակա է կատարման՝ ուժի մեջ մտնելու պահից:

Վերոշարադրյալով հանդերձ, մեզանում եզակի չեն դեպքերը, երբ անձինք իրենց օգտին կայացված վարչական ու դատական ակտերի կատարմանը սպասում են օրերով, երբեմն էլ՝ ամիսներով: Անշուշտ, նման վիճակը չի կարող գոհացուցիչ լինել ոչ պետության և ոչ էլ իրենց վերաբերող որոշումների կատարմանը սպասող անձանց համար:

Օրենքը հարկադիր կատարման վարույթը չի նախատեսել վարչական վարույթի փուլերի մեջ, քանի որ այն պարտադիր փուլ չի հանդիսանում: Վարչական վարույթն ավարտվում է վարչական ակտի ընդունմամբ, որը պետք է կամովին կատարի այդ ակտի հասցեատերը:

Այսինքն՝ վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը վարչական վարույթի հատուկ տարատեսակ է:

Վարչական ակտի հարկադիր կատարման անհրաժեշտությունը հաճախ ծագում է, երբ վարչական մարմինն ընդունում է վարչական ակտ, որով ակտի հասցեատիրոջ վրա պարտականություն է դրվում իրականացնել որոշակի գործողություններ՝ վճարում, աշխատանքների կատարում և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություններ իրականացնելուց՝ դադարեցնել տան կառուցումը, չգրադվել չլիցենզավորված գործունեությամբ և այլն, որոնք անձը հոժարական չի կատարում: Վարչական ակտերի հարկադիր կատարումը կարգավորող իրավական նորմերը միաժամանակ ուղղված են վարչական իրավահարաբերություններում օրինականության ապահովմանը, բազմաթիվ անցանկալի խախտումների և դրանց արդյունքում անթույլատրելի հետևանքների կանխմանը և վարչական մարմինների ակտերի կայունության ամրապնդմանը:

Պետք է նկատել, որ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի դրույթները չեն տարածվում վարչական ակտերի հարկադիր կատարման վրա: Սակայն կիրառվող սկզբունքները գրեթե նույնական են՝ այն տարբերությամբ, որ եթե կատարողական վարույթի կողմերը, ըստ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի, պահանջատերն ու պարտապանն են կամ նրանց ներկայացուցիչները, որոնք միմյանց նկատմամբ իշխանական ենթակայության ներքո չեն գտնվում, ինչպես նաև գոյություն ունի հատուկ՝ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, ապա, ըստ Օրենքի, պահանջատերը վարչական ակտն ընդունած վարչական մարմինն է, որը պարտապանի (պարտավոր անձի՝ վարչական ակտի հասցեատիրոջ) նկատմամբ գտնվում է վերադասի դիրքերում և դրամական պահանջների կատարման հետ մեկտեղ՝ նաև հանդես է գալիս որպես կատարողական մարմին:

Հարկադիր կատարման վարույթում վարչական ակտն ի կատար է ածվում կոնկրետ հասցեատերերի նկատմամբ, ինչպես անհատական, այնպես էլ հավաքական:

Օրենքով սահմանվում են այն մարմինները, որոնք իրականացնում են վարչական ակտերի կատարումը և որոնք սահմանված կարգով կարող են կիրառել հարկադրանքի միջոցներ՝ այն ապահովելու համար:

### **Չարք 113. Ի՞նչ է վարչական հարկադրանքը:**

#### **Պատասխան.**

Ընդհանրապես իշխանությունը նաև անձանց վարքագիծը կարգավորելու և կամքի միասնականությունն ապահովելու ունակությունն է: Նման բնորոշումը հնարավորություն է տալիս հանգելու եզրակացության, որ ի թիվս այլոց, իշխանության իրականացման եղանակ է համարվում նաև հարկադրանքը: Առանձին դեպքերում վարքագծի մի քանի տարբերակների առկայության պարագայում կամքի միասնականության կարելի է հասնել միայն համարժեք և միաժամանակ տարաբնույթ նախապայմաններ ստեղծելու միջոցով: Հասարակությունում գործում են հարկադրանքի բազմաբնույթ տարատեսակներ. մի դեպքում դրանք կարող են լինել իրավական, մյուս դեպքում՝ սոսկ բարոյական և այլն: Այստեղ խոսքը միայն իրավական ակտերով սահմանված հարկադրանքի մասին է, քանի որ իրավական ակտերով չնախատեսված հարկադրանքի ցանկացած տեսակ անխուսափելիորեն կրում է հակաիրավական բնույթ: Իրավական կարգավորվածության տեսանկյունից ոչ թե հարկադրանքն ընդհանրապես, այլ դրա այն տարատեսակներն են թույլատրելի և կիրառելի, որոնք ուղղված են իրավական նորմերի պահպանմանը, և որոնք կարգավորված են օրենքով: Այլ կերպ ասած՝ վարչական հարկադրանքը՝ որպես իրավական հարկադրանք, կիրառվում է իրավական նորմերի հիման վրա:

Կարելի է ասել, որ վարչական հարկադրանքն անհատականացված է. այն հետապնդում է տվյալ անձի նկատմամբ վարչական ակտի պահանջները վերջինիս կողմից կատարելու, դրանից շեղումներ թույլ չտալու նպատակ և գործադրվում է կոնկրետ անձի անձնական և գույքային շահերի վրա ներգործելու եղանակով: Այն նույնպես կիրառվում է վարչական ակտով, քանի որ Օրենքի նորմը սոսկ հնարավոր է համարում հարկադրանքի կիրառումը, սակայն վերջինս փաստացի գործում է միայն վարչական ակտ ընդունելու ժամանակ:

Վարչական հարկադրանքն իրավական հարկադրանքի տարատեսակ է, այդ իսկ պատճառով նրան բնորոշ են վերջինիս առանձնահատկությունները, որոնց մասին կխոսենք ստորև:

**Հարց 114. Որո՞նք են վարչական հարկադրանքի առանձնահատկությունները և նրա բնորոշ գծերը:**

**Պատասխան.**

Վարչական հարկադրանքը, լինելով պետական հարկադրանքի տեսակներից մեկը, ունի նրան բնորոշ հետևյալ հատկանիշները՝

1. Վարչական հարկադրանքի միջոցները, որպես կանոն, կիրառվում են այն ժամանակ, երբ անձը չի կատարում (ոչ պատշաճ է կատարում) վարչական ակտի պահանջները կամ խախտում է դրանք: Այն երաշխիք և ապահովման միջոց է վարչական մարմին-անձ հարաբերություններում օրինականության պահպանման, այդ հարաբերությունները սահմանված կարգով հակաիրավական ոտնձգություններից պաշտպանելու հարցում:

2. Վարչական հարկադրանքը կարգավորվում է վարչաիրավական նորմերով, ուստի և վարչական հարկադրանքը կիրառվում է այնպիսի իրավահարաբերություններում, որտեղ բացակայում է ծառայողական, կազմակերպական ենթակայությունը. այն կարող է կիրառվել ֆիզիկական, պաշտոնատար և իրավաբանական անձանց նկատմամբ:

3. Վարչական հարկադրանքը (ի տարբերություն այլ պետական մարմինների կողմից կիրառվող հարկադրանքի) բնորոշվում է այն կիրառելու իրավասություն ունեցող սուբյեկտների մեծաքանակությամբ: Վարչական հարկադրանք իրավասու են կիրառել բազմաթիվ վարչական մարմիններ, օրինակ՝ ոստիկանությունը, մաքսային, հարկային և այլ մարմիններ:

4. Վարչական հարկադրանքը, որպես կանոն, կիրառվում է արտադատական կարգով:

**Հարց 115. Որո՞նք են վարչական հարկադրանքի միջոցները:**

**Պատասխան.**

Վարչական հարկադրանքի միջոցները հստակ թվարկված են Օրենքի 78-րդ հոդվածի երկրորդ մասում: Դրանք են՝

ա) գործողությունն այլ անձի կողմից կատարելը (փոխարինող գործողություն).

բ) տուգանքը.

գ) անմիջական հարկադրանքը:



Հարկադրանքի միջոցները, ինչպես տեսնում ենք, սպառիչ են, և վարչական ակտի հարկադիր կատարման ժամանակ այլ միջոցներ չեն կարող կիրառվել:

Վերը թվարկված երեք միջոցներում «խտացված են» նախագուշական, խափանիչ, վարչական պատասխանատվության միջոցները, սակայն որոշակի բացառություններով: Յուրաքանչյուր վարչական հարկադրանքի միջոցի կանդիդատնանք ստորև:

Հարկադրանքի միջոցներից առաջինը գործողությունն այլ անձի կողմից կատարելն է (փոխարինող գործողություն): Հարկադրանքի այս միջոցը կարող է կիրառվել բոլոր այն դեպքերում, երբ ակտի հասցեատերը կամ հրաժարվում է վարչական ակտը կատարելուց, կամ պարզապես ի վիճակի չէ դա անել, օրինակ՝ ապամոնտաժել ապօրինի շինությունը կամ ապօրինաբար հատած ծառերի փոխարեն նոր ծառեր տնկել:

Հարկադրանքի հաջորդ միջոցը տուգանքն է, որը բավականին արդյունավետ է, քանի որ ուղղակիորեն ներգործում է պարտավոր անձի ֆինանսական շահերի վրա: Պարտավոր անձը կարող է չկատարել վարչական ակտը, սակայն նա պետք է իմանա, որ դրա համար ինքը կարող է տուգանվել, որը, սակայն, չի վերացնում վարչական ակտը կատարելու՝ այդ անձի պարտականությունը:

Հարկադրանքի վերջին միջոցն անմիջական հարկադրանքն է, որի պարագայում վարչական ակտն ի կատար է ածվում՝ ընդհուպ մինչև ֆիզիկական ուժի կիրառմամբ: Օրինակ՝ երբ ապօրինի ավտոտնակը քանդելու մասին ուժի մեջ մտած վարչական ակտը կանոսվին չի կատարվում, ապա վարչական մարմինը տեղում պետք է ի կատար ածի այն, այսինքն՝ կազմակերպի ավտոտնակի քանդումը, ներգրավելով համապատասխան տեխնիկա: Այն դեպքում, եթե ավտոտնակի փաստացի տիրապետողն անձամբ խոչընդոտի ակտն ի կատար ածելուն, մասնավորապես՝ կանգնելով դրա դիմաց կամ նտնելով ներս, ապա վարչական մարմինը կարող է դիմել ոստիկանություն՝ նրան ավտոտնակից կամ դրան հարող տարածքից հարկադրաբար հեռացնելու պահանջով, որը պետք է կատարվի: Ահա այս դեպքերն է նկատի ունեցել օրենսդիրը անմիջական հարկադրանք ասելով:

## **Հարց 116. Ի՞նչ չափորոշիչներից ելնելով է ընտրվում հարկադրանքի միջոցը:**

### **Պատասխան.**

Օրենքը հատուկ չափորոշիչներ չի սահմանում հարկադրանքի միջոցներ ընտրելու հարցում: Սակայն այս դեպքում ևս վարչական մարմինը չի կարող չգործել օրինականության սկզբունքի համաձայն: Ուստի, եթե հատուկ օրենքներով սահմանված կլինեն հարկադրանքի կոնկրետ միջոցներ, ապա վերջիններս էլ կկիրառվեն: Եթե օրենքներով նման բան սահմանված չէ, ապա հարկադրանքի միջոցն ընտրվում է ըստ հետևյալ չափանիշների.

- թույլատրելի<sup>o</sup> է արդյոք հարկադրանքի միջոցը.
- փոխարինող գործողությունը թույլատրելի է միայն այն դեպքում, երբ վարչական ակտով դրված պարտավորությունը կարող է կատարվել այլ անձի կամ հենց իր՝ վարչական մարմնի կողմից (Օրենքի 81-րդ հոդված).
- անմիջական հարկադրանքի կիրառումը միշտ սուբսիդիար բնույթ ունի (օրենքի 83-րդ հոդված).
- պահպանված<sup>o</sup> է արդյոք համաչափություն սկզբունքը (տես 11-րդ հարցի պատասխանը):

Ընդհանրապես, համաչափության սկզբունքի մասին խոսելիս պետք է նշել, որ այն արդեն իսկ Օրենքում ստացել է իր որոշակիացումը՝ որպես սկզբունք: Հիշյալ սկզբունքի առանցքային կարևորությունն արտահայտվում է նրանում, որ համաչափության կիրառումը հնարավորություն է տալիս գնահատել վարչական մարմինների միջամտող ակտերի կամ գործողությունների իրավաչափությունը՝ այդ միջամտության ընթացքում կիրառվող միջոցների գործադրմամբ, դրանց նպատակին հասնելու հնարավորությունն ու թույլատրելիությունը: Օրենքով որևէ հարցի լուծում տալու (օրենքով անրագրված նպատակ), օրինակ՝ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար վարչական մարմնի հայեցողությանն է վերապահված դրան հասնելու մեկից ավելի միջոցներ, ասենք՝ տուգանք կամ նախազգուշացում, կիրառելը: Այդ միջոցներից մեկն ավելի մեղմ է ներգործում անձի վրա, քան մյուսը կամ մյուսները: Համաչափության սկզբունքը կոչված է երաշխավորել, որպեսզի վարչական մարմինն այս կամ այն հանգամանքներում ապահովի համարժեք հարաբերակցություն իր կողմից կիրառ-

վող միջոցների և դրանց կիրառմամբ (Սահմանադրությամբ և օրենքով) հետապնդվող նպատակի միջև, որպեսզի համարժեք արձագանքի որևէ իրավիճակի: Դա նշանակում է, որ եթե միևնույն նպատակին հասնելու համար վարչական մարմինը կարող է գործադրել իր տրամադրության տակ եղած ավելի մեղմ միջոցը (անձի իրավունքներին միջամտող առավել մեղմ միջոցը), ապա նա պարտավոր է կիրառել հենց այդ և ոչ թե ավելի խիստ միջոցը: Այսինքն՝ այս սկզբունքն իրավագիտության և իրավակիրառման պրակտիկայի այն նույն հնարքն է, որը կոչված է բացառելու ոստիկանական և ցանկացած այլ «սահմանադրություն», թույլ տալով համապատասխան հարաբերությունների մեջ ներգրավված բոլոր մասնակիցներին գործել իրավիճակին համարժեք և ավելի «մեծ վնաս չպատճառել», քան անհրաժեշտ է: Վարչական ակտերի կատարումն ապահովելու համար հարկադրանքի միջոցներ կիրառելու համար այս սկզբունքն ունի ընդգծված կարևորություն: Այն իր կոնկրետ արտացոլումն է գտել Օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասում, որը պահանջում է, որ հարկադրանքի միջոցը համաչափ լինի դրա նպատակին և ընտրվի այնպես, որպեսզի պարտավոր անձի և հանրության վնասները հասցվեն նվազագույնի:

Փաստորեն վարչական հարկադրանքի կիրառման սահմաններն Օրենքում հստակ ուրվագծված են: Կրկին նշենք, որ այս դրույթի ամրագրումը համաչափության սկզբունքի որոշակիացումն է վարչական ակտերի կատարման վարույթում, որը նույնպես վարչական վարույթի տարատեսակ է:

**Չարք 117. Ինչպե՞ս է դրսևորվում վարչական հարկադրանքը:**

**Պատասխան.**

Ինչպես արդեն նշեցինք, վարչական հարկադրանքը կարող է կիրառվել, եթե որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողության կատարումից ձեռնպահ մնալուն ուղղված վարչական ակտն ուժի մեջ է մտել, իսկ դրա հասցեատերը՝ պարտավոր անձը, խուսափում է այն կամավոր կատարելուց:

Վարչական հարկադրանքը բաղկացած է մարդկանց վարքագծի վրա հոգեբանական, նյութական կամ ֆիզիկական ազդեցության միջոցներից:

Հոգեբանական հարկադրանքն ազդում է անձի կամքի, հույզերի, գիտակցության վրա, ձևավորում է նրա կամքը և այլն: Նյութական հարկադրանքն ազդում է անձի գույքային շահերի վրա: Այն կարող է արտահայտվել գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավագործությունները սահմանափակելու, որոշակի նյութական բարիքներից զրկելու, տուգանքներ բռնագանձելու և այլ ձևերով: Ֆիզիկական հարկադրանքին են վերաբերում այն միջոցները, որոնք անմիջականորեն ազդեցություն են ունենում անձի վրա՝ սահմանափակելով նրա գործողությունների ազատությունը, խափանելով կամ կանխելով նրա հակաիրավական վարքագիծը և դրա հետևանքները, ստիպելով, որ նա գործի վարչական ակտով սահմանված պահանջներին համապատասխան:

Սա վարչական հարկադրանքի դրսևորման ներքին՝ նյութական, կողմն է: Իսկ արտաքին՝ ձևական, կողմն այն է, որ վարչական հարկադրանքն իրականացվում է վարչական հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

### **Հարց 118. Ո՞վ է պարտավոր անձը:**

#### **Պատասխան.**

Համաձայն Օրենքի 79-րդ հոդվածի՝ պարտավոր անձը որոշակի գործողություն կատարելու կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ ընդունված վարչական ակտի հասցեատերն է: Այդ անձի դերում կարող են հանդես գալ ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

Ինչպես արդեն հայտնի է, վարչական ակտը պետք է պարունակի վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը, վարչական ակտի հասցեատիրոջ անուն-ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը և այլ վավերապայմաններ (հոդված 55): Տվյալ դեպքում որպես համապատասխան վարչական ակտի հասցեատեր, հետևաբար և՛ պարտավոր անձ, հանդես է գալիս այն անձը, որը հստակ նշված է տվյալ վարչական ակտում: Սակայն, երբ խոսքը փոխարինող գործողության մասին է, և որևէ գործողություն կատարելու վերաբերյալ վարչական ակտով նախատեսված պարտականությունը պարտավոր անձը չի կատարում, բայց դրա կատարումը հնարավոր է մեկ այլ անձի կողմից, ապա վարչական մարմինը կարող է վերջինիս հանձնարարել կա-

տարելու այդ գործողությունը պարտավոր անձի հաշվին: Այս դեպքում չի կարելի ասել, որ փոխարինող գործողությունը կատարող անձը նույնպես հանդես է գալիս որպես պարտավոր անձ: Նա պարզապես կատարում է այն գործողությունը, որը հանձնարարում է վարչական մարմինը, իհարկե, եթե այդպիսի կատարումը հնարավոր է:

### **Ֆարց 119. Ո՞րն է կատարողական մարմինը:**

#### **Պատասխան.**

Ընդհանուր կանոնն այն է, որ կատարողական մարմինը վարչական ակտն ընդունած վարչական մարմինն է: Օրինակ՝ համայնքի ղեկավարը պարտավորեցնում է անձին քանդել ինքնական կառուցած շինությունը, իսկ հողամասը, որի վրա այն կառուցվել է՝ բերել նախնական վիճակի: Եթե վերը նշված վարչական մարմնի այդ պահանջը սահմանված ժամկետում չի կատարվում, ապա համայնքի ղեկավարը հանձնարարություն է տալիս համապատասխան համայնքային ծառայություններին, օրինակ՝ բնակարանային և կոմունալ շահագործման բաժնին, քանդել շինությունը: Այդ դեպքում շինությունը քանդելու ծախսերը պարտավոր անձից կգանձվեն դատական կարգով:

Բացառությամբ Օրենքի՝ վարչական ակտի կատարմանը վերաբերող դրույթների, հատուկ օրենքներով նախատեսված այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է դրամական պահանջների կատարմանը, այդ թվում նաև տուգանքների նշանակմանն ու դրանք բռնագանձելուն, վարչական ակտն ընդունած վարչական մարմինը հանդես է գալիս միայն որպես պարտատեր՝ համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի, այլ ոչ թե որպես կատարողական մարմին, և վարչական ակտի կատարմանն ուղղված նրա գործառույթները սահմանափակվում են իրավասու դատարան համապատասխան պահանջներ ներկայացնելով (հոդված 88):

Օրենքը նախատեսում է նաև, որ վարչական ակտն ընդունած վարչական մարմինն ի կատար է ածում նաև բողոքների վերաբերյալ վերադաս վարչական մարմնի ընդունած վարչական ակտը:

## **Հարց 120. Ի՞նչ է փոխարինող գործողությունը:**

### **Պատասխան.**

Վարչական հարկադրանքի այս միջոցը նորույթ է ՀՀ օրենսդրության մեջ:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ պրակտիկայում այն կիրառում ունեցել է: Փոխարինող գործողության դեպքում մեկ այլ անձը կատարում է վարչական մարմնի հանձնարարությունը, որը պարտադիր է միայն այն դեպքում, երբ այդպիսի կատարման համար առկա են բոլոր հնարավորությունները: Եթե բացակայում են այդպիսի հնարավորությունները, ապա վարչական մարմինը չի կարող պարտադրել անձին կատարելու իր հանձնարարությունը: Փոխարինող գործողությունը կատարվում է պարտավոր անձի հաշվին: Փոխարինող գործողությունը կատարելու համար փոխարինող գործողությունը կատարած անձը իրավունք ունի ստանալու իր կրած ծախսերի փոխհատուցում՝ օրենքով սահմանված կարգով: Այդպիսի դեպքերում վարչական ակտի հասցեատերը նախազգուշացվում է փոխարինող գործողությունն ընդհանրվելու մասին, և նախազգուշացման մեջ նշվում է փոխարինող գործողության կատարման ծախսերի նախահաշիվը, որը, սակայն, խոչընդոտ չէ հետագա պահանջներ ներկայացնելու համար, եթե փոխարինող գործողության կատարումն առաջացնի ավելի մեծ ծախսեր: Սա կարևոր երաշխիք է փոխարինող գործողությունը կատարած անձի համար: Օրինակ՝ վթարի դեպքում վերանորոգում է ստորգետնյա ջրատարը կամ կոյուղու խողովակները, սակայն չի փակում իր փորած ասֆալտապատ ճանապարհը կամ չի հեռացնում իր կատարած վերանորոգման աշխատանքների արդյունքում գոյացած թափոնները կամ շինարարական նյութերը, կամ չի կառուցում կամ ներկում, ասեմբլ, շենքի ներսում իր քանդած կամ իր գործողությունների հետևանքով գունաթափված պատերը: Այս դեպքում վարչական մարմինը կարող է դիմել մեկ այլ անձի, որպեսզի վերջինս պարտավոր անձի հաշվին իրականացնի այդ վերականգնողական աշխատանքները:

Հնարավոր են դեպքեր, երբ պարտավոր անձի հաշվին կատարողական մարմինն ինքը իրականացնի այդ գործողությունը, եթե, իհարկե, դա հնարավոր է, և եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Հարկադրանքի այս եղանակը կիրառվում է, երբ պարտավոր անձի

կողմից չի կատարվում վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը: Չկատարումը կարող է տեղի ունենալ ինչպես այն դեպքում, երբ պարտավոր անձն ուղղակի հրաժարվում է իր վրա դրված պարտականությունների կատարումից, այնպես էլ այն դեպքերում, երբ պարտավոր անձն ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չէ դա կատարել (տևական հիվանդություն, գործուղում և այլն):

Ուշադրություն պետք է դարձնել այն հանգամանքին, որ ոչ բոլոր վարչական ակտերի հարկադիր կատարման դեպքում է հնարավոր կիրառել հարկադրանքի այս եղանակը. ամենակարևոր պայմանը այլ անձի (ֆիզիկական, իրավաբանական) կողմից դրա կատարման հնարավորությունն է:

Մասնավորապես՝ եթե պարտականության բովանդակությունը ապօրինի կառուցված շինության ապամոնտաժումն է, հասկանալի է, որ դա կարող է կատարվել այդ ոլորտում մասնագիտացված մարմնի կողմից, սակայն եթե պարտականությունը վերաբերում է ինչ-որ գումարի վճարմանը, ապա հասկանալի է, որ դա պետք է կատարի ինքը՝ պարտավոր անձը:

Այլ անձի կողմից պարտավոր անձի վրա դրված պարտականությունների կատարումը բնավ չի նշանակում, թե պարտավոր անձն ազատվում է բոլոր հետագա պարտականություններից, քանզի փոխարինող գործողությունները պետք է կատարվեն հենց պարտավոր անձի հաշվին: Եթե պարտավոր անձի պարտականությունը՝ ապամոնտաժել ապօրինի շինությունը, կատարվել է այլ անձի կողմից, ապա պարտավոր անձը ստանձնում է նոր պարտականություն՝ վճարել փոխարինող գործողությունն իրականացրած անձի ծախսերը:

## **Չարդ 121. Ի՞նչ է տուգանքը:**

### **Պատասխան.**

Տուգանքը զույթային բնույթ ունեցող վարչական հարկադրանքի միջոց է: Օրենքն ամրագրում է այն սկզբունքը, որ Օրենքով նախատեսված վարչական հարկադրանքի միջոցները կարող են կիրառվել հաջորդաբար՝ ավելի մեղմ միջոցից դեպի ավելի ծանրը սկզբունքով, և միայն, այսպես ասած, «իր հերթը» հասնելու և նախորդ միջոցի սպառված կամ իր նպատակին չհասնելու դեպքում է, որ վարչական մարմինը կիրառում է վարչական հարկադրանքի մեկ

այլ միջոց: Գործնականում այդ միջոցներից առավել արդյունավետը, իհարկե, տուգանքն է: Սակայն այս հանգամանքը հիմք չէ կարծելու, թե վարչական հարկադրանքի միջոցները կարող են լինել հիմնական կամ լրացուցիչ: Եվ, քանի որ տուգանքը գույքային բնույթ ունի, ապա այն ունակ է անմիջականորեն ներագդել անձի վարքագծի վրա՝ շոշափելով նրա գույքային, հաճախ էական, շահերը: Ի դեպ, տուգանքը միշտ ունի դրամական արտահայտություն:

Տուգանք կարող է նշանակվել ինչպես գործողությունը պարտավոր անձի կողմից չկատարվելու դեպքում, այնպես էլ այն դեպքում, երբ վերջինս ձեռնպահ չի մնում որևէ գործողություն կատարելուց, որի կատարումն արգելվելու վերաբերյալ վարչական ակտ է ընդունվել:

Ըստ Օրենքի 82-րդ հոդվածի՝ վարչական ակտի կատարումն ապահովելու նպատակով որպես վարչական հարկադրանքի միջոց ֆիզիկական կամ իրավաբանական անձի նկատմամբ նշանակվող տուգանքը չի կարող գերազանցել սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը և չի կարող պակաս լինել սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից:

**Չարց 122. Ինչո՞վ է տարբերվում վարչական մարմնի կողմից ըստ Օրենքի որպես հարկադիր կատարման միջոց տուգանք նշանակելը վարչական իրավախախտման դիմաց (վարչական) տուգանք նշանակելուց:**

### **Պատասխան.**

Վարչական մարմնի կողմից որպես հարկադիր կատարման միջոց նշանակված տուգանքի և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի խախտման պատճառով նշանակված տուգանքի միջև տարբերությունը կայանում է նրանում, որ տուգանքը, որն սկզբունքորեն այլ բան չէ, քան պատիժ, պետական պատժամիջոց է հանդիսանում քաղաքացու կողմից կատարված վարչական իրավախախտման համար: Սկզբունքորեն, ինչպես և քրեական պատժի դեպքում, վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքը միևնույն արարքի համար կարող է նշանակվել միայն մեկ անգամ. նույն իրավախախտման համար պատժամիջոցի կրկնակի կիրառումն անթույլատրելի է:



Տուգանքը որպես հարկադիր կատարման միջոց, ըստ Օրենքի 82-րդ հոդվածի, չունի անձի կողմից կատարված իրավախախտման համար նրան «պատժելու» ֆունկցիա, նրա ֆունկցիան է՝ տուգանելու ճանապարհով անձին պարտադրել կատարելու վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը: Այսպիսով՝ տուգանքը որպես հարկադիր կատարման միջոց ծառայում է վարչական ակտի կատարմանը: Սա քրեական պատժի նմանվող սանկցիա չէ: Հետևաբար, այն կարող է նշանակվել մեկից ավելի անգամ, եթե վարչական ակտի հասցեատերը տևականորեն հրաժարվում է կատարել վարչական ակտով իր վրա դրված պարտականությունը: Քանի որ տուգանքը որպես հարկադիր կատարման միջոց չունի պատժի բնույթ, արգելված չէ այն կիրառել որևէ մեկի հանդեպ երկու անգամ նույն արարքի համար:

### **Հարց 123. Տուգանքի նշանակման ինչպիսի՞ կարգ և պայմաններ են նախատեսված:**

#### **Պատասխան.**

Յուրաքանչյուր դեպքում, երբ հարց է առաջանում իրականացնել օրենքով սահմանված կարգով ընդունված վարչական ակտի պահանջները, որոշակի առանձնահատկություններ են ի հայտ գալիս՝ կապված վարչական հարկադրանքի միջոցներ նշանակելու հետ: Տուգանքը նշանակվում է իրավասու մարմնի կողմից: Հարկ է նկատել, որ տուգանքը հետապնդում է ոչ թե պատճառված վնասի վերականգնման, այլ վարչական ակտով սահմանված, բայց պարտավոր անձի կողմից չկատարված պարտականությունների կատարելուն հարկադրելու նպատակ:

Գործող օրենքներով տուգանքներ նշանակելու իրավասությամբ օժտված են մի շարք վարչական մարմիններ, հատկապես ոստիկանության, մաքսային և հարկային մարմինները: Գործնականում, սակայն, տուգանք կիրառելու սահմանված կարգը հաճախ խախտվում է տուգանք կիրառող վարչական մարմինների կողմից:

Օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տուգանքը կարող է նշանակվել միայն դատարանի լճռով՝ վարչական մարմնի պահանջի հիման վրա:

Ընդ որում՝ տուգանք կիրառելու նախազգուշացման մեջ պետք է նշվի տուգանքի որոշակի չափը:

## **Յարդ 124. Ո՞րն է անմիջական հարկադրանքը:**

### **Պատասխան.**

Անմիջական հարկադրանք ասելով՝ հասկացվում են հարկադրական ազդեցության այն եղանակներն ու միջոցները, որոնք նպատակ ունեն հարկադրել, որ անմիջականորեն իրականացվեն վարչական ակտի պահանջները կամ ձեռնպահ մնալ վարչական ակտով սահմանված պահանջները խախտող գործողություններ կատարելուց: Նշված միջոցը պայմանավորված է անմիջական միջամտությամբ գործողություններ կատարելու կամ գործողություններից ձեռնպահ մնալուն: Մի շարք դեպքերում այն ոչ միայն արդյունավետ միջոց է, այլև միակ ու վերջին հնարավոր ձևը՝ իրականացնելու վարչական ակտով սահմանված պահանջները:

Անմիջական հարկադրանքը կիրառվում է ինչպես հանրության, պետության, այնպես էլ տվյալ անձի շահերից ելնելով: Օրինակ՝ վարչական ակտի պահանջների խախտմամբ կառուցված շինությունը, որը գտնվում է մարդաշատ վայրում, կարող է անմիջականորեն վնաս հասցնել (փլվել, քանդվել, կիսաքանդվել և այլն) ինչպես հանրությանը, այնպես էլ տվյալ անձին, որը պատրաստվում է բնակվել կամ բնակվում է այդ շինությունում: Անմիջական հարկադրանքի միջոցի կիրառմամբ պետք է պահպանվեն շատ ավելի մեծ արժեքներ, քան այն արժեքները, որոնց վնասում է անմիջական հարկադրանքի կիրառումը:

Անմիջական հարկադրանքի կիրառմամբ նաև կանխվում են այնպիսի գործողություններ, որոնք «կխորացնեին» տվյալ անձի մեղավորությունը և կմեծացնեին վրա հասնելիք վնասները, դրանց համար պատասխանատվությունն ու հատուցման ծախսերը:

Անմիջական հարկադրանքի կիրառման վերաբերյալ ՀՀ օրենքներն արդեն իսկ նախատեսում են որոշակի կարգ և պայմաններ, օրինակ՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը:

Օրենքի 83-րդ հոդվածի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ անմիջական հարկադրանքի միջոց կարելի է կիրառել միայն այն դեպքերում, եթե փոխարինող գործողությունը կամ տուգանքը չեն հանգեցրել վարչական ակտի կատարմանը կամ օբյեկտիվ հանգամանքների բերումով չեն կարող կիրառվել: Նման դեպքերում օրենքով համապատասխան լիազորություն ունեցող վարչական մարմինը կարող է անմիջականորեն հարկադրել, որ կա-

տարվի համապատասխան գործողությունը կամ արգելափակել որոշակի գործողության կատարումը:

Ընդ որում՝ եթե պարտավոր անձը անմիջական հարկադրանքի կիրառման ժամանակ դիմադրություն է ցույց տալիս, այն կարող է հաղթահարվել ուժի կիրառմամբ՝ օրենքով սահմանված կարգով: Այդ դեպքում կատարողական մարմնի պահանջով համապատասխան մարմինները պարտավոր են օգնություն ցուցաբերել նրան՝ դիմադրությունը հաղթահարելու համար:

### **Յարգ 125. Որո՞նք են անմիջական հարկադրանքի դրսևորման ձևերը:**

#### **Պատասխան.**

Անմիջական հարկադրանքը կարող է միանգամայն տարբեր դրսևորումներ ունենալ: Ըստ իրենց բնույթի, հատուկ միջոցները կարող են լինել՝

1. հոգեբանական ազդեցության միջոցներ՝ անմիջական հարկադրանք կիրառելու սպառնալիքներ.

2. ֆիզիկական ազդեցության միջոցներ՝ տեխնիկական (հատուկ) միջոցների կամ զենքի կիրառում.

3. օպերատիվ գործողություններ, որոնք կապված են անձնական կամ գույքային սահմանափակումների հետ, որոնց իրականացման շնորհիվ պարտավոր անձը զրկվում է վարչական ակտով չնախատեսված իր գործողությունը (գործողությունները) շարունակելու հնարավորությունից՝ կողմնորոշվելով դեպի նախատեսված պարտականությունների կատարում:

Ելնելով անմիջական ազդեցության նպատակից, բնույթից և օբյեկտից՝ անմիջական հարկադրանքի իրագործման եղանակները կարելի է դասակարգել՝ չնայած ինչպես ցանկացած դասակարգում, այնպես էլ սա կրում է պայմանական բնույթ, հետևյալ կերպ.

- անձի նկատմամբ կիրառվող հարկադրանք.
- գույքային հարկադրանք. օրինակ՝ բնակության համար ոչ պիտանի ինքնական զբաղեցված տարածքներից արտաքսումը, ինքնական կառուցված շինության քանդումը, օգտագործման կանոնների խախտման հետևանքով գույքի բռնագրավումը և այլն.
- տեխնիկական հարկադրանք. օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների շահագործման դադարեցումը, անվտանգության

կանոնների, հակահրդեհային նորմերի պահպանության նկատառումներից ելնելով ձեռնարկության գործունեության դադարեցումը, վերանորոգման աշխատանքների արգելումը և այլն:

**Հարց 126. Որո՞նք են վարչական հարկադրանք կիրառելու մասին նախազգուշացնելու կարգը և պայմանները:**

**Պատասխան.**

Հարկադրանքի միջոցների կիրառման մասին պարտավոր անձը պետք է նախազգուշացվի:

Պետք է նկատել, որ սա այն նույն նախազգուշացումը չէ, որը կիրառվում է համաձայն Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի 25-րդ հոդվածի:

Նախազգուշացման մեջ պետք է սահմանվի համապատասխան պարտականությունը կատարելու ժամկետը, որի ընթացքում պարտավոր անձին պետք է հնարավորություն տրվի կատարելու այդ պարտականությունն իր համար ընդունելի և օրենքով չարգելված եղանակով:

Նախազգուշացումն ունի իր դրսևորման յուրահատկությունը՝ կախված նրանից, թե վարչական հարկադրանքի ինչ միջոց է կիրառվում: Այսպես՝ կարող ենք պայմանականորեն ասել, որ գոյություն ունի նախազգուշացում՝ փոխարինող գործողության կատարման առիթով, նախազգուշացում՝ տուգանք կիրառելու մասին և նախազգուշացում՝ անմիջական հարկադրանք կիրառելու մասին: Սրանք իրենց հերթին ունեն առանձնակի դրսևորումներ:

Նախազգուշացումը պետք է կազմվի գրավոր և Օրենքով վարչական ակտերի հանձնման համար սահմանված կարգով հանձնվի պարտավոր անձին:

Փոխարինող գործողության կատարման առիթով նախազգուշացման մեջ պետք է նշվի ծախսերի նախահաշիվը, որը չի կարող խոչընդոտել հետագա պահանջներ ներկայացնելը, եթե փոխարինող գործողության կատարումն առաջացնի ավելի մեծ ծախսեր: Տուգանք կիրառելու նախազգուշացման մեջ պետք է նշվի տուգանքի որոշակի չափ:

Նախազգուշացումը կարող է կրկնվել այնքան ժամանակ, քանի դեռ պարտականությունը չի կատարվել կամ կատարողական մարմինը չի դիմել անմիջական հարկադրանքի կիրառմանը: Այդ ըն-

թացքում նախազգուշացումը կարող է փոփոխություններ կրել:

**Հարց 127. Ինչպե՞ս են նշանակվում հարկադրանքի միջոցները:**

**Պատասխան.**

Վարչական ակտի պահանջները չկատարելու դեպքում հարկադրանքի միջոցներ կիրառելիս վարչական մարմինը գրավոր նախազգուշացնում է վարչական ակտի հասցեատիրոջը, որի մեջ սահմանվում են այն ժամկետները, որոնց ընթացքում պարտավոր անձը պետք է կատարի համապատասխան պարտականությունը: Այդ ժամկետների ավարտից հետո վարչական մարմնի կողմից նշանակվում են հարկադրանքի միջոցներ:

Ընդհանուր կանոնն այն է, որ նախ կարող է տրվել նախազգուշացում՝ փոխարինող գործողություն կատարելու առիթով, եթե հնարավոր չէ կատարել փոխարինող գործողությունը, ապա վարչական մարմինը կարող է նախազգուշացնել տուգանք նշանակելու մասին, և այս պարագայում նախազգուշացման մեջ նշված ժամկետում պարտավոր անձի կողմից վարչական ակտը չկատարվելու դեպքում վերջինս կարող է տուգանվել: Եթե տուգանքը ևս չի ապահովում վարչական ակտի կատարումը, ապա պարտավոր անձը կարող է զգուշացվել անմիջական հարկադրանքի կիրառման մասին, որից հետո այն կարող է կիրառվել իրականում:

**Հարց 128. Ո՞րն է հարկադրանքի միջոցներ կիրառելու կարգը:**

**Պատասխան.**

Վարչական հարկադրանքի միջոց կիրառելու մասին նախազգուշացնելուց հետո, դրանում սահմանված ժամկետում պարտավոր անձի կողմից համապատասխան պարտականությունները չկատարելու դեպքում նշանակվում է հարկադրանքի միջոց: Այն նշանակվում է վարչական հարկադրանքի միջոցի նշանակմանը համապատասխան:

Եթե պարտավոր անձը փոխարինող գործողության կամ անմիջական հարկադրանքի կիրառման ժամանակ դիմադրություն է ցույց տալիս, դա կարող է հաղթահարվել ուժի կիրառմամբ՝ օրեն-

քով սահմանված կարգով: Այդ դեպքում կատարողական մարմնի պահանջով համապատասխան մարմինները պարտավոր են օգնություն ցույց տալ դիմադրությունը հաղթահարելու համար:

**Հարց 129. Ինչպե՞ս է ավարտվում հարկադիր կատարման վարույթը:**

**Պատասխան.**

Հարկադիր կատարման վարույթն ավարտվում է այն ժամանակ, երբ կատարումը հասնում է իր նպատակին:

Այսինքն՝ հարկադիր կատարման վարույթ հարուցելիս, երբ վարչական մարմինը տալիս է գրավոր նախազգուշացում, որից հետո նշանակում է վարչական հարկադրանքի միջոց ու արդյունքում կիրառում է վարչական հարկադրանքի միջոցը՝ հասնելով վարչական ակտի պահանջների կատարմանը, այդ իսկ պահից ավարտվում է հարկադիր կատարման վարույթը:

**ԲԱԺԻՆ VI. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ**

**Հարց 130. Ինչպիսի՞ կազմ ունեն վարչական ծախսերը:**

**Պատասխան.**

Վարչական վարույթում համապատասխան վճարումների նշանակման եղանակից ելնելով՝ բոլոր վարչական ծախսերը բաժանվում են երկու խմբի՝ դիմողի կողմից համապատասխան բյուջե վճարվող պետական կամ տեղական տուրքեր և գործի քննության հետ կապված այլ ծախսեր:

Պետական կամ տեղական տուրքերը համարվում են համապատասխան բյուջեներ արվող դրամական մուտքերի տարատեսակ, որոնք պարտադիր կարգով պետական կամ տեղական բյուջե են վճարվում ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից՝ վարչական վարույթ նախաձեռնելու կամ այլ գործողություններ կատարելու համար:

Պետական և տեղական տուրքը, ինչպես և ցանկացած այլ դրամական մուտք, ունեն իրենց նշանակությունը, այն է՝ փոխհատուցել վարչական մարմնի համապատասխան գործունեության, տվյալ

պարագայում՝ վարչական վարույթի իրականացման հետ կապված ծախսերը:

Գործի քննության հետ կապված այլ ծախսերը կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը պետական տուրքից զատ լրացուցիչ վճարումներն են, որոնք վարույթի մասնակիցները կատարում են իրենց կողմից այս կամ այն լրացուցիչ ծախսեր պահանջող գործողությունները նախաձեռնելիս, օրինակ՝ վկաներ կանչելը, փորձաքննությունն անցանակելը և այլն, և երկրորդ խումբը այն ծախսերն են, որոնք կատարվում են վարչական վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ համապատասխան բյուջեի միջոցների հաշվին:

Պետական տուրքի հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով: Այն համապարփակ ձևով կարգավորում է ոչ միայն վարչական վարույթի ընթացքում պետական տուրքի հետ կապված հարաբերությունները, այլև դատարան դիմելու ընթացքում վճարվող պետական տուրքի չափերը, դրանց վճարման, վերադարձման, պետական տուրքից ազատման հետ կապված հարաբերությունները:

Այն դեպքում, երբ վարչական վարույթն իրականացնում են տեղական ինքնակառավարման մարմինները, կարող են սահմանված լինել տեղական տուրքեր: Տեղական տուրքերը սահմանված են «Տեղական տուրքերի մասին» ՀՀ օրենքով: Տեղական տուրքերը, ի տարբերություն պետական տուրքերի, փոխանցվում են ոչ թե պետական բյուջե, այլ մուտքագրվում են համապատասխան համայնքի բյուջե և կազմում են վերջինիս եկամուտների գոյացման կարևորագույն աղբյուրներից մեկը:

Ըստ էության, անձի կողմից վարչական վարույթի ընթացքում վճարվող հիմնական գումարը պետական կամ տեղական տուրքն է, սակայն, հաշվի առնելով որոշ վարույթների առանձնահատկությունները, մասնավորապես՝ վարույթին փորձագետի, վկայի, թարգմանչի մասնակցությունը, դիմողից կարող են գանձվել այլ գումարներ ևս, որոնք առաջանում են վարչական վարույթի ժամանակ վարչական մարմինների կողմից լրացուցիչ ծախսեր կատարելու հետևանքով:

Թե առաջին, թե երկրորդ խմբի ծախսերը պետք է սահմանվեն միայն օրենքով: Ցանկացած այլ իրավական ակտով վարչական վարույթի համար ծախսեր սահմանելն անթույլատրելի է: Նման դեպքերում անձը՝ անկախ որևէ բանից, կարող է, հղում կատարելով

այս հոդվածի վրա, հրաժարվել վճարել նման ծախսերը կամ համապատասխան դիմումով կամ հայցով դիմել իրավասու մարմին կամ դատարան:

**Հարց 131. Ի՞նչ չափի տուրքեր են վճարվում վարչական վարույթում:**

**Պատասխան.**

Անդրադառնալով վարչական վարույթի ընթացքում վճարվող պետական և տեղական տուրքերին՝ նշենք, որ դրանք պետք է լինեն տնտեսապես հիմնավորված և ոչ թե կամայական, որը կարող է արգելք հանդիսանալ անձի այս կամ այն իրավունքն իրականացնելու համար: Մյուս կողմից՝ պետական և տեղական տուրքերը համաչափ չեն համապատասխան «հանրային ծառայությունների» ծախսերին՝ նրանց չափերը խիստ նույնական չեն կոնկրետ գործի քննարկման առնչությամբ վարչական մարմնի կատարած ծախսերի չափերի հետ:

Պետական և տեղական տուրքեր սահմանելիս հաշվի են առնվում այս կամ այն գործի սոցիալական, տնտեսական, քաղաքական նշանակությունը, վարչական մարմինների մատչելիությունը և այլ գործոններ:

Անթույլատրելի է այնպիսի տուրքեր սահմանելը, որոնք փաստացի կարգելեն անձի՝ Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իրավունքների իրականացումը: Օրենքով սահմանված դեպքերում, չափով և կարգով պետական ու տեղական տուրք վճարելու՝ դիմողի և երրորդ անձանց պարտականությունը, որն ամրագրված է Օրենքի 91-րդ հոդվածում, ՀՀ Սահմանադրության 45-րդ հոդվածում ամրագրված դրույթի որոշակիացումն է վարչական վարույթի համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի ստորև վկայակոչված կետերը սահմանում են վարչական վարույթի ընթացքում գանձվող պետական տուրքի գանձման տարատեսակները՝

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման կապակցու-



թյամբ վկայականներ տալու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

ը) մշակութային արժեքներն արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի վկայագիր տալու համար.

թ) գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոգծապատկերների տեղաբանությունների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով արտոնագրեր տալու համար.

ժբ) սույն օրենքի 19.1 և 20 հոդվածներով սահմանված այլ ծառայությունների կամ գործողությունների համար:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ սույն թվարկումը վերջնական չէ, և վարչական մարմնի այլ գործողությունների, ծառայությունների համար ևս կարող է պետական տուրք գանձվել:

Ինչ վերաբերում է պետական տուրքի դրույքաչափերին, ապա վերջիններս սահմանված են նույն օրենքի IV գլխում:

Տեղական տուրքերի հետ կապված հարաբերությունները կարգավորված են 1998 թվականի հունվարի 9-ի՝ «Տեղական տուրքերի մասին» ՀՀ օրենքով և 2002 թվականի հունիսի 5-ի՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

«Տեղական տուրքերի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածը սահմանում է տեղական տուրքերի տեսակները, որոնք առանց բացառության վերաբերում են վարչական վարույթներին: «Տեղական տուրքերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածը սահմանում է տեղա-

կան տուրքերի դրույքաչափերը, սակայն ի տարբերություն պետական տուրքերի դրույքաչափերի, այս պարագայում սահմանվում են դրանց նվազագույն և առավելագույն սահմանները, որոնց շրջանակներում էլ համայնքների ավագանիները, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետի համաձայն, սահմանում են տեղական տուրքերի դրույքաչափերը: Ուստի, եթե պետական տուրքերի դրույքաչափերը միասնական են հանրապետության ողջ տարածքի համար, ապա տեղական տուրքերի չափերը տարբեր համայնքներում կարող են տարբեր լինել, ինչը պայմանավորված է համայնքների առանձնահատկություններով:

### **Հարց 132. Ո՞րոնք են վարչական վարույթում կատարվող այլ ծախսերը:**

#### **Պատասխան.**

Օրենքի 93-րդ հոդվածը սահմանում է վարչական վարույթում կատարվող այլ ծախսերի տեսակները, դրանց վճարման կարգն ու չափերը:

Այս ծախսերի շարքում առաջինը հաղորդակցական ծախսերն են, որոնք կապված են վարչական ակտը կամ այլ փաստաթղթերը դրանց հասցեատերերին հանձնելու, վկաներ, փորձագետներ և թարգմանիչներ հրավիրելու հետ: Վարույթների մեծ մասը նման ծախսերից ձերբազատված կլինի: Վարչական ակտը կամ այլ փաստաթղթերը դրանց հասցեատերերին հանձնելու հետ կապված ծախսերն այն փոստային ծախսերն են, որոնք վարչական մարմինները կատարում են վերջիններս ուղարկելու համար: Մեզանում արձատարվել է այն պրակտիկան, համաձայն որի (միգրացե պատճառը նաև փոստի ոչ այնքան արդյունավետ աշխատանքն է, ինչն ինքնին ընդունելի չէ)՝ ակտի հասցեատերերը գերադասում են վարչական մարմիններից նույնիսկ միջամտող վարչական ակտերը ստանալ առձեռն, ինչը զործնականում վարչական մարմնի համար ծախսեր չի առաջացնում:

Ծախսերի երկրորդ խումբը նույնպես կարելի է դասել հազվադեպ առաջացողների շարքը. դրանք հրապարակային հայտարարություններ անելու, վարչական ակտը հրապարակելու հետ կապված ծախսերն են:

Հրապարակային հայտարարություններ կարող են արվել, երբ

վարչական մարմնին հայտնի չէ այն անձանց շրջանակը, որոնց իրավունքներն ու շահերը կարող են շոշափվել ընդունվելիք վարչական ակտով: Այդ հայտարարությունները պետք է արվեն լսումներ անցկացնելու նպատակով, վարչական վարույթի ընթացիկ փուլում: Ինչ վերաբերում է վարչական ակտի հրապարակմանը, ապա վերջինս, ըստ Օրենքի 59-րդ հոդվածի 5-րդ մասի, ենթակա է պարտադիր հրապարակման, եթե վարչական մարմնին հայտնի չեն այդ ակտով ուղղակիորեն շոշափվող երրորդ անձանց վերաբերյալ տեղեկությունները: Վարչական ակտը կարող է հրապարակվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում՝ խոսքը այլ օրենքներով նախատեսված դեպքերի մասին է:

Գրավոր վարչական ակտը կարող է հրապարակվել նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ, եթե ակտի հրապարակումը վարչական մարմնին համարում է առավել նպատակահարմար՝ պետության և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Ուստի, եթե վարչական ակտը չի հրապարակվում տվյալ վարչական մարմնի տեղեկագրում, ապա բնական է, որ այն առաջացնելու է լրացուցիչ ծախսեր, որոնց չափն այդ պարագայում կորոշվի համապատասխան վարչական մարմնի և համապատասխան լրատվական միջոցի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Ծախսերի հաջորդ խումբը կառաջանա այն պարագայում, երբ վարույթի մասնակիցների պահանջով վերջիններիս տրվեն վարչական ակտի կամ վարույթի հետ առնչություն ունեցող այլ փաստաթղթերի լրացուցիչ օրինակներ, դրանց պատճեններ, լուսապատճեններ և քաղվածքներ: Այս ծախսերն իրենց ծավալով այնքան էլ մեծ չեն և կազմում են թղթի և այլ նյութերի համար անհրաժեշտ գումարը:

Ինչպես և ծախսերի առաջին խումբը, Օրենքի 92-րդ հոդվածի 1-ին մասի «դ» ենթակետում նշված ծախսերը նույնպես կապված են հաղորդակցության հետ, քանի որ խոսքը վարույթին մասնակցություն ապահովելու կամ վարույթի հետ կապված այլ նպատակով հեռագրեր և միջքաղաքային հեռախոսագանգեր ուղարկելու մասին է: Այս ծախսերը ևս կարող են չառաջանալ, եթե վարույթի ընթացքում, Օրենքի համաձայն, չեն իրականացվում լսումներ:

Ծախսերի հաջորդ խումբը կապված է գործուղումների հետ: Այդ ծախսերը կարող են առաջանալ այն պարագայում, երբ վարչական

մարմնի կողմից տեղազննություն անցկացնելու անհրաժեշտություն է առաջացել, և այն պետք է անցկացվի վարչական մարմնի գտնվելու վայրից բավականին հեռու գտնվող այլ վայրում:

Վարչական վարույթի ընթացքում չկատարվող ծախսերի հաջորդ խումբը կապված է այլ վարչական մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար կատարվող վճարումների հետ: Նման ծախսեր կարող են առաջանալ այն պարագայում, երբ վարչական մարմինը ստիպված կլինի դիմելու այս կամ այն մարմնի կամ անձի ծառայությանը՝ վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտի բովանդակության համար նշանակություն ունեցող փաստերը, հանգամանքները պարզելու հետ կապված որոշակի գործողություններ, ծառայություններ հայցելու համար:

Ծախսերի հաջորդ խումբը կապված է իրերի տեղափոխման կամ պահպանման հետ: Դրանք կարող են առաջանալ այն պարագայում, երբ վարույթի ընթացքում որոշակի գույք պետք է տեղափոխվի կամ ի պահ հանձնվի:

Հաջորդ խումբը վարչական վարույթում ներգրավված փորձագետներին, վկաներին և թարգմանիչներին վճարվող գումարներն են (տես՝ 134-րդ հարցի պատասխանը):

### **Հարց 133. Ու՞մ միջոցների հաշվին են կատարվում վարչական ծախսերը:**

#### **Պատասխան.**

Ինչպես արդեն նշել ենք, վարչական ծախսերը բաժանվում են երկու խմբի՝ պետական տուրք և վարչական վարույթում կատարվող այլ ծախսեր:

Հարկ է նշել, որ վարչական վարույթում ծախսերի բաշխման կարգը էականորեն տարբերվում է քաղաքացիական դատավարությունում դատական ծախսերի բաշխման կարգից:

Եթե քաղաքացիական դատավարությունում դատական ծախսերի բաշխման հիմքում դրվում է այն հանգամանքը, թե ում օգտին է վճիռ կայացվել, ապա Օրենքի 92-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, վերը նշված ծախսերը կատարում է վարչական վարույթն իրականացնող մարմինը, բացառությամբ փորձագետ կամ թարգմանիչ հրավիրելու հետ կապված ծախսերի և վարչական գործի նյութերից

պատճեններ (լուսապատճեններ) կամ քաղվածքներ կատարելու և տրամադրելու հետ կապված ծախսերի: Ինչ վերաբերում է փորձագետին, վկային կամ թարգմանչին վճարելուն, ապա այստեղ Օրենքը տարբերակված նուտեցում է ցուցաբերում, որի հիմքում դրված է այն հանգամանքը, թե ում նախաձեռնությամբ են հրավիրվել համապատասխան փորձագետը, վկան կամ թարգմանիչը: Եթե վերջիններս հրավիրվել են վարչական մարմնի նախաձեռնությամբ, ապա վճարումը կատարվում է պետական կամ համապատասխան համայնքի բյուջեի միջոցներից, եթե հրավիրվել են վարույթի որևէ մասնակցի կողմից, ապա վճարումը կատարում է վերջինս:

Վարչական գործի նյութերից պատճեններ (լուսապատճեններ) կամ քաղվածքներ կատարելու և տրամադրելու հետ կապված ծախսերը կրում է համապատասխան պահանջը ներկայացրած անձը: Վերջինս կարող է լինել ինչպես ակտի հասցեատերը, այնպես էլ երրորդ անձը կամ վկան: Այս պարագայում վճարվող գումարի չափը չպետք է գերազանցի պատճենահանման, լուսապատճենահանման կամ քաղվածք կատարելու համար վարչական մարմնի կատարած փաստացի ծախսերը:

### **Հարց 134. Վարչական վարույթում ի՞նչ չափով են վարձատրվում վկաները, փորձագետները և թարգմանիչները:**

#### **Պատասխան.**

Վարչական վարույթի ընթացքում վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին վճարվող գումարների հետ կապված հարաբերությունները կարգավորելիս Օրենքում տարբերակում կա՝ կապված այն հանգամանքի հետ, թե առաջին՝ համապատասխան թարգմանություն կատարելը կամ փորձագիտական եզրակացություն տալը մտնո՞ւմ է վարույթ իրականացնող մարմնի լիազորությունների մեջ, և երկրորդ՝ ո՞ւմ հրավերով են վարույթին մասնակցում համապատասխան թարգմանիչը կամ փորձագետը:

Եթե թարգմանություն կատարելը կամ փորձագիտական եզրակացություն տալը մտնում են տվյալ վարչական մարմնում աշխատող փորձագետի կամ թարգմանչի ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների մեջ, ապա այդ աշխատանքների համար նրանք լրացուցիչ վարձատրություն չեն ստանա: Եթե տվյալ վարչական մարմնում չկան տվյալ լեզվին տիրապետող

թարգմանիչներ կամ համապատասխան փորձաքննություն անցկացնելու ունակ մասնագետներ, ապա վարչական մարմինը վարույթում կրնդգրկի այդ մասնագետներին, և նրանք կվճարվեն իրենց կատարած աշխատանքների համար:

Ինչ վերաբերում է վարչական մարմնի կողմից վկային, փորձագետին և թարգմանչին վճարվող գումարների չափին և կարգին, ապա դրանք սահմանված են 2004 թվականի հուլիսի 29-ի՝ ՀՀ կառավարության թիվ 1130-Ն «Վարչական վարույթի ընթացքում կատարված աշխատանքների համար փորձագետներին, թարգմանիչներին և վկաներին վճարումներ կատարելու կարգը հաստատելու մասին» որոշմամբ<sup>9</sup>:

Սահմանված կարգի համաձայն՝

ա) վարձատրության ենթակա է այն փորձագետի աշխատանքը, որը վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից, Օրենքի 45-րդ հոդվածի համաձայն, ներգրավվել է վարչական վարույթում՝ փաստական հանգամանքների ուսումնասիրման համար, և եթե փորձագիտական աշխատանքները այդ վարչական մարմնում նրա ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների մեջ չեն մտնում:

Օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում կատարելու համար վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը փորձագետ է ներգրավել, որը փորձագիտական եզրակացություն է ներկայացրել զննում կատարելու արդյունքների մասին, ապա այդ դեպքում նույնպես կատարվում է վարձատրություն՝ ստորև ներկայացվող կարգին համապատասխան.

բ) վարձատրության ենթակա է այն թարգմանչի աշխատանքը, որը վարչական վարույթում ներգրավվել է այն իրականացնող վարչական մարմնի կողմից, և եթե թարգմանչական աշխատանքները չեն մտնում այդ վարչական մարմնում նրա ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների մեջ.

գ) վարձատրություն ստանալու իրավունք ունի վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից Օրենքի 44-րդ հոդվածի համաձայն հրավիրված և վարչական մարմին ներկայա-

---

<sup>9</sup> Այսուհետ՝ Կարգ

ցած ու տվյալ գործով ցուցնունք տված վկան:

Կարգի գործողությունը չի տարածվում այն փորձագետի և թարգմանչի կատարած աշխատանքների վարձատրության վրա, ովքեր վարչական վարույթում ներգրավվել են վարչական վարույթի մասնակիցներից որևէ մեկի հրավերով: Այս պարագայում վարձատրությունը կատարվում է փորձագետի կամ թարգմանչի և վարույթի համապատասխան մասնակցի միջև վճարման կարգի և չափի շուրջը ձեռք բերված համաձայնության հիման վրա: Սահմանված կարգը չի տարածվում նաև վարչական վարույթի մասնակիցների միջնորդությամբ ներգրավված վկային վճարելու հարաբերությունների վրա:

Եթե վարչական վարույթում ընդգրկված վկայի կամ փորձագետի համար հատուկ օրենքներով առանձին վարույթներին մասնակցելու համար սահմանված է վարձատրության այլ կարգ, ապա նրանք վարչական վարույթի իրականացման աշխատանքներում ներգրավվելու կապակցությամբ ենթակա են վարձատրության՝ այդ առանձին (հատուկ) օրենքներով կամ դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

Կարգի II բաժինը սահմանում է փորձագետի վարձատրության պայմանները: Փորձագետին վարձատրելու հիմք կարող է հանդիսանալ բացառապես Օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի գրավոր դիմումը համապատասխան կազմակերպությանը կամ անձին և դրա հիման վրա նշանակված փորձագետի կատարած փորձաքննության արդյունքներով վարչական վարույթ իրականացնող վարչական մարմին ներկայացված և այդ մարմնի կողմից փորձաքննությանն առաջադրված հարցին (հարցերին) ըստ էության պարզաբանում տվող փորձագիտական եզրակացությունը:

Սահմանված կարգի համաձայն՝ անկախ այն հանգամանքից, թե նշանակված փորձագետը որքան աշխատանք է կատարել ծառայության դիմաց, վերջինիս որևէ վճարում չի կատարվում, եթե փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի կապակցությամբ ստացվել է այդ հարցերի պարզաբանման անհնարինության մասին եզրակացություն: Մինչև համապատասխան աշխատանքի ստանձնումը փորձագետը պետք է հստակ պատկերացնի իրենից պահանջվող աշխատանքի ծավալը, դրա բովանդակությունը, գնա-

հատի իր ուժերն ու կարողությունը և նոր միայն ստանձնի այդ աշխատանքները, այլապես որևէ վարձատրություն չի ստանա:

Փորձագետին հատուցվում են ոչ միայն փորձագիտական եզրակացություն կազմելու հետ կապված ծախսերը, այլև փորձաքննության իրականացման ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև վարչական վարույթի ընթացիկ փուլում փորձագիտական եզրակացություն ներկայացնելու և դրա վերաբերյալ վարչական մարմնի կամ վարույթի մասնակիցների ու այլ մարմինների ներկայացուցիչների հարցերին պատասխանելու կամ պարզաբանումներ տալու ժամանակ կատարված ծախսերը: Վերջիններս առավելապես կառաջանան այդ մասնակիցների հետ փորձագետի հաղորդակցությունից:

Իր կատարած բոլոր աշխատանքների համար փորձագետի ընդհանուր ծախսերը որոշվում են աշխատանքների վրա նրա ծախսած յուրաքանչյուր մեկ ժամի դիմաց 295 դրամի չափով:

Փորձագիտական եզրակացություն կազմելու, ինչպես նաև վարչական վարույթի ընթացիկ փուլում փորձագիտական եզրակացություն ներկայացնելու և դրա վերաբերյալ վարչական մարմնի կամ վարույթի մասնակիցների ու այլ մարմինների ներկայացուցիչների հարցերին պատասխանելու կամ պարզաբանումներ տալու ժամանակ կատարված ծախսերը, փորձագետի ծախսած ժամերի թիվը պարզելու համար կիրառվում են Կարգի 16-րդ կետի երկրորդ և երրորդ պարբերությունների դրույթները, իսկ ժամերի թիվը ճշգրտվում է վարչական մարմնի հետ:

Փորձագետը փորձաքննություն կատարելու համար վարձատրություն ստանալու նպատակով կազմում է փորձաքննության համար կատարված՝ Կարգի 10-րդ կետով նախատեսված բոլոր ծախսերի նախահաշիվը՝ փորձաքննության համար ծախսած ժամերի թվի նշմամբ: Ընդ որում՝ բուն փորձաքննության կատարման համար ծախսված ժամերի թիվը և վարչական մարմնում փորձագետի հանդես գալու ընթացքում ծախսված ժամերի թիվը նշվում են առանձին-առանձին:

Նախահաշիվում նշվում են նաև վարչական վարույթի անվանումը, որում ներգրավվել է փորձագետը, նրա անունը, հայրանունը և ազգանունը: Նախահաշիվը՝ փորձագետի, իսկ եթե փորձաքննություն կատարելու համար վարչական մարմինը դիմել է որևէ կազմակերպության, ապա նաև տվյալ կազմակերպության ղեկավարի



(նրան փոխարինող պաշտոնատար անձի) ստորագրությամբ և այդ կազմակերպության կնիքով հաստատված, ներկայացվում է վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի ղեկավարին (նրան փոխարինող պաշտոնատար անձին):

Եթե փորձաքննությունը կատարվել է մի քանի փորձագետների մասնակցությամբ, ապա փորձաքննության ծախսերի նախահաշիվը ստորագրում են բոլոր փորձագետները՝ առանձին նշելով նրանցից յուրաքանչյուրի կողմից կատարված ծախսերի չափը:

Ինչպես արդեն նշվեց, վճարվում են նաև փորձաքննություն անցկացնելու հետ կապված մյուս ծախսերը՝ տրանսպորտի, գիշերավարձի և օրապահիկի համար: Եթե փորձագետի կողմից կատարվել են նման ծախսեր, ապա նախահաշվում նշվում են նաև այդ ծախսերի չափերը: Հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում դրանք կցվում են փորձաքննության ծախսերի նախահաշվին:

Փորձագետի կատարած տրանսպորտային ծախսերը հաշվարկվում են վկայի տրանսպորտային ծախսերի փոխհատուցման կարգին համապատասխան, իսկ գիշերավարձի և օրապահիկի ծախսերը սահմանված են Կարգի V բաժնում:

Այն դեպքում, երբ փորձագետներից որևէ մեկը համաձայն չէ փորձաքննություն կատարելու համար առաջարկված վճարի չափին (չափերին), ապա ստորագրելով նախահաշիվը, նշում է անհամաձայնության պատճառը (պատճառները) և իր կողմից ընդունելի համարվող չափը (չափերը):

Եթե մինչև փաստացի վճարման պահը նախկինում անհամաձայնություն հայտնած փորձագետի (փորձագետների) և մյուս փորձագետի (փորձագետների) միջև ձեռք է բերվել փորձաքննություն կատարելու համար նրանցից յուրաքանչյուրի ծախսերի չափերի շուրջ փոխհամաձայնություն, ապա դա պետք է արտացոլվի բոլոր փորձագետների կողմից ստորագրված, ճշգրտված նախահաշվում, որին պետք է կցվի սկզբնական նախահաշիվը:

Եթե փորձագետները մինչև փաստացի վճարման պահը փորձաքննություն կատարելու համար ձեռք չեն բերում իրենցից յուրաքանչյուրի կատարած ծախսերի չափերի շուրջ փոխհամաձայնություն, ապա դրանց չափերը որոշում է վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը՝ դրա վերաբերյալ իր գրավոր հիմնավորումը կցելով ծախսերի նախահաշվին:

Եթե վարչական մարմնի կողմից նշանակվել է լրացուցիչ փորձաքննություն, ապա դրա դիմաց վարձատրություն տալու համար համապատասխան փաստաթղթերը, սույն Կարգի համաձայն, կազմվում են սկզբնական (նախորդ) փորձաքննությանը վերաբերող փաստաթղթերից առանձին:

Թարգմանչի վարձատրության պայմանները սահմանվում են Կարգի 13-17-րդ կետերում: Սահմանված կարգի համաձայն՝ թարգմանչի կատարած աշխատանքի դիմաց վարձատրությունը կատարվում է թարգմանությունն ավարտվելուց հետո, իսկ եթե այն կատարվել է մի քանի անգամ և տարբեր օրերում՝ վերջին անգամ կատարված թարգմանությունից հետո:

Թարգմանչին վճարելու համար հիմք է ընդունվում թարգմանություն կատարելու նպատակով վարչական վարույթում ներգրավվելու ամբողջ ժամանակը, որի ընթացքում նա կատարել է փաստացի թարգմանություն, իսկ թարգմանության ժամերի թիվը համաձայնեցվում է վարչական մարմնի հետ: Այդ համաձայնեցումը պետք է ունենա գրավոր տեսք, որում պետք է նշվեն թարգմանչի անունը, հայրանունը, ազգանունը, թարգմանության տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը՝ եթե թարգմանությունը կատարվել է մի քանի օրում), թարգմանության ժամերի թիվը (եթե թարգմանությունը կատարվել է մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի) և վճարման ենթակա գումարի չափը, վարչական մարմնի անվանումն ու վարչական վարույթի անվանումը, որով անձը ներգրավվել է որպես թարգմանիչ: Նախահաշիվը ստորագրում են թարգմանիչը և վարչական մարմնի ներկայացուցիչը:

Եթե թարգմանություն կատարելու համար հրավիրված անձը կատարել է նաև տրանսպորտային, գիշերավարձի և օրապահիկի ծախսեր, ապա նախահաշվում նշվում են նաև այդ ծախսերի չափերը: Հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում դրանք կցվում են թարգմանության ծախսերի նախահաշվին:

Թարգմանչի կատարած տրանսպորտային ծախսերը հաշվարկվում են վկայի համար նախատեսված տրանսպորտային ծախսերի հաշվարկման պայմաններին համապատասխան, իսկ գիշերավարձի և օրապահիկի ծախսերը՝ Կարգի V բաժնի դրույթներին համապատասխան:

Կարգի 16-րդ կետում սահմանվում է, որ թարգմանչական աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար թարգմանչին վճարվում է

1000 դրամի հաշվարկով: Սահմանվում է նաև թարգմանություն կատարելու ժամերը հաշվարկելու կարգը. եթե թարգմանության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանակի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի:

Այն դեպքում, երբ վարչական վարույթում վարչական մարմնի կողմից ընդգրկված են մեկից ավելի թարգմանիչներ, ապա նրանց հասանելիք ծախսերի նախահաշիվը կազմվում է յուրաքանչյուր թարգմանչի համար՝ առանձին:

Կարգի 18-21-րդ կետերը սահմանում են վարչական վարույթում ներգրավված վկային վճարելու պայմանները: Վկային վճարվում է տրանսպորտային ծախսերը, որոնք վկան կատարել է վարչական մարմին ներկայանալու նպատակով դրա գտնվելու վայր մեկնելու և վերադառնալու համար ընդհանուր նշանակության միջքաղաքային տրանսպորտից օգտվելիս, ինչպես նաև կատարած գիշերավարձի ծախսերը: Եթե վկան վարչական մարմին ներկայացել է ոչ ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցով, ասենք՝ տաքսիով, ապա այդ գումարները նրան վճարելու պահանջ վերջինս չի կարող ներկայացնել:

Տրանսպորտային ծախսերը հաշվարկելու համար հիմք է ընդունվում վկայի՝ վարչական մարմին ներկայանալու համար վարչական մարմնի գտնվելու վայր մեկնելու փաստը հաստատող տոմսի վրա նշված արժեքի կրկնակի չափը, իսկ տոմսի բացակայության դեպքում՝ վկայի մշտական բնակության վայրից կամ այն վայրից, որտեղ նա առավելապես բնակվում է, մինչև վարչական մարմնի գտնվելու վայր ընդհանուր նշանակության միջքաղաքային ավտոտրանսպորտից, իսկ դրա բացակայության դեպքում՝ այլ տեսակի միջքաղաքային տրանսպորտից օգտվելու համար սահմանված կարգով հաստատված երթևեկության տոմսի արժեքի կրկնակի չափը: Կրկնակի սահմանելով՝ նկատի են առնվում նաև վկայի վերադարձի հետ կապված ծախսերը:

Չի բացառվում, որ միևնույն վկան վարչական մարմին ներկայանա մի քանի անգամ: Այս պարագայում, եթե վկան ներկայացրել է իր տրանսպորտային ծախսերը հաստատող փաստաթուղթ, ապա նրան վճարվում է բոլոր օրերի համար կատարված տրանսպորտա-

յին ծախսերի ընդհանուր գումարի չափով:

Գործին մասնակցող յուրաքանչյուր վկայի համար վճարվող գումարի չափը որոշվում է առանձին-առանձին:

Ինչպես արդեն նշեցինք, փորձագետին, թարգմանչին և վկային վճարվում են նաև գիշերավարձի ծախսերը և օրապահիկը, եթե անձը նման ծախսեր կատարել է:

Սահմանված Կարգի համաձայն, գիշերավարձի ծախսերը ենթակա են հատուցման՝ այդ ծախսերը հաստատող համապատասխան փաստաթղթեր ներկայացվելու դեպքում, բայց 10000 դրամից ոչ ավելի:

Օրապահիկի ծախսը՝ գիշերավարձի ծախսերը հաստատող փաստաթղթեր ներկայացվելու դեպքում ենթակա են հատուցման, յուրաքանչյուր օրվա համար 2000 դրամի չափով, հիմնավորող փաստաթղթերի բացակայության դեպքում՝ օրական 1300 դրամի չափով:

Կարգի VI բաժնում սահմանվում է փորձագետին, թարգմանչին և վկային վճարելու կարգը:

Փորձագետին, թարգմանչին և վկային վարձատրություն կամ վճարում է կատարվում՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից, եթե նշված անձինք ներգրավվել են Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված վարչական մարմինների կողմից հարուցված վարչական վարույթում, այսինքն՝ այդ վարչական մարմինները պետական մարմիններ են, և

բ) համապատասխան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից, եթե նշված անձինք ներգրավվել են Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված վարչական մարմինների կողմից հարուցված վարչական վարույթում:

Կարգի 26-րդ կետում սահմանված է համապատասխան վարչական մարմինների վճարումներ կատարելու համար բյուջեից հատկացումներ կատարելու կարգը: Տեղական ինքնակառավարման մարմին հանդիսացող վարչական մարմինների կողմից Կարգով նախատեսված պայմաններով և չափերով վարձատրություն կամ վճարում է կատարում համապատասխան համայնքի ղեկավարը, սահմանված կարգով, տվյալ վարչական վարույթն ավարտվելու

օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

### **Չարդ 135. Ո՞վ է կրում փոխօգնության ծախսերը:**

#### **Պատասխան.**

Օրենքի 15-18-րդ հոդվածներում կարգավորված են վարչական մարմինների միջև փոխօգնության հետ կապված հարաբերությունները: Այդ հոդվածների վերլուծությունից պարզ է դառնում, որ փոխօգնություն ցուցաբերելու ընթացքում փոխօգնություն ցուցաբերողը կարող է կատարել որոշակի ծախսեր՝ պատշաճ փոխօգնություն ցուցաբերելու համար: Ուստի անհրաժեշտություն է առաջանում այս ծախսերի հետ կապված հարաբերությունները ևս կարգավորել:

Փոխօգնություն ցուցաբերելու հետ կապված հարաբերությունների մասնակիցները վարչական մարմիններն են: Ուստի, փոխօգնությունը դիտարկելով որպես այդ մարմինների խնդիր, Օրենքը ոչ այդ ծախսերի համար փոխօգնություն ստանալու ակնկալիքով դիմած մարմնից, և ոչ էլ վարույթի մասնակիցներից այդ ծախսերը կատարելու պարտականություն չի սահմանում և այդ ծախսերը կրելը թողնում է փոխօգնություն ցուցաբերող մարմնի վրա:

## **ԲԱԺԻՆ VII. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՍԱՐ**

### **Չարդ 136. Ո՞րն է պետությանը պատասխանատվության ենթարկելու նպատակը և դրա կիրառման ոլորտը:**

#### **Պատասխան.**

Իրավական պետությունը պահանջում է արդյունավետ իրավական պաշտպանության ապահովում: Պա նշանակում է նաև, որ մասնավոր անձինք պետք է պետության ոչ իրավաչափ գործողություններից կամ անգործությունից պաշտպանվելու հնարավորություն ունենան, այսինքն՝ հենց սկզբից պետք է հնարավոր լինի խուսափել իրավախախտումներից (առաջնային իրավական պաշտպանություն): Եթե իրավախախտումներից բացառության կարգով հնարավոր չէ խուսափել, քանի որ առաջնային իրավական պաշտպանությունը հնարավոր չէ (ոստիկանի հրազենից արձակված կրակոցի հետաթռիչք՝ «ռիկոչետ») կամ ուշանում է (ցույցի

ցրումը ոստիկանների կողմից), ապա արդյունավետ իրավական պաշտպանությունը ոչ միայն ենթադրում է, որ հետագայում հնարավոր կլինի վերստուգել կիրառված միջոցը, այլև որ առաջացած վնասը կհատուցվի (երկրորդային իրավական պաշտպանություն): Այս պահանջի իրականացմանը ծառայում են Օրենքի 95-րդ ու դրան հաջորդող հոդվածները: Ֆիզիակական կամ իրավաբանական անձի տեսանկյունից նշանակություն չունի, թե ինչպիսի գործողություններով է պետությունը խախտում իր իրավունքները (վարչական ակտ, ռեալ ակտ, իրավական նորմ): Այդ պատճառով Օրենքը պետության պատասխանատվությունը տարածում է վարչարարության բոլոր ձևերի վրա:

**Հարց 137. Ո՞րն է Օրենքում վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությանը վերաբերող դրույթներ ամրագրելու նպատակը: Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները բավարար չէին այդ հարցը կարգավորելու համար:**

#### **Պատասխան.**

Կարծում ենք, անհրաժեշտ է պատասխանել նախևառաջ երկրորդ հարցին, քանի որ այդ դեպքում պարզ կդառնա, թե որն է Օրենքում վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությանը վերաբերող դրույթներ ամրագրելու նպատակը: Հիրավի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքը պարունակում է դրույթներ վնասի հատուցման, այդ թվում՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) հետևանքով քաղաքացուն կամ իրավաբանական անձին պատճառված վնասների հատուցման մասին և նույնիսկ նախատեսում է, որ պատասխանատվություն կրողը Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքն է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդվածներ 18, 1063-1065): Սակայն այդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների մասով պատասխանատվության հետ կապված հարաբերությունները օրենսգրքում կանոնակարգված են չափազանց կարճաժամ և ընդհանուր, այլ կերպ ասած՝ օրենսգրքում առկա չեն այնպիսի մեխանիզմներ, որոնք թույլ կտային այդ պատաս-

խանատվությունը դարձնել իրական և անխուսափելի: Ավելին՝ շոշափելով այս թեման, չենք կարող չգալ եզրահանգման, որ ժամանակին հանրային իրավունքի ոլորտում մի շարք օրենքների բացակայությունը որոշ մասնագետների թույլ է տվել եզրակացնել, որ քաղաքացիական օրենսդրությունը հավակնում է կարգավորել նաև իրեն ոչ հատուկ, այն է՝ սահմանադրական և վարչական հարաբերություններ:

Իրոք, առաջին հայացքից թվում է, թե Քաղաքացիական օրենսգրքի 6-րդ գլխում տեղադրվել են նորմեր, որոնք իբր, ըստ գլխի վերնագրի, կոչված են կանոնակարգել Հայաստանի Հանրապետության և համայնքների մասնակցությունը քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող քաղաքացիական իրավական հարաբերություններին: Սակայն արդեն իսկ այդ գլխի առաջին՝ 128-րդ հոդվածի 1-ին մասում առկա դրույթը բացառում է Քաղաքացիական օրենսգրքով հանրային հարաբերությունները կարգավորելու հնարավորությունը: Համաձայն այդ դրույթի՝ «Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով» (ընդգծումը՝ հեղինակի): Իսկ հանրային իրավահարաբերություններում Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը հանդես է գալիս իշխանական դիրքերից և հավասար հիմունքներով չէ, որ գործում է քաղաքացիների և իրավաբանական անձանց հանդեպ: Դա ընդունում է նաև հենց ինքը՝ Քաղաքացիական օրենսգրքը (ՀՀ քաղ. օր.-ի հոդված 1-ին, մաս 6-րդ): Մինչույն ժամանակ այդ դրույթին նախորդող հոդվածի մասում տեղ է գտել մի ձևակերպում, ըստ որի՝ «մարդու անօտարելի իրավունքների ու ազատությունների և մյուս ոչ նյութական բարիքների իրականացման ու պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, եթե այլ բան չի բխում այդ հարաբերությունների էությունից» (ընդգծումը՝ հեղինակի): Ահա այս ընդհանուր դրույթն է, որ թույլ է տալիս կարծել, թե Քաղաքացիական օրենսգրքը միտված է կարգավորելու նաև հիմնական («անօտարելի») իրավունքների իրականացման հետ կապված հարաբերությունները: Կարծես թե այդ տեսակետն ամրապնդվում է

նրանով, որ նույն օրենսգրքում գործածվում է նաև «քաղաքացիական իրավունքներ» հասկացությունը (գլուխ 2): Սակայն ակնհայտ է, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է սույն օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից» (ՀՀ քաղ. օր.-ի հոդված առաջին, մաս առաջին, պարբերություն առաջին): Իսկ այն հարաբերությունները, որտեղ Հանրապետությունը կամ համայնքը հանդես չեն գալիս որպես քաղաքացուն կամ իրավաբանական անձին հավասար սուբյեկտներ, չեն կարող կարգավորվել քաղաքացիական իրավունքի նորմերով: Չէ՞ որ մասնավոր և հանրային իրավունքների գլխավոր անջրպետը հենց այն է, որ հանրային իրավա-հարաբերություններում Հանրապետությունը (համայնքը) և քաղաքացին (իրավաբանական անձը) հավասար սուբյեկտներ չեն:

Այսպիսով՝ չնայած նրան, որ Քաղաքացիական օրենսգրքում տեղ են գտել օտար, այդ օրենսգրքի համակարգին ոչ հատուկ առանձին նորմեր, մասնավորապես՝ պետական մարմինների գործողությունների արդյունքում քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի վերաբերյալ, պարզ է, որ դա եղել է զուտ պրագմատիկ լուծում՝ սահմանադրական նորմերը հանրային իրավունքի բնագավառում կոնկրետացնող համապատասխան օրենքներ ընդունելու՝ իր ժամանակի տեսական և գործնական դժվարությունների հետևանք: Այժմ պարզ է, որ դա սահմանադրական, վարչական, քրեական և մասամբ աշխատանքային, այլ ոչ թե քաղաքացիական իրավունքի խնդիր է:

Ահա այս երկու նախադրյալներից ելնելով է օրենսդիրն ամրագրում վարչական մարմինների պատասխանատվությանը վերաբերող ամբողջական և մանրամասնված դրույթներ, որոնց շնորհիվ վարչական մարմնի ապօրինությունների համար Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքին պատասխանատվության կանչելը դարձել է գործնականում հնարավոր:



**Հարց 138. Ո՞վ է վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը: Որո՞նք են դրա հիմքերը, նախատեսվա՞ծ է արդյոք պատասխանատվություն առանց մեղքի:**

**Պատասխան.**

Համաձայն Օրենքի 95-րդ հոդվածի՝ վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է Հայաստանի Հանրապետությունը, երբ խոսքը պետական, այդ թվում՝ տարածքային կառավարման (վարչական) մարմինների մասին է (հոդված 95, մաս 2-րդ, կետ «ա») և համապատասխան համայնքը, երբ խոսքը տեղական ինքնակառավարման մարմինների մասին է (հոդված 95, մաս 2-րդ, կետ «բ»):

Պատասխանատվության հիմքերն են վնասի առկայությունը և դրա վրա հասնելը (պատճառվելը)՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Օրենքը սահմանում է նաև պատասխանատվություն առանց մեղքի, այսինքն՝ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար (հոդված 95, մասեր 1-ին և 2-րդ): Սակայն առանց մեղքի պատասխանատվության դեպքերը սահմանվում են հենց Օրենքով («...սույն բաժնի դրույթներով...») և բացառություն են կազմում պատասխանատվության հիմքերի մեջ: Իսկ կանոնը վերջը նշված ոչ իրավաչափ վարչարարության առանց բացառության բոլոր դրսևորումներն են, այն է՝ վարչական մարմինների ոչ իրավաչափ նորմատիվ և վարչական ակտերը, գործողությունները և անգործությունը: Ոչ իրավաչափ նորմատիվ ակտերը ՀՀ Սահմանադրությանը, օրենքներին, միջազգային պայմանագրերին և ավելի բարձր ուժ ունեցող նորմատիվ ակտերին հակասող վարչական մարմինների հիմնականում գերատեսչական նորմատիվ ակտերն են, իսկ ոչ իրավաչափ վարչական ակտերի ամբողջական շրջանակը սահմանվում է Օրենքում: Դրանք առ ոչինչ և ոչ իրավաչափ այլ վարչական ակտերն են, որոնց մասին արդեն խոսվել է վարչական ակտին վերաբերող համապատասխան բաժնում:

Վարչական մարմինների անխտիր բոլոր գործողությունները և անգործությունը, որոնք առանց իրավական հիմքի ֆիզիկական կամ իրավաբանական անձանց համար առաջացրել են փաստական հետևանքներ, նույնպես ոչ իրավաչափ վարչարարության ձևեր են:

### **Հարց 139. Սահմանում է արդյոք Օրենքը վնասի հատուցման պահանջ ներկայացնելու պայմաններ:**

#### **Պատասխան.**

Որևէ պահանջ ներկայացնելու համար յուրաքանչյուր օրենք սահմանում է ձևական նախապայմաններ՝ այդ պահանջի կատարման համար իրական հնարավորություն ստեղծելու և դրանով պաշտպանվող իրավունքի իրացումն ապահովելու համար: Օրինակ՝ երբ օրենքը սահմանում է, որ այս կամ այն ակտը կարող է վիճարկվել միայն շահագրգիռ անձի կողմից՝ դա նշանակում է, որ այն վիճարկել կարող է ոչ թե ցանկացած անձ, որն այդ ընդունված ակտի հետևանքով «իր գեղագիտական ճաշակի մեջ իրեն վիրավորված է զգում», այլ միայն նա, ում իրավունքները, ազատությունները կամ օրինական շահերը այդ ակտով շոշափվում են կամ կարող են շոշափվել (շահագրգիռ անձ): Այսպիսի նախադրյալները, նախապայմանները, պայմանները անվանվում են թույլատրելիության պայմաններ, այսինքն՝ դրանք այն նախադրյալներն են, որոնցով օրենքը պայմանավորում է այս կամ այն պահանջի ներկայացումը այն քննարկելու և դրան լուծում տալու լիազորություն ունեցող մարմնին:

Վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար Օրենքը նախատեսում է մեկ նախապայման: Իհարկե, մեծ հաշվով նաև պատասխանատվության հիմքերը, ասենք՝ վնասի առկայությունը, ինչպես նաև վնասի հատուցման եղանակի ընտրությամբ պայմանավորված պահանջ ներկայացնելու՝ Օրենքով սահմանված առանձնահատկությունները նույնպես կարելի է համարել թույլատրելիության նախապայմաններ, սակայն Օրենքը նեղ իմաստով որպես այդպիսի պայման է նշում միայն մեկը: Համաձայն Օրենքի 96-րդ հոդվածի՝ «վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել», բացառությամբ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվության Օրենքով նախատեսված դեպքերի (հոդված 109): Այսինքն՝ եթե անձին ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով, օրինակ՝ ոչ իրավաչափ վարչական ակտով վնաս է պատճառվել, ապա նա առաջին հերթին պետք է դիմի այդ ակտը վերադասության կարգով

վերանայելու իրավասություն ունեցող վարչական մարմին կամ դատարան, և եթե այդ մարմինները ճանաչեն տվյալ վարչական ակտի առ ոչինչ լինելը կամ դրա անվավերությունը, ապա նոր միայն անձը կարող է պատճառված վնասի հատուցման պահանջ ներկայացնել: Դա չի նշանակում, որ անձը տեխնիկական առումով չի կարող զուգակցել վարչական ակտն անվավեր ճանաչելու և դրանով պատճառված վնասը հատուցելու պահանջները մեկ դիմումում: Սակայն եթե նա չի դիմել ակտը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջով, բայց դիմել է միայն վնասի հատուցման պահանջով, ապա այդ դիմումը թերի է, և առանց շտկման այն վարչական մարմինը կամ դատարանը չեն կարող քննարկել: Սակայն, ինչպես նշվեց, այստեղ առկա են բացառություններ, որոնք վերաբերում են վարչական մարմինների՝ առանց մեղքի պատասխանատվության դեպքերին: Այդպիսի դեպքերում, որոնց կանդիդատներն են հետազայում, թույլատրելիության նախապայման՝ Օրենքի 96-րդ հոդվածի իմաստով, առկա չէ: Սակայն այդ դեպքերում վնասի հատուցման պահանջ կարող է ներկայացվել, երբ որևէ հատուկ օրենքով նախատեսված է այդպիսի հնարավորություն՝ իրավաչափ վարչարարության պարագայում (հոդված 109):

### **Յարդ 140. Որո՞նք են վնասի հատուցման եղանակները:**

#### **Պատասխան.**

Ըստ Օրենքի 97-րդ հոդվածի՝ «վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու» կամ «վնասը դրամական միջոցներով հատուցելու եղանակով»:

Վնասի հատուցման այս եղանակներից յուրաքանչյուրը մանրամասնված է Օրենքի 98-րդ և 99-րդ հոդվածներում: Ըստ այդմ՝ «եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխման մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով» (հոդված 98, մաս 1-ին, առաջին պարբերություն):

Օրինակ՝ եթե ուսանողին անհիմն կերպով հեռացրել են բուհից, ապա նրա փաստացի դրությունը փոփոխվել է՝ ի վնաս այդ անձի: Տվյալ դեպքում այդ անձը, հասնելով իրեն հեռացնելու մասին վար-

չական ակտը ոչ իրավաչափ ճանաչելուն, որպես վնասի հատուցում կարող է պահանջել միայն նախկին դրության վերականգնում, այն է՝ իր վերականգնումը տվյալ բուհում: Սակայն նույնիսկ այն դեպքում, երբ տվյալ ուսանողին ապօրինաբար հեռացնելուց հետո այն հիմքը, որով նա հեռացվել է, հետագայում՝ մինչև ուսանողի վերականգնվելը կամ անգամ դրանից հետո, օրենքով կամ այլ իրավական ակտի ուժով «օրինականացվել է», այսինքն՝ նախատեսվել է այդ ակտերով, միևնույն է, հետևանքների վերացման վկայակոչված կանոնը ենթակա է կիրառման, եթե այդ փոփոխության ուժով անձի փաստացի դրության վատթարացումը, ինչպես և նախկինում, կարող է վերագրվել այդ նույն վարչական մարմնին, տվյալ դեպքում՝ բուհի տնօրինությանը, և եթե այդ հետևանքները ենթակա չեն վերացման այլ կարգով (հոդված 98, մաս 1-ին, երկրորդ պարբերություն): Օրենքի այս դրույթի վերլուծությունը վկայում է, որ նույնիսկ այս կամ այն հարցը կանոնակարգող օրենքի կամ այլ ակտի փոփոխությամբ անհնար է հնարավորություն ստեղծել, որ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը խուսանավեն պատասխանատվությունից՝ իրենց կողմից պատճառված վնասի համար: Ի տարբերություն խորհրդային ժամանակների, երբ այն ժամանակ գործող օրենքները պետության համար ստեղծում էին անպատասխանատվության որոշակի «օազիսներ», Օրենքի որդեգրած մոտեցումն առանց բացերի, համապարփակ պատասխանատվության նախատեսումն է վարչական մարմինների ցանկացած գործելակերպի համար: Դա նշանակում է, որ Օրենքի 98-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը, սահմանելով դրույթներ փաստացի դրության փոփոխման հետևանքների՝ տվյալ մարմնին (դեռևս) վերագրելիության և հետևանքներն այլ եղանակով վերացնելու անհնարինության մասին, դրանով հնարավոր չի համարում, որ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը չեն կրելու որևէ պատասխանատվություն: Դա միայն նշանակում է, որ եթե, օրինակ, օրենքի հետագա փոփոխման ուժով տվյալ հետևանքների առաջացման համար «նախկինում» պատասխանատվություն կրողն այլևս պատասխանատու չէ (փոփոխված օրենքով այդ հետևանքներն այլևս չեն կարող վերագրվել նրան), իսկ հետևանքները ենթակա են վերացման այլ կարգով, քան նախկինում էր, ապա հատուկ օրենքով նախատեսվող այլ կարգով էլ այդ հետևանքները պետք է վերացվեն մեկ այլ պատասխանատվություն կրողի կողմից (օրի-

նակ՝ պետության փոխարեն՝ համայնքի):

Վերոգրյալի հետ մեկտեղ Օրենքը սահմանում է նաև մի շարք բացառություններ կամ հատուկ կարգավորումներ՝ ընդհանուր կանոնի համեմատ: Սակայն մեկ անգամ ևս շեշտենք, որ Օրենքը ոչ թե բացառում է պատասխանատվությունն ընդհանրապես, այլ այն որոշ դեպքերում բացառում է պատասխանատվությունը տվյալ եղանակով: Բացառությունները վերաբերում են այն դեպքերին, երբ փաստացի կամ իրավական հիմքերով պարզապես անհնար է նախկին դրության վերականգնումը<sup>10</sup>, ինչպես նաև՝ երբ գոյություն ունեցող դրությունը համապատասխանում է անձի համար անվիճարկելի դարձած վարչական ակտին (հոդված 98, մաս 2-րդ): Այս ամենի 10 արդյունքում, «...եթե հետևանքների վերացումը հնարավոր... չէ», ապա պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով (հոդված 99, մաս 1-ին):

Օրենքը սահմանում է նաև պատասխանատվության ընդհանուր կանոնի համեմատ հատուկ այլ կանոններ, որոնք վերաբերում են ֆիզիկական կամ իրավաբանական անձի մեղքին՝ ոչ իրավաչափ դրության առաջացման համար: Կախված մեղքի աստիճանից, Օրենքը սահմանում է տարբեր կարգավորումներ այդ անձի կողմից հետևանքների վերացման պահանջ ներկայացնելու վերաբերյալ: Այսպես՝ «եթե անձը մեղք ունի ոչ իրավաչափ դրության առաջացման համար, ապա նա հետևանքների վերացում կարող է պահանջել, եթե ցանկանում է և ի վիճակի է կրելու հետևանքների վերացման՝ իր մեղքով առաջացած ծախսերի մասնաբաժինը» (հոդված 98, մաս 3-րդ, առաջին պարբերություն): Սակայն «եթե անձի մեղ-

<sup>10</sup>Օրինակ՝ եթե վարչական մարմինն ապօրինաբար արգելում է Աժ կողմից որևէ օրենքի ընդունման նախօրեին այդ օրենքի ընդունման դեմ ուղղված զանգվածային հրապարակային միջոցառման անցկացումը, իսկ այդ օրենքն ընդունվում է Աժ կողմից, ապա հետագայում, որքան էլ փորձեն վերականգնել նախկին դրությունը, դա այլևս փաստացի անհնար է՝ հնարավոր չէ վերարտադրել միևնույն իրավիճակը, որը, հավանաբար, այլ ելք կունենար, եթե միջոցառումն անհիմն կերպով չարգելվեր: Ասվածն ավելի հստակ դարձնելու համար անցում կատարենք սահմանադրական մեկ այլ իրավունքի՝ ընտրական իրավունքի իրացման ոլորտ: Յանրահայտ է, որ ակտիվ ընտրական իրավունքն այն իրավունքների թվին է պատկանում, որի խախտման դեպքում այն հնարավոր չէ վերականգնել ընտրություններից հետո: Որքան էլ որ համապատասխան ընտրական հանձնաժողովը (որը հանդես է գալիս որպես վարչական մարմին) կամ դատարանը վերականգնված ճանաչեն այդ իրավունքը, դրա խախտման հետևանքները տվյալ ընտրություններում այլևս չեն կարող վերացվել: Կրկնենք ևս մեկ անգամ, որ դա չի նշանակում, որ այդ իրավունքը չպետք է ճանաչվի վերականգնված և անձին պատճառված ոչ զույբային վնասը չպետք է հատուցվի մեկ այլ եղանակով, այն է՝ դրամական միջոցներով: Այս հարցին կանդրադանաք հետագայում:

քով առաջացած ծախսերը գերազանցում են պատասխանատվություն կրողի մեղքով առաջացած ծախսերի չափը, ապա հետևանքների վերացման պահանջ չի կարող ներկայացվել», իսկ անձը կարող է պահանջել հատուցում դրամական միջոցներով՝ այն ծախսերի չափով, որոնք չեն առաջացել իր մեղքով (հոդված 98, մաս 3-րդ, երկրորդ պարբերություն, կապակցված 99-րդ հոդվածի 2-րդ մասի հետ):

**Հարց 141. Ինչու՞ է դրամական միջոցներով հատուցումը՝ որպես վնասի հատուցման եղանակ, նշվում հետևանքները վերացնելու եղանակից հետո:**

### **Պատասխան.**

Ըստ Օրենքի, դրամական միջոցներով հատուցումը՝ որպես վնասի հատուցման եղանակ, կիրառվում է սուբսիդիար, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ «հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը»: Դա նշանակում է, որ վնասի հատուցման պահանջը քննարկող վարչական մարմինը կամ դատարանը պարտավոր են սկզբում պարզել, թե վնասի հատուցման որ եղանակով այն պետք է հատուցվի: Այդ վարչական մարմինը կամ դատարանը պարտավոր են նաև պարզել, թե հնարավոր, բավարար կամ համարժեք է արդյոք վնասի հատուցումը հետևանքների վերացման միջոցով: Եթե այս նախադրյալներից որևիցե մեկն առկա չէ, ապա վարչական մարմինը կամ դատարանը պետք է ապահովեն վնասի հատուցումը դրամական միջոցներով:

**Հարց 142. Ու՞ր է ներկայացվում վնասի հատուցման պահանջը՝ վնաս հասցրած ակտն ընդունած կամ գործողությունը կատարած վարչական մարմնի՞ն, դրա վերադասի՞ն, թե միանգամից դատարան:**

### **Պատասխան.**

Ի տարբերություն, օրինակ, վարչական ակտի վիճարկման պահանջի, վնասի հատուցման պահանջ ներկայացնելու հարցում ֆիզիկական կամ իրավաբանական անձն երկընտրանք չունի, քանի

որ խոսքն այստեղ այնպիսի պահանջի մասին է, որը պետք է առաջին անգամ ներկայացվի իրավասու վարչական մարմին: Դա այն վարչական մարմինն է, որի վարչարարության հետևանքով այդ վնասը պատճառվել է (հոդված 100, մաս 1-ին): Օրինակ՝ եթե ապօրինի վարչական ակտի ընդունման հետևանքով քաղաքացուն պատճառվել է գույքային վնաս, ապա այդ վնասի՝ Օրենքի վերը հիշատակված դրույթներին համապատասխան հատուցման պահանջը դեռևս պետք է ներկայացվի այդ մարմնին՝ անկախ ակտի վիճարկման եղանակի ընտրությունից, որպեսզի նա հարցին տա հնարավորինս արագ լուծում: Կարծես թե առաջին հայացքից այստեղ հակասություն կա Օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի (որը նախատեսում է, որ վարչական ակտը, ինչպես նաև գործողությունը կամ անգործությունը կարող են բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, իսկ ոչ իրավաչափ վարչարարության պարագայում դա միակ հնարավորությունն է վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար (հոդված 96) և Օրենքի այս՝ 100-րդ հոդվածի 1-ին մասի միջև: Սակայն իրականում Օրենքը փորձում է հաշվի առնել բոլոր էական և նույնիսկ ոչ էական տարբերությունները զանազան պահանջների միջև: Ակնհայտ է, որ օրենսդրի նպատակը ֆիզիկական և իրավաբանական անձանց՝ վարչական մարմնում քննարկումից ավելի երկար տևող և ավելի մեծ ծախսերով զուգորդվող դատավարություններից հնարավորինս զերծ պահելն է: Չէ՞ որ բոլոր դեպքերում վնասը հատուցելու է ոչ թե տվյալ վարչական մարմնը կամ դատարանը, այլ պատասխանատվություն կրողը՝ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը: Եվ, ակտը վարչական մարմնում կամ դատարանում վիճարկելով, անձը՝ հիմք ընդունելով այն ոչ իրավաչափ ճանաչելու վերաբերյալ համապատասխան իրավական ակտը, վնասի հատուցման պահանջ է ներկայացնում «մեղավորին», որին, ըստ էության, ոչինչ չի մնում անել, քան որոշել վնասի հատուցման եղանակը և չափը, ինչին պետք է հաջորդի դրա վճարումը պատասխանատվություն կրողի՝ Հանրապետության կամ համայնքի բյուջեից: Վարչական մարմինն այստեղ ուղղակի հանդես է գալիս պատասխանատվություն կրողի անունից<sup>11</sup>: Վարչական մարմնի միակ այլընտրանքն այն է, որ նա՝ ընդ որում միայն այն դեպքերում, երբ անձը տվյալ ոչ իրավաչափ ակ-

<sup>11</sup> Համենայն դեպքում քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի հետ:

տը վիճարկել է դատական կարգով և հաջողության է հասել, կարող է վերադաս դատական ատյաններում վիճարկել առաջին ատյանի դատարանի վճիռը:

Այսպիսով քանի որ Օրենքի ուժով պատասխանատվություն կրողը Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքն է, ապա տվյալ վարչական մարմին վնասի հատուցման պահանջ ներկայացնելը հավասարազոր է ՀՀ կամ համայնքի դեմ այդպիսի պահանջ ներկայացնելուն: Պարզապես պահանջը համապատասխան վարչական մարմին ներկայացնելը, ինչպես նաև այդ մարմնի կողմից այդ պահանջը պատասխանատվություն կրողի անունից քննարկելը և լուծելը այն տեխնիկական հնարքներն են, որոնք հնարավոր են դարձնում նման պահանջները: Իհարկե, կարող էին լինել և այլ հնարքներ: Օրինակ՝ վնասի հատուցման պահանջը կարող էր ներկայացվել անմիջապես դատարան՝ ֆիզիկական (իրավաբանական) անձն ընդդեմ Հայաստանի Հանրապետության կամ համապատասխան համայնքի գծապատկերով: Սակայն այդ դեպքում այն պաշտոնատար անձը, որն ապօրինի ակտ է ընդունել կամ ապօրինի գործողություն է կատարել, կարծես թե այլևս անելիք չէր ունենալու և պետք է մտահոգվեր միայն պատասխանատվություն կրողի կողմից իրեն հետադարձ պահանջներ ներկայացնելու հնարավորությամբ: Նախատեսելով այդ հնարավորությունը նաև Օրենքով ընտրված տարբերակի դեպքում, օրենսդիրը միաժամանակ չի ցանկացել «հանգիստ թողնել» վարչական մարմնին՝ նրան հարկադրելով «ուտել իր իսկ եփած ապուրը», այսինքն՝ սեփական ջանքերով շտկել իրավիճակը: Ինչպես արդեն նշեցինք, այս ճանապարհը օրենսդրի համար գերադասելի է եղել՝ հատկապես նաև դատավարական գործընթացների ավելի երկարատև, ավելի բարդ և ավելի ծախսատար լինելու հանգամանքներից ելնելով:

Ամփոփելով ասվածը, հարկ է նշել, որ վերը հիշատակված մոտեցմամբ օրենսդիրը մի կողմից ձգտում է անձին ազատել ավելորդ քաջքշուկից և ծախքերից, մյուս կողմից՝ հենց ապօրինություն թույլ տված վարչական մարմնին շանս է տալիս վերացնելու իր իսկ ապօրինության հետևանքները:

Ինչ վերաբերում է հատուցման պահանջի ձևակերպմանը, ապա Օրենքը սահմանում է, որ այն ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են Օրենքի 31-րդ հոդվածի կանոնները, այն է՝ վարչական մարմիններ ներկայացվող բոլոր դիմումներին



վերաբերող ընդհանուր պահանջները (հոդված 100, մաս 2-րդ):

**Հարց 143. Ինչպիսի՞ ժամկետներ են սահմանված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար:**

**Պատասխան.**

Ըստ Օրենքի, վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել այն պահից հետո 3 տարվա ընթացքում, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իրեն պատճառված վնասի մասին, բայց ոչ ուշ, քան այն գործողության կատարման կամ անգործություն թույլ տալու կամ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից 10 տարին լրանալը, որով նրան վնաս է պատճառվել (հոդված 101): Այլ խոսքով՝ վնասի հատուցման ժամկետը անսահմանափակ չէ: Իրավական անվտանգության տեսակետից շատ կարևոր է, որպեսզի վարչական մարմինների իրավական և ռեալ<sup>12</sup> ակտերի հետևանքով առաջացած վնասների հատուցման ժամկետը որոշակիացվի: Կարծում ենք, Օրենքով սահմանված ժամկետը լիարժեք հնարավորություն է տալիս զուգակցել այդ նկատառումները անձանց շահերի հետ: Ակնհայտ է, որ գործնականում գրեթե անհնար է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իրեն վնաս պատճառած իրավական ակտի ուժի մեջ մտնելուց կամ գործողություն կատարելուց (անգործություն թույլ տալուց) 10 տարի անց իրազեկ դառնա դրանց մասին: Իհարկե, նման դեպքերը բացառելը նույնպես անհնար է, սակայն պարզ է, որ այդ դեպքերում հանրային շահերը, որոնք իրավակարգի կայունությունն ապահովելու անհրաժեշտության մեջ են, գերակայող նշանակություն են ձեռք բերում անձանց անհատական շահերի նկատմամբ:

Օրենքի՝ վնասի հատուցման ժամկետին վերաբերող այս դրույթը կիրառելիս վարչական մարմինները պետք է տարբերակված մոտեցում ցուցաբերեն ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման հանդեպ, ինչը պայմանավորված է վնասի հատուցման պահանջի ներկայացման թույլատրելիությամբ (հոդված 96) և իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հանդեպ, որի պարագայում Օրենքը վնասի հատուցման նախապայման չի նախատեսում: Բացի դրանից, անհրաժեշտ է հիշել, որ

<sup>12</sup> Տես՝ 76-րդ հարցի պատասխանը:

ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու հետևանքով վնաս պատճառելու դեպքերի համար Օրենքն ինքն է սահմանում հատուցման մասին պահանջ ներկայացնելու այլ՝ 3 տարվա ժամկետ (հոդված 110, մաս 2-րդ):

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ իրականում Օրենքով նախատեսված երեք տարվա ընդհանուր ժամկետին վերաբերող դրույթը պետք է մեկնաբանել Օրենքի և համապատասխան դատավարական օրենքի՝ վարչական և ռեալ ակտերի բողոքարկմանը վերաբերող դրույթների հաշվակցմամբ: Այսպես՝ Օրենքի 71-րդ հոդվածը սահմանում է վարչական և ռեալ ակտերի համար բողոքարկման տարբեր ժամկետներ: Ակնհայտ է, օրինակ, որ ոչ իրավաչափ վարչական ակտի բողոքարկման ժամկետն անցնելուց հետո կամ այն դեպքերում, երբ վարչական մարմիններում կամ դատարանում այդ բողոքարկումը հաջողությամբ չի պսակվում, այսինքն՝ համապատասխան բողոքը կամ հայցը մերժվում են և այդ մերժումն արտացոլող դատական կամ վարչական ակտը մտնում է ուժի մեջ, այդ պահից հետո համապատասխան վարչական ակտը դառնում է անվիճարկելի: Եթե նույնիսկ անձը վնասի հատուցման պահանջ է ներկայացրել դրա առիթ հանդիսացած ոչ իրավաչափ վարչական ակտի դեմ բողոք կամ հայց ներկայացնելու հետ միաժամանակ, ապա պարզ է, որ վնասի հատուցում չի կարող իրականացվել, քանի դեռ այդ վարչական ակտը չի ճանաչվել ոչ իրավաչափ: Իսկ եթե անձը չի ներկայացրել վնասի հատուցման պահանջ, սակայն վիճարկել է որևէ վարչական ակտի իրավաչափությունը, ապա ակնհայտ է, որ ամենաուշն այդ ակտը ոչ իրավաչափ ճանաչելու պահից նա արդեն պարտավոր էր իմանալ դրանով իրեն վնաս պատճառելու մասին, եթե այդպիսին ընդհանրապես առկա է, և եթե տեսականորեն պատկերացնենք, որ մինչ այդ նա այդ հանգամանքը չէր գիտակցում: Եթե նա այդ պահից հետո 3 տարվա ընթացքում այդպես էլ չներկայացնի վնասի հատուցման պահանջ, ապա այն, ինչպես նշվեց վերևում, այլևս չի կարող ներկայացվել<sup>13</sup>:

Հետևությունն այն է, որ վարչական մարմինները պարտավոր են յուրաքանչյուր որոշակի դեպքում հաշվի առնել ոչ թե տեսական շաբլոնները, այլ այս կամ այն գործի որոշակի փաստական հան-

<sup>13</sup> Տես՝ Օրենքի 110-րդ հոդվածի 2-րդ մասը:

գամանքները, որոնցից միայն կարելի է ճիշտ եզրահանգում կատարել վնասի հատուցման պահանջ ներկայացնելու ժամկետի պահպանված լինելու վերաբերյալ: Մեր ընդհանուր նկատառումները չափազանց մեծ կոնկրետություն պահանջող այս հարցում միտված էին պարզորոշ դարձնելու այն, որ գործնականում 10 տարվա ժամկետը պաշարային է, և այն կիրառելի չէ վարչական և ռեալ ակտերի նկատմամբ, որոնց անվիճարկելի դառնալու ժամկետը շատ ավելի կարճ է, քան 10 տարին (հոդված 110, մաս 2-րդ): Իսկ 10 տարվա այդ պաշարային ժամկետը գործնական նշանակություն կարող է ունենալ հիմնականում վարչական մարմինների նորմատիվ ակտերով անձանց (նորմատիվ ակտերի պարագայում անորոշ թվով անձանց խմբերի<sup>14</sup>) վնաս պատճառվելու դեպքերում, երբ այդ նորմատիվ ակտերով վնասը պատճառվել է, օրինակ, դրա հիման վրա ընդունված բազմաթիվ վարչական ակտերով: Տվյալ դեպքում, մինչև նորմատիվ ակտը չճանաչվի ոչ իրավաչափ, չի կարող վերանալ դրա հիման վրա ընդունված վարչական ակտերի գործողությունը, իսկ պատճառված վնասը չի կարող հատուցվել: Սակայն օրենսդիրը, արդարացիորեն հաշվակցելով վնասի հատուցման բոլոր դեպքերը, այդ թվում՝ վարչական մարմինների նորմատիվ գործունեության արդյունքում վրա հասած վնասը, չի նախատեսում վարչական մարմինների նորմատիվ ակտերի բողոքարկման ժամկետներ՝ նկատի ունենալով, որ այդ ակտերը պետք է վիճարկվեն դատավարական օրենքով նախատեսված ժամկետներում, այսինքն՝ միայն դատական կարգով: Դա չի նշանակում, որ վերադաս վարչական մարմինները չեն կարող վերացնել այդ ակտերն իրենց նախաձեռնությամբ, վարչական վերահսկողության կարգով, եթե օժտված են այդպիսի լիազորությամբ: Իրավաչափ վարչական ակտն ուժի մեջ մտնելուց հետո 10 տարվա ընթացքում վերադաս վարչական մարմնի նախաձեռնությամբ այն վերացվելու դեպքում ևս վարչական ակտի հասցեատերն իրավունք է ստանում վնասի հատուցման պահանջ ներկայացնելու:

---

<sup>14</sup> Տվյալ դեպքում, կարծում ենք, հազվադեպ չեն լինի դեպքերը, երբ այդ նորմատիվ ակտը (ըստ էության, այս Օրենքի հիման վրա, սակայն միայն դատական կարգով) վիճարկվի մեկից ավելի անձանց համատեղ պահանջով կամ նույն ակտի վերաբերյալ լինեն տարբեր անձանց վիճարկման պահանջներ:

**Հարց 144. Ի՞նչ կարգով է քննարկվում վնասի հատուցման պահանջը:**

**Պատասխան.**

Օրենսդիրն այս հարցում հետևողական է: Ինչպես որ վնասի հատուցման պահանջի ձևակերպման նկատմամբ նա կիրառում է դիմումին ներկայացվող ձևական պահանջները, այդպես էլ այդ պահանջը քննելու և լուծելու նկատմամբ սահմանում է, որ դրանք քննարկվում և լուծվում են «դիմումի քննարկման համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան» (հոդված 102, մաս 1-ին): Նույնական են նաև վնասի հատուցումը մերժելու և վարչական ակտի վիճարկման կանոնները (հոդված 102, մաս 2-րդ):

**Հարց 145. Ո՞րն է պատասխանատվության ձևը, երբ պատասխանատվություն կրողները մեկից ավելին են:**

**Պատասխան.**

Պատասխանելով այս հարցին՝ հարկ է նշել, որ չնայած «մեկից ավելի» արտահայտության բովանդակային ծավալին, այստեղ խոսքն այդ արտահայտությամբ ներառվող ընդամենը երեք դեպքի մասին է: Որո՞նք են այդ դեպքերը: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունը չի կարող միևնույն հարցով երկու դեպքում հանդիսանալ պատասխանատվություն կրող: Հետևապես, հնարավոր են միայն հետևյալ տարբերակները. Հայաստանի Հանրապետություն-համապատասխան համայնք, Հայաստանի Հանրապետություն-մեկից ավելի համայնքներ և մեկից ավելի համայնքներ (առանց Հայաստանի Հանրապետության):

**Հարց 146. Ի՞նչ է նշանակում ոչ գույքային վնաս: Նույնակա՞ն է այն արդյոք բարոյական վնասի հետ: Ո՞ր դեպքերում է հատուցվում ոչ գույքային վնասը:**

**Պատասխան.**

Օրենքում ոչ գույքային վնասի բովանդակային ծավալը նույնական է ֆիզիկական և իրավաբանական անձանց սուբյեկտիվ հանրային անձնական իրավունքների տարաբնույթ խախտումների

հետևանքով առաջացած վնասի բովանդակային ծավալի հետ: Այսպես՝ Օրենքը սահմանում է այն եղանակները, որոնցով անձին կարող է ոչ գույքային վնաս պատճառվել: Դրանք են՝ «ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելը, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելը, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելը» (հոդված 104, մաս 1-ին): Ընդ որում՝ որպես նախապայման Օրենքը նախատեսում է նաև, որ այդ ճանապարհով ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատճառված կամ պատճառվելիք վնասը պետք է լինի ոչ իրավաչափ վարչարարության հետևանք, իսկ վնասի բնույթը պետք է լինի ոչ գույքային (հոդվ. 104, մաս 1-ին): Միայն այս երեք նախադրյալների համակցությամբ է, որ Օրենքը, հիմնվելով սահմանադրական դրույթների վրա (ՀՀ Սահմանադրություն, 18-րդ հոդվածի 1-ին մաս՝ Սահմանադրության 1-ին և 3-րդ հոդվածների համակցությամբ), ամրագրում է ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքը՝ «պահանջել դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում»՝ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով» (հոդվ. 104, մաս 1-ին): Այս վերջին դրույթը նշանակում է, որ բացառությամբ Օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի ընդհանուր կանոնի, անձին ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում վնասի հատուցումը դրամական միջոցներով լրացուցիչ (սուբսիդիար) չէ, այլ ուղղակիորեն այլընտրանքային է հետևանքները վերացնելու եղանակի հանդեպ, ընդ որում՝ նշված է որպես առաջին այլընտրանք: Դա ամենևին պատահական չէ, ինչը պարզորոշ է դառնում քննարկվող հոդվածի հաջորդ դրույթներից, որոնք մանրամասնում են վնասը հենց դրամական միջոցներով հատուցելու հիմքերը և ընթացակարգը: Բացի դրանից, եթե վերը հիշատակված եղանակներով վնաս է պատճառվել անձի առողջությանը, ապա նա կարող է պահանջել հատուցում դրամական միջոցներով, որի ծավալը որոշվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-2-րդ մասերին համապատասխան: Քաղաքացիական օրենսգրքի այդ դրույթները նախատեսում են այն ծախքերը, որոնք ենթակա են հատուցման (մաս 1-ին), ինչպես նաև սահմանում են, որ վնասի հետևանքով կորցված աշխատավարձը հաշվարկելիս հաշմանդամության կենսաթոշակը և կատարվող այլ վճարումները չեն հան-

գեցնում վնասի հատուցման չափի նվազեցման (մաս 2): Այստեղ հարկ է նշել, որ Քաղաքացիական օրենսգրքի՝ Օրենքում վկայակոչված հոդվածի 3-րդ մասը, որն այդ վկայակոչմամբ ներառված չէ, նախատեսում է, որ տուժողին պատճառված վնասի հատուցման ծավալը և չափը կարող է մեծացվել օրենքով կամ պայմանագրով: Օրենքը, հաշվի առնելով այս դրույթը, ինքն է սահմանել վնասի հատուցման ծավալն ու չափը այն դեպքերի համար, որոնք Քաղաքացիական օրենսգրքում մանրամասն կարգավորված չեն: Դա է պատճառը, որ Օրենքը, վկայակոչելով Քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի միայն 1-ին և 2-րդ մասերը, որպես դրանց տրամաբանական շարունակություն սահմանել է Օրենքի կարգավորման ոլորտում ծագող վնասի հատուցման հարաբերությունների առավել որոշակի կանոնակարգումը, որն առարկայական է դարձնում վնասի հատուցման հնարավորությունը և թույլ է տալիս մեկնաբանման ծուղակների մեջ ընկղմող ընդհանուր «հռչակագրերից», որոնք մեր իրականությունում չեն աշխատում, անցում կատարել որոշակի մեխանիզմների, որոնց անտեսումը կդիտվի որպես Օրենքի ուղղակի և կոպիտ խախտում:

Այդպիսի մեխանիզմներ են ֆիզիկական անձի առողջությանը պատճառված վնասի կոնկրետ դրսևորումներին անդրադարձող Օրենքի մանրամասն կարգավորումները՝ ֆիզիկական անձի մասնագիտական (հոդված 104, մաս 4-րդ), իսկ դրա բացակայության դեպքում՝ ընդհանուր աշխատունակության կորստի դեպքերում վնասի հատուցման չափը որոշելու վերաբերյալ (հոդված 104, մասեր համապատասխանաբար 3-րդ և 4-րդ): Բացի դրանից, Օրենքը նախատեսում է նաև հատուկ դրույթներ անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի գործարար համբավը արատավորելու հետևանքով նրանց պատճառված գույքային վնասի վերաբերյալ՝ սահմանելով, որ այդ վնասը ենթակա է հատուցման վնասի հատուցմանը վերաբերող Օրենքի ընդհանուր դրույթներին, այն է՝ Օրենքի 98-րդ և 99-րդ հոդվածներին համապատասխան (հոդված 104, մաս 6-րդ, առաջին պարբերություն): Այս դրույթը միայն առաջին հայացքից է «օտար տարր» թվում ոչ գույքային վնասին վերաբերող հոդվածի շրջանակներում:

Իրականում այն հղումային դրույթ է, որը պարունակում է այն կարևոր մոտեցումը, որ այնպիսի ոչ գույքային արժեքներին (իրավունքներին), ինչպիսին գործարար համբավն է, վնաս պատճառելը

կարող է արտահայտվել, ավելի ճիշտ, պետք է արտահայտվի նաև գույքային վնասի տեսքով, իսկ այդ պարագայում գույքային վնասը ենթակա է հատուցման ընդհանուր հիմունքներով: Դրանից զատ, Օրենքը նախատեսում է նաև, որ հիշատակված անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը, բացի իրենց գործարար համբավն արատավորելու հետևանքով կրած գույքային վնասը հատուցելու պահանջից, միաժամանակ կարող են պահանջել իրենց պատճառված ոչ գույքային վնասի հատուցում, այսինքն՝ իրենց գործարար համբավի վերականգնում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներով սահմանված կարգով (հոդվ. 104, մաս 6-րդ, երկրորդ պարբերություն): Ակնհայտ է, որ օրենսդիրն այստեղ սահմանում է գործարար համբավի պաշտպանության երկու զուգահեռ հնարավորություն՝ գույքային և ոչ գույքային վնասի հատուցման իրավունքներ, վերջին դեպքում ձեռնպահ մնալով սեփական կարգավորումներից և հղում կատարելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթներին: Այսպիսով՝ գործարար համբավի պաշտպանության համար Օրենքը մի կողմից գույքային վնասի մասով ինքն է սահմանում վնասի հատուցման կարգ, իսկ ոչ գույքային վնասի մասով հղում է կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին<sup>15</sup>:

Ինչ վերաբերում է ոչ գույքային և բարոյական վնասի նույնակա-  
նությանը, հարկ է նշել, որ բարոյական վնաս հասկացությունը և դրա բովանդակային ծավալները ՀՀ քաղաքացիական օրենսդրու-  
թյունում որպես այդպիսիք բացակայում են: Այսպես՝ ՀՀ քաղաքա-  
ցիական օրենսգրքի 17-րդ հոդվածում, որը տալիս է վնաս հասկա-

<sup>15</sup> Այդ է պատճառը, որ Օրենքը հղում է կատարում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի բոլոր մասերին, բացառությամբ 4-րդ մասի: Օրենսդիրը, համադրելով այդ հոդվածի մյուս մասերը 4-րդ մասի հետ, իրավացիորեն եկել է այն համոզման, որ այդ մասը վերաբերում է գույքային վնասի հատուցմանը («...պատիվը, արժանապատվությունը կամ բարի համբավն արատավորող... տեղեկությունները հերքելու հետ միասին...հատուցելու դրանց տարածմամբ պատճառված վնասը» (ընդգծումը և կրճատումները՝ հեղինակի), այնպես, ինչպես Օրենքն է ոչ գույքային վնասի հատուցմանը վերաբերող դրույթներում հղում կատարում գույքային վնասի հատուցման՝ Օրենքով սահմանված կարգին: Ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, որը չի կոնկրետացնում ոչ գույքային իրավունքների խախտման հետևանքով հնարավոր գույքային վնասների հատուցման հարցը, ինչն այդ օրենսգրքի նաև բացերից է և շատ հաճախ թույլ է տալիս նույնիսկ մասնագիտա-  
կան մակարդակով խոսել Հայաստանի Հանրապետությունում այսպես կոչված «բարոյական վնասի» հատուցման հնարավորության բացակայության մասին, իսկ դա, իհարկե, այդպես չէ, Օրենքը նախատեսում է մեխանիզմներ, բնականաբար, միայն վարչական մարմինների գործունեության ոլորտների համար, ֆիզիկական և իրավաբանական անձանց անձնական ոչ գույքային իրավունքների բազմա-  
կողմանի, եթե չասենք համապարփակ պաշտպանության համար:

ցությունը, խոսք անգամ չկա «բարոյական» կամ «ոչ գույքային» վնասի որևէ տարրի մասին<sup>16</sup>: Մնացյալը գիտական վերլուծություններ են: Սակայն դա չի նշանակում, որ այլ վնաս, բացի գույքայինից, Քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում: Այսպես՝ վնասի սոսկ «գույքայնացված» ձևակերպմանը հաջորդում է 18-րդ հոդվածը, որը սահմանում է վնասի հատուցման հնարավորություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողությունների (անգործության) դեպքերում: Սակայն այս հոդվածից պարզ չի դառնում, թե ինչ վնասի մասին է խոսքը, քանի որ հիշյալ գործողություններով կարող է պատճառվել ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային վնաս: Սակայն հաջորդ՝ 19-րդ հոդվածում Քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է այնպիսի իրավունքների պաշտպանություն, ինչպիսիք են պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, ընդ որում՝ այնպիսի եղանակներով, որոնք հիմնականում<sup>17</sup> արտահայտվում են այդ իրավունքները «ոչ գույքային» մեթոդներով (տեղեկությունների հերքում և այլն) վերականգնելու մեջ: Սակայն ակնհայտ է, որ անձի ոչ միայն արժանապատվությունը, պատիվը կամ բարի համբավը կարող են խախտվել, այլև ոչ գույքային այլ իրավունքներ: Օրինակ՝ եթե ոստիկանությունը անհատ ձեռնարկատիրոջն ապօրինաբար պահել է անազատության մեջ, ապա դրանով խախտվել են նրա և ազատության իրավունքը, և գործարար համբավը, գուցեև անազատության մեջ մնալու փաստն իսկ բացասաբար ազդել է այդ անձի հոգեկան առողջության վրա, այսինքն՝ վնաս է պատճառվել նրա առողջությանը: Տվյալ դեպքում մի քանի «բարոյական» արժեքներ են խախտվել, իսկ վնասը ինչպես գույքային, այնպես էլ ոչ գույքային բնույթ ունի: Դրա վերականգնման մեխանիզմներն էլ կարող են տարբեր լինել՝ անազատության մեջ պահելու հիմք հանդիսացած տեղեկությունները պաշտոնապես հերքելուց մինչև գույքային վնասի վերա-

<sup>16</sup> Խոսքը միայն ծախսերի, գույքի կորստի կամ վնասվածքի, ինչպես նաև չստացված եկամուտների մասին է:

<sup>17</sup> «Հիմնականում» բառը տվյալ դեպքում նշանակում է, որ խոսքը պաշտպանության այնպիսի եղանակների մասին է, որոնք պարզորոշ սահմանված են այդ հոդվածի 1-3-րդ և 5-6-րդ մասերում: 4-րդ մասում նշված եղանակը, մեր կարծիքով, շատ անորոշ է (տես՝ թիվ 12-րդ հղումը):



կանգնում (նաև զուգահեռաբար)<sup>18</sup>:

Այս իմաստով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի դրույթները մի կողմից՝ առարկայական տեսանկյունից, շատ ավելի նեղ են, քան Օրենքի՝ ոչ գույքային վնասին վերաբերող դրույթները<sup>19</sup>, սակայն կիրառման ոլորտի տեսանկյունից շատ ավելի լայն են, քանի որ տարածվում են արժանապատվության, պատվի և գործարար համբավի պաշտպանության բոլոր դեպքերի վրա, իսկ Օրենքը կարգավորում է այդ իրավունքների պաշտպանությունը միայն վարչական մարմինների ոչ իրավաչափ ակտերից, գործողություններից կամ անգործությունից:

Այսպիսով՝ «բարոյական» վնասը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի իմաստով և ոչ գույքային վնասը՝ Օրենքի 104-րդ հոդվածի իմաստով, իրենց ծավալով նույնական չեն, սակայն անուղղակիորեն և մասամբ ուղղակիորեն (հղման միջոցով) փոխլրացնում են միմյանց:

**Հարց 147. Ինչու՞ են տարբերակվում ոչ գույքային վնասը դրամական միջոցներով վճարելու ձևերը. որո՞նք են այդ ձևերը:**

### **Պատասխան.**

Ինչպես հայտնի է, վարչարարությամբ վնաս, այդ թվում՝ ոչ գույքային, պատճառելու համար պատասխանատվություն կրողը Հայաստանի Հանրապետությունն է կամ որևէ համայնք: Ոչ գույքային

<sup>18</sup> Կոնկրետ այս դեպքի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքը հատուկ դրույթներ պարունակում է (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդված), սակայն դրանցում հղում է կատարվում օրենքով սահմանված կարգի վրա, որով պետք է հատուցվի այդ վնասը:

<sup>19</sup> Ինչպես արդեն նշվեց, վերաբերում են միայն արժանապատվությանը, պատվին և գործարար համբավին: Իհարկե, Քաղաքացիական օրենսգրքի՝ վնասին վերաբերող հատուկ դրույթներում խոսքը քաղաքացու անձին (ՀՀ քաղ. օր.-ի 1058-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ 1064-րդ, 1077-1087-րդ հոդվածներում՝ նաև անձի ազատությանը, կյանքին կամ առողջությանը) պատճառված վնասների մասին է: Այդուհանդերձ՝ այդ դրույթներում չի կոնկրետացվում վարչական մարմինների կողմից անձանց ոչ գույքային վնաս պատճառելու հարցը, իսկ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից վնաս պատճառելուն վերաբերող՝ հատուկ այս բաժնում զետեղված հոդվածը (հոդվ. 1063) կոնկրետացնելու փոխարեն բառացիորեն, բացառությամբ վերնագրի և ոչինչ չփոխող առաջին տողի, վերարտադրում է օրենսգրքի ընդհանուր դրույթներում տեղադրված 18-րդ հոդվածի բովանդակությունը:

վնասի պարագայում այն հատուցելու գործնականում առավել կիրառելի եղանակը դառնալու է դրամական միջոցներով հատուցելը: Հայաստանի Հանրապետությունը և համապատասխան համայնքը այդ վնասը պետք է հատուցեն համապատասխանաբար պետական կամ համայնքային բյուջեների միջոցների հաշվին: Իսկ ի՞նչ է դա նշանակում գործնականում: Պետք է նկատի ունենալ, որ համապատասխան վճարումները կատարելու համար թե համապետական, թե համայնքային բյուջեները մշակելիս անհրաժեշտ է կատարել հաշվարկ՝ որպես վնասի հատուցում վճարվող գումարների հնարավոր չափերի մասին: Դժվար է պատկերացնել, որ Օրենքն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո Ազգային ժողովը և հատկապես համայնքների ավագանիները կարողանան կատարել ճշգրիտ հաշվարկներ: Բացի դրանից, և սա ամենակարևոր հանգամանքն է, պարզ է, որ համապատասխան բյուջեի տրամադրության տակ որպես վնասի հատուցում վճարվելիք նախատեսված կամ պահանջվող գումարները միշտ չէ, որ միանգամից մուտք են գործելու այդ բյուջեներ: Ավելի հաճախ դրանք մուտքագրվելու են որոշակի ժամանակային համամասնություններով, ասենք՝ եռամսյակը մեկ կամ ամիսը մեկ և այլն, իսկ դրանից բխում է, որ այդ գումարների վճարման մեխանիզմը պետք է լինի հնարավորինս ճկուն և իրատեսական: Հակառակ դեպքում տեսականորեն նույնիսկ ամենահաջողված դրույթները կմնան սոսկ օրենսդրի բարի ցանկություններ, ինչին ականատես ենք լինում բազում այլ դեպքերում: Այս նկատառումներից ելնելով՝ օրենսդիրը նախատեսել է ոչ գույքային վնասը դրամական միջոցներով հատուցելու երկու հնարավորություն: Օրենքը նախատեսում է, որ վնասի հատուցումը կարող է կատարվել ինչպես ամենամսյա վճարումների, այնպես էլ միանվագ վճարման ձևով (հոդվ. 105, մաս 1-ին): Այս դրույթն, ըստ էության, հայեցողական լիազորություն է վերապահում վարչական մարմիններին ընտրելու այդ երկու ձևերից որևէ մեկը: Իհարկե, այս կանոնից հենց Օրենքն՝ ինքը, նախատեսում է բացառություններ, որոնց կանդրադառնանք ստորև: Բացի դրանից, վարչական մարմինները, իրականացնելով այս լիազորությունը, ինչպես նաև ցանկացած այլ հայեցողական լիազորություն, կապակցված են հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքով (հոդված 6):

Ինչ վերաբերում է բացառություններին, ապա դրանք նույնպես օրենքի ճկունության արտացոլումն են և ուղղված են այնպիսի

իրավիճակների կարգավորմանը, երբ վնասի հատուցումը դրամական միջոցներով նպատակահարմար է կամ անհրաժեշտ է իրականացնել միայն այն պահանջող անձի կամ օրենսդրի համար առավել նախընտրելի միայն մեկ ձևով: Այսպես՝ եթե ոչ իրավաչափ վարչարարությամբ անձի առողջությանը պատճառվել է այնպիսի վնաս, որը վերականգնելու համար այդ անձին վնասի հատուցման ամբողջ գումարն անհրաժեշտ է միանվագ, հակառակ դեպքում նրա առողջական վիճակն ավելի կվատթարանա, ապա նա իրավունք ունի ամենամայա վճարումների փոխարեն պահանջել վնասի ընդհանուր գումարի միանվագ վճարում (հոդվ. 105, մաս 3-րդ): Տվյալ դեպքում վարչական մարմնի հայեցողությունը սահմանափակվում է վնաս կրած անձի՝ վնասի հատուցման գումարի միանվագ վճարման պահանջի սուսկ հիմնավորվածությունը պարզելով: Հասկանալի է, որ Օրենքը չէր կարող սպառիչ կամ գոնե մոտավորապես թվարկել հիմնավոր պատճառները, որոնց առկայությամբ պետք է կատարվեր վնասի հատուցման գումարի միանվագ վճարում: Սակայն ակնհայտ է, որ այս հարցում վարչական մարմինը պետք է զերծ մնա կամայական մոտեցումներից և հիմնվի բացառապես անձի պահանջի հիմքում դրված փաստական հանգամանքների վրա:

Ընդհանուր կանոնից բացառություն կազմող մյուս դրույթները վերաբերում են ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքին (այս մասին ավելի մանրամասն՝ ստորև):

**Հարց 148. Վնաս պատճառելու հետևանքով անձի մահվան դեպքում ու՞մ է հատուցվում վնասը: Հատուցման ինչպիսի՞ ձևերի մասին է այստեղ խոսքը: Ազդու՞մ է արդյոք մահացած անձի մեղքը վնասի հատուցման չափի վրա:**

#### **Պատասխան.**

Ոչ իրավաչափ վարչարարության, օրինակ՝ հանրահավաքի դադարեցման ժամանակ հատուկ միջոցների ոչ համաչափ կիրառման հետևանքով անձի մահվան դեպքում նրա առաջին կարգի ժառանգներին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ երկրորդ կարգի ժառանգներին վճարվում է միանվագ հատուցում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից ոչ պակաս չափով (հոդվ. 106, մաս 1-ին): Այս դրույթը բացառություն է կազմում վնա-

սի հատուցման ձևերի ընտրությանը վերաբերող Օրենքի 105-րդ հոդվածի 1-ին մասի կանոնից: Վարչական մարմինը, որին ներկայացվել է վնասի հատուցման պահանջը, այստեղ ևս չի կարող իր հայեցողությամբ ընտրել վնասի հատուցման գումարների վճարման ձևերը: Վճարվելիք գումարի նվազագույն չափը նույնպես սահմանված է Օրենքով: Վարչական մարմնին հայեցողություն է վերապահված միայն այդ չափը գերազանցող գումարի վճարման հարցում: Սակայն պարզ է, որ այդ չափերն այստեղ ևս չպետք է լինեն կամայական որոշման արդյունք: Այսպես՝ միևնույն ոչ իրավաչափ գործողության հետևանքով մահացած տարբեր անձանց ժառանգներին չի կարող տրվել իրարից տարբերվող հատուցում, եթե այլ փաստական հիմքեր, օրինակ՝ այդ անձանցից մեկի հրահրող գործողությունները, առկա չեն:

Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքում Օրենքը նախատեսում է նաև լրացուցիչ հատուցման պարտականություն, եթե անձի մահն առաջացրել է կերակրողին կորցնելու հետևանքներ: Դա նշանակում է, որ բացի վերոհիշյալ միանվագ հատուցումից, պատասխանատվություն կրողը պետք է հատուցի նաև կերակրողին կորցնելու հետևանքների համար: Այս հիմքով վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան (հոդվ. 106, մաս 2-րդ, առաջին պարբերություն): Եթե ՀՀ քաղաքացիական օրենսգրքի այդ դրույթով նախատեսված վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձն անչափահաս է և մինչև տասնութ տարեկան դառնալն ընդունվել և սովորում է միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում, ապա վնասի հատուցումն իրականացվում է մինչև համապատասխան հաստատությունում նրա ուսումնառության ավարտը (հոդվ. 106, մաս 2-րդ, երկրորդ պարբերություն): Իսկ եթե այդ անձինք մինչև չափահաս դառնալը չեն ընդունվել համապատասխան հաստատություն, ապա նրանց չափահաս դառնալուց հետո վնասի հատուցման վճարումը դադարեցվում է: Սակայն այն դեպքում, եթե չափահաս դառնալուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև 22 տարեկան դառնալը, այդ անձինք ընդունվում են համապատասխան հաստատություն, ապա վնասի հատուցումը վերսկսվում է ընդունվելու օրվանից և ավարտվում հաստատությունն ավարտելու հետ միաժամ:

մանակ: Իհարկե, վնասի հատուցումը վճարելու նախապայման է նաև դրական գնահատականներով ուսումնական տարին ավարտելու հանգամանքը (հոդվ. 106, մաս 2-րդ, երրորդ պարբերություն):

Բացառությամբ ընդհանուր կանոնի, Օրենքն այս դեպքում սահմանում է նաև վնասի հատուցման գումարի վճարման ձևը: Տվյալ դեպքում, սակայն, օրենսդրի մոտեցումն այլ է. վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց գումարը վճարվում է ոչ թե միանվագ, այլ յուրաքանչյուր ամիս, մահացածի՝ մահվանը նախորդող վերջին մեկ տարվա միջին ամսական աշխատավարձի 70 տոկոսի չափով (հոդվ. 106, մաս 2-րդ, չորրորդ պարբերություն):

Օրենքը նախատեսում է նաև, որ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքում նրա հուղարկավորության ծախսերի մի մասը նույնպես հոգում է պատասխանատվություն կրողը: Այդ ծախսերի հատուցման ենթակա չափը սահմանում է Օրենքը՝ դրանք պետք է կազմեն նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը: Այդ գումարը վճարվում է հուղարկավորության ծախսերը փաստացի կրած անձին կամ անձանց (հոդվ. 106, մաս 3-րդ): Տվյալ դեպքում Օրենքը որևէ հատուկ կանոն չի նախատեսում այդ ծախսերի վճարման ձևի վերաբերյալ, հետևապես՝ դրանք վճարվում են Օրենքով նախատեսված ընդհանուր կարգով:

Մենք քննարկեցինք միայն վարչական մարմնի ոչ իրավաչափ գործելակերպի հետևանքով անձին մահ պատճառելու դեպքերը: Սակայն հնարավոր են նաև իրավիճակներ, երբ անձի մահը վրա հասնի վարչական մարմիններին ոչ իրավաչափ գործողությունների դրդելու կամ այդ անձի կողմից որևէ իրավախախտման կատարումը կասեցնելու կամ դադարեցնելու համար վարչական մարմինների ձեռնարկած ոչ համաչափ գործողությունների հետևանքով: Օրինակ՝ ոստիկանը, նկատելով մանր խուլիգանություն կատարող հարբած անձին, այն կասեցնելու համար, սխալ գնահատելով իրավիճակը, հատուկ ներգործության միջոցներ է կիրառում այդ անձի հանդեպ, որի արդյունքում այդ անձը մահանում է, քանի որ, ասենք՝ տառապում էր սրտային հիվանդությամբ: Այսպիսի իրավիճակներում սխալ և ոչ համարժեք կլինի, հաշվի չառնելով մահացած անձի վարքագիծը, առաջնորդվել բացառապես վարչական մարմնի ոչ իրավաչափ գործելակերպով: Դա չի նշանակում, որ անձի մահվան ցանկացած կասկածելի հանգամանք պետք է «սակարկման առարկա» դառնա պատասխանատվություն կրողի և մա-

հացածի ժառանգների կամ հատուցում ստանալու իրավունք ունեցող այլ անձանց միջև: Դա ենթադրում է միայն, որ եթե մահացած անձի ապօրինի վարքագծի փաստն ապացուցված է, իսկ ապացուցման պարտականությունը կրում է այն վարչական մարմինը, որի վարչարարության հետևանքով անձը մահացել է, ապա վնասի հատուցման պահանջ ստացած վարչական մարմինը պետք է լրջորեն ուսումնասիրի բոլոր հանգամանքները և, հավաստիանալով մահացած անձի մեղքի առկայության մեջ, այդ մեղքի աստիճանին համարժեք չափով նվազեցնի վճարվելիք գումարը: Սակայն ամեն դեպքում վճարվող գումարը չի կարող պակաս լինել այն գումարի կեսից, որը կվճարվեր մահացած անձի մեղքի բացակայության դեպքում (հոդվ. 106, մաս 4-րդ): Այսինքն՝ միանվագ հատուցման և հուղարկավորության ծախսերի՝ Օրենքով սահմանված չափը կարող է նվազեցվել ոչ ավել, քան կեսով: Իսկ այն դեպքերում, երբ անձի մահն առաջացրել է կերակրողին կորցնելու հետևանքներ, ամենամսյա հատուցման չափը նույնպես կարող է նվազեցվել ոչ ավել, քան կեսով: Ամեն դեպքում այն պետք է կազմի մահացածի վերջին տարվա միջին ամսական աշխատավարձի առնվազն 35 տոկոսը:

**Հարց 149. Ի՞նչ է նշանակում ոչ գույքային այլ վնաս: Ինչու՞ այն պետք է նույնպես հատուցվի:**

### **Պատասխան.**

«Ոչ գույքային այլ վնաս» արտահայտությունը գործածվում է Օրենքի 107-րդ հոդվածի վերնագրում: Այդ արտահայտությունը չի ենթադրում ոչ գույքային վնասի այլ բովանդակություն և ծավալ, քան այդ վնասին վերաբերող Օրենքի մյուս դրույթներում ուրվագծվածը: Այդ արտահայտությամբ օրենսդիրը պարզապես մատնացույց է անում ոչ գույքային վնասը, որը պատճառվել է ոչ միայն այն անձին, որն անմիջականորեն տուժել է այդ վնասից, այլև՝ նրան, ում հանդեպ վնասից անմիջականորեն տուժած անձը որևէ օրենքի ուժով պարտականություններ է կրել: Այդ անձի վնասը նույնպես ենթակա է հատուցման: Այստեղ որոշիչն այն է, որ նշված պարտականությունները նախատեսված լինեն կամ ուղղակիորեն հետևեն օրենքից, այլ ոչ թե, ասեմք, սոսկ որևէ պայմանագրից: Օրինակ՝ եթե ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով մահ է պատճառվել անչափահաս երեխաների հորը, որն ալիմենտ էր վճարում իր

երեխաներին, ապա երեխաների օրինական ներկայացուցիչը, ասենք՝ մայրը, իրավունք ունի պահանջել վնասի հատուցում այն գումարի չափով, որն իբրև ալիմենտ պետք է վճարվեր մինչև երեխաների չափահաս դառնալը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ «այլ վնասը» ենթակա է հատուցման միայն իրական չափով, եթե հատուկ օրենքներով այլ չափ սահմանված չէ:

Իսկ թե ինչու է այդ վնասը ենթակա հատուցման, պարզ է դառնում այն հանգամանքից, որ եթե օրենքի ուժով անձը մեկ այլ անձի հանդեպ պարտականություններ է կրել, ապա վերջինիս վրա նույնպես կարող է անդրադառնալ (բնականաբար, միայն իրականում անդրադառնալու դեպքում) նրա հանդեպ օրենքի ուժով պարտականություններ կրող անձին պատճառված վնասը: Այն անձը, որին վարչական մարմինն անուղղակիորեն է վնաս պատճառել, պետք է նույնպես հնարավորություն ունենա պահանջելու այդ վնասի հատուցումը: Նրա համար ոչ մի նշանակություն չունի, որ վարչական մարմնի ոչ իրավաչափ գործողությունները «ուղղված էին» մեկ այլ անձի դեմ և նա չգիտեր, որ այդ անձն օրենքի ուժով պարտականություններ էր կրում անուղղակի վնասը կրած անձի հանդեպ: Հակառակ դեպքում կխախտվի իրավական պետության բաղադրիչներից մեկը, որն արտացոլված է Սահմանադրության 18-րդ հոդվածում: Ակնհայտ է, որ անուղղակի վնասի հետևանքով չի կարող չխախտվել անձի որևէ իրավունք, օրինակ՝ սեփականության իրավունքը և պարզ է, որ որևէ օրենք չի կարող զրկել նրան այն պաշտպանելու հնարավորությունից, որը տվյալ դեպքում կարող է իրականացվել վնասի հատուցման պահանջ ներկայացնելու միջոցով:

**Հարց 150. Ու՞մ և ի՞նչ հիմքերով կարող են ներկայացվել հետադարձ պահանջներ՝ պատասխանատվություն կրողների կողմից:**

### **Պատասխան.**

Համաձայն Օրենքի 108-րդ հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պատճառված վնասը, իրավունք ունի հետադարձ պահանջներ ներկայացնել վարչական մարմնի այն պաշտոնատար անձին, ում գործողությունները կամ անգործությունը հանգեցրել են ոչ իրավաչափ վարչարարության, ինչի հետևանքով վնաս է պատճառվել անձին: Այս

դրույթի բովանդակությունից հետևում է, որ հետադարձ պահանջների ներկայացնելու համար որպես թույլատրելիության նախապայման պետք է առկա լինի երկու նախադրյալ՝ պատասխանատվություն կրողի կողմից ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատճառված վնասի հատուցման փաստը և պատճառահետևանքային կապը տվյալ պաշտոնատար անձի գործողությունների (անգործության) և պատճառված վնասի միջև: Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Օրենքի հիշատակված դրույթում նշվում են միայն պաշտոնատար անձի գործողությունները և անգործությունը, հարկ է ընդգծել, որ տվյալ դեպքում օրենսդիրը չի ցանկացել բաց թողնել իրավական ակտերը. պարզապես իրավական ակտ ընդունելը նույնպես պետք է դիտարկել որպես գործողություն՝ Օրենքի քննարկվող հոդվածի իմաստով:

Սակայն այս հոդվածը կիրառելիս անհրաժեշտ է հիշել, որ Օրենքը՝ որպես հետադարձ պահանջներ ներկայացնելու հիմք, դիտարկում է ոչ թե պաշտոնատար անձանց ցանկացած գործողությունները և անգործությունը, այլ միայն այնպիսիք, որոնք կատարվել են (ցուցաբերվել են) դիտավորությամբ կամ անփութորեն, այսինքն՝ կոպիտ անզգուշությամբ: Այսինքն՝ «պարզապես» անզգուշությամբ (ինքնավստահությամբ) կատարված գործողությունները (ցուցաբերված անգործությունը) հիմք չեն հետադարձ պահանջներ ներկայացնելու համար: Ակնհայտ է, որ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար համապատասխան պաշտոնատար անձանց չեն կարող ներկայացվել հետադարձ պահանջներ:

Ի դեպ, Օրենքը չի մատնանշում, թե հետադարձ պահանջներն ինչ կարգով պետք է ներկայացվեն:

Իհարկե, հնարավոր են իրավիճակներ, երբ վարչական մարմնի պաշտոնատար անձինք մինչև իրենց դատական կարգով պահանջներ ներկայացնելն իրենց նախաձեռնությամբ բավարարեն այդ պահանջները: Դա նույնպես տվյալ հարցի լուծման ընդունելի տարբերակ է, որը, սակայն, անհրաժեշտ չէ կանոնակարգել Օրենքում:



**Հարց 151. Ո՞րն է պատասխանատվության հատուկ կանոնների «յուրահատկությունը» պատասխանատվության ընդհանուր կանոնների համեմատ:**

**Պատասխան.**

Բազմիցս նշվել է, որ Օրենքի այս կամ այն դրույթն ավելի հատուկ է, քան մյուսը, և ընդհանուր դրույթներին հաճախ միևնույն հոդվածի շրջանակներում հետևում են ավելի հատուկ դրույթներ: Սակայն հնարավոր չէ բոլոր այդ դրույթներն ամփոփել համապատասխան որևէ խորագրի ներքո: Ավելի շուտ դրանք պետք է հաջորդեին՝ հաճախ անմիջականորեն, ավելի ընդհանուր դրույթների, որպեսզի պարզորոշ լիներ դրանց համակարգային կապը: Սակայն որոշ դեպքերում միևնույն հարցին վերաբերող մի քանի հատուկ դրույթներ կարելի է և օրենսդրական տեխնիկայի տեսակետից նույնիսկ անհրաժեշտ է ամփոփել առանձին գլխի և (կամ) հոդվածների տեսքով: «Պատասխանատվության հատուկ կանոններ» խորագիրը կրող գլխում ամփոփված են երեք հոդվածներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է պատասխանատվության ընդհանուր կանոնների համեմատ «առավել» հատուկ, այդ կանոններից էապես շեղվող նորմեր: Այսպես՝ Օրենքի 109-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի համար՝ նշելով, որ համապատասխան դեպքերում պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված կարգով, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձը (պարզաբանվող) Օրենքի ուժով ունի վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք (հոդված 109, մաս 1-ին, առաջին պարբերություն)<sup>20</sup>: Այս դրույթի վերլուծությունից հետևում է, որ իրավաչափ վարչարարության հետևանքով առաջացած վնասը ընդհանուր առմամբ հատուցման ենթակա չէ: Միայն այն դեպքերում, երբ դա նախատեսում է ՀՀ Սահմանադրությունը կամ որևէ օրենք, այն ենթակա է հատուցման: Այստեղ անհրաժեշտ է պարզաբանել, թե ինչ նկատի ունի Օրենքը, երբ խոսում է վնասի հատուցման՝ Սահմանադրությամբ կամ օրենքներով սահմանված լինելու մասին: Կարծում ենք, մատ-

<sup>20</sup> Վստահության իրավունքի մասին տես՝ Օրենքի 63-րդ հոդվածին վերաբերող հատվածում:

նանշելով վնասի հատուցման՝ Սահմանադրությամբ նախատեսված լինելու հանգամանքը, օրենսդիրը նկատի ունի այն, որ վնասի հատուցման հնարավորությունը կամ պարտականությունը պետք է բխեն Սահմանադրությունից: Մեր կարծիքով՝ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցումը բխում է հատկապես Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության սկզբունքից: Սահմանադրության այդ դրույթներից կարելի է հետևություն անել, որ Սահմանադրությունը անձի իրավունքները պաշտպանելու հնարավորությունը չի կապակցում բացառապես պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ոչ իրավաչափ գործողությունների հետ: Այն դեպքերում, երբ անձին որևէ վնաս է պատճառվում, այն ենթադրում է նրա որևէ իրավունքի խախտում: Իսկ այդպիսի խախտումը վերացնելու՝ անձի սուբյեկտիվ իրավունքը համապարփակ է և երաշխավորվում է Սահմանադրությամբ՝ անկախ այդ խախտման հիմքից կամ եղանակից:

Դա, իհարկե, չի նշանակում, որ ֆիզիկական անձը, հիմնվելով սուկ սահմանադրական այդ նորմի վրա, կարող է հատուցում պահանջել ցանկացած իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասի համար<sup>21</sup>: Օրինակ՝ եթե վարչական մարմինը, իրավիճակին համարժեք միջոցներով օրենքի հիման վրա կանխելով անձի կողմից վարչական իրավախախտման կատարումը, վնաս է պատճառել նրան, ապա պարզ է, որ սահմանադրական այլ դրույթների ուժով այդ անձը չի կարող հիմնվել Սահմանադրության 18-րդ հոդվածի վրա և հատուցում պահանջել: Սակայն Սահմանադրության այդ դրույթը միանշանակ պահանջում է, որ վարչական մարմինների իրավաչափ գործունեության հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջը վարչական մարմինները և դատարանները քննեն (քննարկեն) ամենայն լրջությամբ և արդյունքում պարզեն՝ այդ վնասի հատուցումը բխո՞ւմ է Սահմանադրու-

<sup>21</sup> Իհարկե, ինքնին ենթադրվում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման բոլոր դեպքերում և անկախ որևէ հանգամանքից: Տես՝ օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1064-րդ հոդվածի 1-ին մասը, որը նախատեսում է, որ ապօրինի դատապարտելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց կալանք կամ չբացակայելու մասին ստորագրություն կիրառելու, վարչական տույժի ենթարկելու հետևանքով պատճառված վնասը... լրիվ ծավալով հատուցում է Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ հետաքննության, նախքննության, դատախազության և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:

թյունից, թե՛ ոչ: Իսկ եթե այն նախատեսված է որևէ օրենքով, ապա այստեղ խնդիրը միայն համապատասխան օրենքի կիրառումն է:

Պատասխանատվության մյուս հատուկ դեպքերը վերաբերում են ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու հետևանքով պատճառված վնասի հատուցմանը և անհիմն հարստացման դեպքում սահմանվող պատասխանատվությանը:

## **ԲԱԺԻՆ VIII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հարց 152. Ինչո՞վ է պայմանավորված Օրենքը հրապարակելուց ինն ամիս հետո ուժի մեջ մտնելու հանգամանքը:**

### **Պատասխան.**

«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի համաձայն՝ «նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում դրանցում նախատեսված ժամկետներում»:

ՀՀ օրենքները, որպես կանոն, ուժի մեջ են մտնում հրապարակումից 10 օր հետո: Որոշ դեպքերում, հաշվի առնելով համապատասխան կարգավորումների հրատապությունը, օրենքների մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքները կարող են ուժի մեջ մտնել հրապարակման հաջորդ օրվանից:

Բացառություն չեն նաև այն օրենքները, որոնց հրապարակման և ուժի մեջ մտնելու միջև ընկած է 10 օրվանից ավելի ժամկետ, օրինակ՝ այդ կերպ են ուժի մեջ մտել Քաղաքացիական օրենսգիրքը, Քրեական դատավարության օրենսգիրքը, Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և այլք: Հրապարակումից տևական ժամանակ հետո իրավական ակտի ուժի մեջ մտնելու հանգամանքը նախևառաջ պայմանավորված է այդ ակտերով կարգավորվող հարաբերությունների առանձնահատկությամբ, օրենսդրության վիճակով, իրավական և քաղաքական մշակույթով, այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությամբ և այլն: Բնականաբար՝ եթե ընդունվող իրավական ակտով սահմանված համապարտադիր վարքագծի կանոնները նորույթ են ինչպես ֆիզիկական ու իրավաբանական անձանց, այնպես էլ իրավակիրառողների համար, ապա նման ակտերի՝ արագ ուժի մեջ մտնելու հանգամանքը, ըստ էության, կարող է խառնաշփոթի, անկառավա-

րելի կամ հակասական իրավակիրառական վիճակի պատճառ դառնալ: Տևական ժամանակ է պահանջվում նաև համապատասխան ակտի կիրառման համար անհրաժեշտ նոր ենթաօրենսդրական ակտեր ընդունելու կամ գործող ակտերում փոփոխություններ կատարելու համար: Վերը թվարկած երկու հանգամանքներն էլ Օրենքի պարագայում առկա են: Այն սկզբունքները, որոնք դրվում են վարչարարության հիմքում, նորույթ են ոչ միայն Հայաստանի օրենսդրությունում, այլև հետսոցիալիստական այլ պետություններում, ուստի այս նոր կարգավորումների բովանդակությունը հասկանալու համար թե քաղաքացիներին, թե իրավակիրառողներին անհրաժեշտ է որոշակի ժամանակ:

Օրենքը նախատեսում էր նաև կառավարության երկու որոշումների ընդունում, որոնք արդեն ընդունվել են: Դրանք են՝ 2004 թվականի հունիսի 25-ին ընդունված՝ «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների և վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» և 2004 թվականի հունիսի 29-ին ընդունված՝ «Վարչական վարույթի ընթացքում կատարված աշխատանքների համար փորձագետներին, թարգմանիչներին և վկաներին վճարումներ կատարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները:

Հավելված 1.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ  
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԻ  
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

Ընդունված է 2004 թվականի փետրվարի 18-ին,  
օրենքում վերջին փոփոխությունները և լրացումները  
կատարվել են 2013 թվականի դեկտեմբերի 5-ին  
ընդունված օրենքով

**Բ Ա Ժ Ի Ն Ի  
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ**

**Գ Լ ՈՒ Խ 1.  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան**

Սույն օրենքը սահմանում է վարչարարության հիմունքները, կարգավորում է վարչական ակտեր ընդունելու, վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները և անգործությունը բողոքարկելու, վարչական ակտի կատարման, վարչական ծախսերի, ինչպես նաև վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները:

**Հոդված 2. Օրենքի գործողության ոլորտը**

1. Սույն օրենքի I և VII բաժինների գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա:

2. Սույն օրենքի II-VI բաժինների գործողությունը տարածվում է վարչական մարմինների՝ վարչական ակտի ընդունմամբ եզրափակվող գործունեության վրա, իսկ սույն օրենքի IV-VI բաժինների գործողությունը տարածվում է նաև վարչական մարմինների այնպիսի գործողության և անգործության վրա, որոնք անձանց համար առաջացնում են փաստական հետևանքներ:

3. Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունների վրա:

**(2-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

### **Հոդված 3. Հիմնական հասկացությունները**

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

1) **վարչական մարմիններ**՝ Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններ՝

ա) Հայաստանի Հանրապետության գործադիր իշխանության հանրապետական մարմիններ՝ Հայաստանի Հանրապետության նախարարություններ և Հանրապետության ողջ տարածքում վարչարարություն իրականացնող պետական այլ մարմիններ.

բ) տարածքային կառավարման մարմիններ՝ մարզպետներ.

գ) տեղական ինքնակառավարման մարմիններ՝ համայնքի ավագանի և համայնքի ղեկավար. քաղաքապետ՝ քաղաքային համայնքում, գյուղապետ՝ գյուղական համայնքում:

Եթե վերը թվարկված մարմիններից բացի, վարչարարություն են իրականացնում պետական այլ մարմիններ, ապա սույն օրենքի իմաստով՝ դրանք նույնպես համարվում են վարչական մարմիններ.

2) **վարչարարություն**՝ վարչական մարմինների արտաքին ներգործությունն ունեցող գործունեություն, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ:

**(3-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն, 26.12.08 ՀՕ-19-Ն)**

## **Գ Լ ՈՒ Խ 2.** **ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐԸ**

### **Հոդված 4. Վարչարարության օրինականությունը**

1. Վարչական մարմինները պարտավոր են հետևել օրենքների պահպանմանը:

2. Վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով:

### **Հոդված 5. Ձևական պահանջները չարաշահելու արգելքը**

Վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

### **Հոդված 6. Հայեցողական լիազորությունները սահմանափակելը**

1. Հայեցողական լիազորությունն օրենքով վարչական մարմինն վերապահված իրավունք է՝ ընտրելու մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկը:

2. Հայեցողական լիազորություն իրականացնելիս վարչական մարմինը պարտավոր է առաջնորդվել մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, վարչարարության իրականացման համաչափության և կամայականության արգելքի սկզբունքներով, ինչպես նաև հետապնդել օրենքով կանխորոշված այլ նպատակներ:

### **Հոդված 7. Կամայականության արգելքը**

1. Վարչական մարմիններին արգելվում է անհավասար մոտեցում ցուցաբերել միատեսակ փաստական հանգամանքների նկատմամբ, եթե առկա չէ դրանց տարբերակման որևէ հիմք:

Վարչական մարմինները պարտավոր են անհատական մոտեցում

ցում ցուցաբերել էապես տարբեր փաստական հանգամանքների նկատմամբ:

2. Եթե վարչական մարմինը որևէ հայեցողական լիազորություն իրականացրել է որոշակի ձևով, ապա միանման դեպքերում հետագայում ևս պարտավոր է իր այդ հայեցողական լիազորությունն իրականացնել նույն ձևով:

Վարչական մարմինն այդ սահմանափակումից կարող է հրաժարվել, եթե գերակա շահի առկայության պատճառով նա հետագայում մտադիր է մշտապես ընդունել մեկ այլ հայեցողական որոշում:

### **Հոդված 8. Վարչարարության համաչափությունը**

Վարչարարությունը պետք է ուղղված լինի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները պետք է լինեն պիտանի, անհրաժեշտ և չափավոր:

### **Հոդված 9. Առավելագույնի սկզբունքը**

1. Վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում:

2. Եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առունով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով:

3. Եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առունով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված:

**(9-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՀՕ-10-Ե)**

### **Հոդված 10. Հավաստիության կանխավարկածը**

1. Վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ անձի ներկայացրած տվյալները, տեղեկությունները համարվում են հավաստի բոլոր դեպքերում, քանի դեռ վարչական մարմինը հակառակը չի ապացուցել:



Արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով:

Եթե վարչական մարմինը հիմնավոր կասկածներ ունի անձանց ներկայացրած տվյալների, տեղեկությունների իսկության վերաբերյալ, ապա ինքը պարտավոր է ինքնուրույն և իր հաշվին ձեռնարկել միջոցներ՝ դրանց իսկության մեջ հավաստիանալու համար:

2. Անձինք պատասխանատվություն են կրում վարչական մարմիններին կեղծ տվյալներ, տեղեկություններ ներկայացնելու համար:

### **Յոթերորդ 11. Տնտեսավարությունը**

Վարչական մարմինն իր լիազորություններն իրականացնելիս պարտավոր է գործել այնպես, որպեսզի առանց իր լիազորությունների կատարմանը վնասելու՝ առավել սեղմ ժամկետում, առավել բարենպաստ արդյունքի հասնելու համար ապահովի իր տնօրինմանը հանձնված միջոցների առավել արդյունավետ օգտագործումը:

### **Յոթերորդ 12. Այլ սկզբունքներ կիրառելը**

Սույն գլխով սահմանված վարչարարության հիմնարար սկզբունքներն սպառնիչ չեն և չեն կարող արգելք լինել վարչարարության այլ սկզբունքներ կիրառելու համար:

## **Գ Լ ՈՒ Խ 3.**

### **ԳՈՐԾԵՐԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ, ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓՈԽՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ**

### **Յոթերորդ 13. Գործերի տարածքային ենթակայությունը**

1. Անշարժ գույքին վերաբերող հարցերի լուծումը վերապահվում է այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքում գտնվում է տվյալ անշարժ գույքը:

2. Իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը որևէ իրավունք տրամադրելը կամ նրա վրա որևէ պարտականություն դնելը վերապահվում է այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքում իր գործունեությունն իրականացնում է իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը:

3. Ֆիզիկական անձին վերաբերող հարցերի լուծումը վերա-

պահվում է այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքում հաշվառված է կամ մշտապես կամ առավելապես բնակվում է տվյալ անձը:

4. Եթե որևէ հարցի լուծումն վերապահված է միաժամանակ երկու և ավելի վարչական մարմինների իրավասությանը, ապա իրավասու է այն վարչական մարմինը, որին անձը դիմել է, կամ որի նախաձեռնությամբ պետք է լուծվի այդ հարցը:

5. Անմիջականորեն սպառնացող վտանգի կամ վնասի առաջացման դեպքում վարչական մարմինների անհապաղ լուծումը պահանջող հարցերը վերապահվում են այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքում առաջացել է այդ իրավիճակներով պայմանավորված գործողություններ կատարելու կամ որոշումներ ընդունելու անհրաժեշտությունը, իսկ եթե դա հնարավոր չէ, ապա այն վարչական մարմնի իրավասությանը, որի տարածքին հարում է այդ տարածքը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

6. Այլ օրենքներով գործերի տարածքային ենթակայության այլ կարգ սահմանված լինելու դեպքում գործում է այդ օրենքներով սահմանված կարգը:

#### **Հոդված 14. Գործերի առարկայական ենթակայությունը**

Վարչական մարմիններին գործերի առարկայական ենթակայության հարցը լուծվում է այդ գործերում արժարժվող փաստական հանգամանքներին վերաբերող օրենքներով:

#### **Հոդված 15. Վարչական մարմինների փոխադարձ օգնության պարտականությունը**

1. Վարչական մարմինները պարտավոր են փոխադարձ օգնություն (այսուհետև՝ փոխօգնություն) տրամադրել միմյանց՝ իրենց լիազորություններն իրականացնելու համար:

Փոխօգնությունը տրամադրվում է փոխօգնություն հայցող վարչական մարմնի հայտի հիման վրա:

2. Փոխօգնություն չէ միմյանց նկատմամբ ենթակայության հարաբերությունների մեջ գտնվող վարչական մարմինների միջև օգնությունը:

#### **Հոդված 16. Փոխօգնության համար դիմելը**

Եթե փոխօգնությունը կարող են տրամադրել մեկից ավելի վարչա-

կան մարմիններ, ապա հայցող վարչական մարմինը փոխօգնություն տրամադրելու համար պետք է դիմի այն վարչական մարմին (հայցվող վարչական մարմին), որն իր կարծիքով առավել արդյունավետ և սեղմ ժամկետում կտրամադրի անհրաժեշտ փոխօգնությունը:

### **Յոդված 17. Փոխօգնություն չտրամադրելու հիմքերը**

1. Հայցվող վարչական մարմինն իրավունք չունի տրամադրելու փոխօգնությունը, եթե՝

ա) հայցվող վարչական մարմնի համար ակնհայտ է փոխօգնության կարգով ձեռնարկվելիք միջոցների ոչ իրավաչափ լինելը.

բ) փոխօգնություն տրամադրելու համար անհրաժեշտ գործողությունների կատարումը չի մտնում հայցվող վարչական մարմնի իրավասության մեջ.

գ) փոխօգնություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) դասվում են օրենքով պահպանվող գաղտնիքների շարքին, և հայցող վարչական մարմնին դրանց տրամադրելը՝ նույնիսկ տրամադրման գաղտնիությունն ապահովող եղանակով, արգելվում է օրենքով:

2. Հայցվող վարչական մարմինն իրավունք ունի չտրամադրելու փոխօգնությունը, եթե՝

ա) որևէ այլ վարչական մարմին, քան ինքն է, փոխօգնությունը կարող է տրամադրել էապես ավելի նվազ ջանքերի գործադրմամբ.

բ) փոխօգնություն տրամադրելու համար պետք է գործադրի դրան ոչ համարժեք ջանքեր.

գ) փոխօգնության տրամադրումը կարող է էապես խոչընդոտել սեփական լիազորությունների իրականացմանը:

3. Հայցվող վարչական մարմինը փոխօգնության տրամադրումը չի կարող մերժել սույն հոդվածի 1-2-րդ մասերով չնախատեսված հիմքերով:

4. Եթե հայցվող վարչական մարմինը սույն հոդվածի 1-2-րդ մասերով նախատեսված որևէ հիմքով մերժում է փոխօգնության տրամադրումը, ապա նա այդ մասին պարտավոր է եռօրյա ժամկետում տեղեկացնել փոխօգնություն հայցած վարչական մարմին, որը մերժումը կարող է վիճարկել հայցվող վարչական մարմնի վերահաս վարչական մարմնում:

Վերադաս վարչական մարմինը սեղմ ժամկետում վերջնական որոշում է ընդունում փոխօգնությունը մերժելու վերաբերյալ վեճով:

Վերադաս վարչական մարմինը, մերժումն անհիմն ճանաչելու դեպքում, հայցվող վարչական մարմնին հանձնարարում է անհապաղ տրամադրել փոխօգնությունը:

**(17-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Հոդված 18. Փոխօգնության կարգով ձեռնարկվող միջոցների իրավաչափությունը**

1. Փոխօգնության կարգով կատարվելիք գործողության իրավաչափությունը որոշվում է հայցող վարչական մարմնին վերաբերող իրավական ակտերին համապատասխան, իսկ փոխօգնություն ցուցաբերելու իրավաչափությունը՝ հայցվող վարչական մարմնին վերաբերող իրավական ակտերին համապատասխան:

**2. (մասն ուժը կորցրել է 13.12.04 ՅՕ-10-Ն)**

3. Հայցող և հայցվող վարչական մարմինների հարաբերություններում հայցող վարչական մարմինը պատասխանատվություն է կրում փոխօգնության կարգով հայցվող միջոցների իրավաչափության համար: Հայցվող վարչական մարմինը պատասխանատվություն է կրում իր՝ փոխօգնության կարգով ձեռնարկած միջոցների իրավաչափության համար:

**(18-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Բ Ա Ժ Ի Ն II**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ**

**Գ Լ ՈՒ Խ 4.**  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 19. Վարչական վարույթի հասկացությունը**

Վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:

**Հոդված 20. Վարչական վարույթի փուլերը**

1. Վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

2. Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):

3. Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառնությունները (ընթացիկ փուլ):

4. Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

5. Անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

### **Յոդված 21. Վարչական վարույթի մասնակիցները**

1. Վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝

ա) վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար (դիմող), կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ:

բ) երրորդ անձինք՝ այն անձինք, որոնց իրավունքները կամ օրինական շահերը կարող են շոշափվել վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտով:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետում նշված վարույթի մասնակիցները վարչական վարույթում ներգրավվում են իրենց դիմումի համաձայն կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ:

**(21-րդ հոդվածը փոփ., լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Յոդված 22. Այլ անձինք վարչական վարույթում**

Վարչական վարույթում կարող են հանդես գալ նաև այլ անձինք՝ վկաներ, փորձագետներ, թարգմանիչներ, ինչպես նաև պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ այլ մարմիններ) ներկայացուցիչներ:

### **Յոդված 23. Ներկայացուցչությունը վարչական վարույթում**

1. Վարչական վարույթում վարույթի մասնակիցները կարող են մասնակցել ինքնուրույն, իրենց ներկայացուցիչների միջոցով կամ

նրանց հետ միասին:

2. Վարչական վարույթում որպես վարույթի մասնակիցների ներկայացուցիչներ կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով լիազորված անձինք, այդ թվում՝ փաստաբաններ:

Վարույթի անգործունակ մասնակիցներին վարչական վարույթում ներկայացնում են նրանց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված օրինական ներկայացուցիչները:

3. Լիազորված անձինք կան օրինական ներկայացուցիչները վարչական մարմնի պահանջով պարտավոր են ներկայացնել լիազորագիր կամ օրինական ներկայացուցիչ լինելը հաստատող փաստաթուղթ:

Լիազորագրի համար նոտարական վավերացում չի պահանջվում:

4. Լիազորագրի գործողությունն օրենքով սահմանված դեպքերում դադարելիս վարչական վարույթ իրականացնող մարմինն այդ մասին պետք է գրավոր տեղեկացվի լիազորողի կամ լիազորված անձի միջոցով:

5. Վկան, փորձագետը, թարգմանիչը և այլ մարմինների ներկայացուցիչները վարչական վարույթում կարող են հանդես գալ միայն անմիջականորեն:

#### **Հոդված 24. Վարչական մարմնի պաշտոնատար անձի կողմից գործը քննարկելու և լուծելու անհնարինությունը**

Վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը, եթե նա՝

ա) վարույթի մասնակից է.

բ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի ներկայացուցիչն է.

գ) աշխատում է վարույթի մասնակիցներից որևէ մեկի մոտ.

դ) վարույթի մասնակիցներից որևէ մեկի կամ նրա ներկայացուցիչի ազգականն է՝ զավակը, ծնողը, հարազատ հայրը կամ մայրը, եղբայրը կամ քույրը կամ նրանց զավակը, հորեղբայրը կամ հորաքույրը կամ նրանց զավակը, մորեղբայրը կամ մորաքույրը կամ նրանց զավակը, ամուսինը (ընդ որում, ամուսնալուծության փաստը սույն կետով նախատեսված հիմքը բացառող հանգամանք չէ), փեսան, հարսը, ամուսնու ծնողները կամ նրանց զավակը կամ եղբայրը կամ քույրն է.

ե) նախկինում մասնակցել է տվյալ գործի քննարկմանը:

**(24-րդ հոդվածը խմբ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

## **Հողված 25. Բացարկ հայտնելու հիմքերը և կարգը**

1. Վարույթի մասնակիցները կարող են գրավոր բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին, իսկ օրենքով նախատեսված դեպքերում կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացնելիս՝ կոլեգիալ կազմի ցանկացած անդամի, եթե՝

ա) առկա է սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որևէ մեկը.

բ) մինչև գործի քննարկման ավարտը, տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը հրապարակայնորեն արտահայտվել է գործի հնարավոր ելքի մասին կամ գնահատական է տվել գործի փաստական հանգամանքներին կամ, մինչև ապացույցների հետազոտումը, կանխավ գնահատական է տվել դրանցից որևէ մեկին.

գ) տվյալ պաշտոնատար անձը կամ կոլեգիալ կազմի անդամը երբևէ գործել է ի շահ վարույթի մասնակիցներից որևէ մեկի.

դ) առկա են այլ հանգամանքներ, որոնք վկայում են գործի ելքով՝ տվյալ պաշտոնատար անձի կամ կոլեգիալ կազմի անդամի ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված լինելու մասին կամ կասկած են հարուցում տվյալ գործի առնչությամբ նրա անաչառության նկատմամբ:

2. Բացարկը կարող է հայտնվել մինչև վարչական վարույթն ավարտվելը՝ վարույթի այն փուլում, երբ բացարկ հայտնողին հայտնի է դառնում սույն հոդվածով սահմանված որևէ հիմքի առկայությունը:

3. Նույն պաշտոնատար անձին կրկին հայտնված բացարկը կարող է քննարկվել, եթե դրանում մատնանշված են նոր հիմքեր կամ նոր փաստեր:

4. Բացարկի վերաբերյալ որոշումը պետք է ընդունվի ոչ ուշ, քան բացարկ հայտնելու օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ընթացքում:

Բացարկի վերաբերյալ վերջնական որոշումն ընդունում է այն պաշտոնատար անձի անմիջական ղեկավարը, ում նկատմամբ բացարկ է հայտնվել, իսկ կոլեգիալ կազմով վարչական վարույթ իրականացվելու դեպքում՝ համապատասխան կոլեգիալ մարմինը՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Այդ դեպքում քվեարկությանը չի մասնակցում կոլեգիալ կազմի այն անդամը, ում դեմ բացարկ է հայտնվել:

Վարչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկի վերա-

բերյալ որոշումն ընդունում է ղեկավարն ինքը:

Վարչական մարմնի ղեկավարին հայտնված բացարկի ընդունման դեպքում ղեկավարի փոխարեն վարչական վարույթն իրականացնում է նրա տեղակալը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ ղեկավարին փոխարինելու լիազորություն ունեցող պաշտոնատար այլ անձ:

### **Հոդված 26. Վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձի ինքնաբացարկը**

1. Սույն օրենքի 24-րդ հոդվածով և 25-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հիմքի առկայության դեպքում վարչական մարմնի ղեկավարը, վարչական վարույթ իրականացնող պաշտոնատար անձը (եթե վարչական վարույթն իրականացնում է կոլեգիալ մարմինը, ապա կոլեգիալ մարմնի անդամը) պարտավոր է անհապաղ ինքնաբացարկ հայտնել:

Վարչական մարմնի ղեկավարի ինքնաբացարկի դեպքում նրա փոխարեն վարչական վարույթն իրականացնում է օրենքով նշված պաշտոնատար անձը, իսկ օրենքով համապատասխան պաշտոնատար անձ նշված չլինելու դեպքում՝ ինքնաբացարկ հայտնած ղեկավարի տեղակալը, վերջինիս բացակայության դեպքում՝ ղեկավարին փոխարինելու լիազորություն ունեցող պաշտոնատար այլ անձ:

Եթե ինքնաբացարկ է հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձը, ապա եռօրյա ժամկետում վարչական մարմնի ղեկավարի կողմից նա փոխարինվում է իրավասու այլ անձով:

Եթե ինքնաբացարկ է հայտնել կոլեգիալ մարմնի անդամը, ապա այդ մարմինը վարույթն իրականացնում է կոլեգիալ կազմի մնացած անդամների մասնակցությամբ:

2. Ինքնաբացարկը հայտնվում է գրավոր: Դա պետք է պատճառաբանված լինի: Ինքնաբացարկի պատճենը պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին՝ ի գիտություն:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց ինքնաբացարկ հայտնելու հիմքը հայտնի է դարձել գործի վարույթն սկսվելուց հետո, ապա նրանք պետք է ինքնաբացարկ հայտնեն վարույթի այն փուլում, երբ ի հայտ է եկել համապատասխան հիմքը՝ պահպանելով սույն օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:



### **Յոդված 27. Վարչական վարույթի իրականացման լեզուն**

1. Վարչական վարույթն իրականացվում, և վարչական ակտն ընդունվում է հայերենով:

2. Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների լեզուներին տիրապետող անձինք, օրենքով սահմանված կարգով կամ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, վարչական վարույթի իրականացման համար դիմումը և դրան կից փաստաթղթերը կարող են ներկայացնել համապատասխան փոքրամասնության լեզվով: Այդ դեպքում վարչական մարմինը կարող է պահանջել ներկայացնել փաստաթղթերի թարգմանությունները հայերենով:

3. Վարչական վարույթի իրականացման հետ կապված փաստաթղթերը կազմվում են, և ամբողջ գործավարությունն իրականացվում է հայերենով:

Եթե վարույթի մասնակիցները փաստաթղթեր են ներկայացրել այլ լեզվով, ապա վարչական մարմնի պահանջով նրանք պարտավոր են ներկայացնել նաև դրանց՝ օրենքով սահմանված կարգով կատարված հայերեն թարգմանությունները:

4. Վարչական վարույթի իրականացման ընթացքում թույլատրվում է վարույթի մասնակիցների կողմից օտար լեզուների օգտագործումը: Սակայն այդ անձինք պարտավոր են իրենց ներկայացրած թարգմանչի միջոցով ապահովել հայերեն թարգմանություն, եթե վարչական մարմինն այդպիսի թարգմանություն ապահովելու հնարավորություն չունի:

*(27-րդ հոդվածը փոփ., խմբ. 13.12.04 ՅՕ-10-Ն)*

### **Յոդված 28. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը վարելը և հաշվառելը**

1. Վարչական վարույթ հարուցելու պահից վարչական մարմինը կազմում է առանձին գործ, որում պահվում են տվյալ վարույթին առնչվող բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտը (դրա հաստատված պատճեն):

Վարչական մարմինը միաժամանակ վարում է վարչական գործերի ժամանակագրական և առարկայական հաշվառման գրանցամատյաններ, ինչպես նաև առանձին գրանցամատյան՝ վարչական վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտերի հաշվառման համար:

2. Վարչական վարույթի վերաբերյալ գործերի և դրանց հաշվառ-

ման գրանցամատյանների, ինչպես նաև վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանի վարման կարգն ու պայմանները սահմանում է վարչական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած օրինակելի կարգի հիման վրա:

3. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը պահպանվում են օրենսդրությամբ սահմանված գործավարության կանոններին համապատասխան և օրենքով սահմանված կարգով ենթակա են արխիվ հանձնվելու:

4. Բանավոր և այլ ձևի վարչական ակտեր ընդունելու վերաբերյալ գործավարություն և հաշվառում չի իրականացվում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

**(28-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 29. Վարչական վարույթում արձանագրություն կազմելը**

1. Եթե գործի քննարկումը կատարվում է վարույթի մասնակիցների, վկաների, փորձագետի, այլ մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ, ապա վարչական մարմինն արձանագրում է քննարկումները:

2. Արձանագրությունը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացնող վարչական մարմնի անվանումը.

բ) վարույթն իրականացնելու վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը.

գ) սույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց անունը և ազգանունը՝ տվյալ գործում նրանց կարգավիճակի (դիմող, երրորդ անձ, վկա և այլն) նշմամբ.

դ) քննարկվող հարցի բովանդակությունը.

ե) վարույթի մասնակիցների և վարույթում հանդես եկող այլ անձանց ելույթների համառոտ շարադրանքը.

զ) ընդունված որոշման եզրափակիչ մասը:

Արձանագրությունը կարող է պարունակել նաև լրացուցիչ տեղեկություններ:

3. Եթե քննարկումը կատարվել է ընդմիջումներով, ապա պետք է նշվեն նաև ընդմիջման վերաբերյալ տեղեկությունները: Մի քանի քննարկումներ անցկացնելու դեպքում դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ կազմվում է առանձին արձանագրություն: Արձանագրությանը կարող են կցվել հավելվածներ, այդ թվում՝ գործում առկա բոլոր փաստաթղթերի ցանկը՝ ըստ դրանք ներկայացրած վարույթի մասնակիցների:

**Գ Լ ՈՒ Խ 5.**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՓՈՒԼԸ**

**Հոդված 30. Վարչական վարույթ հարուցելու հիմքերը և վարույթը հարուցելը**

1. Վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝

ա) անձի դիմումը, բողոքը.

բ) վարչական մարմնի նախաձեռնությունը:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը համարվում է հարուցված՝ համապատասխան դիմումը կամ բողոքը վարչական մարմնում ստանալու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմումը կամ բողոքը, սույն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն, վերահասցեագրվել է ըստ իրավասու վարչական մարմինների կամ վերադարձվել է դիմողին (բողոք բերողին):

3. Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը հարուցվում է այն գործողության (գործողությունների) սկսման օրվանից, որը նպատակամղված է վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական ակտի ընդունմանը:

**4. (մասն ուժը կորցրել է 13.12.04 ՀՕ-10-Ն)**

5. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված դեպքերում կիրառվում են սույն օրենքի II բաժնի համապատասխան դրույթները, իսկ «ա» կետի՝ բողոք բերելու մասով նախատեսված դեպքում՝ նաև IV բաժնի դրույթները:

**(30-րդ հոդվածը լրաց., փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 31. Դիմումին ներկայացվող ընդհանուր պահանջները**

1. Վարչական մարմին դիմումը ներկայացվում է գրավոր և պետք է պարունակի՝

ա) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը.

բ) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը).

գ) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը.

դ) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկա).

ե) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են).

զ) դիմումը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.

ե) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը:

Եթե վարչական ակտի համար օրենքով նախատեսվում է մուծել պետական կամ տեղական տուրք կամ կատարել այլ պարտադիր վճարում, ապա պետք է ներկայացվի նաև մուծման կամ վճարման կատարումը հավաստող փաստաթուղթ:

Եթե դիմումը ներկայացվում է ներկայացուցչի միջոցով, ապա պետք է ներկայացվի նաև օրենքով սահմանված կարգով տրված լիազորագիր:

2. Վարչական մարմնում անձանց ընդունելության ժամանակ կազմված արձանագրությունը, սույն հոդվածի իմաստով, համարվում է դիմում, եթե դրանում առկա են սույն հոդվածի 1-ին մասի «ա», «բ» և «դ» կետերով նախատեսված տեղեկությունները, և օրենքը չի պահանջում, որ դիմումը ներկայացվի սույն հոդվածի 1-ին մասի մյուս բոլոր կետերի պահպանմամբ:

**(31-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն, 13.04.11 ՅՕ-119-Ն, փոփ. 19.03.12 ՅՕ-51-Ն)**

### **Հոդված 32. Ձևական սխալները վերացնելը**

Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա վարչական մարմինը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը:

### **Հոդված 33. Դիմումը վերահասցեագրելը և վերադարձնելը**

1. Եթե դիմումը ներկայացվել է ոչ իրավասու վարչական մարմին, ապա դիմումն ստացած վարչական մարմինը եռօրյա ժամկետում դա վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին:

2. Եթե դիմումում ներկայացված հարցերից մեկը կամ մի քանիսը ենթակա են վարչական այլ մարմնի իրավասությանը, ապա վարչական մարմինը դիմումն այդ մասով վերահասցեագրում է իրավասու վարչական մարմին՝ ծանուցելով դիմողին:

Դիմումի՝ իրեն վերաբերող մասով, վարչական մարմնում վարույթ է հարուցվում սույն օրենքի 30-րդ հոդվածով նախատեսված կարգով:

3. Եթե դիմումով առաջադրված պահանջը չի մտնում ինչպես դա ստացած վարչական մարմնի, այնպես էլ որևէ այլ վարչական մարմնի իրավասության մեջ, ապա վարչական մարմինը դիմումը և դրան կից փաստաթղթերը, դրանք ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վերադարձնում է դիմողին՝ նշելով պատճառների մասին:

4. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում վարչական մարմինն իր մոտ պահում է վերահասցեագրված կամ հետ վերադարձված դիմումի պատճենները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև դրանց կից փաստաթղթերի կամ դրանց մի մասի պատճենները կամ դրանց ցանկը:

**(33-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Յոդված 34. Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերը**

Վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելու հիմքերն են՝ վարչական ակտ ընդունելու վերաբերյալ օրենքի պահանջը, դրանից բխող անհրաժեշտությունը կամ օրենքով վարչական մարմնին վերապահված հայեցողական լիազորությունը:

### **Յոդված 35. Վարչական վարույթի մասին ծանուցելը**

1. Դիմումի հիման վրա վարչական մարմինը վարչական վարույթի հարուցումից հետո՝ եռօրյա ժամկետում, վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին ծանուցում է վարչական վարույթի հարուցման մասին: Նշված անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև վկային, փորձագետին, թարգմանչին և այլ մարմինների ներկայացուցիչներին, վարչական մարմինը ծանուցում է վարույթի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների անցկացման տեղի, օրվա, ժամի և այլ պայմանների մասին:

2. Վարչական մարմինը իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին պատշաճ ձևով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

**(35-րդ հոդվածը փոփ., խմբ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Գ Լ ՈՒ Խ 6.**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԻԿ ՓՈՒԼԸ**

**Յոդված 36. Վարչական մարմնի արագ գործելու պարտականությունը**

1. Վարչական վարույթը պետք է իրականացվի հնարավորինս սեղմ ժամկետում:

2. Վարչական մարմինը պետք է վարչական վարույթն իրականացնի առանց դա բարդացնելու՝ լրացուցիչ լուծումներ անցկացնելու, լրացուցիչ փորձաքննություն նշանակելու կամ զննում կատարելու, եթե առկա չեն գործի փաստական հանգամանքների պարզաբանման համար անհրաժեշտ պատճառներ:

3. Եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

**(36-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Յոդված 37. Վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը**

1. Վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

2. Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու վարչական վարույթի մասնակիցների ներկայացրած՝ վարույթին առնչվող դիմումները և փաստաթղթերը, որոնց քննարկումը մտնում է իր իրավասության մեջ:

**Յոդված 38. Վարույթի մասնակիցներին լսելը**

1. Վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույ-

թում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

2. Լուումներ կարող են չանցկացվել, եթե՝

ա) վարչական վարույթի արդյունքում ընդունվելու է բարենպաստ վարչական ակտ, որը չի միջամտում այլ անձանց իրավունքների իրականացմանը, կամ վարչական ակտի հասցեատերը չի պնդում, որ լուումներ անցկացվեն.

բ) դիմումն ակնհայտ անհիմն է.

գ) ընդունվում է բանավոր վարչական ակտ:

3. Լուումներ չեն անցկացվում, եթե՝

ա) անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման.

բ) ընդունվում է այլ ձևի վարչական ակտ:

4. Լուումներ չեն անցկացվում կամ կարող են չանցկացվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

**(38-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Յոդված 39. Վարչական վարույթի նյութերի մատչելիությունը**

1. Վարչական վարույթի մասնակիցները, վարչական մարմնի գործունեության հրապարակայնությունը և վարչական վարույթի իրականացման ժամանակ այդ մարմնի անաչառությունն ապահովելու նպատակով, իրավունք ունեն վարույթն իրականացնող մարմնում ծանոթանալու վարչական վարույթի նյութերին:

2. Վարչական վարույթի նյութերին ծանոթանալու հնարավորությունը պետք է տրվի համապատասխան դիմումը ներկայացնելու օրվանից երեք օրվա ընթացքում:

Վարույթի մասնակիցները վարչական վարույթի նյութերից կարող են կատարել պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ:

3. Վարչական վարույթի նյութերը տրամադրելիս վարչական մարմինը պարտավոր է պահպանել պետական և ծառայողական գաղտնիքը, ինչպես նաև օրենքով պահպանվող այլ գաղտնիքներ, իսկ այդպիսի գաղտնիքներ տրամադրելիս՝ պարտավոր է պահպանել համապատասխան գաղտնիքի մասին օրենքով սահմանված կարգն ու պայմանները:

#### **Հոդված 40. Վարույթի մասնակիցներին օգնություն ցուցաբերելը**

1. Վարչական մարմինը պարտավոր է ֆիզիկական անձանց պարզաբանումներ տալ դիմումով առաջադրվող հարցի կապակցությամբ տվյալ վարչական վարույթի հետ կապված նրանց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ, օժանդակել դիմումի և դրան կից ներկայացվող փաստաթղթերի ձևակերպմանը, հնարավորության դեպքում՝ նաև կազմել դրանք:

2. Վարչական մարմինը պարտավոր է անձանց համար պայմաններ ստեղծել իր ընդունած նորմատիվ իրավական ակտերին, ինչպես նաև այդ մարմնի գործունեությանն առնչվող օրենքներին և իրավական այլ ակտերին ծանոթանալու համար:

**(40-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

#### **Հոդված 41. Վարչական վարույթի վերաբերյալ գործում առկա փաստաթղթերի թերությունները վերացնելը**

1. Վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ հայտնաբերելու դեպքում վարչական մարմինը պարտավոր է այդ փաստաթղթերը ներկայացնողների ուշադրությունը հրավիրել դրանց վրա՝ շտկելու նպատակով, ինչպես նաև նրանց ներկայությամբ, ինքնուրույն ուղղել ներկայացված փաստաթղթերում առկա ակնհայտ սխալները, վրիպակները:

Վարչական մարմինն իրավունք չունի չընդունելու սույն մասում նշված փաստաթղթերը միայն այն պատճառով, որ դրանք պարունակում են նման սխալներ, ջնջումներ, քերվածքներ կամ վրիպակներ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն կիրառվում փաստաթղթերում տեղ գտած այնպիսի սխալներ, ջնջումներ, քերվածքներ, վրիպակներ շտկելու կամ այլ թերություններ վերացնելու նկատմամբ, որի իրավունքը օրենքով վերապահված է այդ փաստաթղթերն ընդունած կամ տված մարմիններին:

#### **Հոդված 42. Ապացույցները վարչական վարույթում**

1. Վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց զնահատում է գործում առկա բացատրությունները, ցուցմունքները, փորձագիտական եզրակացությունները, փաստաթղթերը, նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք իր



հայեցողությամբ այդ մարմինը պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և զնահատման համար:

2. Վարչական մարմինն իրավունք չունի պահանջել ներկայացնելու այնպիսի փաստաթղթեր կամ դրանց նոտարական կամ այլ կարգով վավերացված պատճեններ, որոնց ներկայացնելը կամ համապատասխան վավերացմամբ ներկայացնելը նախատեսված է օրենքով:

### **Յոթերորդ 43. Ապացուցման պարտականությունը բաշխելը**

1. Անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝

ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում.

բ) վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) անձը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ վարչական մարմնի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ վարչական մարմնի վրա:

3. Եթե սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

**(43-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Յոթերորդ 44. Վկայի ցուցմունքները**

Վարչական մարմինը, վարույթի մասնակիցների միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ, որպես վկա հրավիրում և լսում է այն անձանց ցուցմունքները, որոնց կարող են հայտնի լինել տվյալ գործին վերաբերող տեղեկություններ: Իր ցանկությամբ վկան կարող է ցուցմունքներ տալ գրավոր՝ առանց վարչական մարմնին ներկայանալու: Գրավոր ցուցմունքի յուրաքանչյուր էջի վրա վկան ստորագրում է, որը հաստատվում է վարչական մարմնի

կնիքով՝ ստորագրման տարվա, ամսվա և ամսաթվի նշմամբ: Վկային հարցեր տալու անհրաժեշտություն առաջանալու դեպքում նա վարչական մարմնի կողմից հրավիրվում է այդ մարմին:

#### **Հոդված 45. Փորձագետ նշանակելը, զննում կատարելը**

1. Եթե փաստական հանգամանքների ուսումնասիրման համար անհրաժեշտություն է առաջանում նշանակել փորձագետ, ապա վարչական մարմինն այդ հարցով դիմում է համապատասխան կազմակերպության ղեկավարին կամ համապատասխան անձին՝ այդ մասին ծանուցելով վարույթի մասնակիցներին:

2. Որպես փորձագետ՝ կարող է նշանակվել համապատասխան բնագավառի գիտելիքներին տիրապետող անձը:

Փորձագետն իր ուսումնասիրությունների արդյունքում ներկայացնում է եզրակացություն:

3. Վարույթի մասնակիցները կարող են ներկա գտնվել փորձագետի կողմից կատարվող գործողություններին, եթե ներկա գտնվելը չի խոչընդոտի փորձաքննությանը:

4. Վարչական մարմնի կամ վարույթի մասնակիցների պահանջով փորձագետը պետք է լրացուցիչ պարզաբանումներ տա փորձագիտական եզրակացության վերաբերյալ:

5. Վարչական մարմինը, անհրաժեշտություն դեպքում, կարող է նշանակել նաև ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում: Վարչական մարմնի որոշմամբ զննմանը կարող են ներկա գտնվել վարույթի մասնակիցները:

**(45-րդ հոդվածը լրաց., փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

#### **Հոդված 46. Վարչական վարույթի ժամկետները**

1. Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

2. Վարչական վարույթի ժամկետն սկսվում է դիմունը տվյալ վարչական մարմնում մուտքագրելու օրվանից, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ ընդունվելիք վարչական ակտերի համար՝ նախաձեռնության օրվանից:

3. Սույն օրենքով նախատեսված ժամկետները հաշվարկվում են օրացուցային օրերով:

Եթե ժամկետը լրանում է ոչ աշխատանքային օրը, ապա ժամ-

կետն ավարտված է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրվա ժամը 18-00-ին:

#### **Յոթված 47. Վարչական վարույթի ժամկետը երկարաձգելը**

1. Վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել, եթե՝  
ա) գործի քննարկման համար էական համարվող հանգամանքների պարզելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել լրացուցիչ տեղեկություններ կամ փաստաթղթեր ձեռք բերել, որոնք, սույն օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան, պարտավոր է ներկայացնել դիմողը, և վարչական վարույթի մնացած ժամկետում հնարավոր չէ ըստ էության որոշում ընդունել:

բ) փորձագիտական եզրակացություն տալու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

գ) փոխօգնության կարգով միջոցներ ձեռնարկելու համար անհրաժեշտ է ավելի երկար ժամանակ, քան վարչական վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ավարտը:

դ) վարչական ակտի ընդունմանը մասնակցում են մի քանի վարչական մարմիններ:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 10 օր ժամկետով: Այդ դեպքում թույլատրվում է մինչև երկու անգամ երկարաձգում՝ հիշյալ ժամկետի պահպանմամբ:

Սույն հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դեպքում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև համապատասխան փորձագիտական եզրակացությունն ստանալը:

Սույն հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում վարչական վարույթի ժամկետը կարող է երկարաձգվել մինչև 30 օր ժամկետով:

3. Եթե վարչական վարույթի ժամկետի երկարաձգման համար առաջացել են սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված մեկից ավելի հիմքեր, ապա վարչական մարմինը կիրառում է դրանցից միայն մեկը, որն ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում վարույթն արագ և արդյունավետ իրականացնելու և ըստ էության որոշում ընդունելու համար:

4. Վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ վարույթն իրականացնող վարչական մարմինն ընդունում է որոշում, որի մասին սահմանված կարգով պետք է ծանուցի վարույ-

թի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև վարույթին մասնակցող այլ անձանց:

**Յոդված 48. Վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ ընդունելու հետևանքները**

Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմնի կողմից այդ ակտը չընդունվելու դեպքում՝

ա) վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը.

բ) եթե դիմումը վերաբերում է օրենքով նախատեսված որևէ փաստաթղթի տրամադրմանը, որն առնչվում է որևէ փաստի (ծնունդ, մահ, անձի բացակայություն տվյալ վայրից և այլն) հաստատմանը կամ արձանագրմանը, ապա դիմումի հիման վրա համապատասխան ակտը չստացած կամ այդ ակտի համար դիմում ներկայացրած անձն ազատվում է այն պատասխանատվությունից կամ պարտականություններից, որոնք օրենքով սահմանվում են այդ փաստաթղթերը չունենալու համար:

**(48-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Յոդված 49. Վարչական վարույթը կասեցնելը**

1. Վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը.

բ) վարույթին չի ներկայացել վարչական ակտի հասցեատերը, իսկ օրենքը բացառում է առանց նրա ներկայության համապատասխան վարչական ակտ ընդունելը.

գ) վարչական ակտի ընդունումը հնարավոր է միայն այդ ակտի հասցեատիրոջն ի հայտ բերելու դեպքում:

2. Վարչական մարմինը կարող է կասեցնել վարչական վարույթը, եթե՝

ա) վարչական ակտի հասցեատերը բացակայում է, և վարչական մարմինը, նախքան վարչական ակտ ընդունելը, անհրաժեշտ է հա-

մարում նրա ներկայությունը՝ վարույթին առնչվող որոշ կարևոր հանգամանքներ նրանից պարզելու համար.

բ) ընդունվելիք վարչական ակտի հասցեատեր իրավաբանական անձը վերակազմակերպվում է:

Վարչական վարույթը կարող է կասեցվել նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի «ա» կետով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցումն առաջացրած հանգամանքները վերանալուց հետո:

Սույն հոդվածի 1-ին մասի «բ» և «գ» կետերով, ինչպես նաև 2-րդ մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է դրա կասեցման հիմք դարձած հանգամանքները վերանալուց հետո, բայց ոչ ուշ, քան կասեցման մասին որոշում ընդունելու օրվանից հետո 60 օրը լրանալը:

4. Վարչական մարմինը վարչական վարույթի կասեցման վերաբերյալ ընդունում է որոշում, որը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին:

Վարչական վարույթի կասեցման մասին որոշումը կարող է ընդունվել վարույթի ցանկացած փուլում:

**(49-րդ հոդվածը փոփ., լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 50. Վարչական վարույթը կարճելը**

1. Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե՝  
ա) դիմումը ներկայացվել է առանց ստորագրության, և վարչական մարմինը, միջոցներ ձեռնարկելով դիմողին բացահայտելու ուղղությամբ, չի կարողացել պարզել, թե ով է հայցում համապատասխան վարչական ակտի ընդունումը.

բ) դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից.

գ) գոյություն ունի միևնույն անձի, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով ուժի մեջ մտած վարչական կամ դատական ակտ.

դ) դատարանի վարույթում գտնվում է միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքերով գործ.

ե) փոխվել է դիմողի կարգավիճակը, որն օրենքի ուժով բացառում է դիմումով հայցվող վարչական ակտի ընդունումը.

ե՛) լրացել է սույն օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված ժամկետը, և այդ ընթացքում չի վե-

րացել վարչական վարույթի կասեցման հիմք հանդիսացած հանգամանքը.

զ) դիմումն անթույլատրելի է:

Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է նաև սույն օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

2. Վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե՝

ա) անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

բ) օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումների կամ դրանց կանխման հետ չկապված հարցով իրավիճակի փոփոխման կամ օրենքով նախատեսված այլ հիմքով վերացել է վարչական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

3. Վարչական մարմինը վարչական վարույթի կարճման վերաբերյալ ընդունում է որոշում, որը եռօրյա ժամկետում պատշաճ ձևով ուղարկվում է վարույթի մասնակիցներին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի «գ», «դ», «ե» և «զ» կետերով սահմանված հիմքերով վարչական վարույթը կարճելու դեպքում նույն հարցով վարույթի վերսկսում և համապատասխան վարչական ակտի ընդունում չի թույլատրվում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

5. Վարչական վարույթը կարճելու մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

**(50-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 51. Վարչական վարույթը վերսկսելը**

1. Վարչական մարմինը վարույթի մասնակիցների դիմումի հիման վրա պարտավոր է որոշում ընդունել բողոքարկման ոչ ենթակա վարչական ակտը փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ, եթե՝

ա) վարչական ակտ ընդունելուց հետո դրա հիմքում դրված փաստական հանգամանքները կամ ակտի հասցեատիրոջ կարգավիճակը փոփոխվել են հօգուտ այն անձի, որը վարույթը վերսկսելու հարցով դիմում է ներկայացրել:

բ) առկա են նոր ապացույցներ, որոնք կարող են հանգեցնել վա-

րույթը վերսկսելու հարցով դիմած անձի համար ավելի բարենպաստ որոշում ընդունելուն:

զ) ի հայտ են եկել տվյալ գործի համար էական նշանակություն ունեցող այնպիսի նոր հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել վարույթը վերսկսելու հարցով դիմած անձանց, կամ թեև հայտնի են եղել նրանց, սակայն այդ անձանցից անկախ հանգամանքներով չեն ներկայացվել վարչական ակտն ընդունող վարչական մարմին:

դ) առկա են օրենքով նախատեսված այլ հիմքեր:

Սույն մասով նախատեսված դեպքերում վարչական վարույթը վերսկսվում է: Դրա ընթացքում կիրառվում են վարչական վարույթի իրականացման՝ սույն օրենքով նախատեսված ընդհանուր կանոնները:

2. Դիմումը պետք է տրվի 3 ամսվա ընթացքում այն օրից, երբ վարույթը վերսկսելու հարցով դիմած անձն իմացել է վարչական վարույթը վերսկսելու հիմք դարձած՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ հանգամանքի (հանգամանքների) մասին:

3. Դիմումի հիման վրա որոշում է ընդունում այն վարչական մարմինը, որն ընդունել է փոփոխելու, անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու ենթակա վարչական ակտը, կամ այդ ակտն օրենքով վարչական վարույթի վերսկսման միջոցով անվավեր կամ ուժը կորցրած ճանաչելու իրավասություն ունեցող համապատասխան վերադաս կամ իրավասու այլ վարչական մարմինը:

**(51-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ե)**

## **Յոդված 52. Մի քանի վարչական մարմինների մասնակցելը վարչական ակտ ընդունելուն**

1. Եթե վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ է նաև վարչական այլ մարմինների թույլտվությունը կամ համաձայնությունը, ապա դրանք հայցելու և ստանալու համար անհրաժեշտ գործողությունները, ներառյալ՝ լրացուցիչ փաստաթղթեր հավաքելը, իրականացնում է վարչական վարույթ հարուցած վարչական մարմինը:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով վարչական մարմնի ստացած թույլտվությունները և համաձայնություններն առանձին բողոքարկման ենթակա չեն. դրանք կարող են բողոքարկվել վարչական ակտի հետ միասին:

## **ԲԱԺԻՆ III ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ**

### **Գ Լ ՈՒ Խ 7.**

#### **ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ, ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ**

#### **Յոդված 53. Վարչական ակտի հասկացությունը և տեսակները**

1. Վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումն է, կարգադրությունը, հրամանը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:

Վարչական ակտը կարող է ուղղված լինել նաև որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց որևէ խմբի:

#### 2. Սույն օրենքի իմաստով`

ա) բարենպաստ վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմիններն անձանց տրամադրում են իրավունքներ կամ նրանց համար ստեղծում են այդ անձանց իրավական կամ փաստացի դրությունը բարելավող ցանկացած այլ պայման.

բ) միջամտող վարչական ակտն այն վարչական ակտն է, որի միջոցով վարչական մարմինները մերժում, միջամտում, ընդհուպ սահմանափակում են անձանց իրավունքների իրականացումը, որևէ պարտականություն են դնում նրանց վրա կամ ցանկացած այլ եղանակով վատթարացնում են նրանց իրավական կամ փաստացի դրությունը.

գ) զուգորդվող վարչական ակտն այն վարչական ակտն է, որն իր մեջ պարունակում է անձի համար ինչպես բարենպաստ, այնպես էլ միջամտող վարչական ակտերով սահմանվող դրույթներ:

**(53-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

#### **Յոդված 54. Վարչական ակտի ձևերը**

1. Վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր` որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ ձևով:

Դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթի արդյուն-



քում կարող է ընդունվել միայն գրավոր վարչական ակտ:

2. Օրենքով նախատեսված դեպքերում վարչական ակտը կարող է ընդունվել բանավոր:

Բանավոր վարչական ակտը, ակտի հասցեատիրոջ բանավոր կամ գրավոր պահանջով, ենթակա է հետագա գրավոր ձևակերպման ինչպես օրենքով նախատեսված դեպքերում, այնպես էլ այն դեպքում, երբ ակտի հասցեատերն ունի արդարացված շահ:

Այդ դեպքում պահպանվում են գրավոր վարչական ակտին՝ սույն օրենքով ներկայացվող պահանջները:

3. Վարչական ակտը կարող է ընդունվել նաև լուսային, ձայնային, պատկերային, ազդանշանների, նշանների կամ օրենքով նախատեսված այլ ձևով (այսուհետ՝ այլ ձևի վարչական ակտեր):

**(54-րդ հոդվածը խմբ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 55. Գրավոր վարչական ակտին ներկայացվող պահանջները**

1. Գրավոր վարչական ակտին ներկայացվում են հետևյալ պահանջները.

ա) վարչական ակտն իր բովանդակությամբ պետք է համապատասխանի դրա ընդունման համար օրենքով սահմանված պահանջներին, նշում պարունակի այն բոլոր էական փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք վարչական մարմնին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշում.

բ) վարչական ակտը պետք է կազմված լինի սահմանված ձևի և նմուշի թղթի վրա:

2. Վարչական ակտը, որպես կանոն, պետք է տեղեկություններ պարունակի նաև այն ծախսերի և դրանք կրողների վերաբերյալ, որոնք կատարվել են ակտի ընդունման կապակցությամբ: Ծախսերը վերադարձնելու հետ կապված ակտ ընդունելու դեպքում պետք է նշվեն վերադարձման ենթակա գումարը և վերադարձման կարգն ու պայմանները:

3. Վարչական ակտը կարող է ունենալ ներդիրներ, հավելվածներ կամ լրացուցիչ այլ փաստաթղթեր, որոնց գործողությունը չի կարող գերազանցել վարչական ակտի գործողության ժամկետը: Ներդիրները, հավելվածները և լրացուցիչ այլ փաստաթղթերը ինքնուրույն վարչական ակտեր չեն, դրանք վարչական ակտի բաղկացուցիչ մասն են և գործում են այնքանով, որքանով գործում է բուն վարչական ակտը:

4. Վարչական ակտը պետք է պարունակի՝

ա) վարույթն իրականացրած վարչական մարմնի լրիվ անվանումը.  
բ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը.

գ) ակտի լրիվ անվանումը, դրա ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը և համարը.

դ) ակտով լուծվող հարցի նկարագրությունը (նկարագրական մաս).

ե) ակտի ընդունման հիմնավորումը (պատճառաբանական մաս).

զ) ընդունված որոշման շարադրանքը (եզրափակիչ մաս).

է) ակտի գործողության ժամկետը, եթե ակտն ընդունվում է որոշակի ժամկետով.

ը) ակտի բողոքարկման ժամկետը և մարմինը, ներառյալ՝ դատարանը, որին կարող է այդ ակտը բողոքարկվել.

թ) ակտն ընդունող վարչական մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը և ազգանունը, նրա ստորագրությունը.

ժ) ակտն ընդունած վարչական մարմնի պաշտոնական կնիքը:

5. Միանման հարց կարգավորող վարչական ակտը կարող է ունենալ միասնական նմուշի ձև (ձևաթուղթ):

#### **Յոթված 56. Վարչական ակտի որոշակիությունը**

1. Վարչական ակտը պետք է ձևակերպվի հստակ և հասկանալի:

2. Վարչական ակտի բովանդակությունը պետք է շարադրվի այնպես, որպեսզի դրա հասցեատիրոջ համար ակնառու լինի, թե իրեն ինչ իրավունք է տրամադրվում, իր որ իրավունքն է սահմանափակվում, իրեն ինչ իրավունքից են զրկում, կամ իր վրա ինչ պարտականություն է դրվում:

#### **Յոթված 57. Վարչական ակտի հիմնավորումը**

1. Գրավոր կամ գրավոր հաստատված վարչական ակտը պետք է պարունակի հիմնավորում, որում պետք է նշվեն համապատասխան որոշում ընդունելու բոլոր էական փաստական և իրավական հիմքերը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրականացման արդյունքում ընդունված վարչական ակտի հիմնավորումից պետք է պարզ լինեն այն նկատառումները, որոնց հիման վրա վարչական մարմինն ընտրել է տվյալ լուծումը:

2. Հիմնավորում չի պահանջվում, եթե՝

ա) վարչական մարմինը բավարարում է որևէ դիմում, և վարչա-

կան ակտը չի շոշափում երրորդ անձանց իրավունքները.

բ) ակտի հասցեատիրոջը կամ այն անձին, ում շահերը վարչական ակտը շոշափում է, արդեն հայտնի է վարչական մարմնի դիրքորոշումը փաստական կամ իրավական հետևանքների վերաբերյալ, կամ այդ դիրքորոշումն ակնհայտորեն բխում է ակտի տեքստից.

գ) վարչական մարմինը նույնանման վարչական ակտեր է հրապարակում մեծ քանակությամբ կամ վարչական ակտերը հրատարակում է տեխնիկական միջոցների օգտագործմամբ, և յուրաքանչյուր առանձին դեպքում հիմնավորելու անհրաժեշտություն չկա:

3. Արգելվում է վարչական մարմնի ընդունած վարչական ակտերի հիմնավորումն այն փաստարկներով, որոնք չեն առնչվում տվյալ մարմնի իրավասությանը:

**(57-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

## **Գ Լ ՈՒ Խ 8.**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏ ԸՆԴՈՒՆԵԼԸ, ԴՐԱ ՄԱՍԻՆ ԻՐԱՁԵԿԵԼԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ**

#### **Հոդված 58. Վարչական ակտ ընդունելը**

1. Գրավոր վարչական ակտն ընդունված է համարվում այդ ակտը վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի կողմից ստորագրվելու օրվանից:

2. Բանավոր և այլ ձևի վարչական ակտերն ընդունված են համարվում այդ ակտերը հրապարակվելու պահից:

**(58-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

#### **Հոդված 59. Վարչական ակտի ընդունման մասին իրազեկելը (վարչական ակտը հանձնելը և հրապարակելը)**

1. Վարչական մարմինը վարույթի մասնակիցներին վարչական ակտի ընդունման մասին իրազեկում է սույն հոդվածով նախատեսված հանձնման կամ հրապարակման եղանակով:

2. Գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև՝ օրենքով սահմանված այլ եղանակներով:

Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

Սույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ:

Վարչական մարմինը գրավոր վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելիս պարտավոր է դրա հետ միասին հանձնել նաև այդ ակտի բաղկացուցիչ մաս համարվող փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը վարչական ակտի հետ միաժամանակ չհանձնելը կամ ուշ հանձնելը չի կարող ազդել վարչական ակտի գործողության վրա և այդ պատճառով ակտի իրավաչափությունը վիճարկելու հիմք դառնալ:

3. Գրավոր վարչական ակտում, ինչպես նաև դրա բաղկացուցիչ մաս կազմող փաստաթղթերում օրենքով սահմանված կարգով փոփոխություններ և լրացումներ կատարելու դեպքում այդ փոփոխությունները և լրացումները կատարած վարչական մարմինը պարտավոր է սույն հոդվածով սահմանված կարգով դրանք հանձնել վարչական ակտի հասցեատիրոջը:

4. Վարչական ակտն ընդունած վարչական մարմինը, գրավոր վարչական ակտի հասցեատիրոջ խնդրանքով, նրան կարող է տրամադրել նաև վարչական ակտի օտար լեզվով թարգմանված պատճենը, որը պետք է հաստատված լինի համապատասխան վարչական մարմնի պաշտոնական կնիքով:

Իրավաբանական ուժ ունի միայն վարչական ակտի վարչական վարույթի իրականացման լեզվով ընդունված տեքստը: Օտար լեզվով թարգմանված պատճենը չի կարող հիմք լինել այդ ակտի իմաստը կամ բովանդակությունը մեկնաբանելու կամ պարզաբանելու համար, իսկ վեճ առաջանալու կամ բողոք ներկայացնելու դեպքում հիմք է ընդունվում վարչական ակտի հայերենով ընդունված տեքստը:

5. Վարչական ակտի հրապարակումը կատարվում է վարչական մարմնի տեղեկագրում կամ այլ պաշտոնական տեղեկագրում հրատարակելով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակելով:

Գրավոր վարչական ակտը ենթակա է պարտադիր հրապարակման, եթե վարչական մարմնին հայտնի չեն այդ ակտով ուղղակիո-

րեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Գրավոր վարչական ակտը կարող է հրապարակվել նաև վարչական մարմնի նախաձեռնությամբ, եթե ակտի հրապարակումը վարչական մարմինը համարում է առավել նպատակահարմար՝ պետության և հանրության շահերի, ինչպես նաև անձանց իրավունքների արդյունավետ պահպանման անհրաժեշտությունից ելնելով:

Մանուլում, զանգվածային լրատվության այլ միջոցներում կամ տեղեկատվության տարածման այլ միջոցներում հրապարակվում է գրավոր վարչական ակտի եզրափակիչ մասը: Նման եղանակով հրապարակման մեջ պետք է նշվի, թե որտեղ կարելի է ամբողջությամբ ծանոթանալ վարչական ակտին, այդ թվում՝ դրա հիմնավորմանը:

6. Բանավոր վարչական ակտը հրապարակվում է բանավոր ձևով՝ դրա հասցեատիրոջը (հասցեատերերին) հայտարարելու միջոցով: Բանավոր վարչական ակտը կարող է հրապարակվել դրա հասցեատիրոջ համար հասկանալի որևէ օտար լեզվով:

7. Այլ ձևի վարչական ակտը հրապարակվում է օրենքով նախատեսված որևէ տեսքով դրա հասցեատիրոջը (հասցեատերերին) անմիջականորեն տեսանելի, ընկալելի կամ որևէ այլ ձևով հասանելի դարձնելու միջոցով:

**(59-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 60. Վարչական ակտի ուժի մեջ մտնելը**

1. Գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

2. Եթե վարչական ակտը պարունակում է այնպիսի դրույթներ, որոնք ակտի որևէ մասով ուժի մեջ մտնելը կապում են որոշակի պայմանների կամ հանգամանքների առաջացման հետ, ապա վարչական ակտն այդ մասով ուժի մեջ է մտնում համապատասխան պայմանի կամ հանգամանքի առաջացման պահից (պայմանով ակտ):

3. Բանավոր և այլ ձևի վարչական ակտերն ուժի մեջ են մտնում այդ ակտերը հրապարակելու պահից:

**(60-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Յոդված 61. Վարչական ակտի գործողության ժամկետը**

1. Գրավոր վարչական ակտը կարող է գործել անորոշ կամ որոշակի ժամկետով:

Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել:

Որոշակի ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է մինչև տվյալ ակտով նախատեսված ժամկետի լրանալը: Մինչև որոշակի ժամկետով ընդունված վարչական ակտի ժամկետը լրանալը կամ ժամկետը լրանալուց հետո՝ 15 օրվա ընթացքում, այդ վարչական ակտի ժամկետը կարող է այլ վարչական ակտով երկարաձգվել նոր ժամկետով կամ անորոշ ժամկետով:

2. Վարչական ակտը օրենքով նախատեսված դեպքերում կարող է գործողության ժամկետի վերաբերյալ որևէ նշում չպարունակել, եթե ակտով կարգավորվող հարցի լուծումը կապված է որոշակի մեկ կամ մի քանի այնպիսի գործողությունների կատարման կամ իրադարձության վրա հասնելու հետ, որոնց կատարման ավարտի կամ վրա հասնելու պահով էլ որոշվում է այդ ակտի գործողության ժամկետը (պայմանով ակտ):

Այդ ակտով նախատեսված պայմանի կատարման պահով ավարտվում է դրա գործողության ժամկետը:

3. Բանավոր վարչական ակտն ուժի մեջ մտնելու պահից գործում է մինչև այն պահը, երբ այդ ակտն ընդունած վարչական մարմինը ավարտում է դրա հետ կապված՝ օրենքով նախատեսված գործողությունների կատարումը կամ օրենքով նախատեսված որևէ եղանակով ակտի հասցեատիրոջը հայտարարում է ակտի գործողության դադարեցման մասին:

4. Այլ ձևի վարչական ակտը գործում է մինչև այն պահը, երբ ակտի հասցեատիրոջը, օրենքով նախատեսված տեսանելի, լսելի կամ որևէ այլ ձևով հասանելի եղանակով, հայտնի է դարձվում այդ ակտի գործողության դադարեցման մասին:

**(61-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

## Գ Լ ՈՒ Խ 9.

### ԱՌ ՈՉԻՆՉ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ, ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏՆ ԱՆՎԱՎԵՐ ԿԱՄ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ, ԿԱՐԳԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

#### **Հոդված 62. Վարչական ակտն առ ոչինչ լինելու հիմքերը (վերնագիրը փոփ. 13.12.04 ho-10-ն)**

1. Առ ոչինչ է այն վարչական ակտը, որում առկա են, մասնավորապես՝ հետևյալ ակնառու կոպիտ սխալները.

ա) ակտից հստակ չի երևում կամ միանշանակ պարզ չէ, թե որ վարչական մարմինն է դա ընդունել.

բ) ակտն ընդունել է ոչ իրավասու վարչական մարմինը.

գ) ակտից պարզ չէ, թե դա որոշակիորեն ուն է հասցեագրված, կամ հայտնի չէ, թե ինչ հարց է կարգավորում.

դ) ակտով դրա հասցեատիրոջ վրա դրվում է ակնհայտ ոչ իրավաչափ պարտականություն, կամ նրան տրամադրվում է ակնհայտ ոչ իրավաչափ իրավունք:

2. Առ ոչինչ վարչական ակտն ընդունման պահից իրավաբանական ուժ չունի և ենթակա չէ կատարման կամ կիրառման:

3. Առ ոչինչ վարչական ակտը չկատարելը չի կարող առաջացնել որևէ պատասխանատվություն այն անձանց համար, ուն հասցեագրված է:

Առ ոչինչ վարչական ակտի կատարումը կամ կիրառումն առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:

4. Առ ոչինչ վարչական ակտն ընդունած վարչական մարմինը պարտավոր է իր նախաձեռնությամբ կամ արդարացված շահ ունեցող ցանկացած անձի դիմումի հիման վրա անհապաղ հաստատել այդ ակտի առ ոչինչ լինելը:

#### **(62-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

#### **Հոդված 63. Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը**

1. Անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է՝

ա) օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով.

բ) կեղծ փաստաթղթերի կամ տեղեկությունների հիման վրա, կամ եթե ներկայացված փաստաթղթերից ակնհայտ է, որ ըստ էության պետք է ընդունվեր այլ որոշում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել այդ ակտն ընդունող վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի կողմից, ինչպես նաև դատական կարգով:

3. Ոչ իրավաչափ վարչական ակտը չի կարող անվավեր ճանաչվել, եթե ակտի հասցեատերն իրավունք ունի վստահելու վարչական ակտի գոյությանը, և վերջինիս գործողության մեջ գտնվելը չի կարող վնաս պատճառել որևէ անձի իրավունքներին, Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի:

Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք ունի, եթե վարչական ակտի հիման վրա ստացածն արդեն իսկ օգտագործել կամ տնօրինել է, ինչպես նաև, եթե ակտի հիման վրա ստացածի հետ վերադարձնելը վնաս կպատճառի վարչական ակտի հասցեատիրոջը:

4. Վարչական ակտի հասցեատերը վարչական ակտի գոյությանը վստահելու իրավունք չունի, եթե նա՝

ա) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կաշառքի, սպառնալիքի կամ վարչական մարմնի պաշտոնատար անձին դիտավորյալ մոլորության մեջ զգելու միջոցով.

բ) համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է կեղծ կամ ոչ լրիվ փաստաթղթեր ներկայացնելու միջոցով.

գ) նախապես իմացել է վարչական ակտի ոչ իրավաչափ լինելու մասին կամ այդ մասին պարտավոր էր իմանալ՝ իր համար մատչելի տեղեկությունների հիման վրա:

5. Որպես կանոն, վարչական ակտն անվավեր է ճանաչվում ամբողջությամբ:

Վարչական ակտը մի մասով անվավեր կարող է ճանաչվել, եթե անվավեր չճանաչված մասը կարող է ուժի մեջ մնալ առանց անվավեր ճանաչված մասի:

Եթե վարչական ակտն անվավեր է ճանաչվել մի մասով, ապա սույն հոդվածի կանոնները կիրառվում են միայն դրա անվավեր ճանաչված մասի նկատմամբ:

**(63-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**



## **Հողված 64. Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու հետևանքները**

1. Ոչ իրավաչափ վարչական ակտն իրավաբանական ուժը կորցնում է ինչպես դրա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու, այնպես էլ վարչական ակտն ընդունելու պահից՝ սույն մասի երկրորդ պարբերությամբ և սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված բացառություններով:

Սույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերում ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվում այդ ակտն ընդունելու պահից, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Անվավեր ճանաչված ոչ իրավաչափ վարչական ակտը չի հանգեցնում իրավաբանական հետևանքների: Սակայն եթե մինչև ոչ իրավաչափ վարչական ակտի անվավեր ճանաչելը դրա կատարման կամ կիրառման հետևանքով որևէ անձի կամ Հայաստանի Հանրապետությանը կամ որևէ համայնքի վնաս է պատճառվել, ապա դա ենթակա է հատուցման սույն օրենքի VII բաժնի դրույթներին համապատասխան:

2. Բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով, արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները:

Հատուցման ենթակա օգուտի չափը պետք է սահմանի այն վարչական մարմինը, որն անվավեր է ճանաչել ոչ իրավաչափ վարչական ակտը:

Ընդ որում, օգուտ ստացողը չի կարող հղում կատարել վստահության իրավունքի վրա, եթե վարչական մարմինը բավարար ապացույցներ ունի, որ օգուտ ստացող անձը համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է սույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված խախտումների միջոցով:

3. Եթե ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվել մի-

այն մի մասով, ապա սույն հոդվածով նախատեսված հետևանքները տարածվում են վարչական ակտի անվավեր ճանաչված մասի վրա:

**Հոդված 65. Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու ժամկետը**

Սույն օրենքով սահմանված կարգով չբողոքարկված ոչ իրավաչափ վարչական ակտը կարող է անվավեր ճանաչվել 6 ամսվա ընթացքում այն օրվանից, երբ իրավասու վարչական մարմինն իմացել է այն փաստերի մասին, որոնք վարչական ակտն անվավեր ճանաչելու հիմք կարող էին դառնալ:

Վարչական ակտն անվիճարկելի է դառնում, և վարչական մարմինը զրկվում է սույն հոդվածով նախատեսված իրավունքից, եթե վարչական ակտի ընդունման օրվանից անցել է 10 տարի, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

*(65-րդ հոդվածը փոփ., լրաց. 13.12.04 ՀՕ-10-Ն)*

**Հոդված 66. Իրավաչափ վարչական ակտի ուժը կորցնելը**

1. Իրավաչափ է այն վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի պահանջներին համապատասխան:

2. Միջամտող իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, բացառությամբ այն դեպքերի, երբ պետք է նորից ընդունվի միևնույն բովանդակությամբ նոր վարչական ակտ, կամ եթե այդ ակտի ուժը կորցրած ճանաչելն արգելվում է օրենքով նախատեսված այլ պատճառներով:

3. Բարենպաստ իրավաչափ վարչական ակտը կարող է ուժը կորցնել, եթե՝

ա) օրենքի փոփոխության պատճառով վերանուն է տվյալ վարչական ակտի անհրաժեշտությունը, կամ դադարում է այդ ակտի գործողությունը.

բ) ուժը կորցրած ճանաչելը թույլատրվում է օրենքով կամ պայմանավորված է իրավաչափ վարչական ակտում այդպիսի վերապահմամբ.

գ) վարչական ակտի հետ կապված է օրենքով նախատեսված որևէ պարտականություն, որը պետք է կատարեր այդ ակտի հասցեատերը, սակայն չի կատարել կամ պատշաճ չի կատարել.

դ) ակտի ընդունումից հետո՝ փաստական հանգամանքների փոփոխության հետևանքով, վարչական մարմինն իրավունք կունենար

չընդունելու տվյալ վարչական ակտը, և եթե վարչական ակտի ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը.

ե) նորմատիվ իրավական ակտի փոփոխության հետևանքով վարչական մարմինն իրավունք կունենար չընդունելու տվյալ վարչական ակտը, քանի դեռ այդ վարչական ակտի հասցեատերը չի օգտվել վարչական ակտով տրամադրված օգուտներից, կամ նրա նկատմամբ դեռևս չեն կատարվել այն գործողությունները, որոնք վարչական ակտով երաշխավորված են եղել, և եթե վարչական ակտն ուժը չկորցնելու դեպքում կարող է խախտվել գերակայող հանրային շահը.

զ) անհրաժեշտ է վերացնել այլ անձանց կյանքի, առողջության կամ սեփականության, ինչպես նաև պետության անվտանգության կամ առանձնապես կարևոր հանրային շահերի պաշտպանության համար ծանր հետևանքները կամ խուսափել դրանց առաջացումից:

### **Յոդված 67. Վարչական ակտը վերանայելը վերադասության կարգով**

Վարչական մարմնի ընդունած վարչական ակտի վերաբերյալ բողոքի բացակայության դեպքում այդպիսի ակտ ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը (պաշտոնատար անձը), վերահսկողության կարգով և իր նախաձեռնությամբ, իրավունք ունի վերանայել ստորադաս վարչական մարմնի ընդունած վարչական ակտը:

*(67-րդ հոդվածը լրաց., փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)*

### **Յոդված 68. Փաստաթղթերը և իրերը վերադարձնելը**

1. Այն փաստաթղթերը և իրերը, որոնք տրվել են անվավեր կամ ուժը կորցրած ճանաչված վարչական ակտի հիման վրա, դրանք տիրապետող անձանց կողմից ենթակա են վերադարձման, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Եթե փաստաթղթերը սույն հոդվածի համաձայն չեն վերադարձվում, ապա ակտն ընդունած վարչական մարմինն իրավունք ունի պաշտոնական հրապարակման միջոցով հայտարարելու, որ տվյալ վարչական ակտն այլևս չի գործում:

2. Փաստաթղթերը վերադարձնելիս, դրանց տիրապետողի ցանկությամբ, վարչական մարմինը պարտավոր է տալ այդ փաստաթղթի պատճենը՝ դրա վրա համապատասխան նշում կատարելով և իր կնիքով հաստատելով:

**Բ Ա Ժ Ի Ն IV**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ**

**Գ Լ ՈՒ Խ 10.**  
**ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԻՍՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ**

**Հոդված 69. Բողոքարկման իրավունքը**

Անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ):  
**(69-րդ հոդվածը լրաց. 05.12.13 ՀՕ-141-Ն)**

**Հոդված 70. Բողոքարկման կարգը**

1. Ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

2. Վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝

ա) վարչական մարմին.

բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին:

Եթե ակտը բողոքարկվել է ակտն ընդունած վարչական մարմին և (կամ) բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմին, ապա բողոքը ենթակա է քննարկման բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնում: Այդ դեպքում բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնում բողոքի առնչությամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման:

3. Եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

**(70-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 71. Բողոքարկման ժամկետները**

1. Վարչական բողոքը կարող է բերվել՝

ա) վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

բ) վարչական մարմնի կողմից գործողություն կատարելու օր-

վանից մեկ ամսվա ընթացքում.

զ) վարչական մարմնի կողմից անգործություն ցուցաբերելու օրվանից 2 ամսվա ընթացքում.

դ) գրավոր վարչական ակտում դրա բողոքարկման ժամկետը նշված չլինելու դեպքում՝ վարչական ակտի ուժի մեջ մտնելու օրվանից մեկ տարվա ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված ժամկետները բաց թողնելուց հետո ակտը դառնում է անբողոքարկելի: Բողոքարկման ժամկետը կարող է վերականգնվել հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում:

Բողոքարկման ժամկետի բաց թողնելը հարգելի համարելու հանգամանք կարող է դառնալ վարույթի մասնակցից անկախ պատճառներով բողոքարկման ժամկետը բաց թողնելը:

Բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառներ) վերացնելուց հետո վարույթի մասնակիցը կարող է բողոք ներկայացնել 15 օրվա ընթացքում՝ նշելով ժամկետը բաց թողնելու պատճառը (պատճառներ): Վարչական մարմինը, որի վարույթում է գտնվում վարչական բողոքը, վերականգնում է բաց թողնված ժամկետը և բողոքն ըստ էության քննարկում և լուծում է, եթե բողոքով կամ բողոքի քննարկման ընթացքում հիմնավորվում է բողոք բերողից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) բողոքարկման ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

Բողոքարկման ժամկետը լրանալուց մեկ տարի անցնելուց հետո վարույթի մասնակիցը կորցնում է բողոքարկման ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու հիմնավորմամբ բողոք բերելու իրավունքը, բացառությամբ այն դեպքերի, երբ բողոք բերելու ժամկետը բաց թողնելը կապված է անհաղթահարելի ուժի առաջացրած հետևանքների հետ:

**(71-րդ հոդվածը փոփ. 05.12.13 ՅՕ-141-Ն)**

## **Հոդված 72. Բողոքին ներկայացվող պահանջները**

Բողոքը պետք է պարունակի՝

ա) այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը.

բ) բողոք բերող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, նրա հասցեն, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, նրա անունից բողոք բերող անձի անունը, ազգանունը և պաշտոնը.

- զ) բողոքարկման առարկան.
  - դ) բողոք բերողի պահանջը.
  - ե) բողոքին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.
  - զ) բողոքը կազմելու տարին, ամիսը և ամսաթիվը.
  - է) բողոք բերող անձի ստորագրությունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա անունից բողոք բերող անձի ստորագրությունը:
- (72-րդ հոդվածը լրաց. 13.04.11 ՅՕ-119-Ն, փոփ. 19.03.12 ՅՕ-51-Ն)**

**Հոդված 73. Վարչական մարմնի որոշումը բողոքի վերաբերյալ**

1. Բողոքի հիման վրա իրականացվող վարչական վարույթը հաշտվում է բողոքը վարչական մարմնում մուտքագրելու օրը:

2. Վարչական մարմինը բողոքն ընդունելիս պարտավոր է ստուգել բողոքի համապատասխանությունը սույն օրենքի 70-րդ հոդվածի պահանջներին և պարզել՝ արդյոք բողոքը բերվել է սույն օրենքի 71-րդ հոդվածով սահմանված ժամկետում:

3. Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելիս բողոքը թողնվում է առանց քննարկման, եթե դա ներկայացված է սույն օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո, և ժամկետը բաց թողնելը, սույն օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով, հարգելի չի ճանաչվել: Մնացած դեպքերում կիրառվում են դիմումների վերաբերյալ վարչական մարմնի որոշումների համար սահմանված ընդհանուր կանոնները:

4. Վերադաս վարչական մարմինը պարտավոր է վարույթ հարուցելուց հետո ստորադաս վարչական մարմնից անհապաղ պահանջել վարչական վարույթի վերաբերյալ գործը (նյութերը): Ստորադաս վարչական մարմինը պարտավոր է այդ պահանջն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, վարչական գործը (նյութերը) ներկայացնել վերադաս վարչական մարմին:

**(73-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Հոդված 74. Վարչական բողոք բերելու իրավական հետևանքները**

1. Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը, բացառությամբ՝

- ա) օրենքով նախատեսված այն դեպքերի, երբ վարչական ակտը ենթակա է անհապաղ կատարման.

բ) այն դեպքերի, երբ անհապաղ կատարումն անհրաժեշտ է հանրային շահերից ելնելով:

Սույն մասով նախատեսված դեպքերում վարչական ակտի անհապաղ կատարման պահանջը (շահը) պետք է հիմնավորվի գրավոր: Հիմնավորում չի պահանջվում, եթե վարչական ակտի կատարումը կասեցնելու հետևանքով կարող է անմիջականորեն վտանգվել անձանց կյանքը, առողջությունը կամ սեփականությունը, և այդ վտանգը կանխելու համար վարչական մարմինը հարկադրված կլինի ձեռնարկել արտակարգ միջոցներ, ինչպես նաև, երբ վտանգն արդեն իսկ առաջացել է:

Սույն մասի «բ» կետով նախատեսված դեպքում, վարչական մարմնի նախաձեռնությամբ կամ պատասխանողի դիմումի հիման վրա, վարչական ակտի կատարումը կարող է չկասեցվել:

2. Վարչական մարմինը կարող է վարչական ակտի գործողությունը չկասեցնելու վերաբերյալ պատճառաբանված որոշում ընդունել, եթե բողոքը բերվել է միայն վարչական ակտի կատարումը կասեցնելու նպատակով:

**(74-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

## **Գ Լ ՈՒ Խ 11.**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՔՆՆԱՐԿԵԼԸ ԵՎ ԼՈՒԾԵԼԸ**

**Հոդված 75. Վարչական բողոքի քննարկման կարգը և սահմանները**

1. Վարչական բողոքի քննարկումն իրականացվում է սույն օրենքի II բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե սույն բաժնով այլ բան նախատեսված չէ:

2. Վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության տեսանկյունից, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից:

3. Վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

**(75-րդ հոդվածը լրաց. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

**Հոդված 76. Վարչական բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում ընդունելը**

1. Քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով վարչական ակտն անվավեր կամ առ ոչինչ կամ ընդունելով նոր վարչական ակտ.

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

2. Քննարկելով վարչական մարմնի գործողությունների դեմ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որի գործողությունները բողոքարկվել են, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն՝ ճանաչելով բողոքարկվող գործողությունը ամբողջությամբ կամ մասնակիորեն ոչ իրավաչափ և դադարեցնելով տվյալ գործողությունը, եթե բողոքի վերաբերյալ դիմում ընդունելու պահին այն շարունակվել է.

բ) մերժելու բողոքը՝ գործողության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

3. Քննարկելով վարչական մարմնի անգործության դեմ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որի անգործությունը բողոքարկվել է, իրավասու է՝

ա) բավարարելու բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն և կատարելու հայցվող գործողությունը համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն.

բ) մերժելու բողոքը՝ անգործության իրավաչափ լինելու պատճառաբանությամբ:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում, եթե համապատասխան բողոքը, սույն օրենքին համապատասխան, քննարկում է վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը, ապա բողոքն ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարման ենթակա համարելու դեպքում վերադաս վարչական մարմինը կարող է ընդունել նշված մասերով նախատեսված որոշումներից որևէ մեկը կամ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանել գրավոր վարչական ակտը և հանձնարարել վարչական ակտն ընդունած ստորադաս վարչական մարմնին՝ ընդունելու նոր վարչական ակտ կամ դադարեցնելու ոչ իրա-



վաչափ գործողությունը կամ կատարելու հայցվող գործողությունը:  
**(76-րդ հոդվածը խմբ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

**Հոդված 77. Վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերը**

**(վերնագիրը լրաց. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

1. Վարչական ակտի փոփոխման կամ բեկանման հիմքերն են՝  
ա) սույն օրենքի 63-64-րդ հոդվածներով սահմանված հիմքերը.

բ) վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, նաև այն դեպքում, եթե դա իրականացրել է կոլեգիալ մարմինը, որի կազմում եղել է վարույթին մասնակցելու իրավունք չունեցող պաշտոնատար անձը.

գ) վարչական ակտը վարույթն իրականացրած պաշտոնատար անձի (անձինք) կողմից ստորագրված չլինելը կամ ստորագրելու իրավունք չունեցող անձի (անձինք) կողմից ստորագրված լինելը:

2. Ընթացակարգային նորմերը խախտելը վարչական ակտի բեկանման հիմք կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու չէ ընդունելու բողոքարկվող վարչական ակտը:

3. Վարչական ակտը կարող է բեկանվել մասնակիորեն, եթե վարչական ակտում առկա են սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերը, և դրանք բեկանելուց հետո չբեկանված մասը կարող է ինքնուրույն գործել:

**(77-րդ հոդվածը լրաց., փոփ., խմբ. 13.12.04 ՀՕ-10-Ն)**

## **Բ Ա Ժ Ի Ն Վ**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ**

#### **Գ Լ ՈՒ Խ 12.**

### **ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ**

**Հոդված 78. Վարչական հարկադրանքը**

1. Որևէ գործողություն կատարելուն կամ որևէ գործողության կատարումից ձեռնպահ մնալուն ուղղված վարչական ակտը կարող է հարկադրաբար ի կատար ածվել սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

2. Հարկադրանքի միջոցներն են՝

ա) գործողությունն այլ անձի կողմից կատարելը (փոխարինող գործողություն)։

բ) տուգանքը։

գ) անմիջական հարկադրանքը։

3. Հարկադրանքի միջոցը պետք է համաչափ լինի դրա նպատակին: Հարկադրանքի միջոցը պետք է ընտրվի այնպես, որպեսզի պարտավոր անձի և հանրության վնասները հասցվեն նվազագույնի:

### **Հոդված 79. Պարտավոր անձը**

Պարտավոր անձը որոշակի գործողություն կատարելու կամ որևէ գործողություն կատարելուց ձեռնպահ մնալու վերաբերյալ ընդունված վարչական ակտի հասցեատերն է:

### **Հոդված 80. Կատարողական մարմինը**

1. Վարչական ակտի հարկադիր կատարումն իրականացնում է այդ ակտն ընդունած վարչական մարմինը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2. Վարչական ակտն ընդունած մարմինն ի կատար է ածում նաև բողոքների վերաբերյալ վերադաս վարչական մարմնի ընդունած վարչական ակտերը:

### **Հոդված 81. Փոխարինող գործողությունը**

Եթե որևէ գործողություն կատարելու վերաբերյալ վարչական ակտով նախատեսված պարտականությունը պարտավոր անձը չի կատարում, բայց դրա կատարումը հնարավոր է մեկ այլ անձի կողմից, ապա կատարողական մարմինը կարող է վերջինիս հանձնարարել կատարելու այդ գործողությունը պարտավոր անձի հաշվին:

Պարտավոր անձի հաշվին կատարողական մարմինն ինքը կարող է կատարել այդ գործողությունը, եթե դա հնարավոր է, և եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

### **Հոդված 82. Տուգանքը**

1. Եթե գործողությունը չի իրականացվել, ապա պարտավոր անձի նկատմամբ կարող է նշանակվել տուգանք:

2. Տուգանք կարող է նշանակվել նաև, եթե պարտավոր անձը ձեռնպահ չի մնում որևէ գործողություն կատարելուց, որի վերա-

բերյալ համապատասխան վարչական ակտ է ընդունվել:

3. Սույն հոդվածով նախատեսված դեպքերում տուգանք կարող է նշանակվել նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով:

**4. (մասն ուժը կորցրել է 05.12.13 ՅՕ-141-Ն)**

**(82-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն, 05.12.13 ՅՕ-141-Ն)**

### **Յոդված 83. Անմիջական հարկադրանքը**

Եթե փոխարինող գործողությունը կամ տուգանքը չի կարող հասնել իր նպատակին կամ օբյեկտիվ հանգամանքների բերմամբ չի կարող կիրառվել, ապա օրենքով համապատասխան լիազորություն ունեցող վարչական մարմինը կարող է անմիջականորեն հարկադրել կատարելու համապատասխան գործողությունը կամ արգելել կատարելու որոշակի գործողություն:

### **Յոդված 84. Հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին նախազգուշացնելը**

1. Պարտավոր անձը հարկադրանքի միջոցների կիրառման մասին պետք է նախազգուշացվի: Նախազգուշացման մեջ պետք է սահմանվի համապատասխան պարտականությունը կատարելու ժամկետը, որի ընթացքում պարտավոր անձին կարող է հնարավորություն տրվել, որպեսզի նա դա կատարի իր համար ընդունելի և օրենքով չարգելված եղանակներով:

2. Փոխարինող գործողության կատարման առիթով նախազգուշացման մեջ պետք է նշվի ծախսերի նախահաշիվը, որը չի կարող խոչընդոտել հետագա պահանջներ ներկայացնելու համար, եթե փոխարինող գործողության կատարումն առաջացնի ավելի մեծ ծախսեր:

3. Տուգանք կիրառելու նախազգուշացման մեջ պետք է նշվի տուգանքի որոշակի չափը:

4. Նախազգուշացումը կարող է կրկնվել այնքան ժամանակ, քանի դեռ պարտականությունը չի կատարվել, կամ կատարողական մարմինը չի դիմել անմիջական հարկադրանքի միջոցի կիրառմանը: Այդ ընթացքում նախազգուշացումը կարող է փոփոխություններ կրել:

5. Նախազգուշացումը պետք է կազմվի գրավոր և սույն օրենքով վարչական ակտերի հանձնման համար սահմանված կարգով հանձնվի պարտավոր անձին:

### **Յոդված 85. Հարկադրանքի միջոցներ նշանակելը**

Հարկադրանքի միջոցները նշանակվում են այդ միջոցների կիրառման մասին նախագգուշացմամբ սահմանված ժամկետում պարտավոր անծի կողմից համապատասխան պարտականությունը չկատարվելու դեպքում:

### **Յոդված 86. Հարկադրանքի միջոցներ կիրառելը**

1. Նշանակված հարկադրանքի միջոցը կիրառվում է դրա նշանակմանը համապատասխան:

2. Եթե պարտավոր անծը փոխարինող գործողության կամ անմիջական հարկադրանքի կիրառման ժամանակ դիմադրություն է ցույց տալիս, ապա դա կարող է հաղթահարվել ուժի կիրառմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Այդ դեպքում, կատարողական մարմնի պահանջով, համապատասխան մարմինները պարտավոր են օգնություն ցույց տալ դիմադրությունը հաղթահարելու համար:

3. Երբ կատարումը հասնում է իր նպատակին, կատարողական վարույթն ավարտվում է:

## **Գ Լ ՈՒ Խ 13.**

### ***ԴՐԱՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ***

### **Յոդված 87. Հանրային իրավական դրամական պահանջները**

Հանրային իրավական դրամական պահանջները, օրենքով սահմանված կարգով, վարչական ակտերի հիման վրա Հայաստանի Հանրապետության պետական կամ համայնքային բյուջե պարտադիր կարգով դրամական գումարներ վճարելու պահանջներն են (այսուհետ՝ դրամական պահանջներ):

### **Յոդված 88. Դրամական պահանջների կատարման կարգը**

1. Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողբարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Եթե վարչական մարմնի իրականացրած վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար

հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա մինչև գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը վարչական վարույթ իրականացնող մարմինն իրավասու է գումարի գանձման վերաբերյալ որոշումը կայացնելուց ոչ շուտ, քան 10 օր հետո ընդունելու պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշում: Արգելանք դնելու մասին որոշումը սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, ուղարկվում է կատարման Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն, բացառությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանք դնելու մասին որոշման: Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

4. Դրամական պահանջները սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը և կատարման վերաբերյալ գրություն, որում նշվում են՝

1) դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացրած վարչական մարմնի անվանումը.

2) դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը և ամսաթիվը.

3) վարչական ակտի համարը, որի հիման վրա դրամական պահանջը ներկայացվել է կատարման, և գանձման ենթակա գումարի չափը.

4) վարչական ակտն ընդունելու տարին, ամիսը և ամսաթիվը.

5) վարչական ակտն անբողոքարկելի դառնալու տարին, ամիսը և ամսաթիվը.

6) պարտավոր անձի անունը, հայրանունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.

7) վարչական մարմնի գանձապետական հաշվեհամարը:

5. Եթե վարչական մարմինը մինչև դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելը հետաձգել է վարչական ակտի կատարումը, ապա գրության մեջ նշվում է դրա կատարումը հետաձգելու ժամկետի ավարտը:

6. Գրությունը ստորագրում և կնիքով (առկայության դեպքում) հաստատում է վարչական ակտն ընդունած վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձը:

**(88-րդ հոդվածը խմբ. 05.12.13 ՅՕ-141-Ն)**

### **Հոդված 89. Պարտականությունը կրող անձը**

Դրամական պահանջներով նախատեսվող գումարների վճարման համար պարտականությունը կրում է այն անձը, ով պարտավոր է այդ գումարը վճարել՝

- ա) իր համար կամ իր կողմից թույլ տրված խախտումների համար.
- բ) մեկ այլ անձի փոխարեն:

## **Բ Ա Ժ Ի Ն VI ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ**

### **Գ Լ ՈՒ Խ 14. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

#### **Հոդված 90. Վարչական ծախսերը**

Վարչական ծախսերն են վարչական վարույթում գործի քննարկման համար օրենքով սահմանված դեպքերում և կարգով վճարվող պետական կամ տեղական տուրքը, ինչպես նաև սույն գլխով սահմանված այլ ծախսեր:

### **Յոդված 91. Վարչական վարույթի վերաբերյալ գործերով տուրք վճարելը**

1. Դիմողը, օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև երրորդ անձինք, վարչական վարույթի վերաբերյալ գործի քննարկման համար պարտավոր են օրենքով սահմանված չափով և կարգով մուծել պետական կամ տեղական տուրք:

2. Վարչական վարույթի ընթացքում պետական և տեղական տուրք վճարելու, դա վերադարձնելու կարգը, չափը, տուրք վճարելուց ազատելու, վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու և դրա չափը նվազեցնելու հարցերը կարգավորվում են օրենքով:

### **Յոդված 92. Վարչական վարույթում կատարվող այլ ծախսեր**

1. Վարչական վարույթի ընթացքում կատարվող այլ ծախսերն այն ծախսերն են, որոնք կապված են՝

ա) վարչական ակտը կամ այլ փաստաթղթեր դրանց հասցեատերերին հանձնելու, ինչպես նաև վկաներ, փորձագետներ և թարգմանիչներ հրավիրելու հետ.

բ) հրապարակային հայտարարություններ անելու, վարչական ակտը հրապարակելու հետ.

գ) վարչական ակտի կամ վարույթի հետ առնչություն ունեցող այլ փաստաթղթերի լրացուցիչ օրինակներ տրամադրելու, այդ փաստաթղթերից պատճեններ (լուսապատճեններ) կամ քաղվածքներ կատարելու և տրամադրելու հետ.

դ) վարույթին մասնակցություն ապահովելու կամ վարույթի հետ կապված այլ նպատակով հեռագրեր և միջքաղաքային հեռախոսազանգեր ուղարկելու և հղելու հետ.

ե) գործուղումների առնչությամբ առաջացող ճանապարհա-ծախսը հոգալու հետ.

զ) այլ վարչական մարմիններին կամ այլ անձանց կողմից ցույց տրված օգնության կամ ծառայությունների համար վճարումներ կատարելու հետ.

է) իրեր տեղափոխելու կամ պահպանելու հետ.

ը) վարչական մարմնի կողմից կատարողական վարույթ իրականացնելու հետ.

թ) վարչական վարույթի ընթացքում փորձագետներին և թարգմանիչներին վարձատրելու հետ:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ծախսերը կատա-

րում է վարչական վարույթն իրականացնող մարմինը, իսկ փորձագետ կամ թարգմանիչ հրավիրելու հետ կապված ծախսերը հատուցվում են սույն օրենքի 93-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Վարչական գործի նյութերից պատճեններ, լուսապատճեններ, քաղվածքներ կատարելու հետ կապված ծախսերը կրում է դրանց նկատմամբ պահանջ ներկայացրած անձը: Այդ դեպքում ծախսերի չափը չպետք է գերազանցի պատճենահանման, լուսապատճենահանման կամ քաղվածք կատարելու համար վարչական մարմնի կատարած փաստացի ծախսերի չափը:

**(92-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 93. Վարչական վարույթի ընթացքում վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին վճարվող գումարները**

1. Վարչական վարույթի ընթացքում իրենց կատարած աշխատանքների համար փորձագետները և թարգմանիչները վարձատրվում են, եթե այդ աշխատանքները չեն մտնում տվյալ վարչական մարմնում նրանց ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների մեջ:

2. Վկաներին, փորձագետներին և թարգմանիչներին վճարումներ տրվում են Հայաստանի Հանրապետության բյուջեից կամ համապատասխան համայնքի բյուջեից՝ կախված այն հանգամանքից, թե որ վարչական մարմինն է հրավիրել այդ անձանց (պետական, թե տեղական ինքնակառավարման մարմին):

Եթե փորձագետին կամ թարգմանիչին հրավիրել է վարչական վարույթի որևէ մասնակից, ապա համապատասխան ծախսերը կրում է այդ մասնակիցը:

3. Սույն հոդվածով նախատեսված անձանց համապատասխան վճարումները կատարվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և չափով, իսկ վարչական վարույթի մասնակիցներից որևէ մեկի կողմից հրավիրված լինելու դեպքում՝ հրավիրողի և հրավիրվողի միջև ձեռք բերված պայմանավորվածությանը սահմանված կարգով և չափով:

### **Հոդված 94. Փոխօգնության ծախսերը**

Փոխօգնություն ցուցաբերելու հետ կապված ծախսերը կրում է փոխօգնությունը ցուցաբերող վարչական մարմինը:



**Բ Ա Ժ Ի Ն VII**  
**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ**  
**ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ**

**Գ Լ ՈՒ Խ 15.**

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՐՈՂԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԸ, ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑԵԼԸ**

**Հոդված 95. Պատասխանատվություն կրողը և պատասխանատվության հիմքերը**

1. Վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն բաժնի դրույթներին համապատասխան:

2. Ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պատճառված վնասի համար պատասխանատվությունը կրում է՝

ա) Հայաստանի Հանրապետությունը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերում նշված վարչական մարմինների դեպքում.

բ) համապատասխան համայնքը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում նշված վարչական մարմինների դեպքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված դեպքում վնասի հատուցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի, իսկ «բ» կետով նախատեսված դեպքում՝ համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

4. Սույն օրենքի 106-108-րդ հոդվածներով և 109-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում բաց թողնված օգուտը ենթակա չէ հատուցման:

**Հոդված 96. Վնասի հատուցման նախապայմանը**

Վնասի հատուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

### **Հոդված 97. Վնասի հատուցման եղանակները**

Վնասի հատուցումն իրականացվում է վարչարարությամբ առաջացած հետևանքները վերացնելու կամ դրամական միջոցներով հատուցելու եղանակով:

### **Հոդված 98. Հետևանքները վերացնելը**

1. Եթե վնասը որևէ փաստացի դրության՝ ի վնաս անձի փոփոխության մեջ է, ապա պատասխանատվություն կրողը պարտավոր է վերացնել դրա առաջացրած հետևանքները՝ նախկին դրության, իսկ եթե դա անհնար կամ անարդյունավետ է, ապա դրան համարժեք այլ դրության վերականգնման միջոցով:

Նշված կանոնը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ պատասխանատվություն կրողի վարչարարության հետևանքով առաջացած դրությունը, օրենքի կամ այլ իրավական ակտի ընդունման կամ փոփոխման ուժով, ոչ իրավաչափ է դառնում հետագայում, և այդ դրության հետևանքները կարող են վերագրվել տվյալ պատասխանատվությունը կրողին և ենթակա չեն վերացման այլ կարգով:

2. Հետևանքները վերացնելը բացառվում է, եթե փաստացի կամ իրավական հիմքերով հնարավոր չէ նախկին դրության վերականգնումը, ինչպես նաև այն դեպքում, երբ գոյություն ունեցող դրությունը համապատասխանում է անձի համար անվիճարկելի դարձած վարչական ակտին:

3. Եթե անձը մեղք ունի ոչ իրավաչափ դրության առաջացման համար, ապա նա հետևանքների վերացում կարող է պահանջել, եթե ցանկանում է և ի վիճակի է կրելու հետևանքների վերացման՝ իր մեղքով առաջացած ծախսերի մասնաբաժինը:

Եթե անձի մեղքով առաջացած ծախսերը գերազանցում են պատասխանատվություն կրողի մեղքով առաջացած ծախսերի չափը, ապա հետևանքների վերացման պահանջ չի կարող ներկայացվել, իսկ անձը կարող է հատուցում պահանջել՝ սույն օրենքի 99-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներին համապատասխան:

### **Հոդված 99. Վնասի հատուցումը դրամական միջոցներով**

1. Պատասխանատվություն կրողը վնասը հատուցում է դրամական միջոցներով, եթե հետևանքների վերացումը հնարավոր կամ բավարար չէ, կամ հետևանքների վերացման համար անհրաժեշտ են ավելի մեծ ծախսեր, քան պատճառված գույքային վնասը:

2. Վնասի հատուցում պահանջող անձը կրում է վնասի հետևանքների վերացման ծախսերն այն չափով, որ չափով դրանք առաջացել են իր մեղքով:

Եթե անձն ի վիճակի չէ կրելու այդ ծախսերը, ապա նա պարտավոր է վնասի հատուցման պահանջը սահմանափակել այն ծախսերի չափով, որոնք առաջացել են պատասխանատվություն կրողի մեղքով:

### **Հոդված 100. Վնասի հատուցման պահանջ ներկայացնելը**

1. Վնասի հատուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա:

2. Վնասի հատուցման պահանջը ներկայացվում է դիմումի միջոցով, որի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի 31-րդ հոդվածի կանոնները:

### **Հոդված 101. Պահանջ ներկայացնելու ժամկետը**

Վնասի հատուցման պահանջը կարող է ներկայացվել այն պահից հետո՝ 3 տարվա ընթացքում, երբ անձն իմացել է կամ պարտավոր էր իմանալ իրեն պատճառված վնասի մասին, բայց ոչ ուշ, քան այն գործողության կատարման կամ անգործություն թույլ տալու կամ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից 10 տարին լրանալը, որով նրան վնաս է պատճառվել:

### **Հոդված 102. Պահանջը քննարկելը և լուծելը**

1. Վարչական մարմնում վնասի հատուցման պահանջը քննարկվում և լուծվում է դիմումի քննարկման համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կանոններին համապատասխան:

2. Վնաս կրած անձը վարչական մարմնի կողմից հատուցման պահանջն ամբողջությամբ կամ մասնակիորեն մերժելու կամ դիմումը չքննարկելու դեպքում կարող է դա բողոքարկել՝ վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու համար՝ սույն օրենքով սահմանված ընդհանուր կարգով:

### **Հոդված 103. Համապարտ պատասխանատվությունը**

Եթե վնասը պատճառել են մեկից ավելի պատասխանատվություն կրողներ, ապա վնաս կրած անձի առջև նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

### **Հոդված 104. Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը**

1. Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

2. Եթե սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում վնաս է պատճառվել ֆիզիկական անձի առողջությանը, ապա նա կարող է դրամական միջոցներով հատուցում պահանջել: Հատուցման ծավալը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1078-րդ հոդվածի 1-2-րդ մասերին համապատասխան:

3. Ֆիզիկական անձի մասնագիտական աշխատունակության լրիվ կամ մասնակի կորստի դեպքում հատուցման ենթակա գումարի չափը որոշվում է հետևյալ կերպ.

ա) մասնագիտական աշխատունակության լրիվ կորստի դեպքում ֆիզիկական անձին վճարվում է հատուցում՝ հիմնական աշխատանքի վայրում նրա վերջին մեկ տարվա աշխատավարձի առնվազն 70 տոկոսի չափով՝ մինչև տվյալ մասնագիտության համար սահմանված առավելագույն տարիքի հասնելը, իսկ եթե դա սահմանված չէ, ապա մինչև այն տարիքի հասնելը, որի դեպքում սովորաբար նրա հետ կարող են դադարեցվել տվյալ մասնագիտությամբ աշխատանքային իրավահարաբերությունները.

բ) մասնագիտական աշխատունակության մասնակի կորստի դեպքում ֆիզիկական անձին վճարվում է հատուցում՝ հիմնական աշխատանքի վայրում նրա վերջին մեկ տարվա աշխատավարձի ոչ ավելի, քան 70 տոկոսի չափով՝ մասնագիտական աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան, մինչև անձի՝ սույն մասի «ա» կետում նշված տարիքի հասնելը:

Եթե անձի մասնագիտական աշխատունակությունը վերականգնվում է, ապա նրան վճարվող հատուցումը նվազեցվում է՝ մասնագիտական աշխատունակության վերականգնման աստիճանին համապատասխան:

4. Մասնագիտական աշխատունակության բացակայության դեպքում հատուցման ենթակա գումարի չափը որոշվում է հետևյալ կերպ.

ա) ընդհանուր աշխատունակության լրիվ կորստի դեպքում, եթե անձն աշխատել է, ապա վերջին աշխատանքի վայրում նրա տարեկան աշխատավարձի առնվազն 85 տոկոսի չափով՝ մինչև անձի կենսաթոշակային տարիքի հասնելը.

բ) ընդհանուր աշխատունակության մասնակի կորստի դեպքում, եթե անձն աշխատել է, ապա ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան՝ վերջին աշխատանքի վայրում նրա տարեկան աշխատավարձի ոչ ավելի, քան 85 տոկոսի չափով՝ մինչև անձի կենսաթոշակային տարիքի հասնելը.

գ) ընդհանուր աշխատունակության լրիվ կորստի դեպքում, եթե անձը չի աշխատել, ապա նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

դ) ընդհանուր աշխատունակության մասնակի կորստի դեպքում, եթե անձը չի աշխատել, ապա ընդհանուր աշխատունակության կորստի աստիճանին համապատասխան՝ նվազագույն աշխատավարձի ոչ ավելի, քան հինգհարյուրապատիկի չափով:

Ընդհանուր աշխատունակության վերականգնման դեպքում կիրառվում են սույն հոդվածի 3-րդ մասի չորրորդ պարբերության կանոնները:

5. Մասնագիտական կամ ընդհանուր աշխատունակության լրիվ վերականգնման դեպքում հատուցման ենթակա գումարի վճարումը դադարեցվում է:

6. Անհատ ձեռնարկատիրոջ և իրավաբանական անձի գործարար համբավը արատավորելու հետևանքով նրանց պատճառված գույքային վնասը, ներառյալ՝ բաց թողնված օգուտը, ենթակա է հատուցման՝ սույն օրենքի 98-99-րդ հոդվածներին համապատասխան:

Անհատ ձեռնարկատերը կամ իրավաբանական անձը միաժամանակ կարող են դիմել իրենց գործարար համբավի պաշտպանությանը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-3-րդ, 5-6-րդ մասերին համապատասխան:

7. Սույն հոդվածով նախատեսված վնասի հատուցման պահանջը չի կարող մերժվել միայն այն հիմքով, որ պատասխանատվություն կրողից բացի, այդպիսի վնաս կրած անձին ապահովագրական գումար կամ ապրուստի կամ այլ միջոց պետք է տրամադրի մաս այլ անձ կամ մարմին կամ կազմակերպություն:

**(104-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 105. Ոչ գույքային վնասը դրամական միջոցներով հատուցելու ձևերը**

1. Սույն օրենքի 104-րդ հոդվածով նախատեսված այն դեպքերում, երբ անձին պատճառված ոչ գույքային վնասը կարող է հատուցվել դրամական միջոցներով, դրանց վճարումը կարող է կատարվել ամենամսյա վճարումների կամ միանվագ վճարման միջոցով:

2. Ամենամսյա վճարումները ենթակա են վճարման յուրաքանչյուր ամիս: Ամենամսյա վճարումների չափը որոշվում է հատուցման ենթակա ընդհանուր գումարը վճարման ժամանակահատվածի ամիսների թվի վրա բաժանելու միջոցով:

Ամենամսյա վճարումները ենթակա են վճարման նաև անձի մահացած ամսվա համար:

3. Ամենամսյա վճարումների փոխարեն վնաս կրած անձը կարող է պահանջել վնասի հատուցում՝ հատուցման ենթակա վնասի ընդհանուր գումարի միանվագ վճարմամբ, եթե առկա է հիմնավոր պատճառ:

### **Հոդված 106. Վնասի հատուցումն անձի մահվան դեպքում**

1. Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով անձի մահվան դեպքում նրա առաջին, իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ երկրորդ կարգի ժառանգներին վճարվում է միանվագ հատուցում՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից ոչ պակաս չափով:

2. Եթե ֆիզիկական անձի մահն առաջացնում է կերակրողին կորցնելու հետևանքներ, ապա այդ հիմքով վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1081-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան, իսկ վնասը հատուցվում է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում նշված անձանց:

Եթե սույն մասի առաջին պարբերությանը համապատասխան՝ վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցողն անչափահաս է և մինչև տասնութ տարեկան դառնալն ընդունվել և սովորում է միջնակարգ մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատությունում, ապա վնասի հատուցումն իրականացվում է մինչև համապատասխան հաստատությունում նրա ուսումնառության ավարտը:

Իսկ եթե սույն մասի առաջին պարբերությանը համապատասխան վնասի հատուցում ստանալու իրավունք ունեցող անձը մինչև 22 տարեկան դառնալն ընդունվել է միջնակարգ մասնագիտական կամ

բարձրագույն ուսումնական հաստատություն, ապա վնասի հատուցումը վերսկսվում է համապատասխան ուսումնական հաստատություն ընդունվելու օրվանից՝ դրական գնահատականներով եզրափակված յուրաքանչյուր ուսումնական տարվա համար, և ավարտվում է համապատասխան հաստատությունն ավարտելուն պես:

Սույն մասով նախատեսված անձանց վճարվում է ամենամսյա հատուցում՝ մահացածի՝ մահվանից առաջ վերջին մեկ տարվա միջին ամսական աշխատավարձի 70 տոկոսի չափով:

3. Անձի մահվան դեպքում նրա հուղարկավորության ծախսերը կատարած անձին (անձինք) վճարվում է հատուցում նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

4. Սույն հոդվածով նախատեսված հատուցման գումարները կարող են նվազեցվել, բայց վճարման ենթակա գումարի կեսը չգերազանցող չափով, եթե անձի մահվան պատճառ են դարձել մասամբ նաև նրա ոչ իրավաչափ գործողությունները: Ընդ որում, մահացածի գործողությունների ոչ իրավաչափ լինելու ապացուցման պարտականությունը կրում է այն վարչական մարմինը, որի վարչարարության հետևանքով անձը մահացել է:

**(106-րդ հոդվածը խմբ., փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)**

### **Հոդված 107. Հատուցումը ոչ գույքային այլ վնասի դեպքում**

Եթե այն անձը, ում ոչ գույքային վնաս է պատճառվել, օրենքի ուժով պարտականություններ է կրել այլ անձանց հանդեպ, և նրան ոչ գույքային վնաս պատճառելու հետևանքով անուղղակի վնաս է պատճառվել նաև այդ անձանց, ապա այդ վնասը ենթակա է հատուցման սույն օրենքի 98-99-րդ հոդվածներով սահմանված եղանակներով՝ անուղղակի վնասի իրական չափով, եթե օրենքով այլ չափ սահմանված չէ:

### **Հոդված 108. Հետադարձ պահանջներ ներկայացնելը**

1. Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքը, որը հատուցել է պատճառված վնասը, իրավունք ունի հետադարձ պահանջներ ներկայացնելու վարչական մարմնի այն պաշտոնատար անձին, ում գործողությունները կամ անգործությունը հանգեցրել են ոչ իրավաչափ վարչարարության, և որի հետևանքով վնաս է պատճառվել անձին:

2. Հետադարձ պահանջներ ներկայացնելու հիմք է պաշտոնա-

տար անձի գործողություններում կամ անգործությունում դիտավորության կամ անփութության առկայությունը:

## **Գ Լ ՈՒ Խ 16.**

### **ՊՍԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՆՈՆՆԵՐԸ**

#### **Հոդված 109. Պատասխանատվությունն իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի համար**

1. Իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված դեպքերում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձը, սույն օրենքի 63-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով, վստահության իրավունք ունի:

Իրավունքի այլ սուբյեկտներից հատուցում ստանալու հնարավորության դեպքում սույն օրենքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվություն կրողներից հատուցում չի կարող պահանջվել:

2. Եթե ուժը կորցրել է բարենպաստ իրավաչափ վարչական ակտը, որի հետևանքով դրա հասցեատիրոջը կամ երրորդ անձին վնաս է պատճառվել, ապա վերջինիս դիմումի հիման վրա վնասը ենթակա է հատուցման այնքանով, որքանով այդ անձը, վստահելով վարչական ակտի գոյությանը, դրա ընդունման կամ կատարման հետևանքով վնաս է կրել:

*(109-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՀՕ-10-Ն)*

#### **Հոդված 110. Ոչ իրավաչափ վարչական ակտ ընդունելու հետևանքով պատճառված վնասը հատուցելը**

1. Եթե ընդունվել է ոչ իրավաչափ վարչական ակտ, որն առ ոչինչ է կամ անվավեր է ճանաչվել, ապա վարչական մարմինը, շահագրգիռ անձի դիմումի հիման վրա, պարտավոր է նրան հատուցել այն գույքային վնասը, որն այդ անձը կրել է ոչ իրավաչափ վարչական ակտի գոյությանը վստահելու հետևանքով, բացառությամբ սույն օրենքի 63-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

Հատուցման չափը սահմանում է վարչական մարմինը: Վնասի հատուցման չափը պետք է համարժեք լինի այն օգուտի չափին, որը շահագրգիռ անձը կարող էր ստանալ վարչական ակտի կա-



տարման դեպքում:

2. Հատուցման մասին պահանջը կարող է ներկայացվել երեք տարվա ընթացքում՝ վարչական մարմնի կողմից վարչական ակտն անվավեր ճանաչվելու կամ վարչական ակտի առ ոչինչ լինելը հաստատվելու մասին վարչական վարույթի մասնակիցներին սույն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվանից սկսած:

### **Յոդված 111. Պատասխանատվությունն անհիմն հարստացման դեպքում**

1. Հանրային իրավահարաբերություններում առանց իրավական հիմքի վարչական մարմնի տիրապետման տակ անցած գույքը պետք է վերադարձվի, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Հանրային իրավահարաբերություններում անհիմն հարստացման նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան կանոնները, եթե դրանց կիրառումը չի հակասում սույն օրենքին:

3. Հանրային իրավահարաբերություններում անհիմն հարստացման դեպքերում անձն իրավունք ունի սույն հոդվածի 1-ին մասում նշված պահանջի հետ միասին պահանջելու նաև անհիմն տիրապետման տակ գտնված գույքի օգտագործման ժամանակահատվածում ստացված ամբողջ եկամուտը (գումար), ինչպես նաև այդ եկամտի (գումար) 6 տոկոսը՝ յուրաքանչյուր տարվա համար:

4. Հանրային իրավահարաբերություններում անհիմն հարստացման հետևանքով պատճառված վնասի հատուցման վերաբերյալ պահանջները լուծում է այն վարչական մարմինը, որի փաստացի տիրապետման տակ է գտնվում առանց իրավական հիմքի ձեռք բերված գույքը:

Վարչական ակտով պետք է լուծվեն նաև գույքը վերադարձնելու եղանակի և հատուցելու չափի հետ կապված հարցերը:

**Բ Ա Ժ Ի Ն VIII**  
**ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Գ Լ ՈՒ Խ 17.**  
**ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 112. Անցումային դրույթներ**

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց առաջ հարուցված, սակայն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դեռևս չավարտված վարչական վարույթներն իրականացվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող օրենսդրության համաձայն, եթե դիմողը, իսկ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի դեպքում՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատերը, գրավոր չեն պահանջում, որ վարույթի չավարտված մասն իրականացվի սույն օրենքին համապատասխան:

*(112-րդ հոդվածը փոփ. 13.12.04 ՅՕ-10-Ն)*

**Գ Լ ՈՒ Խ 18.**  
**ԵԶՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

**Հոդված 113. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից ինն ամիս հետո:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետի ընթացքում սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասում նշված վարչական մարմինները պարտավոր են ապահովել վարչարարության և վարչական վարույթին վերաբերող դրույթներ պարունակող իրենց իրավական ակտերի համապատասխանեցումը սույն օրենքին:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (22 դեկտեմբերի 1999 թվականի, ՀՕ-24) գործում է միայն քաղաքացիների առաջարկությունների մասով:

**Հայաստանի Հանրապետության Նախագահ  
Ռ. Քոչարյան**

**2004 թ. մարտի 16  
Երևան  
ՀՕ-41-Ն**

Հավելված 2.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

**29 հուլիսի 2004 թվականի N 1130-Ն**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ, ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ ԵՎ ՎԿԱՆԵՐԻՆ  
ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 93-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել վարչական վարույթի ընթացքում կատարած աշխատանքների համար փորձագետներին, թարգմանիչներին և վկաներին վճարումներ կատարելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2005 թվականի հունվարի 1-ից:

Հավելված

ՀՀ կառավարության

2004 թվականի հուլիսի 29-ի

N 1130-Ն որոշման

**ԿԱՐԳ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ  
ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՀԱՄԱՐ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻՆ, ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ  
ԵՎ ՎԿԱՆԵՐԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն կարգով սահմանվում է «Վարչարարության հիմունքներ-

րի և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 93-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան վարչական վարույթի ընթացքում կատարած աշխատանքների համար փորձագետներին և թարգմանիչներին վարձատրելու, իսկ ցուցմունք տված վկաներին վճարումներ կատարելու կարգը:

2. Սույն կարգի գործողությունը տարածվում է օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «բ» և «գ» կետերով նախատեսված վարչական մարմինների և նրանց կողմից օրենքի 30-րդ հոդվածի համաձայն հարուցված վարչական վարույթներում փորձագետների, թարգմանիչների և վկաների ներգրավելու դեպքերի վրա:

3. Սույն կարգի համաձայն՝

ա) վարձատրության ենթակա է այն փորձագետի աշխատանքը, որը վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից օրենքի 45-րդ հոդվածի համաձայն ներգրավվել է վարչական վարույթում՝ փաստական հանգամանքների ուսումնասիրման համար, և՛ եթե փորձագիտական աշխատանքները չեն մտնում այդ վարչական մարմնում նրա ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների մեջ:

Եթե օրենքի 45-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննում կատարելու համար վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը փորձագետի է ներգրավել, որը փորձագիտական եզրակացություն է ներկայացրել զննում կատարելու արդյունքների մասին, ապա այդ դեպքում նույնպես կատարվում է վարձատրություն՝ սույն կարգին համապատասխան.

բ) վարձատրության ենթակա է այն թարգմանչի աշխատանքը, որը վարչական վարույթում ներգրավվել է այն իրականացնող վարչական մարմնի կողմից, և՛ եթե թարգմանչական աշխատանքները չեն մտնում այդ վարչական մարմնում նրա ծառայողական կամ աշխատանքային պարտականությունների մեջ.

գ) վարձատրություն ստանալու իրավունք ունի վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի կողմից օրենքի 44-րդ հոդվածի համաձայն իրավիրված և վարչական մարմին ներկայացած ու տվյալ գործով ցուցմունք տված վկան:

4. Սույն կարգի գործողությունը չի տարածվում՝

ա) այն փորձագետի և թարգմանչի կատարած աշխատանքների

վարձատրության վրա, ովքեր վարչական վարույթում ներգրավվել են վարչական վարույթի մասնակիցներից որևէ մեկի հրավերով.

բ) այն վկային կատարվելիք վճարումների վրա, որը վարչական վարույթում ներգրավվել է դրա մասնակիցներից որևէ մեկի խնդրանքով կամ իր նախաձեռնությամբ.

գ) նաև այն փորձագետի, թարգմանչի կատարած աշխատանքների վարձատրության և վկային կատարվելիք վճարումների վրա, ովքեր որոշակի բնագավառներ կարգավորող առանձին (հատուկ) օրենքներով հարուցված վարչական վարույթի իրականացման աշխատանքներում ներգրավվելու կապակցությամբ ենթակա են վարձատրության՝ այդ առանձին (հատուկ) օրենքներով կամ դրանց համապատասխան ընդունված այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

5. Վարչական մարմինը նշանակում է այն պաշտոնատար անձին, որը պատասխանատու է փորձագետին, թարգմանչին և վկային վճարվելիք գումարների համար հիմք հանդիսացող փաստաթղթերն այդ անձանց կողմից վարչական մարմին ներկայացնելու համար:

6. Սույն կարգում օգտագործվող տերմինները կամ հասկացություններն ունեն նույն նշանակությունը, ինչ նշանակությամբ դրանք օգտագործվում են օրենքում:

## **II. ՓՈՐՉԱԳԵՏԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

7. Սույն կարգի համաձայն փորձագետին վարձատրելու հիմք է օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի գրավոր դիմումը համապատասխան կազմակերպությանը կամ անձին և դրա հիման վրա նշանակված փորձագետի կողմից կատարված փորձաքննության արդյունքներով վարչական վարույթ իրականացնող վարչական մարմին ներկայացված և այդ մարմնի կողմից փորձաքննությանն առաջադրված հարցին (հարցերին) ըստ էության պարզաբանում տվող փորձագիտական եզրակացությունը: Անկախ կատարված հետազոտությունների ծավալից և ծախսերից՝ փորձաքննության կատարման ծառայության դիմաց որևէ վճարում չի կատարվում, եթե փորձաքննությանն առաջադրված բոլոր հարցերի կապակցությամբ ստացվել է այդ հարցերի պարզաբանման անհնարինության մասին եզրակացություն:

8. Փորձագետին հատուցվում են փորձագիտական աշխատանքների կատարման հետ կապված այն ծախսերը, որոնց մեջ մտնում են փորձաքննության իրականացման ընթացքում կատարված փաստացի ծախսերը, ինչպես նաև վարչական վարույթի ընթացիկ փուլում փորձագիտական եզրակացություններ կայացնելու և դրա վերաբերյալ վարչական մարմնի կամ վարույթի մասնակիցների ու այլ մարմինների ներկայացուցիչների հարցերին պատասխանելու կամ պարզաբանումներ տալու ժամանակ կատարված ծախսերը:

Փորձագետի ընդհանուր ծախսերը որոշվում են սույն կետով նախատեսված աշխատանքների համար նրա կողմից ծախսված յուրաքանչյուր մեկ ժամի դիմաց 295 դրամի չափով:

Վարչական մարմնում փորձագետի ծախսած ժամերի թիվը պարզելու համար կիրառվում են սույն կարգի 16-րդ կետի երկրորդ և երրորդ պարբերությունների դրույթները: Ժամերի թիվը ճշգրտվում է վարչական մարմնի հետ:

9. Փորձագետը փորձաքննություն կատարելու համար վարձատրություն ստանալու նպատակով կազմում է փորձաքննության համար կատարված՝ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված բոլոր ծախսերի նախահաշիվը՝ փորձաքննության համար ծախսած ժամերի թվի նշմամբ: Ընդ որում, բուն փորձաքննության կատարման համար ծախսված ժամերի թիվը և վարչական մարմնում փորձագետի հանդես գալու ընթացքում ծախսված ժամերի թիվը նշվում են առանձին-առանձին:

Նախահաշիվում նշվում են նաև վարչական վարույթի անվանումը, որում ներգրավվել է փորձագետը, նրա անունը, հայրանունը և ազգանունը: Նախահաշիվը՝ փորձագետի ստորագրությամբ, իսկ եթե փորձաքննություն կատարելու համար վարչական մարմինը դիմել է որևէ կազմակերպության, ապա նաև՝ տվյալ կազմակերպության ղեկավարի (նրան փոխարինող պաշտոնատար անձի) ստորագրությամբ և այդ կազմակերպության կնիքով հաստատված, ներկայացվում է վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի ղեկավարին (նրան փոխարինող պաշտոնատար անձին):

Եթե փորձաքննությունը կատարվել է մի քանի փորձագետների մասնակցությամբ, ապա փորձաքննության ծախսերի նախահաշիվն ստորագրում են բոլոր փորձագետները՝ առանձին նշելով նրանցից յուրաքանչյուրի կողմից կատարված ծախսերի չափը:

10. Եթե փորձաքննություն կատարելու համար ներգրավված անձը կատարել է նաև տրանսպորտային, գիշերավարձի և օրապահիկի ծախսեր, ապա նախահաշվում նշվում են նաև այդ ծախսերի չափերը: Հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում դրանք կցվում են փորձաքննության ծախսերի նախահաշվին:

Փորձագետի կատարած տրանսպորտային ծախսերը հաշվարկվում են սույն կարգով վկային համար նախատեսված տրանսպորտային ծախսերի հաշվարկման պայմաններին, իսկ գիշերավարձի և օրապահիկի ծախսերը՝ սույն կարգի V բաժնի դրույթներին համապատասխան:

11. Եթե փորձագետներից որևէ մեկը համաձայն չէ փորձաքննություն կատարելու համար առաջարկված վճարի չափի (չափերի) հետ, ապա, ստորագրելով նախահաշիվը, նշում է անհամաձայնության պատճառը (պատճառները) և իր կողմից ընդունելի համարվող չափը (չափերը):

Եթե մինչև փաստացի վճարման պահը նախկինում անհամաձայնություն հայտնած փորձագետի (փորձագետների) և մյուս փորձագետի (փորձագետների) միջև ձեռք է բերվել փորձաքննություն կատարելու համար նրանցից յուրաքանչյուրի ծախսերի չափերի շուրջ փոխհամաձայնություն, ապա դա պետք է արտացոլվի բոլոր փորձագետների կողմից ստորագրված՝ ճշգրտված նախահաշվում, որին պետք է կցվի սկզբնական նախահաշիվը:

Եթե փորձագետները մինչև փաստացի վճարման պահը փորձաքննություն կատարելու համար ձեռք չեն բերում իրենցից յուրաքանչյուրի կատարած ծախսերի չափերի շուրջ փոխհամաձայնություն, ապա դրանց չափերը որոշում է վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը՝ դրա վերաբերյալ իր գրավոր հիմնավորումը կցելով ծախսերի նախահաշվին:

Վարչական վարույթ իրականացնող վարչական մարմինը ծախսերի չափերը որոշելիս կարող է ճշգրտել այն ծախսերի չափերը, որոնք նա նշել է սույն կարգի 26-րդ կետին համապատասխան ներկայացված հայտում, ընդ որում, չափերի միագումար արժեքը չպետք է տարբերվի հայտում ներկայացված չափերի միագումար արժեքից:

12. Եթե վարչական մարմնի կողմից նշանակվել է լրացուցիչ փորձաքննություն, ապա դրա դիմաց վարձատրություն տալու համար համապատասխան փաստաթղթերը, սույն կարգի համաձայն,



կազմվում են սկզբնական (նախորդ) փորձաքննությանը վերաբերող փաստաթղթերից առանձին:

### **III. ԹԱՐԳՄԱՆԶԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

13. Թարգմանչի կատարած աշխատանքի դիմաց վարձատրությունը կատարվում է թարգմանությունն ավարտվելուց հետո, իսկ եթե այն կատարվել է մի քանի անգամ և տարբեր օրերում՝ վերջին անգամ կատարված թարգմանությունից հետո:

14. Թարգմանչին վճարելու համար հիմք է ընդունվում թարգմանություն կատարելու նպատակով վարչական վարույթում ներգրավվելու ամբողջ ժամանակը, որի ընթացքում նա կատարել է փաստացի թարգմանություն:

Թարգմանության ժամերի թիվը համաձայնեցվում է վարչական մարմնի հետ, որն արտացոլվում է այդ մարմնի պաշտոնատար անձի և թարգմանչի ստորագրությամբ հաստատված նախահաշվում, որում նշվում են թարգմանչի անունը, հայրանունը, ազգանունը, թարգմանության տարեթիվը, ամիսը, ամսաթիվը (ամսաթվերը, եթե թարգմանությունը կատարվել է մի քանի օրում), թարգմանության ժամերի թիվը (եթե թարգմանությունը կատարվել է մի քանի օրում, ապա ժամերի թիվը նշվում է ըստ օրերի) և վճարման ենթակա գումարի չափը, վարչական մարմնի անվանումն ու վարչական վարույթի անվանումը, որով անձը ներգրավվել է որպես թարգմանիչ:

15. Եթե թարգմանություն կատարելու համար հրավիրված անձը կատարել է նաև տրանսպորտային, գիշերավարձի և օրապահիկի ծախսեր, ապա նախահաշվում նշվում են նաև այդ ծախսերի չափերը: Հիմնավորող փաստաթղթերի առկայության դեպքում դրանք կցվում են թարգմանության ծախսերի նախահաշվին:

Թարգմանչի կատարած տրանսպորտային ծախսերը հաշվարկվում են սույն կարգով վկայի համար նախատեսված տրանսպորտային ծախսերի հաշվարկման պայմաններին, իսկ գիշերավարձի և օրապահիկի ծախսերը՝ սույն կարգի V բաժնի դրույթներին համապատասխան:

16. Թարգմանչին թարգմանչական աշխատանքի համար վճարվելիք գումարի չափը որոշվում է մեկ ժամ թարգմանության դիմաց 1000 դրամի հաշվարկով: Ընդ որում, եթե թարգմանության համար ծախսված ժամաքանակի մեջ առկա է մի հատված, որը գերազանցում է 30 րոպեն, բայց պակասում է մեկ ժամից, ապա ժամաքանա-

կի այդ հատվածը հավասարեցվում է մեկ ժամի, իսկ եթե ժամաքանակի մասը չի գերազանցում 30 րոպեն, ապա այդ հատվածը հավասարեցվում է կես ժամի:

17. Եթե թարգմանությունը կատարվել է մեկից ավելի թարգմանիչների կողմից, ապա նրանց հասանելիք ծախսերի նախահաշիվը, սույն կարգի համաձայն, կազմվում է յուրաքանչյուր թարգմանչի համար՝ առանձին:

#### **IV. ՎԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

18. Վարչական վարույթում ներգրավված վկային հատուցման ենթակա են տրանսպորտային ծախսերը, որոնք վկան կատարել է վարչական մարմին ներկայանալու նպատակով դրա գտնվելու վայր մեկնելու և վերադառնալու համար ընդհանուր նշանակության միջքաղաքային տրանսպորտից օգտվելիս:

Վկային հատուցվում են նաև նրա կատարած գիշերավարձի ծախսերը՝ սույն կարգի V բաժնի դրույթներին համապատասխան:

19. Տրանսպորտային ծախսերը հաշվարկելու համար հիմք է ընդունվում վկայի՝ վարչական մարմին ներկայանալու համար վարչական մարմնի գտնվելու վայր մեկնելու փաստը հաստատող տոմսի վրա նշված արժեքի կրկնակի չափը, իսկ տոմսի բացակայության դեպքում՝ վկայի մշտական բնակության վայրից կամ այն վայրից, որտեղ նա առավելապես բնակվում է, մինչև վարչական մարմնի գտնվելու վայր ընդհանուր նշանակության միջքաղաքային ավտոտրանսպորտից, իսկ դրա բացակայության դեպքում այլ տեսակի միջքաղաքային տրանսպորտից օգտվելու համար սահմանված կարգով հաստատված երթևեկության տոմսի արժեքի կրկնակի չափը:

20. Եթե վկան տվյալ վարչական վարույթին մասնակցել է տարբեր օրեր և յուրաքանչյուր օր ներկայացել է վարչական մարմնի գտնվելու վայր և վերադարձել իր մշտական բնակության վայրը կամ այն վայրը, որտեղ առավելապես բնակվում է, և յուրաքանչյուր օրվա համար վարույթն իրականացնող վարչական մարմին է ներկայացնում մեկնելու և վերադարձի՝ ընդհանուր նշանակության միջքաղաքային տրանսպորտից օգտվելու փաստը հաստատող երթևեկության տոմսեր, ապա նրան վճարվում է բոլոր օրերի համար կատարված տրանսպորտային ծախսերի ընդհանուր գումարի չափով:

21. Եթե տվյալ վարչական վարույթին մասնակցել են մեկից ավելի վկաներ, ապա նրանց հատուցման ենթակա ծախսերը, սույն կարգի համաձայն, որոշվում են յուրաքանչյուր վկայի համար՝ առանձին:

#### **V. ԳԻՇԵՐԱՎԱՐԾԻ ԵՎ ՕՐԱՊԱՅԻԿԻ ԾԱԽՍԵՐԸ**

22. Եթե փորձաքննություն կամ թարգմանություն կատարելու կամ որպես վկա ցուցնունք տալու համար համապատասխան վարչական վարույթում ներգրավված անձը կատարել է նաև գիշերավարձի ծախսեր, ապա դրանք ենթակա են հատուցման:

23. Գիշերավարձի ծախսերը ենթակա են հատուցման՝ այդ ծախսերը հաստատող համապատասխան փաստաթղթեր ներկայացվելու դեպքում, բայց 10000 դրամից ոչ ավելի:

Վարչական վարույթում որպես փորձագետ, թարգմանիչ կամ վկա ներգրավված անձին հատուցվում է նաև օրապահիկի ծախսը՝ գիշերավարձի ծախսերը հաստատող փաստաթղթեր ներկայացվելու դեպքում՝ յուրաքանչյուր օրվա համար 2000 դրամի չափով, հիմնավորող փաստաթղթերի բացակայության դեպքում՝ օրական 1300 դրամի չափով:

24. Սույն կարգին համապատասխան՝ գիշերավարձի և օրապահիկի ծախսերն այն ծախսերն են, որոնք փորձագետը, թարգմանիչը կամ վկան կատարել են համապատասխան վարչական վարույթին օրենքով և սույն կարգին համապատասխան մասնակցելու կապակցությամբ՝ իրենց մշտական բնակության վայրից դուրս վարչական վարույթ իրականացնող վարչական մարմնի գտնվելու վայրում գիշերելու և մնալու պատճառով:

#### **VI. ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ**

25. Սույն կարգին համապատասխան փորձագետին, թարգմանչին և վկային վարձատրություն կամ վճարում է կատարվում՝

ա) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից, եթե նշված անձինք ներգրավվել են օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «բ» կետերով նախատեսված վարչական մարմինների կողմից հարուցված վարչական վարույթում.

բ) համապատասխան համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի

միջոցներից, եթե նշված անձինք ներգրավվել են օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված վարչական մարմինների կողմից հարուցված վարչական վարույթում:

26. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի միջոցներից համապատասխան հատկացումներ ստանալու նպատակով վարույթն իրականացրած վարչական մարմինը Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում հայտ, որում պետք է նշվեն՝

ա) վարույթը, որի առնչությամբ հայցվում է համապատասխան գումարի հատկացումը, և կատարած աշխատանքը, ինչի համար նախատեսվում է դրա հատկացումը (փորձաքննություն, թարգմանություն, որպես վկա հանդես գալ): Եթե հայտում նշվում է նաև փորձաքննություն կատարելու համար մի քանի փորձագետների վարձատրություն տալու մասին և հայտ ներկայացնելու պահին նրանց միջև ձեռք չի բերվել նրանցից յուրաքանչյուրին վճարման ենթակա գումարի չափերի շուրջ փոխհամաձայնություն, ապա վարչական մարմինը հայտում նշում է նրանցից յուրաքանչյուրին վճարման ենթակա գումարների այն չափերը, որոնք ինքն է հիմնավոր համարում:

Եթե միևնույն վարչական վարույթով նշանակվել է նաև լրացուցիչ փորձաքննություն, ապա սկզբնական և լրացուցիչ փորձաքննությունների մասին սույն կետով նախատեսված տվյալները ներկայացվում են առանձին.

բ) փորձագետի, թարգմանչի կամ վկայի անունները, հայրանունները, ազգանունները, որոնց վարձատրություն կամ վճարում է կատարվելու, և հատկացվելիք գումարի չափը:

Յուրաքանչյուր վարույթի համար ներկայացվում է միայն մեկ հայտ:

Եթե միևնույն վարույթում ներգրավվել է փորձագետ, թարգմանիչ և վկա, ապա սույն կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված տվյալները հայտում նշվում են նրանցից յուրաքանչյուրի համար՝ առանձին:

27. Վարույթն իրականացրած վարչական մարմնի հայտն ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարու-

թյունն ապահովում է դրանով նախատեսված գումարների՝ սահմանված կարգով հատկացումը հայտը ներկայացրած վարչական մարմնին:

Վարույթն իրականացրած վարչական մարմինը հատկացումն ստանալու օրվանից ոչ ուշ, քան 7-օրյա ժամկետում ապահովում է համապատասխան գումարների՝ սահմանված կարգով վճարումը փորձագետին, թարգմանչին և վկային:

28. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով նախատեսված վարչական մարմնի կողմից վարչական վարույթում ներգրավված փորձագետին, թարգմանչին ու վկային տվյալ համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից սույն կարգով նախատեսված պայմաններով և չափերով վարձատրություն կամ վճարում է կատարվում համապատասխան համայնքի ղեկավարի սահմանած կարգով՝ տվյալ վարչական վարույթն ավարտվելու օրվանից ոչ ուշ, քան մեկամսյա ժամկետում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ**

**25 հունիսի 2004 թվականի N 975-Ն**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ,  
ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ  
ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՂ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան` Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների եւ վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը` համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական մարմինները սույն որոշմամբ հաստատված կարգի հիման վրա, հաշվի առնելով իրենց գործառույթների առանձնահատկությունները, մշակում եւ հաստատում են գերատեսչական ակտեր կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտեր` սահմանելով իրենց կողմից հարուցվող վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների եւ վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները` այն հաշվով, որ այդ իրավական ակտերն ուժի մեջ մտնեն նշված օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից` 2005 թվականի հունվարի 1-ից:

Վարչական վարույթի վերաբերյալ գործերը, դրանց հաշվառման գրանցամատյանները եւ վարչական ակտերի հաշվառման գրան-

ցամատյանները վարչական մարմնում պահպանվում են սույն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ու վարչական մարմնում սահմանված կանոններին համապատասխան եւ օրենքով սահմանված կարգով հանձնվում են արխիվ:

3. Սահմանել, որ վարչական մարմինները, որոնք հաստատել են վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման եւ վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները, պարտավոր են դրանք համապատասխանեցնել սույն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ այն հաշվով, որպեսզի դրանք ուժի մեջ մտնեն 2005 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՐԳ՝  
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ,  
ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ  
ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ  
ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՅՄԱՆՈՂ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն օրինակելի կարգը (այսուհետ՝ կարգ) հաստատվել է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 28-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

2. Սույն կարգը նպատակ ունի միասնական կարգավորումներ նախատեսելու համար օժանդակելու վարչական մարմիններին՝ վարչական ակտերի ընդունման հետ կապված իրենց գործառույթների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ մշակելու եւ հաստատելու իրենց համապատասխան կարգերը, որոնք կապահովեն վարչական վարույթի վերաբերյալ գործերի կանոնավոր վարումը եւ ֆիզիկական ու իրավաբանական անձանց համար դրանցում առկա տեղեկությունների, փաստաթղթերի եւ այլ նյութերի մասին արագ ու հեշտ իրազեկման հնարավորության ստեղծումը:

3. Սույն կարգով սահմանվում է վարչական մարմիններում վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարման, այդ գործերի հաշվառման գրանցամատյանների, ինչպես նաեւ վարչական վարույթի գործերով վարչական մարմինների ընդունած վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը:

4. Սույն կարգի գործողությունը տարածվում է օրենքի 3-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված վարչական մարմինների կողմից իրականացվող՝ վարչական վարույթի վերաբերյալ գործերի վրա:

Սույն կարգի գործողությունը տարածվում է օրենքով սահմանված կարգով անձանց դիմումի կամ նրանց բողոքի (այսուհետ՝ դիմում) հիման վրա, ինչպես նաեւ վարչական մարմնի նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցած վարչական մարմինների վրա, եթե դիմումի կամ նախաձեռնության նպատակը գրավոր վարչական ակտ ընդունելն է:

5. Վարչական մարմինները կարող են սույն կարգի հիման վրա ընդունել մեկ ընդհանուր գերատեսչական ակտ կամ տեղական ինքնակառավարման մարմինների իրավական ակտ՝ դրանով սահմանելով ինչպես վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարման, այնպես էլ այդ գործերի հաշվառման գրանցամատյանների եւ իրենց կողմից ընդունված վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգը կամ էլ դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ սահմանել առանձին կարգեր:

6. Եթե որոշակի բնագավառներ կարգավորող առանձին (հատուկ) օրենքով կամ դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտով վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարման, դրանց հաշվառման եւ վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման այլ կարգ է սահմանված, ապա գործում է այդ առանձին (հատուկ) օրենքով սահմանված կարգը: Անհրաժեշտության դեպքում այդ կարգը կարող է լրացվել սույն կարգի այն դրույթներից բխող պահանջներով, որոնք բացակայում են առանձին (հատուկ) օրենքով նախատեսված կարգում:

7. Վարչական վարույթին առնչվող՝ սույն կարգում օգտագործվող տերմինները կամ հասկացություններն ունեն նույն նշանակությունը, ինչ նշանակությամբ դրանք օգտագործվում են օրենքում:



## II. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅՑԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Վարչական մարմնում վարչական վարույթի վերաբերյալ գործերը (այսուհետ՝ գործեր) կազմվում են վարվում են այդ մարմնի կողմից՝ անձանց դիմումի հիման վրա կամ տվյալ վարչական մարմնի նախաձեռնությամբ, օրենքի 30-րդ հոդվածի համաձայն վարչական վարույթ հարուցվելու պահից:

9. Եթե վարչական մարմինն օրենքի 33-րդ հոդվածի համաձայն դիմումը վերահասցեագրում է իրավասու վարչական մարմնին կամ վերադարձնում դիմողին, ապա տվյալ դիմումի առնչությամբ գործ չի կազմվում, իսկ դիմումի եւ դրան կից փաստաթղթերի պատճենները նախապես հանվում են, առանձնացվում վարչական վարույթ հարուցած գործերից եւ պահվում առանձին՝ տվյալ վարչական մարմնի սահմանած կարգով:

Եթե օրենքի 33-րդ հոդվածի համաձայն վերահասցեագրված կամ վերադարձված դիմումը որեւէ օրինական հիմքով (սխալ վերահասցեագրման կամ վերադարձման, կամ այլ պատճառով) ենթակա է տվյալ վարչական մարմնի կողմից քննարկման, ապա դրա վերաբերյալ վարչական վարույթ հարուցվելու պահից եւս կազմվում է գործ՝ սույն կարգին համապատասխան:

10. Վարչական մարմինը վարչական վարույթի վերաբերյալ գործերը կազմում եւ վարում է առանձին-առանձին՝ հետեւյալ խմբերով՝

ա) անձի դիմումի հիման վրա հարուցված վարույթներով գործեր.

բ) տվյալ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթներով գործեր:

Հարուցված յուրաքանչյուր վարչական վարույթով կազմվում է առանձին գործ, որում ժամանակագրական կարգով ներառվում են տվյալ վարույթի հետ կապված անձի դիմումը եւ մյուս բոլոր փաստաթղթերը (ծանուցումներ, միջնորդություններ եւ այլն), տեղեկությունները, գործով ձեռք բերված ապացույցները՝ ներառյալ մյուս իրեղեն նյութերը, տվյալ գործով վարչական մարմին կամ նրա վերադաս վարչական մարմին բերված բողոքը, դատարան ներկայացված հայցը եւ դատարան բերված բողոքը, դրանց կապակցությամբ կայացված վարչական կամ դատական ակտերը, հարկադիր կատարման դեպքում՝ նաեւ դրան առնչվող փաստաթղթերը, ինչպես նաեւ վարույթի ընթացքում ընդունված վարչական ակտը:

Եթե վարչական վարույթի գործով բողոք է բերվել վերադաս վարչական մարմին, ապա բողոքի վերաբերյալ այդ մարմնի ընդունած վարչական ակտի, իսկ դրա դեմ դատարան հայց ներկայացնելու, այնուհետև դատարան բողոք բերելու դեպքերում՝ համապատասխան դատական ակտի (ակտերի) պատճենները, որոնք առկա են վերադաս վարչական մարմնում, վերջինս պատշաճ ձևով ուղարկում է այն վարչական մարմին, որի հարուցած վարույթով ընդունվել կամ կայացվել են հետագա վարչական կամ դատական ակտերը:

Վարչական վարույթի վերաբերյալ գործում պահվում են դրան առնչվող փաստաթղթերի բնօրինակները, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ դրանց պատճենները: Իրեղեն ապացույցները գործին կցվում են որևէ եղանակով փաթեթավորված կամ անրակարված վիճակով՝ կնքված տվյալ վարչական մարմնի կնիքով:

11. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը համարակալվում են, որն իրականացվում է աճող թվերով, յուրաքանչյուր տարվա կտրվածքով՝ տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հարուցված վարույթներով գործերի ընդգրկմամբ:

12. Ելնելով նպատակահարմարությունից՝ գործերը կարող են համարակալվել նաև ենթախմբերով՝ կախված նրանից, թե տվյալ վարչական մարմինը վարչական ակտեր ընդունելու ինչպիսի շրջանակի նկատմամբ իրավասություն ունի (օրինակ, իրավասու է վարչական ակտեր ընդունելու միայն մեկ, թե մի քանի եւ տարբերույթ հարցերով. օրինակ, լիցենզիա է տալիս միայն մի տեսակի գործունեություն իրականացնելու, թե մի քանի տեսակի համար, ընդ որում, յուրաքանչյուրի համար՝ առանձին լիցենզիա եւ այլն):

13. Որպես կանոն, գործերը համարակալվում են դրանց վարման գործառույթները տվյալ վարչական մարմնում իրականացվում են կենտրոնացված ու միասնական համարակալման համակարգի կիրառմամբ:

Դրա անհնարինության դեպքում, մասնավորապես, եթե օրենքով տվյալ վարչական մարմինն իրավասու է ընդունելու մեկից ավելի հարցերի կամ ոլորտների վերաբերյալ վարչական ակտեր եւ դրանցից յուրաքանչյուրի հետ կապված վարչական վարույթներով գործերը հարուցում են տվյալ վարչական մարմնի տարբեր կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանումներ, ապա այդ

ստորաբաժանումներից յուրաքանչյուրի գծով համապատասխան գործերի համարակալումը եւ դրանց վարման հետ կապված գործողությունները կարող են իրականացվել առանձնացված կարգով եւ ըստ գործերի խմբերի՝ ենթախմբերի բաժանելով:

Վարչական մարմինը որոշակի համակարգված կարգավորում ապահովելու նպատակով՝ ըստ առանձին ոլորտների վարչական վարույթների վերաբերյալ խմբային գործերը (անձանց դիմումի հիման վրա կամ վարչական մարմնի նախաձեռնությամբ) ենթախմբերի բաժանելու դեպքում, ինչպես ըստ ենթախմբերի, այնպես էլ ըստ կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների, կարող է սահմանել գործերի համարակալման թվային կամ այբբենական պայմանանշաններ կամ դրանց զուգորդություններ:

14. Վարչական վարույթի վերաբերյալ գործի շապիկի (կազմի) վրա գրվում են՝

ա) վարչական մարմնի լրիվ անվանումը.

բ) վարչական վարույթի իրականացման գործառույթներ իրականացնող կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման լրիվ անվանումը.

գ) տարին, որի ընթացքում վարչական վարույթը հարուցվել է.

դ) գործի հերթական համարը՝ արաբական թվերով:

Եթե նախատեսված է պայմանանշան (պայմանանշանների զուգորդություն), ապա հերթական համարի սկզբում՝ զծիկով անջատմամբ, նշվում է այդ պայմանանշանը (պայմանանշանների զուգորդությունը):

Գործի հերթական համարից առաջ պետք է լինի հետևյալ գրառումը՝ «Վարչական վարույթ. գործ N».

ե) այն վարչական ակտի հակիրճ անվանումը, որը նախատեսվում է ընդունել վարույթի արդյունքում.

զ) նշում այն մասին, թե ում նախաձեռնությամբ է վարույթը հարուցվել (օրինակ, «Անձի դիմումի հիման վրա», «Անձի բողոքի հիման վրա», իսկ եթե վարչական մարմինն է վարույթ հարուցել, ապա՝ «Նախաձեռնության հիման վրա»):

Գործի շապիկի (կազմի) ներքեւի աջ անկյունում նշվում են տվյալ վարույթի իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձի անունը, հայրանունը եւ ազգանունը՝ պաշտոնի նշումով: Բացի պաշտոնատար անձի մասին տեղեկություններից՝ պետք է տեղ հատկացված լինի նաեւ վարույթն սկսելու եւ ավար-

տելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը նշելու համար:

Վարույթն սկսելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը նշվում են օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված ժամկետներին համապատասխան:

Վարույթն ավարտելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը նշվում են ըստ այն տարեթվի, ամսվա եւ ամսաթվի, երբ վարչական վարույթի վերաբերյալ տվյալ գործով ըստ էության որոշում է ընդունվել կամ վարույթը կարճվել է (օրենքի 50-րդ եւ 58-րդ հոդվածներ):

15. Տվյալ վարչական գործով վարչական մարմնի վերադաս վարչական մարմին բողոք բերելու կամ դատարան հայց ներկայացնելու (օրենքի 70-րդ հոդված) կապակցությամբ գործը համապատասխան մարմին փոխանցելու դեպքում՝ գործը վարող վարչական մարմինը՝ ներառյալ այդ մարմնի վերադաս վարչական մարմինը, եթե վերջինս այդ գործով վարչական բողոք է քննարկել եւ դրա վերաբերյալ ըստ էության որոշում ընդունել, հանում է դրանում առկա բոլոր փաստաթղթերի պատճենները եւ սույն կարգին համապատասխան՝ կազմում այդ գործի կրկնօրինակը, որի շապիկի վրա, վերին աջ անկյունում նշվում է՝ «Բողոքարկվել է»:

Գործի կրկնօրինակի մեջ պահվում են նաեւ բողոքարկման կամ հայցային վարույթի ընթացքում վարչական մարմին ուղարկված կամ նրա կողմից ձեռք բերված փաստաթղթերը:

16. Եթե վարչական մարմնում բողոքարկման վարույթի կամ դատական վարույթների (երբ բողոքի վերաբերյալ վարչական մարմնի կամ դրա վերադաս մարմնի ընդունած որոշման դեմ հայց է ներկայացվել դատարան, ինչպես նաեւ վերջինիս վճիռը կամ որոշումը դատական կարգով բողոքարկվել է) ավարտից հետո տվյալ վարույթին առնչվող գործն ամբողջությամբ՝ օրենքով սահմանված կարգով վերադարձվում է վարույթ հարուցած վարչական մարմին, ապա հիմնական գործը եւ դրա կրկնօրինակը պահվում են միասին:

17. Բողոքարկված գործերն առանձնացվում են չբողոքարկված գործերից եւ պահվում առանձին, նաեւ՝ բողոքարկման վարույթն ավարտվելուց հետո:

18. Գործի վարույթն ավարտելուց հետո (սույն կարգի 14-րդ կետի վերջին պարբերություն) վարույթն իրականացնող վարչական մարմինը կազմում է գործում առկա փաստաթղթերի անվանական ցանկը՝ նշելով դրանցից յուրաքանչյուրի էջերի թիվը:

Ցանկում պետք է նշվեն նաեւ գործում առկա իրեղեն ապացույց-

ների անվանումները, դրանց քանակը: Ցանկի վերջին էջի վրա ստորագրում է վարչական վարույթի իրականացման համար պատասխանատու պաշտոնատար անձը՝ նշելով իր անունը, հայրանունը եւ ազգանունը, ցանկը կազմելու տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը:

19. Եթե գործերը համարակալվել են պայմանանշանների (դրանց զուգորդությունների) կիրառմամբ, ապա նման գործերը նույնպես պահվում են առանձին՝ ըստ համապատասխան պայմանանշանների (դրանց զուգորդությունների):

20. Վարչական վարույթների վերաբերյալ գործերը հերթական տարվա ավարտից հետո, ելնելով նպատակահարմարությունից կամ տվյալ մարմնում սահմանված կարգից, կարող են կենտրոնացված կարգով պահվել նրա որեւէ ստորաբաժանումում կամ առանձին՝ այն ստորաբաժանումներում, որոնք իրականացնում են դրանց հետ կապված գործառույթներ:

21. Ավարտված գործերը կարվում են եւ կնքվում վարչական մարմնի կնիքով:

Կարված մասում պետք է լինի գործերի վարման համար պատասխանատու պաշտոնատար անձի ստորագրությունը, եւ պետք է նշվեն տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը:

22. Ֆիզիկական եւ իրավաբանական անձինք գործերի նյութերին, փաստաթղթերին ծանոթանում, դրանցից քաղվածքներ կամ պատճեններ, այդ թվում՝ լուսապատճեններ կատարում են օրենքով սահմանված կարգով:

### **III. ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

23. Վարչական մարմնում կազմվում եւ վարվում է վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյան:

Հաշվի առնելով սույն կարգի 10-13-րդ կետերի պահանջները՝ վարչական մարմինը կարող է վարել առանձին գրանցամատյաններ՝ ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված իրավասությունների կամ վարույթներն իրականացնող կառուցվածքային եւ առանձնացված ստորաբաժանումների:

24. Բացի սույն կարգի 23-րդ կետով նախատեսված դեպքերից՝ վարչական մարմինն առանձին գրանցամատյաններ է վարում դիմումի հիման վրա եւ առանձին՝ տվյալ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի վերաբերյալ գոր-

ծերի հաշվառման համար:

25. Վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանը (գրանցամատյանները) կազմվում եւ լրացվում է յուրաքանչյուր տարվա համար՝ առանձին:

26. Գրանցամատյանի շապիկի (կազմի) վրա գրվում են տվյալ վարչական մարմնի լրիվ անվանումը, համապատասխան գրանցամատյանը կազմող եւ լրացնող կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման լրիվ անվանումը, տարեթիվը, որի ընթացքում հարուցված գործերի մասին տեղեկությունները գրանցվում են տվյալ գրանցամատյանում, գործերի ընդհանուր թիվը: Եթե գրանցամատյանը կազմված է ըստ գործերի խմբերի ու ենթախմբերի, ապա գրվում է նաեւ խմբի եւ ենթախմբի պայմանագիշը (դրանց գուգորդությունը):

Գրանցամատյանի շապիկի (կազմի) կենտրոնական մասում պետք է լինի հետեւյալ գրառումը՝ «Գրանցամատյան վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման»:

27. Նպատակահարմար է գրանցամատյանը կազմել եւ դրա մեջ տեղեկությունները գրանցել համաձայն N 1 ձեւում ներկայացված՝ վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանների կազմման օրինակելի սխեմայի:

Դիմումի հիման վրա եւ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթներով գործերը հաշվառվում են առանձին՝ հետեւյալ կարգով՝ գործերի հաշվառման համար սահմանել 3 աղյուսակ՝ հետեւյալ սխեմայով՝

ա) N 1 աղյուսակում նշել վարչական մարմնում ստացված դիմումի հիման վրա կամ այդ մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարույթով գործին ընթացք տալու մասին տեղեկությունները.

բ) N 2 աղյուսակում նշել տվյալ գործով բերված բողոքը վարչական մարմնում կամ նրա վերադաս վարչական մարմնում քննարկելու եւ դրա վերաբերյալ ըստ էության որոշում ընդունելու մասին տեղեկությունները.

գ) N 3 աղյուսակում նշել տվյալ գործով դատարան ներկայացված հայցի, դատարան բերված բողոքի քննարկման եւ դրանց վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու մասին տեղեկությունները:

28. N 1 աղյուսակում լրացվում են հետեւյալ տեղեկությունները՝

ա) հաշվառվող գործի հեթական համարը, որը պետք է համընկնի տվյալ գործի շապիկի (կազմի) վրա նշված համարակալմանը.

բ) վարչական մարմնում անձի դիմումն ստանալու տարեթիվը, ամիսը եւ ամսաթիվը:

Եթե վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, ապա նշվում են նախաձեռնության տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը.

գ) դիմողի անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը), նրա հասցեն (գտնվելու վայրը):

Եթե վարչական վարույթը հարուցվել է վարչական մարմնի նախաձեռնությամբ, ապա նշվում են այն անձի մասին տեղեկությունները, որի նկատմամբ վարչական մարմինը նախատեսում է ընդունել համապատասխան վարչական ակտ.

դ) դիմումի հիման վրա հայցվող պահանջի համառոտ շարադրանքը, իսկ եթե վարչական մարմնի նախաձեռնությամբ է վարույթ հարուցվել, ապա՝ դրանով հետապնդվող նպատակի համառոտ շարադրանքը.

ե) դիմումի քննարկման կամ վարչական մարմնի նախաձեռնության արդյունքում վարչական մարմնի ընդունած վարչական ակտի համարը, դրա ընդունման տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը, այդ ակտով ընդունված որոշման համառոտ շարադրանքը.

զ) վարչական ակտի մասին դիմողին (դրա հասցեատիրոջը) իրազեկելու եղանակի (առձեռն, փոստով եւ այլն) եւ իրազեկման տարեթվի, ամսվա, ամսաթվի վերաբերյալ տեղեկությունները:

29. N 2 աղյուսակը լրացվում է միայն այն դեպքում, երբ տվյալ գործով բողոք է բերվել, եւ այն, օրենքին համապատասխան, քննարկել եւ դրա վերաբերյալ ըստ էության որոշում է ընդունել վարչական ակտն ընդունած վարչական մարմինը կամ դրա վերադաս վարչական մարմինը:

30. N 2 աղյուսակում պետք է լինի N 1 աղյուսակի շարունակությունը եւ բովանդակի հետեւյալ տեղեկությունները՝

ա) բողոք բերելու տարեթիվը, ամիսը եւ ամսաթիվը.

բ) բողոք բերողի անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը), նրա հասցեն (գտնվելու վայրը).

գ) բողոքի համառոտ շարադրանքը.

դ) բողոքը քննարկած եւ դրա վերաբերյալ ըստ էության որոշում ընդունած վարչական մարմնի անվանումը.

ե) բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի համարը, ընդունման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, այդ ակտով ընդունված

որոշման համառոտ շարադրանքը.

զ) բողոքի վերաբերյալ ընդունված վարչական ակտի մասին բողոք բերողին իրազեկելու եղանակի (առձեռն, փոստով եւ այլն) եւ իրազեկման տարեթվի, ամսվա, ամսաթվի վերաբերյալ տեղեկությունները:

Եթե բողոքը քննարկել եւ դրա վերաբերյալ ըստ եւթյան որոշում է ընդունել վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմինը, ապա NN 1 եւ 2 աղյուսակները պետք է լրացնեն այդ երկու վարչական մարմինները:

31. N 3 աղյուսակը լրացվում է միայն այն դեպքում, երբ տվյալ գործով հայց, իսկ հետագայում՝ նաեւ բողոք է ներկայացվել դատարան: Այն պետք է կազմի N 2 աղյուսակի շարունակությունը, իսկ եթե բողոքը վարչական կարգով չի բերվել, ապա՝ N 1 աղյուսակի շարունակությունը: Ընդ որում, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վարչական վարույթի վերաբերյալ գործը կարող է քննվել դատական մի քանի ատյաններում: Այդ պատճառով նպատակահարմար է N 3 աղյուսակը բաժանել երեք հավասար մասի՝ յուրաքանչյուրում նշելով՝

ա) տվյալ դատարան հայց ներկայացնելու կամ բողոք բերելու տարեթիվը, ամիսը եւ ամսաթիվը, հայցով կամ բողոքով ներկայացված պահանջի համառոտ շարադրանքը.

բ) հայցը ներկայացնողի կամ բողոքը բերողի անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը), նրա դատավարական կարգավիճակը.

գ) հայցի կամ բողոքի վերաբերյալ ընդունված դատական ակտի տարեթիվը, ամիսը, ամսաթիվը եւ այդ ակտի համառոտ շարադրանքը:

Այն դեպքում, երբ օրենքով սահմանված հիմքերով եւ կարգով գործին մասնակցող անձանց կամ օրենքով իրավասու այլ անձանց կամ կազմակերպությունների դիմումի հիման վրա գործի վերանայման դատական վարույթ է հարուցվում, ապա N 3 աղյուսակը լրացվում է նոր սյունակներով եւ, կախված նրանից, թե որ ատյանի դատարանն է վերանայել գործը, համապատասխան սյունակներում նշվում են դիմումի հիման վրա գործի վերանայման, այդ թվում՝ դիմումի առնչությամբ կայացված դատական ակտի բողոքարկման ընթացքի մասին տեղեկությունները:

32. Հաշվառվող յուրաքանչյուր գործի մասին ամբողջական ու



ամփոփ տեղեկություններ ունենալու եւ դրանցից օգտվելը հեշտացնելու նպատակով՝ վարչական վարույթի վերաբերյալ գործերի հաշվառման գրանցամատյանների յուրաքանչյուր էջ կարող է պարունակել NN 1, 2 եւ 3 աղյուսակները, այդ էջերից ամեն մեկում կարող են գրանցվել մի գործի վերաբերյալ տեղեկությունները՝ N 1 աղյուսակը՝ պարտադիր, բողոքի դեպքում՝ նաեւ N 2 աղյուսակը, իսկ դատարան հայց ներկայացնելու կամ բողոք բերելու դեպքում՝ նաեւ N 3 աղյուսակը լրացնելով:

Գրանցամատյանում գործերի մասին տեղեկությունները լրացվում են տվյալ գործով վարչական վարույթ հարուցելու օրվանից եւ վարչական վարույթի ընթացքին զուգընթաց՝ ամբողջացվում:

Եթե դատարան ներկայացված հայցը կամ դատարան բերված բողոքին վերաբերող գործը մինչեւ այդ վարչական կարգով բողոքարկված է եղել եւ դրա վերաբերյալ ըստ էության որոշում է ընդունվել վարչական ակտն ընդունած վարչական մարմնի վերադաս վարչական մարմնի կողմից, ապա NN 1, 2 եւ 3 աղյուսակները պետք է լրացնեն այդ երկու վարչական մարմինները:

33. Գործերի հաշվառման գրանցամատյանը տեղեկություններ է պարունակում տվյալ տարվա ընթացքում հարուցված բոլոր վարչական գործերի մասին, որի վերջին էջի վրա վարչական մարմնի պատասխանատու պաշտոնատար անձը նշում է՝ «Գրանցամատյանը լրացված է», եւ ստորագրում՝ նշելով ստորագրման տարեթիվը, ամիսն ու ամսաթիվը: Գրանցամատյանը կարվում է եւ կնքվում վարչական մարմնի կնիքով:

34. Համապատասխան պաշտոնատար անձը գրանցամատյանում ուղղումներ կատարելու դեպքում տվյալ էջի աջ անկյունում՝ ուղղմանը զուգահեռ մասում նշում է, որ ուղղումները կատարել է ինքը, եւ ստորագրում է:

#### **IV. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ**

35. Վարչական մարմինը վարում է նաեւ վարչական վարույթով ընդունված վարչական ակտերի հաշվառման գրանցամատյան (այսուհետ՝ ակտերի հաշվառման գրանցամատյան):

Ակտերի հաշվառման գրանցամատյանը նպատակահարմար է վարել՝ ելնելով այն հանգամանքից, թե տվյալ վարչական մարմինն ինչ սկզբունքներով է վարում վարչական վարույթի վերաբերյալ

գործերը (խմբավորված, ենթախմբերի բաժանված, համապատասխան պայմանաճանճների, դրանց զուգորդությունների օգտագործմամբ, կենտրոնացված միասնական համակարգի կիրառմամբ եւ այլն):

Վարչական ակտերն ըստ այդմ կարող են հաշվառվել մեկից ավելի գրանցամատյաններում կամ մեկ միասնական գրանցամատյանում (ակտերի հաշվառման գրանցամատյանների կազմման օրինակելի սխեման ներկայացվում է N 2 ձեւում):

36. Ակտերի հաշվառման գրանցամատյանի շապիկի (կազմի) վրա գրվում են տվյալ վարչական մարմնի լրիվ անվանումը, վարույթի հետ կապված գործառնություններն իրականացնող կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման անվանումը, տարեթիվը, որի ընթացքում ընդունված ակտերը հաշվառվել են տվյալ գրանցամատյանում, եւ դրանում հաշվառված ակտերի ընդհանուր թիվը:

Գրանցամատյանի շապիկի (կազմի) կենտրոնական մասում պետք է լինի հետեւյալ գրառումը՝ «Գրանցամատյան վարույթի վերաբերյալ գործերով ընդունված վարչական ակտերի հաշվառման»:

37. Ակտերի հաշվառման գրանցամատյանում լրացվում են վարչական մարմնի կողմից տվյալ տարվա ընթացքում ընդունված վարչական ակտերի վերաբերյալ տեղեկություններ, այդ թվում՝ եթե դրանք փոխկապակցված են կամ միմյանց լրացնում են, կամ առնչվում են որեւէ ակտի հարկադիր կատարման ապահովմանը:

Հաշվառման ենթակա են վարչական մարմնի ընդունած՝ սույն կարգի 4-րդ կետի երկրորդ պարբերությամբ նախատեսված բոլոր վարչական ակտերը: Դրանք են՝

ա) անձի դիմումի հիման վրա կամ տվյալ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի արդյունքում ընդունված ակտը, այդ թվում՝ օրենքի 50-րդ հոդվածի համաձայն վարույթը կարճելու մասին ակտը, ինչպես նաեւ օրենքի 13-րդ գլխի դրույթներին համապատասխան վնասի հատուցման վերաբերյալ վարչական մարմնի ընդունած ակտը:

բ) վարչական ակտի բողոքարկման հիման վրա՝ օրենքի 73-րդ հոդվածի համաձայն դրա վերաբերյալ տվյալ վարչական մարմնի ընդունած վարչական ակտը, եթե օրենքի համաձայն տվյալ բողոքի հիման վրա վարույթն այդ մարմինն է իրականացրել՝ ներառյալ

բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումը.

գ) օրենքի 76-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված դեպքերում՝ վերադաս վարչական մարմնի հանձնարարության հիման վրա, իսկ օրենքով սահմանված կարգով դատարան հայց ներկայացնելու կամ հետագայում նաեւ դատարան բողոք բերելու դեպքերում՝ դատական ակտի հիման վրա տվյալ վարչական մարմնի ընդունած նոր վարչական ակտը, ինչպես նաեւ օրենքի 76-րդ հոդվածի «գ» եւ «դ» կետերի համաձայն վերադաս վարչական մարմնի կամ դատարանի կողմից վարչական մարմնի գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու կամ վիճարկվող գործողություն կատարելու պարտականություն դնելու մասին որոշման հիման վրա տվյալ վարչական մարմնի ընդունած նոր վարչական ակտերը.

դ) վարչական ակտի կատարման ապահովման նպատակով օրենքի 84-րդ հոդվածի համաձայն հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին պարտավոր անձին գրավոր նախազգուշացումը.

ե) օրենքի 85-րդ հոդվածի համաձայն տվյալ վարչական մարմնի իրավասության սահմաններում հարկադրանքի միջոց նշանակելու մասին ակտը:

Ելնելով նպատակահարմարությունից՝ վարչական մարմինը կարող է հաշվառել նաեւ վարչական վարույթին առնչվող մյուս փաստաթղթերը (օրինակ, վարույթը կասեցնելու, փորձագետ հրավիրելու, զննում կատարելու, վարույթի ժամկետը երկարաձգելու, բացարկի վերաբերյալ ակտերը եւ այլն):

38. Ակտերի հաշվառման գրանցամատյանում հաշվառվող ակտի վերաբերյալ նշվում են հետեւյալ տեղեկությունները՝

ա) վարչական վարույթ հարուցելու հիմքը՝ անձի դիմումը (բողոքը) կամ վարչական մարմնի նախաձեռնությունը.

բ) հաշվառվող ակտի անվանումը (որոշում, հրաման, կարգադրություն եւ այլն), ընդունման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը եւ համարը.

գ) վարչական ակտի հասցեատիրոջ անունը, հայրանունը ազգանունը (անվանումը), նրա հասցեն (գտնվելու վայրը):

Եթե վարչական ակտն ուղղված է որոշակի անհատական չափանիշներով առանձնացված անձանց խմբի (օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերություն), ապա նշվում է միայն առանձնացված խմբի անվանումը.

դ) վարչական ակտի եզրափակիչ մասի (օրենքի 55-րդ հոդվածի

4-րդ մասի «գ» կետ) շարադրանքը.

ե) վարչական ակտին կից ներդիրների, հավելվածների կամ այլ լրացուցիչ փաստաթղթերի անվանումները, մեծաթիվ լինելու դեպքում՝ նշում դրանց քանակի մասին.

զ) վարչական ակտի ընդունմանը մասնակցած այլ վարչական մարմինների անվանումները, եթե այդ վարչական ակտն ընդունվել է օրենքի 52-րդ հոդվածին համապատասխան, ինչպես նաև վարչական ակտի ընդունման համար անհրաժեշտ՝ այլ վարչական մարմիններից ստացված թույլտվությունները կամ համաձայնությունները, մեծաթիվ լինելու դեպքում՝ նշում դրանց քանակի մասին.

է) վարչական ակտի էջերի եւ ակտի բաղկացուցիչ մասը կազմող մյուս փաստաթղթերի էջերի ընդհանուր թիվը:

39. Ելնելով անհրաժեշտությունից՝ վարչական մարմինը կարող է ակտերի հաշվառման գրանցամատյանում ներառել այդ ակտերին վերաբերող նաև այլ տեղեկություններ:

40. Ակտերի հաշվառման գրանցամատյանում ուղղումներ կատարելու դեպքում՝ համապատասխան պաշտոնատար անձը տվյալ էջի աջ անկյունում՝ ուղղմանը զուգահեռ մասում նշում է, որ ուղղումները կատարել է ինքը, եւ ստորագրում է:

## **V. ԵՆՐԱՓՈՎԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

41. Վարչական մարմինը յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ մինչև դրան հաջորդող տարվա մարտ ամիսն ստուգում է վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների եւ ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման սահմանված կարգի պահպանման վիճակը, ուսումնասիրում եւ վերլուծում է այդ գործում առկա թերությունների եւ բացթողումների պատճառները, միջոցառումներ է իրականացնում դրանց վերացման, ինչպես նաև այդ գործի համար պատասխանատու աշխատողների աշխատանքների բարելավման ուղղությամբ:

42. Վարչական վարույթի վերաբերյալ գործերը, դրանց հաշվառման եւ ակտերի հաշվառման գրանցամատյանները պահպանվում են տվյալ վարչական մարմնում՝ սահմանված գործավարության կանոններին համապատասխան եւ օրենքով սահմանված կարգով ենթակա են արխիվ հանձնման:

Ձև 1

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՄԻՆԵՄԱ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՇՎԱՐՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՋՄԱՆ**

**Աղյուսակ 1**

Տեղեկություններ գործը վարչական մարմնում քննարկելու ընթացքի մասին

<p>NN Ը/Կ</p>	<p>Գիմունք ստանալու (վարչական մարմնի նախաձեռնությունը դրսևորելու) տարբերակ, ամիսը, անաթիվը</p>	<p>Գիմողի (ակտի հասցեատիրոջ) անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը)</p>	<p>Գիմունքի հիման վրա (վարչական մարմնի նախաձեռնությամբ) հայցվող (ներկայացվող) պահանջի համառոտ շարադրանքը</p>	<p>Վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտի տարբերակ, ամիսը, անաթիվը, համարը և դրանով ընդունված որոշման համառոտ շարադրանքը</p>	<p>Նշում վարչական ակտի մասին դիմողին (վարչական ակտի հասցեատիրոջը) իրազեկելու եղանակի (փոստով, առձեռն և այլն) և իրազեկելու տարբերակ, անվաթիվ, անաթիվ մասին</p>
<p>1</p>	<p>2</p>	<p>3</p>	<p>4</p>	<p>5</p>	<p>6</p>

## Աղյուսակ 2

Տեղեկություններ բողոքը վարչական մարմնում քննարկելու ընթացքի մասին

<p>Բողոքը բերելու տարեթիվը, ամիսը, ամսաթիվը</p>	<p>Բողոքը բերողի անունը, հայրանունը, ազգանունը (ամվանունը) նրա կարգավիճակը (դիմող, երրորդ անձ)</p>	<p>Բողոքի համառոտ շարադրանքը</p>	<p>Բողոքը քննարկող և որա վերաբերյալ ըստ էության որոշում ընդունող վարչական մարմնի անվանումը</p>	<p>Բողոքի վերաբերյալ ակտի ընդունման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, համարը և այդ ակտով ընդունված որոշման համառոտ շարադրանքը</p>	<p>Նշում բողոքը բերողին վարչական ակտի մասին իրազեկելու եղանակի (փոստով, ստժեռն և այլն) և իրազեկելու տարեթիվ, ամսվա, ամսաթվի մասին</p>
<p>7</p>	<p>8</p>	<p>9</p>	<p>10</p>	<p>11</p>	<p>12</p>

### Աղյուսակ 3

Տեղեկություններ հայցը (բողոքը) դատարանում քննելու ընթացքի մասին

Հայցի քննությունը դատարանում		Բողոքի քննությունը գործը վերստին քննող դատարանում			Բողոքի քննությունը վճարելի դատարանում			
Հայցը ներկայացնելու տարեթիվը, առաջին անգամ հայտարարելու ամսաթիվը և հայցի համարը	Հայցի վերաբերյալ կայացված դատական ակտի տարեթիվը, առաջին անգամ հայտարարելու ամսաթիվը և համարը	Գործը վարույթ ընդունելու տարեթիվը և բողոքի ակտի տարեթիվը և բողոքի համարը	Բողոքը բերողի անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը), նրա դատավարական կարգավիճակը	Բողոքը վերաբերյալ կայացված դատական ակտի տարեթիվը, առաջին անգամ հայտարարելու ամսաթիվը և համարը	Բողոքը վարույթ ընդունելու տարեթիվը, առաջին անգամ հայտարարելու ամսաթիվը և բողոքի համարը	Բողոքը բերողի անունը, հայրանունը, ազգանունը (անվանումը), նրա դատավարական կարգավիճակը	Բողոքի վերաբերյալ կայացված որոշման տարեթիվը, առաջին անգամ հայտարարելու ամսաթիվը և համարը	
13	14	15	16	17	18	19	20	21

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՍԽԵՄԱ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՇՎԱՍԽԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՋՄԱՆ**

1	2	3	4	5	6	7	8	9
NN NN Ը/կ	Վարչական վարույթ հարու- ցելու հիմքը՝ անձի դիմումը (բողոքը)	Վարչական ակտի անվանումը (որոշում, իրաման, կարգա- անձի դրույթում և այլն), ընդունան տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և համարը	Վարչական ակտի հաս- ցեատիրոջ անունը, հայրա- նունը, ազգանունը (անվա- նումը), նրա հասցեն (գտնվելու կայքը), խն- բային չափա- նիշներով առանձնազ- վող հաս- ցեատերերի դեպքում՝ խմբի անվանումը	Վարչական ակտի եզրա- փակիչ մասի (օրենքի 55-րդ հոդ- վածի 4-րդ մասի «գ» կետ) համառոտ շարա- դրանքը	Վարչական ակտին վից ներդիր- ների, հավելված- ների, այլ փաստա- թղթերի անվանում- ները (դրանց ընդհանուր թիվը)	Վարչական ակտի ըն- դունանը համար մասին վարչական ակտերի (թույլտվու- թյուն, համա- ձայնություն և այլն) ան- վանում- ները (օրենքի 52-րդ հոդ- ված)	Վարչական ակտի ըն- դունան րաջայլ ներդիր- ների էջերի և ակտի բարկացու- ցիչ մասը կազմող հավել- վածների, այլ փաս- տաթղթերի էջերի ընդ- հանուր թիվը (օրենքի 55-րդ հոդ- վածի 3-րդ մաս)	

Սխեմայի 1-ին սյունակում նշվում են հաշվառվող վարչական ակտերի հերթական համարները (1, 2, 3...):  
Սխեմայի 9-րդ սյունակում էջերի բաժնը պետք է գրվեն գծիկով անջատմամբ: Օրինակ, «3-7», որտեղ «3»-ը ցույց կտա  
վարչական ակտի՝ ներառյալ ներդրումների էջերի թիվը, իսկ «7»-ը՝ այդ վարչական ակտին վից հավելվածների և այլ  
փաստաթղթերի էջերի ընդհանուր թիվը:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

### **ԲԱԺԻՆ I. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ.....15**

Հարց 1. Ի՞նչ հարաբերություններ է կարգավորում Օրենքը .15

Հարց 2. Ի՞նչ նշանակություն ունի Հայաստանի  
Հանրապետության Սահմանադրությունը  
ընդհանուր վարչական իրավունքի հարցում . . . . .19

Հարց 3. Ինչու՞ է Օրենքի 2-րդ հոդվածը տարբերակում  
Օրենքի տարբեր բաժինների գործողության  
ուլորտները: Որո՞նք են այդ ոլորտները . . . . .21

Հարց 4. Որո՞նք են վարչական մարմինները Հայաստանի  
Հանրապետությունում . . . . .24

Հարց 5. Ի՞նչ է նշանակում վարչարարություն՝  
ըստ Օրենքի . . . . .26

Հարց 6. Ո՞րն է Օրենքում վարչարարության սկզբունքների  
ամրագրման նպատակը և ինչու՞ են դրանք  
անվանվում վարչարարության հիմնարար  
սկզբունքներ: Ո՞րն է այդ սկզբունքների  
տարբերությունը Օրենքի II՝ վարչական վարույթի  
վերաբերող բաժնում ամրագրված սկզբունքներից . . . 26

Հարց 7. Ո՞րն է վարչարարության օրինականության  
սկզբունքի էությունը . . . . . 28

Հարց 8. Ի՞նչ է նշանակում ձևական պահանջների չարաշահում:  
Ինչու՞ է այդ պահանջների չարաշահման արգելքն  
ամրագրվել որպես հիմնարար սկզբունք . . . . . 30

Հարց 9. Ի՞նչ է նշանակում հայեցողական լիազորություն՝  
ըստ Օրենքի: Ինչու՞ է այդ լիազորությունների  
իրականացումը սահմանափակվում համանուն  
սկզբունքի միջոցով . . . . .32

Հարց 10. Ո՞րն է կամայականության արգելքի սկզբունքի  
էությունը: Եթե կամայականության արգելքն  
արտացոլում է իրավահավասարության  
գաղափարը, ապա բավարար չէ՞ արդյոք այն,  
որ իրավահավասարությունն ամրագրված է Սահմա-  
նադրությամբ . . . . .34

Չարց 11. Ինչո՞վ է կարևորվում համաչափության սկզբունքի ամրագրումը Չայաստանի համար: Արդյո՞ք այդ սկզբունքի ամրագրմամբ մենք արհեստականորեն օտարածին դրույթներ չենք ներմուծում մեր իրավական համակարգ: Որո՞նք են համաչափության սկզբունքի տարրերը . . . . .	37
Չարց 12. Ի՞նչ է նշանակում առավելագույնը, և ո՞րն է առավելագույնի սկզբունքի բովանդակությունը . . . . .	40
Չարց 13. Ինչու՞ է Օրենքում հավաստիությունը դարձվել կանխավարկած . . . . .	42
Չարց 14. Ինչպե՞ս հասկանալ տնտեսվարության սկզբունքը . . . . .	44
Չարց 15. Արդյոք սպառի՞չ են Օրենքում թվարկված հիմնարար սկզբունքները . . . . .	45
Չարց 16. Ինչի՞ հիման վրա է որոշվում այս կամ այն գործի ենթակայությունը վարչական մարմիններիին . . . . .	46
Չարց 17. Ի՞նչ է նշանակում «վարչական մարմինների փոխօգնության պարտականություն» . . . . .	48
Չարց 18. Ո՞րն է փոխօգնության համար դիմելու կարգը . . . . .	50
Չարց 19. Ի՞նչ ժամկետում պետք է ցուցաբերվի հայցվող փոխօգնությունը . . . . .	51
Չարց 20. Կարո՞ղ է արդյոք փոխօգնության տրամադրումը մերժվել: Եթե այո, ապա ի՞նչ հիմքերով . . . . .	52
Չարց 21. Ի՞նչ է նշանակում «փոխօգնության կարգով ձեռնարկվող միջոցների իրավաչափություն» . . . . .	54
<b>ԲԱԺԻՆ II. ՎԱՐՉԱՎԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ . . . . .</b>	<b>56</b>
Չարց 22. Ի՞նչ է վարչական վարույթը և ո՞ւմ կողմից է այն իրականացվում . . . . .	56
Չարց 23. Որո՞նք են վարչական վարույթի փուլերը . . . . .	57
Չարց 24. Ովքե՞ր կարող են հանդես գալ որպես վարչական վարույթի մասնակիցներ . . . . .	59
Չարց 25. Վարչական վարույթի մասնակիցներից բացի, ուրիշ ովքե՞ր կարող են հանդես գալ վարչական վարույթում . . . . .	60

Չարց 26.	Ուլքե՞ր և ու՞մ կարող են ներկայացնել վարչական վարույթուն և ի՞նչ կարգով . . . . .	61
Չարց 27.	Ուլքե՞ր վարչական վարույթուն չեն կարող հանդես գալ ներկայացուցչի միջոցով . . . . .	62
Չարց 28.	Ո՞ր դեպքերում վարչական մարմնի պաշտոնատար անձն իրավունք չունի քննարկելու և լուծելու գործը . . . . .	63
Չարց 29.	Ուլքե՞ր կարող են բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին . . .	65
Չարց 30.	Վարչական վարույթի ո՞ր փուլում է թույլատրելի բացարկ հայտնել վարչական վարույթն իրականացնող պաշտոնատար անձին . . . . .	68
Չարց 31.	Ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետում է լուծվում ներկայացված բացարկի հարցը . . . . .	69
Չարց 32.	Որո՞նք են ինքնաբացարկի հիմքերը . . . . .	73
Չարց 33.	Վարչական վարույթի ո՞ր փուլում կարող է ինքնաբացարկ հայտնվել . . . . .	73
Չարց 34.	Ի՞նչ կարգով է հայտնվում ինքնաբացարկը . . . . .	74
Չարց 35.	Ի՞նչ լեզվով է իրականացվում վարչական վարույթը . . . . .	76
Չարց 36.	Ո՞ր դեպքերում և ուլքե՞ր կարող են վարչական վարույթուն փաստաթղթեր ներկայացնել ոչ հայերեն լեզվով . . . . .	77
Չարց 37.	Վարչական վարույթի ընթացքում ուլքե՞ր կարող են հանդես գալ օտար լեզուներով և ի՞նչ պարտադիր պայմանի պահպանմամբ . . . . .	79
Չարց 38.	Վարչական վարույթի վերաբերյալ ինչպիսի՞ գրանցամատյաններ են վարվում և ո՞ւմ կողմից . . .	79
Չարց 39.	Ինչի՞ հիման վրա են վարչական մարմինները սահմանում վարչական վարույթի վերաբերյալ գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները . . . . .	80
Չարց 40.	Ո՞ր դեպքերում վարչական մարմինը չի իրականացնում գործավարություն և հաշվառում . .	82
Չարց 41.	Ո՞ր դեպքերում են արձանագրվում վարչական գործի քննարկումները . . . . .	84

Չարք 42.	Ի՞նչ տեղեկություններ պիտի պարունակի գործի քննարկման արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը . . . . .	85
Չարք 43.	Ո՞րոնք են վարչական վարույթ հարուցելու հիմքերը . . . . .	86
Չարք 44.	Ո՞ր օրվանից է վարչական վարույթը համարվում հարուցված . . . . .	87
Չարք 45.	Վարչական վարույթ հայցելու համար վարչական մարմին ի՞նչ ձևի և ի՞նչ բովանդակությամբ դիմում պետք է ներկայացվի . . . . .	90
Չարք 46.	Եթե դիմումում առկա են ձևական սխալներ, ինչպե՞ս պետք է վարվի վարչական մարմինը . . . . .	93
Չարք 47.	Ո՞ր դեպքերում է վարչական մարմինը դիմումը վերահասցեագրում և ու՞մ . . . . .	94
Չարք 48.	Ո՞ր դեպքերում է վարչական մարմինը դիմումը վերադարձնում դիմողին . . . . .	96
Չարք 49.	Ի՞նչ ժամկետում, ո՞վ և ու՞մ է ծանուցում վարչական վարույթի հարուցման մասին . . . . .	96
Չարք 50.	Ի՞նչ է նշանակում վարչական մարմնի՝ արագ գործելու պարտականությունը . . . . .	99
Չարք 51.	Ինչո՞ւմ են արտահայտվում վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունը և անաչառությունը . . . . .	101
Չարք 52.	Ի՞նչ է նշանակում վարույթի մասնակիցներին լսելը . . . . .	102
Չարք 53.	Ե՞րբ է վարչական մարմինը պարտավոր անցկացնել լսումներ և ե՞րբ կարող են դրանք չանցկացվել . . . . .	104
Չարք 54.	Ո՞ր դեպքերում լսումներ չեն անցկացվում . . . . .	105
Չարք 55.	Ինչո՞ւմ է արտահայտվում վարչական վարույթի նյութերի մատչելիությունը . . . . .	106
Չարք 56.	Ո՞վ և ինչպիսի՞ օգնություն է ցուցաբերում վարչական վարույթի մասնակիցներին և դրա համար ի՞նչ պարտականություն է կրում . . . . .	107
Չարք 57.	Ի՞նչ կարգով են վերացվում վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում առկա սխալները ջնջումները, քերվածքները, վրիպակները . . . . .	109

Չարց 58. Ո՞ր դեպքերում վարչական մարմինն իրավունք չունի ինքը վերացնելու վարույթի մասնակիցների ներկայացրած փաստաթղթերում առկա սխալները, ջնջումները, քերվածքները, վրիպակները . . . . .	111
Չարց 59. Վարչական վարույթում ի՞նչը կարող է դիտվել իբրև ապացույց . . . . .	112
Չարց 60. Ո՞վքեր են վարչական վարույթում կրում ապացուցման պարտականությունը . . . . .	113
Չարց 61. Ո՞ր դեպքերում վարչական մարմինը կարող է նշանակել փորձագետ և ի՞նչ կարգով . . . . .	116
Չարց 62. Ո՞ր դեպքերում է նշանակվում զննում . . . . .	117
Չարց 63. Փորձագետ կամ զննում նշանակելու հարցում վարույթի մասնակիցներն ի՞նչ իրավունքներ ունեն . . . . .	118
Չարց 64. Ի՞նչ ժամկետների ընթացքում պետք է իրականացվի վարչական վարույթը . . . . .	119
Չարց 65. Ո՞ր դեպքերում կարող է երկարաձգվել վարչական վարույթի ժամկետը և ի՞նչ ժամկետով . . . . .	120
Չարց 66. Վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու համար վարչական վարույթն իրականացնող վարչական մարմինն ինչպիսի՞ գործողություններ է պարտավոր իրականացնել . . . . .	121
Չարց 67. Ի՞նչ հետևանքներ է առաջացնում վարչական վարույթի ժամկետում վարչական ակտ չընդունելը . . . . .	122
Չարց 68. Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով է կասեցվում վարչական վարույթը . . . . .	125
Չարց 69. Ո՞ր դեպքերում և ի՞նչ կարգով է կարճվում դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը . . . . .	128
Չարց 70. Ի՞նչ առանձնահատկություններ են գործում վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթի կարճման դեպքերում . . . . .	131
Չարց 71. Ի՞նչ հետևանքներ ունի վարչական վարույթը կարճելը . . . . .	132
Չարց 72. Ու՞մ դիմումի հիման վրա և ո՞ր դեպքերում է վարչական վարույթը ենթակա պարտադիր վերսկսման . . . . .	133

Չարք 73. Ո՞ր պահից հաշված և ի՞նչ ժամկետում կարող է դիմում ներկայացվել վարչական վարույթը վերսկսելու խնդրանքով . . . . .	135
Չարք 74. Ի՞նչ կանոններ են կիրառվում, եթե վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ են այլ մարմինների թույլտվությունը կամ համաձայնությունը . . . . .	136
<b>ԲԱԺԻՆ III. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԸ</b> .....	139
Չարք 75. Ո՞րն է վարչական ակտի հասկացությունը: Որո՞նք են վարչական ակտերի տեսակները . . . . .	139
Չարք 76. Ի՞նչ է ռեալ ակտը, ինչո՞վ է այն տարբերվում վարչական ակտից . . . . .	141
Չարք 77. Որո՞նք են վարչական ակտի տեսակները . . . . .	142
Չարք 78. Որո՞նք են վարչական ակտի ձևերը . . . . .	143
Չարք 79. Ինչպիսի՞ պահանջներ են ներկայացվում գրավոր վարչական ակտին . . . . .	145
Չարք 80. Ինչու՞մ է արտահայտվում վարչական ակտի որոշակիությունը . . . . .	147
Չարք 81. Ինչու՞մ է արտահայտվում վարչական ակտի հիմնավորվածությունը . . . . .	148
Չարք 82. Ո՞ր դեպքերում վարչական ակտի հիմնավորում չի պահանջվում . . . . .	149
Չարք 83. Ո՞ր պահից է վարչական ակտը համարվում ընդունված . . . . .	150
Չարք 84. Ո՞ր պահից է վարչական ակտն ուժի մեջ մտնում . .	151
Չարք 85. Վարչական ակտի ընդունման մասին ի՞նչ եղանակներով և ո՞ւմ է իրազեկվում . . . . .	152
Չարք 86. Ո՞ր դեպքերում կարող է վարչական ակտը տրամադրվել օտար լեզվով, և դա որևէ իրավաբանական հետևանք առաջացնու՞մ է արդյոք . . . . .	154
Չարք 87. Ի՞նչ ժամկետով է գործողության մեջ լինում վարչական ակտը . . . . .	155
Չարք 88. Ո՞ր դեպքերում է վարչական ակտը համարվում առ ոչինչ . . . . .	159

Չարց 89. Վարչական ակտը ի՞նչ կարգով կարող է ճանաչվել առ ոչինչ . . . . .	160
Չարց 90. Առ ոչինչ վարչական ակտը չկատարելը իրավական հետևանքների առաջացնում է . . . . .	160
Չարց 91. Ո՞ր դեպքերում է վարչական ակտը համարվում անվավեր . . . . .	161
Չարց 92. Ի՞նչ իրավական հետևանքներ է առաջացնում ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելը . . . . .	162
Չարց 93. Ի՞նչ ծավալով կարող է վարչական ակտը անվավեր ճանաչվել . . . . .	165
Չարց 94. Ի՞նչ ժամկետում կարող է ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչվել . . . . .	165
Չարց 95. Ինչո՞վ է տարբերվում վարչական ակտերի անվիճարկելիությունը դատական ակտերի օրինական ուժից . . . . .	167
Չարց 96. Օրենքի պահանջներին համապատասխան ընդունված վարչական ակտը (իրավաչափ ակտը) ի՞նչ հիմքերով կարող է ուժը կորցնել . . . . .	167
Չարց 97. Ո՞ր մարմինն է իրավասու իր նախաձեռնությանը վերանայել վարչական ակտը և ի՞նչ կարգով . . . . .	172
Չարց 98. Ո՞ր դեպքերում են վերադարձվում վարչական վարույթին առնչվող փաստաթղթերը և իրերը, և ո՞ւմ . . . . .	173

**ԲԱԺԻՆ IV. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ . . . . . 175**

Չարց 99. Ո՞վ իրավունք ունի բողոքարկել վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները կամ անգործությունը . . . . .	175
Չարց 100. Ո՞ր մարմիններին կարող է ներկայացվել բողոքը . . . . .	177
Չարց 101. Տարածվու՞մ է արդյոք Օրենքը վարչական ակտը դատական կարգով վիճարկելու վրա . . . . .	180
Չարց 102. Յնարավո՞ր է արդյոք ակտը բողոքարկել վարչական և դատական կարգով միաժամանակ . . . . .	181
Չարց 103. Ինչպիսի՞ ժամկետներ են սահմանված ակտի բողոքարկման համար . . . . .	182

Չարց 104. Հնարավոր է արդյոք վերականգնել վարչական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետը . . . . .	184
Չարց 105. Ի՞նչ պահանջների պետք է բավարարի բողոքը . . . . .	185
Չարց 106. Ո՞րն է բողոքի հիման վրա վարույթ հարուցելու կարգը . . . . .	186
Չարց 107. Արդյո՞ք վարչական բողոքը կասեցնում է վարչական ակտի կատարումը . . . . .	187
Չարց 108. Ի՞նչ կարգով է քննարկվում և լուծվում վարչական բողոքը . . . . .	189
Չարց 109. Ի՞նչ ժամկետներում պետք է քննարկվի վարչական բողոքը . . . . .	190
Չարց 110. Ինչպիսի՞ որոշումներ կարող են ընդունվել բողոքի քննարկման արդյունքում . . . . .	191
Չարց 111. Որո՞նք են վարչական ակտի բեկանման հիմքերը . . . . .	194

**ԱՄԺԻՆ V. ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ . . . . .** 196

Չարց 112. Ի՞նչ է իրենից ներկայացնում վարչական ակտի հարկադիր կատարման վարույթը . . . . .	196
Չարց 113. Ի՞նչ է վարչական հարկադրանքը . . . . .	199
Չարց 114. Որո՞նք են վարչական հարկադրանքի առանձնահատկությունները և նրա բնորոշ գծերը	200
Չարց 115. Որո՞նք են վարչական հարկադրանքի միջոցները	200
Չարց 116. Ի՞նչ չափորոշիչներից ելնելով է ընտրվում հարկադրանքի միջոցը . . . . .	202
Չարց 117. Ինչպե՞ս է դրսևորվում վարչական հարկադրանքը . . . . .	203
Չարց 118. Ո՞վ է պարտավոր անձը . . . . .	204
Չարց 119. Ո՞րն է կատարողական մարմինը . . . . .	205
Չարց 120. Ի՞նչ է փոխարինող գործողությունը . . . . .	206
Չարց 121. Ի՞նչ է տուգանքը . . . . .	207
Չարց 122. Ինչո՞վ է տարբերվում վարչական մարմնի կողմից ըստ Օրենքի որպես հարկադիր կատարման միջոց տուգանք նշանակելը վարչական	



	իրավախախտման դիմաց (վարչական) տուգանք նշանակելուց . . . . .	208
Չարց 123.	Տուգանքի նշանակման ինչպիսի՞ կարգ և պայմաններ են նախատեսված . . . . .	209
Չարց 124.	Ո՞րն է անմիջական հարկադրանքը . . . . .	210
Չարց 125.	Որո՞նք են անմիջական հարկադրանքի դրսևորման ձևերը . . . . .	211
Չարց 126.	Որո՞նք են վարչական հարկադրանք կիրառելու մասին նախազգուշացնելու կարգը և պայմանները . . . . .	212
Չարց 127.	Ինչպե՞ս են նշանակվում հարկադրանքի միջոցները . . . . .	213
Չարց 128.	Ո՞րն է հարկադրանքի միջոցներ կիրառելու կարգը . . . . .	213
Չարց 129.	Ինչպե՞ս է ավարտվում հարկադիր կատարման վարույթը . . . . .	214

**ԲԱԺԻՆ VI. ՎԱՐՉԱՎԱՆ ԾԱԽՍԵՐ . . . . . 214**

Չարց 130.	Ինչպիսի՞ կազմ ունեն վարչական ծախսերը . . . . .	214
Չարց 131.	Ի՞նչ չափի տուրքեր են վճարվում վարչական վարույթում . . . . .	216
Չարց 132.	Ո՞րոնք են վարչական վարույթում կատարվող այլ ծախսերը . . . . .	218
Չարց 133.	Ու՞մ միջոցների հաշվին են կատարվում վարչական ծախսերը . . . . .	220
Չարց 134.	Վարչական վարույթում ի՞նչ չափով են վարձատրվում վկաները, փորձագետները և թարգմանիչները . . . . .	221
Չարց 135.	Ո՞վ է կրում փոխօգնության ծախսերը . . . . .	229

**ԲԱԺԻՆ VII. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ . . . . . 229**

Չարց 136.	Ո՞րն է պետությանը պատասխանատվության ենթարկելու նպատակը և դրա կիրառման ոլորտը	229
Չարց 137.	Ո՞րն է Օրենքում վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությանը վերաբերող	

	դրույթներ անրագրելու նպատակը: Արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները բավարար չէին այդ հարցը կարգավորելու համար . . . . .	230
Հարց 138.	Ո՞վ է վարչարարությամբ պատճառված վնասի համար պատասխանատվություն կրողը: Որո՞նք են դրա հիմքերը, նախատեսվա՞ծ է արդյոք պատասխանատվություն առանց մեղքի .	233
Հարց 139.	Սահմանու՞մ է արդյոք Օրենքը վնասի հատուցման պահանջ ներկայացնելու պայմաններ . . . . .	234
Հարց 140.	Որո՞նք են վնասի հատուցման եղանակները . . .	235
Հարց 141.	Ինչու՞ է դրամական միջոցներով հատուցումը՝ որպես վնասի հատուցման եղանակ նշվում հետևանքները վերացնելու եղանակից հետո . . .	238
Հարց 142.	Ու՞ր է ներկայացվում վնասի հատուցման պահանջը՝ վնաս հասցրած ակտն ընդունած կամ գործողությունը կատարած վարչական մարմնի՞ն, դրա վերադասի՞ն, թե միանգամից դատարան . . . . .	238
Հարց 143.	Ինչպիսի՞ ժամկետներ են սահմանված վնասի հատուցման պահանջ ներկայացնելու համար . . . . .	241
Հարց 144.	Ի՞նչ կարգով է քննարկվում վնասի հատուցման պահանջը . . . . .	244
Հարց 145.	Ո՞րն է պատասխանատվության ձևը, երբ պատասխանատվություն կրողները մեկից ավելին են . . . . .	244
Հարց 146.	Ի՞նչ է նշանակում ոչ գույքային վնաս: Նույնակա՞ն է այն արդյոք բարոյական վնասի հետ: Ո՞ր դեպքերում է հատուցվում ոչ գույքային վնասը . . . . .	244
Հարց 147.	Ինչու՞ են տարբերակվում ոչ գույքային վնասը դրամական միջոցներով վճարելու ձևերը. որո՞նք են այդ ձևերը . . . . .	249
Հարց 148.	Վնաս պատճառելու հետևանքով անձի մահվան դեպքում ու՞մ է հատուցվում վնասը:	

	Հատուցման ինչպիսի՞ ձևերի մասին է այստեղ խոսքը: Ազդու՞մ է արդյոք մահացած անձի մեղքը վնասի հատուցման չափի վրա . . . . .	251
Հարց 149.	Ի՞նչ է նշանակում ոչ գույքային այլ վնաս: Ինչու՞ այն պետք է նույնպես հատուցվի . . . . .	254
Հարց 150.	Ու՞մ և ի՞նչ հիմքերով կարող են ներկայացվել հետադարձ պահանջներ՝ պատասխանատվություն կրողների կողմից . . . . .	255
Հարց 151.	Ո՞րն է պատասխանատվության հատուկ կանոնների «յուրահատկությունը» պատասխանատվության ընդհանուր կանոնների համեմատ . . . . .	257

**ԲԱԺԻՆ VIII. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՎԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ** . . . . . 259

Հարց 152.	Ինչո՞վ է պայմանավորված Օրենքը հրապարակվելուց ինն ամիս հետո ուժի մեջ մտնելու հանգամանքը . . . . .	259
-----------	--	-----

ՀԱՎԵԼՎԱԾ 1.	Հայաստանի Հանրապետության օրենքը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» . . . . .	261
-------------	--	-----

ՀԱՎԵԼՎԱԾ 2.	Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշումը «Վարչական վարույթի ընթացքում կատարած աշխատանքների համար փորձագետներին, թարգմանիչներին եվ վկաներին վճարումներ կատարելու կարգը հաստատելու մասին» . . . . .	324
-------------	---	-----

ՀԱՎԵԼՎԱԾ 3.	Հայաստանի Հանրապետության կառավարություն որոշումը «Վարչական վարույթի վերաբերյալ գործերի, դրանց հաշվառման գրանցամատյանների եվ վարչական ակտերի հաշվառման գրանցամատյանների վարման կարգն ու պայմանները սահմանող օրինակելի կարգը հաստատելու մասին» . . . . .	334
-------------	--	-----

Պատվեր՝ 1751: Տպաքանակ՝ 20000:  
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն ՓԲԸ տպարանում